

ՊԵՐՃ ՍԱՊՊԱՂԵԱՆ

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐ



ՊԵՅՐՈՒԹ 1986

737  
U-20

պերճ սապպաղեան

2453

դրամագիտական  
հարցեր

կազմեց եւ  
հրատարակութեան համար պատրաստեց՝  
բժիշկ թորոս թորանեան

հալէպ 1986



## **ՊԵՐՃ ՍԱՊԱՂԵԱՆ ՄԱՐԴԸ ԵՒ ԳՈՐԾԸ**

1982-ի Յուլիսի 12-ին, հայեպահայ գաղութը անակնկալօրէն կորսնցուց իր մտաւորական ղեմքերէն մէկը՝ Պերճ Սապպաղեանը, սիրտի տագնապի մը հետեւանքով:

Անուններ կան, որոնց յիշատակութիւնն անգամ լսողին լրջութիւն մը կը պարտադրէ, խորհիլ կու տայ, մտածել կու տայ գեղեցիկին մասին ու նաեւ օգտակարի՛ն:

Ահա այդ անուններէ՛ն էր Սապպաղեան: Պերճ՝ իր անունին պէս, իր նկարագիրով, իր հասակով, գործելակերպով, ազգային ու մտաւորական իր հետաքրքրութիւններով:

Սապպաղեան ընտանիքը կը պատկանի հայեպահայ այն հին եկուորներու շարքին, որոնք ի խնդիր ապահով ապաստանի մը, եկած հաստատուած են այս հինաւորց քաղաքը՝ ստանց երբէք լքելու իրենց ազգային հնագոյն սովորութիւնները:

Սապպաղեան ընտանիքը հաստատուած է Հալէպ անլի քան երեք հարիւր տարիներ առաջ: Երեք հարիւր տարիները կրնային մաշեցնել հայկականութիւնը այս ընտանիքին, եթէ հայ տարագիրներ, Մեծ Եղեռնէն փրկուած հայր՛ի բեկորներ, չհասնէին Հալէպ:

Ու ահա, հին Հալէպի Ծէլի Սաստիէ թաղը հաստատուած Ֆարէս Սապպաղ կը դառնայ փեսան Տէր Ղետնդ Աւագ Բնկ. Նահապետեանին ու կը բախտաւորուի աղջիկ ու տղայ զաւակներով, որոնք բոլորն ալ կը մեծնան հայեցի շունչով:



Ինք՝ Ֆարես Սապաղ, գէշունցի էր ծագումով: Տէր Ղեոնդ քահանան նոյնպէս կու գար Զէյթունէն, Նոր Զուղայի վրայով:

Ֆարես Սապաղ արաքախօս էր: Իր բոլոր զաւակները արաքերէնի կողքին լաւագոյնս կը տիրանան իրենց մայրենի լեզուին: Առաջին երկուքը Յովհաննէսն ու Մարին՝ կը մահանան եօթը եւ տասներկէց տարեկանին: Միւսները, բոլորն ալ, տարբեր ձեւերով կը ծառայեն Հալէպի ազգային կեանքին, այնպէս որ Ֆարես Սապաղ ազգասէր մարդ մը ըլլալով, իր զաւակներէն դժգոհելու պատճառ մը չ'ունենար: Արաքախօս Ֆարես Սապաղ կ'ունենայ շուրջ քսոստուն տարի ազգային ծառայութիւն՝ մաս կազմելով Հալէպի ազգային-եկեղեցական գաւառական ժողովներուն: Այս մասին կը վկայէ Հալէպի նախկին Առաջնորդ՝ երջանկայիշատակ Տ. Արտաւազդ Արք. Սիրմէեան՝ «Պատմութիւն Հալէպի Հայոց» խորագրեալ իր ծաւալուն երկասիրութեան մէջ<sup>(1)</sup>:

Ֆարես Սապաղի միւս զաւակներն են՝ Լիոնէն, որ այսօր ութսունը անց է, Պայծառը, որ թոռներու տէր է, Նուպարը, որ Հալէպի մէջ ճանչցուած էր որպէս արուեստագէտ նկարիչ, այժմ Թորոնթօ (Գանատա) է, Երջանիկը, որ երիտասարդ տարիքին մահացաւ ու Պերճը, որուն մասին այժմ այնքա՛ն դժուար է խօսիլ բայերու անցեալ եղանակով:

Ֆարես Սապաղը Հալէպի Ծէյիս Սաատիէ թաղին մէջ կը բանեցներ ներկատուն մը: Արհեստ մը, որ գերդաստանային էր: Ահա թէ ինչո՛ւ Զէյթունէն եկած այդ գերդաստանին բուն մականունը — Մարտիրոսեան — մոռացութեան տրուեցաւ, ու որդեգրուեցաւ նորը՝ Սապաղեանը՝ որ թարգմանաբար կը նշանակէ Ներկարարեան:

Եթէ ճիշդ է թէ Մեծ Եղեռնի հեղեղը Հալէպ բերաւ տասնեակ ու տասնեակ հազարաւոր խլեակներ, որոնք հայեցի նոր շունչ ներարկեցին հալեպահայ հին գաղութին, պէտք է ըսել սակայն թէ քաղաքին հին հայերը միշտ ալ նախանձախնդիր եղած էին իրենց ազգային եւ եկեղեցական ասանդութիւններուն նկատմամբ: Այդ հին

1.— Յիշեալ աշխատութիւնը՝ Գ.հատոր, էջ 891:

հայերը եկած էին Զուղայէն, Տիգրանակերտէն, Մարտինէն, Սասունէն, որպէս առետրականներ, արհեստաւորներ ու փոսպաններ:

Երբ կը խօսիմ Պերճ Սապաղեանի քոյրերուն՝ Լիոնէի ու Պայծառի հետ, անոնք, կարծես տասնամեակներու մշուշին ընդմէջէն կը յիշեն իրենց հօր ազգային կեանքի գործընկերները — Յովհաննէս Նահհաւը, Հապիպ Սիուֆին, Եուսէֆ Ալթնճին, Խաչատուր Ծահինը, Միխայիլ Նանճարը, Զատուր Ասիւր (Տէր Գեորգեան), Խաչատուր Ծանճին, Յակոբ Ներսուն եւ բազում ուրիշներ:

Հետաւոր ընթերցողներու համար այս ոչ-հայահունչ անունները ոչինչ կ'ըսեն, բայց հալեպահայ գաղութը հայ մնացած է նաեւ ա՛յս մարդոց ճիգերուն շնորհիւ:

Ըսինք, Ֆարես Սապաղը դարձաւ Տէր Ղեոնդ Աւագ Քհնյ. Նահապետեանի փեսան: Այս քահանան կը սերէր քահանաներու գերդաստանէ մը: Անցնող քանի մը տարիներու ընթացքին, Ֆարես Սապաղի կնոջ՝ ծնողական գերդաստանին մէջ կը հանդիպինք շուրջ քսոստուն քահանաներու:

Ծառաիդին վերջին քահանան Տէր Ղեոնդն է, որ կը ծնի Մարաշի մէջ, 1853-ին: 1880 թուականին, աշխարհական անունով Երջանիկը քահանայ կը ձեռնադրուի Կիլիկիոյ Տ. Մկրտիչ Քէֆ-սիզեան Կաթողիկոսին կողմէ 1892-ին. որպէս Զէյթունի ապստամբութեան մասնակիցներէն մէկը, կ'աքսորուի Հալէպ:

Թուրքը չի՛ ներեր նոյնիսկ քահանային, մահաւա՛նդ քահանային: Տէր Ղեոնդ բազմաթիւ անգամներ բանտարկուել է մեծ միջնորդութիւններով (մէկը՝ Օրմանեան Պատրիարքի միջնորդութիւնն է) ազատ արձակուել է երկար չարչարուել ետք՝ 1896-ին կը հաստատուի Հալէպ, ուր կը քահանայագործէ ամբողջ տասներկէց տարի:

Տէր Ղեոնդին մասին կարելի է աւելի ընդարձակ տեղեկութիւններ քաղել Սիրմէեան Արք.ի վերոյիշեալ գիրքէն:

Ֆարես Սապաղ Տէր Ղեոնդին աղջկան՝ Արուսեակին հետ ամուսնանալով կ'ունենայ եօթը զաւակ:

Այդ եօթ զաւակներէն մէկը՝ Պերճ Սապաղեանն է:

Պերճը իր նախակրթարանի ուսումը կը ստանայ Հալէպի Ազգային Հայկազեան Վարժարանին մէջ:



Ինչպես մանկապարտեզը, նույնպես նախակրթարանը ասարտելուն առիթով, ՏԷՐ Ղեռնդ քահանան, այսինքն Պերնին մօրենական մեծ հայրը, նամակներ կը յղէ իր թոռնիկին՝ Գահիրէէն, ուր կը պաշտօնավարէր ան, քաջալերելով պատանին որ ամուր կառչի մեր լեզուին եւ խորհուրդ կու տայ, որ ան նուիրուի ազգային գործերու:

Պերն Սապպաղեան, նախակրթարանէն ետք, իր ուսումը կը համալրէ Հալէպի Ֆրէր Մարիսթներու ֆրանսական երկրորդական վարժարանին մէջ: Հետագային կը ստանայ իր բարձրագոյն ուսումը Լոնտոնի մէջ, ասարտելով ատետրական եւ օրէնսդրական ճիւղեր: Կը տիրապետէ, — բացի իր մայրենի լեզուէն ու քաջալա արաբերէնէ, — ֆրանսերէնի, անգլերէնի եւ գերմաներէնի:

Տարի մը կ'ըլլայ ուսուցիչ իր ասարտած Հայկազեան նախակրթարանին մէջ, եւ տարի մըն ալ կը խմբագրէ Հալէպի «Եփրատ» օրաթերթը: Ապա կը նետուի ատետրական ասպարէզ, որպէս ներկայացուցիչը երոպական քանի մը ատետրական տուններու:

Կանուխէն, պատմագրութիւնն ու դրամագիտութիւնը իր սիրած ճիւղերը կ'ըլլան: Դրամագիտութեան հետքերով կ'ուսումնասիրէ մեր պատմութիւնը եւ նոյնիսկ իրեն յատուկ վերծանումներ կը կատարէ:

Այս ճիւղերը կը դառնան իր մասնագիտութիւնը, զոր կը ջանայ սիրցնել բոլորին՝ բերանացի եւ գրատր ելոյթներով:

Կը ծրագրէր գիրք մը հրատարակել: Առ այդ՝ գրառումներ կատարած էր հայ-արաբ կապերու եւ յարաբերութիւններու շուրջ: Նկատի ունենալով որ գիտակ էր զոյգ լեզուներուն ինչպէս նաեւ երոպական լեզուներու, կարելի էր իրաւամբ ակնկալել որ ան անպայմանօրէն կ'ունենար ի'ր ըսելիքը՝ իր սիրած մասնագիտութեան գիծով:

Այո՛, մտադրած էր գիրք մը լոյս ընծայել դրամագիտական հարցերու մասին: Բայց ափսո՛ս, անժամանակ մահը թոյլ չտուաւ որ ան՝ ի'ր իսկ ձեռքով ի մի հաւաքէ իր գրութիւնները ու նոխացնէ զանոնք նորերո՛վ:

Այդ ծանր եւ պատասխանատու պարտականութիւնն է որ յանձն առած ենք այսօր, քով քովի բերելով պարբերական մամուլին մէջ իր ստորագրած յօդուածները եւ այլազան առիթներով կատարած մասնագիտական իր զրոյցներուն գրառումները:

Այդ իմաստով, այս հատորը լետ մահու հրատարակութիւն մըն է, սակայն մենք համոզուած ենք թէ ան իր մասնագիտական բովանդակութեամբ իսկ, անպայմանօրէ՛ն պիտի նպաստէ, որ Պերն Սապպաղեան շարունակէ ապրիլ նո'ր կեանքով մը:

Բժիշկ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Հալէպ, Յուլիս 1984



Պերն Սապպաղեան  
1914-1982

... 1918 թվականին ծնվել է Մարտիկ Մարտիկի որդի Մարտիկը։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։


Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։

Մարտիկը ծնվել է Մարտիկի և Մարտիկի ընտանիքում։



**Պերճ Սահակյան**

**1918-1982**





Համրարարան Ա ճյուղ

2201-8101

## ՎԱՍՆ ՆԵՐԱԾԱԿԱՆԻ

Դրամագիտութիւնը բաղդատաբար նոր գիտութիւն մըն է, որ անորոշ խարխափումներով սկսաւ 17-րդ դարուն եւ գիտական հանգամանք ստացաւ 19-րդ դարուն:

Այսօր դրամագիտութիւնը նկատուած է հնագիտութեան եւ պատմաբանութեան ամենահիմնական օժանդակներէն մին եւ յաճախ նոյնի՛սկ անոնց գլխաւոր աղբիւրը:

Դրամագիտութիւնը բոլոր եւրոպական լեզուներուն մէջ ծանօթ է, առ հասարակ numismatique բառով, որ կը ծագի nomisma յունարէն բառէն եւ անոր համապատասխան լատիներէն nummus բառէն, դրամի ընդարձակ իմաստով: Դրամագիտութեան մաս չեն կազմեր 18-րդ դարէն սկսեալ շրջագայութեան մէջ գրուած թղթադրամները:

Դրամագիտութիւնը իր ուսումնասիրութիւնները կը կեդրոնացնէ մետաղի այն կտորներուն վրայ, որոնք Ք.Ա. 7-րդ դարէն սկսեալ, փոխանակութեան եւ հատուցումի որպէս միջոց սկսան գործածուիլ:

Դրամ բառը հայերէնի մէջ կը գործածուի շատ ընդարձակ իմաստով, մինչդեռ ուրիշ լեզուներու մէջ, որոշ տարբերակներ աւելի յստակ կը դարձնեն դրամին զանազան յատկանիշները:

Այսպէս՝ անգլերէն լեզուի մէջ currency բառով կը հասկնանք փոխանակութեան նպատակով գործածուած որեւէ



մետաղ: Իսկ money բառը կը բնորոշէ մետաղի կտոր մը երբ որոշ կշիւք եւ արժէք կը ներկայացնէ. coin բառը կը գործածուի երբ մետաղի կտորը ունի ոչ միայն որոշ կշիւք եւ արժէք, այլ առաւելաբար կը կրէ պետական մարմինի մը դրոշմը եւ կը դառնայ պաշտօնապէս ապահովուած կտոր մը:

Թէ ինչո՞ւ համար այսօր դրամագիտութիւնը դարձած է լուրջ, կարեւոր եւ հիմնականօրէն գիտական նոր հետազոտութիւններու մարզ մը, պատճառն ա՛յն է, որ իւրաքանչիւր դրամի կտորի վրայ կարելի է գտնել պատմական, ժամանակագրական, գեղարուեստական, մշակութային, կրօնական, դիցաբանական եւ այլ հետաքրքրական ընդարձակ ծանօթութիւններ, որոնք սերտօրէն կապուած են երկրի մը, քաղաքի մը եւ ժողովուրդի մը պատմական վերիվայրումներուն, մշակութային մակարդակին զարգացման, կրօնական ըմբռնումներուն եւ աւանդութեանց հետ:

Հին յոյները մեծ հիացում եւ գնահատանք ունէին դէպի գեղեցիկը: Իրենց պարզ զգացումներով հիմնականօրէն կրօնասէր էին եւ կ'ապրէին իրենց շատուածներուն առօրեայ կեանքով: Կը բաժնէին անոնց յաճախ փոթորկոտ ընտանեկան կեանքի արկածները, առասպելները, կիրքերն ու հովուերգութիւնները: Կը սիրէին մարգանքը, մրցակցութիւնները եւ յաճախ ախոյեանները կը հասցնէին Ողիմպիոսի բարձունքներուն: Կը սիրէին կենդանիները եւ թռչունները, վերջապէս գեղարուեստի բոլոր ճիւղերը: Բնականօրէն, իրենց բոլոր այս նախասիրութիւնները պիտի յայտնաբերուէին իրենց դրամներուն վրայ, զիրար գերազանցելու գեղագիտական ձգտումով եւ առաջադրութեամբ:

Յոյն մշակոյթի ազդեցութեան տակ գտնուող երկիրներուն մէջ, կը վիտար թիւը քաղաքապետութիւններու, որոնք իրենց ԱՆԿԱԽ ըլլալու հանգամանքը կը նուիրագործէին ԱՆԿԱԽ դրամ հատանելու սովորութեամբ, իրենց սեփական դրոշմով եւ վեհապետին անուամբ, իրենց անկախ հանգամանքը հռչակելու եւ հաստատելու առաջադրութեամբ: Այսպէս, Փոքր Ասիոյ մէջ մօտաւորապէս 500 քաղաքապետութիւններու եւ 1500 վեհապետներու անուններով դրամներ

գոյութիւն ունէին, որոնց կարեւոր մէկ մասը կը մնայ տակաւին անյայտ:

Հետեւաբար, այս պատիկ մետաղէ դրամներուն վրայ, կարելի էր հետեւիլ երկրի մը կամ քաղաքի մը պատմութեան բոլոր ճիւղերուն եւ Babelon իրաւունք ունի երբ կը պնդէ, թէ՛ «Les monnaies nous racontent l'histoire», այսինքն՝ դրամները մեզի պատմութիւնը կը պատմեն կամ կը սորվեցնեն:

Այսօր երբ յունական արուեստի կոթողներուն մեծ մասը փճացած է, երբ անոր արձանները, տաճարները, քանդակները հողակոյտի վերածուած են, ըլլայ ժամանակի եւ երկրաշարժներու բերումով, կամ վաճառական ձեռքերու քանդիչ աւերումներով, այդ պատիկ մետաղի կտորները, որոնք դուրս կու գան հողէն, հազարաւոր տարիներ յետոյ, յաճախ անվթար վիճակի մէջ, գիտութեան համար կը դառնան մէյմէկ նշխարներ՝ վերականգնելու համար ուրուագիծը եւ պատկերը նոյն այդ պատմական կորսուած կոթողներուն:

Այդ պատիկ մետաղներէն կը ծանօթանանք անուններու, որոնք կը վերաբերին քաղաքներու, որոնց տեղագրութիւնը կը մնայ ցարդ անծանօթ: Կը տեղեկանանք նոյնիսկ վեհապետներու եւ թագաւորներու որոնց անուան շուրջ հին մատենագրութիւնն ու պատմութիւնը մնացած են լուռ: Այդ պատիկ մետաղներով կը վերականգնին պատմական վրիպումներ, կը շտկուին սխալներ, կը ճշդուին թուականներ որոնք վրիպած են մատենագիրներու ուշադրութենէն կամ դիտումնաւոր աղաւաղուած՝ միակողմանի պատմագիրներու կողմէ:

Յիշենք՝ օրինակի համար, Մեծն Տիգրանի պարագան որուն աշխարհակալութեան արշաւանքներուն համար, մատենագիրներէն ոմանք կը կարծէին թէ Անտիոքի գրաւումէն յետոյ, ան յառաջացած է Փիւնիկէի ծովեզերեայ ճամբով, գրաւելով Լաթաքիան, Աֆամիան, Պէյրութը, Սուրը եւ Սայտան, հասնելու համար Ake-Ptolemais կամ ներկայ Աքքան: Յիշատակութիւն չկար թէ ան գրաւած ըլլայ խորին Սուրիան: Կը կարծուէր ուրեմն թէ այդ շրջանին Դամասկոս կը մնար նապաթին արաբական ցեղին Aretas թագաւորին ձեռքին տակ: Սակայն Դամասկոսի մէջ գտնուեցան դրամներ՝ Δ Դամասկոսի փողերանոցէն փակագրով եւ թուագրուած՝ որոնք փաստա-



ցիորէն կը ճշդէին թէ Տիգրան Մեծ, Դամասկոս մնացած է 71-69 Ք.Ա. եւ շատ հաւանաբար գրաւած է նաեւ Բալմիրի շրջանը: Ահա թէ ինչպէս, դրամները կու գան վերականգնելու Պլուտարքոսի կամ Ամմիանոսի նման մատենագիրներու դիտումնաւոր կամ անգիտակ վրիպումները:

Յունական դրամներէն ետք, հետաքրքրական են նաեւ հռոմէական դրամները: Հռոմ հիմնած էր հսկայ կայսրութիւն մը: Տեւական կռուի եւ պատերազմի մէջ էր սահմանակից պետութեանց հետ ապահովութեան կամ ընդարձակման առաջադրութիւններով: Կար նաեւ ներքին պայքար: Անհրաժեշտ էր ուրեմն ժողովուրդը տեղեակ պահել կայսրութիւնը հետաքրքրող հարցերու շուրջ: Հռոմէացիք դրամը գործածեցին նաեւ որպէս լրատուութեան եւ քարոզչական միջոց: Դեր մը՝ զոր այսօր կը կատարեն մամուլն ու ձայնասփիւռը:

Հռոմէական դրամներու վրայ կը գտնենք լայն ծանօթութիւններ եւ ժամանակագրական մանրամասնութիւններ, որոնք կը վերաբերին Հռոմի պատմութեան վերիվայրումներուն, տնտեսական բարքերու եւ ծիսակատարութեանց, շինարարական ձեռնարկներու, ճարտարապետական կոթողներու, զինուորական յաջողութեանց, ուրիշ պետութիւններու հետ դիւանագիտական եւ քաղաքական փոխ-յարաբերութեանց եւայլն:

Դրամները ուրեմն կը մնան որպէս անկորնչելի կոթողները փճացած եւ կորսուած յիշատակարաններու, ինչպէս նաեւ վաւերական ու վստահելի աղբիւրներ՝ պատմագրական եւ ժամանակագրական ճշդումներու:

Այժմ կ'արժէ գիտնալ, թէ ինչպէ՞ս ծնունդ առաւ դրամը եւ ի՞նչ եղան անոր զարգացման փուլերը՝ որպէս փոխանակութեան միջոց:

Նախքան դրամի գործածութիւնը, մարդկային հաւաքականութիւնը, իր նախնական եւ պարզ կազմակերպութեամբ, փոխանակութեան որպէս միջոց ընդգրկած էր ապրանքա-փոխանակութեան դրութիւնը: Այսինքն, փոխադարձ համաձայնութեամբ, եւ նախապէս սահմանուած քանակով եւ կշիռով, մէկը իր ունեցած ապրանքը կը փոխանակէր ուրիշին հետ: Այս ապրանքա-փոխանակութիւնը մինչեւ այսօր ծանօթ է եւ

գործածական, աւելի զարգացած միջոցներով եւ լայն տարողութեամբ, τρος ֆրանսերէն բառով եւ անգլերէն՝ barter.

Ապրանքա-փոխանակութեան դրութիւնը ժամանակի ընթացքին ստացաւ մեծ համեմատութիւններ, որպէս արդիւնք ընկերային եւ քաղաքական մեծ փոփոխութիւններու մանաւանդ Ք.Ա. 2000-1600 շրջանին երբ տեղի կ'ունենային ընկերային կարեւոր եւ զանգուածային յեղափոխութիւններ: Հին եւ ինքնամիտփ քաղաքակրթութիւններ կը յեղաշրջուին, յունական երկրամասը կ'ենթարկուի շարունակական արշաւանքներու Բոնեան, Աքէեան եւ Տօրեան ցեղախումբերու կողմէ: Բնիկ -Pélasges-ները կը գաղթեն եւ ապա կը հաստատուին Փոքր Ասիա՝ ուր կործանած էր հիթիթական պետութիւնը: Կը կազմուին յունական ազդեցութեամբ եւ մշակոյթով փոքր պետութիւններ, Խրիմի թերակղզիէն մինչեւ Հիւսիսային Սուրիոյ սահմանները: Այդ արշաւանքներուն արձագանգը կը գտնենք Հոմերոսի Տրոյվաղայի դիւցազներգութեան մէջ:

Հիւսիսէն Kassit կոչուած ցեղախումբերը կ'ասպատակեն եւ կը խախտեն Պապիլոնի քաղաքակրթութիւնը:

Աւելի հարաւ, Hykoos ըսուած ցեղախումբեր կը գրաւեն եւ իրենց լուծին տակ կը պահեն Եգիպտոսը:

Գտնուած է երկաթը որպէս գերակշիռ զինամետաղ: Կը գործածուի կառքը որպէս փոխադրական միջոց: Զին նոր դարաշրջան մը կը բանայ զինուորական եւ փոխադրական մարտերուն մէջ: Յեղախումբերու յեղափոխութիւնը, զինուորական արշաւանքները եւ մանաւանդ եգիպտական փոխվրէժի պատերազմները, թէեւ աւերիչ, սակայն առիթ կը ստեղծեն ժողովուրդներու շփման, կը լայննան հորիզոնները: Տեղական եւ պզտիկ սահմանի մէջ կատարուող ապրանքա-փոխանակութեան տեղ, բեռնաւորուած կարաւաններ կը ճեղքեն հորիզոններն ու տարածութիւնները: Սկիզբն է միջազգային վաճառականութեան: Կիպրացիք կը բերեն իրենց հարուստ հանքերուն պղինձը: Եգիպտացիք կը թափեն իրենց ոսկին: Հիթիթներն ունին արջառ եւ արծաթ: Կը ստեղծուին վաճառականական կամ փոխանակութեան կեղ-

2453





րոններ, ինչպէս Կիպրոս, Կրետէ եւ Lydia իր Sarde մայրաքաղաքով. այսօրուան Սարուխանը:

Բնականօրէն վաճառականութեան զարգացման առընթեր կը զարգանան նաեւ փոխադրական միջոցները: Ապրանքափոխանակութիւնն անբաւարար միջոց է այլեւս: Կ'որոնեն միջոց մը որ բաւարարութիւն տայ բոլոր երկիրներուն, բոլոր վաճառականներուն:

Որպէս միջոց, հին ժամանակներէ ի վեր ընդհանրացած էր արջառը, որ ինքնին հարստութիւն մըն էր՝ իր բազմազան օգտակարութիւններով: Կաթը, միսը, ոսկորը, մազը էական եւ անհրաժեշտ բաղկացուցիչներ էին արգէն առտնին տնտեսութեան:

Արջառը դարձած էր միակ եւ ընդհանրական միջոցը փոխանակութեան: Մարդոց հարստութիւնը կ'արտայայտուէր իրենց ունեցած արջառի քանակութեամբ: Անհատ մը այնքան հարուստ էր, որքան իր ունեցած արջառի թիւը, այլ խօսքով՝ անոր հարստութիւնը կը չափէին իր քանի «գլուխ» արջառ ունենալովը: Այս արտայայտութեան ձեւը այնքան արմատացեր էր, որ անոր հետքերը կը մնան նոյնիսկ մեր գործածած բառերուն մէջ: Երբ կ'ըսենք «դրամագլուխ», capital անոր մէջ կայ լատիներէն capita բառը որ կը նշանակէ գլուխ: Երբ Փրանսացի մը կը հարցնէ ուրիշի մը situation pécunière-ի մասին, անոր մէջ կը գտնենք pecunia լատիներէն ծագում ունեցող բառը, կամ pécule հին Փրանսերէն դրամի իմաստով գործածուած բառը: Մանսկրիտի մէջ rapia բառը, արջառ իմաստով կը գտնէք rupi բառին տակ որ անունն է ցարդ Հնդկաստանի մէջ գործածուող դրամին:

Արջառը սակայն, հակառակ իր ընդհանրացած հանգամանքին, իր կարգին կը դառնայ անբաւարար եւ մանաւանդ ոչ գործնական: Արջառը ունէր մեծ անպատեհութիւններ: Ան ամբողջութիւն մըն էր զոր կարելի չէր բաժնել: Կարելի չէր եզի մը ոտքը կամ գլուխը փոխանակել մասնակի փոխանակութեան եւ առեւտուրի համար: Կային արջառի փոխադրութեան դժուարութիւնները, մանաւանդ երկար տարածութիւններու վրայ: Արջառը ենթակայ էր հիւանդութեամբ փճանալու եւ կամ կողոպուտի պատճառով կորսուելու:

Ուրեմն, կը սկսին որոնումները, նոր պրպտում, աւելի գործնական միջոց գտնելու համար:

Ուշադրութիւնը կեդրոնացաւ ազնիւ մետաղներու վրայ, ինչպէս ոսկին եւ արծաթը: Այս երկու մետաղները, մանաւանդ ոսկին, յատկութիւններ ունէին որոնք ծանօթ էին մարդկութեան 6000 տարիներէ ի վեր: Փորձառութեամբ տեսնուած էր, թէ անոնք անվթար եւ անփոփոխ կը մնային կրակի եւ խոնաւութեան ազդեցութիւններէն: Հազուադէպ էին եւ փնտռուած: Ոսկին մանաւանդ, իր ամփոփոխ հանգամանքին համար, նկատուած էր որպէս անմահութեան խորհրդանիշ: Հետեւաբար այս ազնիւ մետաղները որդեգրուեցան իբրեւ փոխանակութեան միջոց: Նոր դրութիւնը սակայն կը ստեղծէր նոր անհրաժեշտութիւն մը, որոշելու համար այդ մետաղներու գործածութեան ընթացքին յարաբերական արժէքներու ճշգոյսը: Կը ծագէին նոր տուեալներ, այսինքն՝ «Չափը» եւ «Կշիռը»:

Կարելի չէր բնականօրէն, մէկ եւ կտրուկ ոստումով մը արջառային դրութենէն անցնիլ մետաղային դրութեան: Արջառի դաղափարը շատ խորունկ դրոշմուած էր սովորութիւններու հորովոյթով. այսպէս, Հռոմի առաջին դրամներուն վրայ կը գտնենք արջառի նկար եւ մինչեւ 4-րդ դար Հռոմի մէջ պետական տուրքերը կը սահմանուէին արջառներու հին դրութեամբ:

Սակայն մարդկային միտքը իր ճկունութեամբ եւ պարագաներու յարմարելու ճիգով, կը հնարէր նոր հիմնական արժէք մը, մէկ գլուխ արջառը կամ եզը փոխարինելով 8,5 կրամ ոսկիով:

Չանագան չափեր ու կշիռքի դրութիւններ ծանօթ էին հին աշխարհին, մանաւանդ Միջագետքի ժողովուրդներուն: Ծանօթ էր օրինակ Տալանդը (Talent) զոր յոյները Talenteon կը կոչէին: Տաղանդը կը կշռէր մօտ 30.026 կրամ, կը բաժնուէր 60 ստորագաս բաժիններու՝ Մաննա անուամբ եւ իւրաքանչիւր Մաննա իր կարգին 60 բաժնի կամ Shakel-ի որ կը հաւասարէր մօտ 8,30 կրամի: Shakel սեմական բառ մըն էր, որուն համապատասխան բառը արաբերէնի մէջ պիտի ըլլար Սախըլ: Տաղանդի կշիռը կը տարբերէր երկրէ երկիր:



Կրետէի եւ Կիպրոսի մէջ գործածուած են մինչեւ 60 քիլօ կշռող տաղանդի դրութիւններ, երբ Յունաստանի մէջ կը գործածէին 24, 25 եւ 26,5 քիլօ կշռող տաղանդներ:

Ինչ որ յիշատակութեան արժանի է, կը հանդիպինք տաղանդը պատկերացնող պղինձի կշիռներու, որոնք կը ներկայացնեն նկարը եզրի մը մորթին՝ իր բոլոր մանրամասնութիւններով, նոյնի՛սկ մագերով:

Մետաղի գործածութիւնը իր գործնական առաւելութիւններով մտաւ արագ զարգացման հունին մէջ: Ոսկին՝ թէեւ փնտռուած մետաղ, կը մնար անմատչելի եւ հազուագիւտ: Ընդհանրացան ուրեմն նաեւ արծաթի գործածութիւնը ինչպէս նաեւ երկաթի եւ պղինձի կիրարկումը: Այս մետաղները կը փոխադրուէին մօտ մէկ մեզր երկարութեամբ ցուպերու ձեւին տակ: Իսկ ոսկին եւ արծաթը, պզտիկ գաւազանիկներու, բոլորածեւ օղակներու, ինչպէս մատանիի եւ ապարանջանի ձեւով: Վճարումները կ'ըլլային այդ օղակներուն միջոցով եւ կամ գաւազանիկներով:

Այսպէս՝ գնումը վերջացնելէ ետք, գաւազանիկին տէրը, համաձայնուած չափով կամ երկարութեամբ մետաղի կտորը կը կտրէր կամ կը «հատանէր» եւ կը վճարէր ապրանքատիրոջ: Գուցէ այս շրջանէն մնացած է մեր լեզուին մէջ «Դրամ Հատանել» կամ «Դրամ Կտրել» բացատրութիւնը, զոր Կիլիկեան թագաւորներէն միայն Լեւոն Բ. (1270-1289) գործածած է իր դրամներուն վրայ, փոխանակ ընդհանրացած ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՍ ՍԻՍ մակագրութեան, գործածելով ՀԱՏԵԱԼ Ի ՔԱՂԱՔՍ ՍԻՍ յիշատակութիւնը:

Գուցէ նաեւ ներկայիս գործածուած մատանին կու գայ հնամենայ այդ շրջանէն, երբ սովորութիւն էր տղամարդուն համար որոշ վճարում կատարել իր ապագայ աներոջ՝ ստանալու համար իր հարսնացուին ձեռքը: Հետագային սակայն, մատանին, քրիստոնէական բարոյագիտութեան ազդեցութեան տակ, իր բոլորածեւ հանգամանքով, պիտի ստանար տարբեր իմաստ, իր մէջ իւրացնելով յաւիտենական սիրոյ եւ ներդաշնակութեան խորհրդանիշը:

Գալով գաւազանիկներուն, անոնցմէ վեց հատը խուրձի ձեւով կը սեղմուէր ափի մը մէջ, կամ բուռի մը մէջ եւ նոյն-

պէս ընդհանրացաւ «Բուռ մը» ըսելու ձեւը փոխանակ վեց գաւազանիկ ըսելու: Այս բառին համապատասխան բառը յունարէնի մէջ Drachma բառն է որմէ ծագած է հայերէն դրամ բառը: Իսկ իւրաքանչիւր գաւազանիկ ստացաւ այս բառին յունարէն համարժէք Obolos – Obole անունը: Ուրեմն վեց գաւազանիկ կամ Oboles կը հաւասարէին միայն բուռի մը՝ Drachmaի մը:

Իսկ բուռ մը երկաթէ գաւազանիկներու փոխարժէքը հաւասար էր 4,5 կրամ արծաթի: Ասիկա դարձաւ շատ կարեւոր անկիւնաքար մը դրամագիտութեան համար, որովհետեւ Drachma կամ Բուռը, իր 4,5 կրամ ծանրութեամբ արծաթով, պիտի դառնար հիմնական միաւորը ոչ միայն յունական դրամներուն, այլ հին բոլոր դրամական դրութեանց հիմնակշիռը:

Աթէնք՝ որ սիրտն էր յունական աշխարհին, ունէր հարուստ արծաթէ հանքեր Laurionի մէջ: Իր դրամական դրութիւնը հիմնած էր արծաթի վրայ եւ շնորհիւ իր ընդարձակ վաճառականութեան, իր մէկ, երկու եւ չորս Drachmaի դրամաշարքը կրցաւ թափանցել նոյնիսկ շատ հեռուոր երկիրներ:

Մինչ այդ սակայն, ուրիշ կարեւոր քայլ մը կ'առնուէր Lydiaի մէջ: Հոն կը գործածուէր electrum կոչուած մետաղը, որ առատօրէն կը գտնուէր բնութեան մէջ: Այս մետաղը խառնուրդ մըն էր  $\frac{2}{3}$  ոսկիի եւ  $\frac{1}{3}$  արծաթի: Այս համեմատութիւնը սակայն միօրինակ չէր եւ յաճախ մէկ կամ միւս բաղկացուցիչ տարրը կը ներկայանար տարբեր տարբեր համեմատութիւններով: Հետեւաբար, այդ մետաղով շինուած դրամները չէին կրնար ճշգրիտ եւ սահմանուած արժէքներ նկատուիլ: Հոս է որ նոր դարաշրջան մը կը սկսի դրամագիտութեան համար, երբ Lydiaի թագաւորը՝ Croesus (561-545) կ'որոշէ դադրեցնել այդ մետաղին գործածութիւնը, կը բաժնէ ոսկին եւ արծաթը, կը հիմնէ երկմետաղեան bimetallique դրութիւնը, սահմանելով երկու մետաղներուն փոխ-յարաբերական արժէքները,  $1-\frac{1}{3}$  համեմատութիւններով:

Մինչ այս, դադրած էր գաւազանիկներու եւ օղակներու



չրջանը: Աւելի գործածական դարձած էին լուբիայի ձեւով (lump) մետաղէ կտորներ, յաճախ սեփական զրոշմներով: Արդ, ընդունուած է, որ առաջին պետական դրամ հատանելու գաղափարը ծնած է նորէն Lydiaի թագաւորներու կողմէ: Lydia իր Jarde մայրաքաղաքով ամենահարուստ երկիրն էր Փոքր Ասիոյ մէջ՝ իր վաճառականութեամբ եւ տարանցիկ ճամբաներու ցանցով: Բնական է որ հոն աւելի շեշտուած կերպով զգացուէին դրամի կանոնաւորման անհրաժեշտութիւնը եւ շրջագայութեան դիւրութիւնները: Արդարեւ, հոն յղացան պետական կնիքով, ճշգրիտ եւ ապահով կշիռով եւ պետական փողերանոցներու արտադրութեամբ դրամի հատանումը: Ուրեմն, կը ձեւաւորուէր դրամը այնպէս, ինչպէս կ'ըմբռնենք այսօր, այսինքն՝ կլոր մետաղի կտորներ, պետական զրոշմով եւ ապահովութեամբ, ինչպէս նաեւ օրինական կշիռով եւ արժէքով:

Այդ զրոշմը կը դրուէր սկզբնական շրջանին դրամին մէկ կողմը միայն: Ժամանակի ընթացքին կը զարգանայ երկրորդ կողմն ալ զարդարելու գաղափարը: Սկզբնական շրջանին կը տեսնենք շարք մը կենդանիներու պատկերներ, որոնք հաւանաբար հետքերն են թոթեմական ըմբռնումներու: Անոնց կից կը զարգանան ուրիշ տարբերակներ, ինչպէս դիցաբանական, կրօնական, մարզական, պատմական եւ այլ արտայայտութեանց զրոշմներ: Մանաւանդ ծաւալով խոշոր դրամներու վրայ, արուեստագէտներ եւ փորագրիչներ կ'աշխատին իրար գերազանցել, մեզի տալով իսկապէս արուեստի գլուխ գործոցներ:

Վեհապետներու եւ թագաւորներու դիմագիծերն ու նկարները կ'երեւին աւելի ուշ ժամանակներու մէջ: Այս սովորութիւնը կը սկսի Մակեդոնացի Փիլիպպոս Բ-ի կողմէ՝ 360-ին Ք.Ա. եւ կը շարունակուի առատ արտադրութիւններով իր զաւակին՝ Մեծն Աղեքսանդրի կողմէ:

Հետաքրքրական է այժմ գիտնալ թէ ինչպէ՞ս կը պատրաստէին դրամը:

Դրամը մինչեւ 3-րդ դար Ք.Ա. Հռոմի մէջ կը պատրաստուէր ձուլելու եղանակով. ուրեմն, նախ կը շինուէր կաղապարը, ապա անոր մէջ կը թափուէր ձուլուած մետաղը: 3-րդ դա-

րէն յետոյ Հռոմ հետեւեցաւ յունական եղանակին, այսինքն, նախապէս պատրաստուած կլոր եւ սահմանուած կշիռով մետաղի կտորներու (blauks) վրայ, մուրճի հարուածներով, զրոշմ կրող կաղապարներ կը փոխանցէին: Անհրաժեշտ էր ուրեմն պատրաստել դրամի երկու երեսներուն համար, Ա. Բ. զրոշմներ կրող կաղապարներ: Բ. երեսը փորագրուած էր գլանի մը ծայրը, մինչ Ա. երեսը անշարժ հաստատուած էր սալի մը վրայ, տեղաւորուած փոսիկի մը մէջ:

Մետաղի կլոր կտորները մուրճով հարուածելէ առաջ, զանոնք կը տաքցնէին՝ որոշ չափով կակուղցնելու համար եւ կը զետեղէին փոսիկին մէջ, եւ ապա՝ գլանի ծայրը գտնուող զրոշմը ամրացնելով, մուրճի մէկ կամ երկու հարուածով երկու երեսներուն կու տային որոշուած զրոշմները եւ դրամը պատրաստ էր շրջագայութեան: Այս դրութիւնը շարունակուեցաւ մինչեւ 15-րդ դար, երբ աւելի կատարելագործուած մեքենաներու միջոցով կարելի եղաւ կանոնաւոր կլորութեամբ եւ շրջագիծով դրամներ պատրաստել:

Այժմ ակնարկ մը նետելով դրամի ծագման զանազան երկրամասերու մէջ, հետեւեալ պատկերը կը ներկայանայ:

Հիմնուելով ամենատարածուած վարկածներու վրայ, դրամը շրջագայութեան մէջ մտած է որպէս ապրանքավճարման միջոց՝ Lydiaի (Սարուխան) մէջ, Փոքր Ասիա, 7-րդ դարուն: Ոմանք կը պնդեն նաեւ Aegina կղզիին վրայ, քիչ մը հեռու Փիրէայէն, որ ժամանակ մը, վաճառականական շատ կարեւոր կեդրոն եղած է Յունաստանի եւ Եգիպտոսի, Կրետէի եւ սուրիական ցամաքամասերուն հետ:

Հռոմի մէջ դրամի գործածութիւնը սկսած է որոշ խարխափումով 6-րդ դարուն եւ կազմակերպուած միայն 3-րդ դարուն, յունական ազդեցութեան տակ, մանաւանդ, օրինակ առնելով Մեծն Յունաստանի գաղութներէն:

Հայկական դրամները կը սկսին Մեծն Տիգրանով եւ ըստ իս Ք.Ա. 84-83-ին Անտիոքի գրաւումով: Տիգրանեան դրամներու շարքը կը տեւէ մինչեւ իր գերզաստանին վերջին զարմը, որ շիջեցաւ Ք.Յ. 6-ին: Այս թուականէն յետոյ Հայաստանի մէջ գործածուած են տիրող կամ տիրապետող պետութեանց դրամները, ինչպէս Պարթեւական, Հռոմէական, Բիւզանդա-



կան եւ Արարական դրամներ: Ոմանք կը խորհին, թէ Արտա-  
շէսէն մինչեւ Տիգրան դրամ հատանուած է. ասիկա սակայն  
թոյլ վարկած մըն է, քանի որ ցարդ ոչ մէկ դրամ գտնուած է  
Տիգրան Մեծէն առաջ: Այս երեւոյթը ինքնին չափազանց  
առեղծուածային է եւ տարօրինակ, որովհետեւ գոնէ Արտա-  
շէս, լաւատեղեակ յունական բարքերուն եւ սովորութեանց,  
Մակնեգիայի պատերազմէն յետոյ, իր անկախ հռչակած Հա-  
յաստանի անունով դրամ հատանա՞ծ ըլլալու էր, որպէս փաստ  
եւ գրաւական իր վեհապետական անկախութեան:

Նո'յնն է երեւոյթը Բագրատունեաց շրջանին համար եւ կը  
կարօտի բացատրութեան, որովհետեւ իրենց յարաբերական  
եւ ամբողջական անկախութեան շրջանին կրնային դրամ հա-  
տանել իրենց անունով, հետեւելով օրինակին մեծ ու պզտիկ  
այն բոլոր էմիրներուն, որոնք իրենց անուամբ դրամ կտրած  
են երբեմն, յիշելով օրուան խալիֆային անունն ալ:

Կիլիկեան շրջանէն (1080-1375) ունինք իշխանական եւ թա-  
գաւորական դրամներու ճոխ շարք մը:

Արարական դրամները ուչ են բաղդատաբար: Արարական  
աշխարհակալութիւնները (638-640) իրենց առջեւ գտան  
հսկայ կայսրութիւն մը: Արարները սեփական դրամ չունէին  
իրենց թերակղզիին մէջ: Հետեւաբար դէմ յանդիման կը  
գտնուէին խրթին տնտեսական եւ ելեւմտական հարցերու,  
որոնց լուծումը վեր կը մնար իրենց սեփական կարողու-  
թիւններէն եւ փորձառութենէն:

Նուաճուած երկիրներու մէջ գոյութիւն ունէին դրամական  
երկու գլխաւոր դրութիւններ: Մին պարսկական Արծաթը եւ  
միւսը Բիւզանդական Ոսկին եւ Պղինձը: Նախ կացութիւնը  
ձգեցին իր վիճակին մէջ: Ապա՝ նմանօրինակ դրամներ պատ-  
րաստելով, անոնց վրայ դրոշմեցին յունարէն ΚΑΛΑ կամ  
արաբերէն ( طيب ) (ԹիՊ) կամ ( زج ) (ՃԱՁ) բառերը: Հետա-  
գային, անոնց վրայէն ջնջեցին քրիստոնէական նշանները,  
ինչպէս խաչը եւայլն: Իրենց պատրաստած դրամները յար եւ  
նման էին բիւզանդական դրամներուն, որոնց ընդհանուր  
պատկերը խորունկ տպաւորուած էր Սուրիոյ եւ Եգիպտոսի  
ժողովուրդներու մտքին մէջ: Կարելի չէր անմիջապէս շեղիլ  
այդ նախատիպէն:

660-680 թուականներուն Մաաուիէ երբ խալիֆայութեան  
տիրեց Դամասկոսի մէջ, փորձեց Բիւզանդական կերպարով  
դրամ հատանել, այսինքն փոխանակ բիւզանդական կայսրին  
եւ անոր ձեռքը գտնուող croix crucifère-ին, դրաւ ի'ր իսկ  
պատկերը՝ ձեռքը սուր մը բռնած: Սակայն նման բարք մը  
դէմ էր կրօնական ըմբռնումներու, քանի որ պատկերնե-  
րու եւ արձաններու գործածութիւնը հակառակ էր Գորանի  
ըմբռնումներուն: Մէքքէի եւ Մէտինէի զօրաւոր բողոքներուն  
վրայ՝ այդ փորձը ընդհատուեցաւ:

Վերսկսան Բիւզանդական տիպով դրամներ տպել, անոնց  
վրայ աւելցնելով արաբերէն մակագրութիւններ, ինչպէս  
ՊԻՍՄ-ԻԼԼԷՉ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԲԱՍՈՒԼ ԱԼԼԱՀ կամ ՏԱՐՊ  
ԷԼԻԷ - ՏԱՐՊ ԽԸՆՍՈՐ ՊԸՆ:

Այս շրջանը տեւեց մինչեւ 695-700 երբ Ապտ Ալ Մալէք Պըն  
Մըրուան, իր զինուորական նուաճումներէն յետոյ, ձեռնար-  
կեց ներքին բարենորոգումներու, մասնաւորապէս ուշադ-  
րութիւն դարձնելով դրամական հարցին վրայ:

Նախ արաբերէն լեզուն դարձուց պարտադիր եւ պաշտօնա-  
կան լեզու փոխան յունարէնի: Յետոյ հիմը դրաւ մեզի ծանօթ  
զուտ արաբական ինքնայատուկ դրամին, ուր պատկեր եւ  
պատկերանման դրոշմներ գոյութիւն չունին, այլ զուտ կրօ-  
նական մակագրութիւններ, վերցուած խալիֆայական կրօնքի  
հաւատոյ հանգանակէն:

Ահաւասիկ ուրեմն ամփոփ պատկեր մը դրամին պատմու-  
թեան, անոր ծագման տուն տուող պատճառներուն եւ անցած  
զանազան փուլերու զարգացման շուրջ:

Հալէպ, 23 Մայիս 1969



ՄԱՍ Ա.

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ  
ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ  
ՇՈՒՐՁ



Հայրենիքի օրհանգիստի օրը  
հայրենիքի օրհանգիստի օրը  
հայրենիքի օրհանգիստի օրը  
հայրենիքի օրհանգիստի օրը  
հայրենիքի օրհանգիստի օրը

**ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԿԻՆԿԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՅԻՇՈՒԱԾ «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» ՏԻՏՂՈՍԻՆ ՇՈՒՐՋ**

Հայ դրամագէտներ աննկատ ձգած են Կիլիկեան կարգ մը թագաւորներու կողմէ իրենց դրամներուն վրայ յիշած «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» տիտղոսը:

Այս տիտղոսը գործածած են մասնաւորապէս, իրենց արծաթ դրամներուն վրայ, Լեւոն Ա. (1199-1219), Լեւոն Բ. (1270-1289) եւ Լեւոն Ե. (1374-1375), իր վատորակ եւ խղճաւի (billon) արծաթապղինձ դրամներուն վրայ, իր շատ կարճատեւ գահակալութեան շրջանին: Այս վերջին պարագան կրնայ բացատրուիլ անով, որ Լեւոն Ե. ուզած է հաւանաբար աղօտօրէն արձագանգել առաջին երկու Լեւոններու կողմէ գործածուած տիտղոսին:

Հայր Ղեւոնդ Ալիշան իր Սիսուանին մէջ (էջ 482) կը յիշէ թէ այս «պանծալի հանրական կոչումն «Ամենայն» միայն ի խորագրէ առաջնոյ թղթոյ մերոյն Լեւոնէ առ Պապն գտանի եւ ոչ բնաւ այլ թուղթսն կամ ի պարգեւագիրսն արժան դիտման եւ բննութեան է այդ»:

Իսկ ծանօթութիւններու բաժնին մէջ, նոյն էջին վրայ, Հայր Ալիշան կ'աւելցնէ «առ թագաւորութեան Լեւոնի մեծ մասն ազգիս ընդ իշխանութեամբ էր Սելջուկեանց եւ Վրաց ի Մեծ Հայս, ի Փոքրն՝ ընդ սուլտանօք Իկոնիոնի, Սեփաստիոյ, Կարնոյ... Սակայն անկ է հասանել, եթէ Լեւոն եւ յաջորդք իւր ոչ լոկ Հայոց Կիլիկեան մարզից ցանաչէին

ԱՄԱՄՄ

ՄԱՄԱԳԱՄԱՄ-ՅԱՆ  
ՄԱՄԺԳԻՈՅԻՔԱՄՄԱՂԻ  
ՋԴԻՈՇ



իսկապէս թագաւորք, այլի մերձաւորացն որք ի զանազան վիճակն արեւմտեան իշխանաց երկրին Ասորոց եւ որք ի Կիպրոս»:

Հայր Ալիշանի «Միսուան»ը հրատարակուած է 1885-ին եւ արդիւնք երկար տարիներու սպառիչ պրպտումներու: Ան տեղեակ չէր անշուշտ Ռուբինեան դրամներու վրայ յիշուած մակագրութիւններուն, որոնց դասաւորումը պիտի հրատարակուէր 1892-ին, Հայկ. դրամագիտութեան Կիլիկիոյ բաժնի հիմնադիր, Հ. Կղեմէս Միպիլեանի կողմէ, ուր «ԱՄՆՆԱՅՆ» տիտղոսը խուսափած չէր գիտնական վանահօր սրատես ուշադրութենէն:

Հայր Ալիշան հիմնուելով Պապին եւ Լեւոն Ա. ի միջեւ տեղի ունեցած թղթակցութիւններուն վրայ, կը խորհի թէ այս տիտղոսը գործածուած է, այլեւայլ երկիրներու մէջ գոյութիւն ունեցող հայկական գաղութներու առկայութեան պատճառաւ:

Մեր յօդուածին նպատակն է, հարցին մօտենալ տարբեր տեսանկիւնէ, ուսումնասիրելով քաղաքական եւ դիւանագիտական որոշ պայմաններ, որոնք 1199-1219 թուականներուն, Լեւոն Ա. ի գահակալութեան ընթացքին, շատ հաւանաբար, առիթ ստեղծեցին Լեւոնի պէս հայրենասէր եւ փառապանծ վեհապետի մը, ծրագրելու եւ հետապնդելու համար համահայկական ընդարձակ պետութեան մը ստեղծումը՝ կեդրոն ունենալով Կիլիկիան:

Անկասկած «ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ» տիտղոսը նկատի չունէր միայն Կիլիկեան թագաւորութեան տարածքը: Բացի Լամբրոնի կեդրոնախոյս ձգտումներէն, Կիլիկիոյ մէջ այլ կիսանկախ կամ ինքնիշխան շրջաններ գոյութիւն չունէին: Իսկ Լամբրոն իր կարգին զսպուեցաւ Լեւոն Ա. ի կողմէ: Հետեւաբար «ԱՄՆՆԱՅՆ» տիտղոսը եւ անոր հեռաւոր իմաստը պէտք է փնտռել Կիլիկիոյ սահմաններէն դուրս:

Յատկապէս Լեւոն Ա. ի գահակալութեան շրջանին, (1199-1219), երկու այլ երկրամասերու տիրակալներ իրենք զիրենք կը յայտարարէին որպէս «Հայոց թագաւորներ»: Այդ երկրամասերն էին Վասպուրականի վրայ իշխող Շահ Արմէնները եւ



Լեւոն Ա.  
Ամենայն Հայոց Թագաւոր



Անիի ու անոր շուրջ հաստատուած Չաքարեանները, որպէս Շահնշահ՝ թագաւոր, աշխարհակալ եւ կայսր Բագրատունեաց Տան:



## ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇԱՀ ԱՐՄԷՆՆԵՐԸ

Ինչպէս ծանօթ է, Վասպուրականի վերջին թագաւորը՝ Սենեքերիմ, 1021-ին լքեց իր երկիրը, չկարողանալով տոկալ Սելճուքներու ահաւոր գրոհներուն եւ գերագանց ուժերուն, եւ երկիրը յանձնեց Բիզանդացիներուն, տեղը ստանալով Սեբաստիան եւ շրջակայքը: Ըստ մեր մատենագիրներուն, ան հեռացած է իր իշխաններով, ազատագունդով եւ 400․000 հոգի հաշուող զանգուածով մը, որ Վասպուրականի բնակչութեան մէկ երրորդը գնահատուած է, յոյներուն ձգելով 8 քաղաքներ, 72 բերդեր եւ 4000 գիւղեր:<sup>(1)</sup>

Մեր նիւթէն դուրս է այս թիւերը վերլուծել: Դժուար է նաեւ երեւակայել որ ժԱ. դարուն տիրող պայմաններով, հնարաւոր ըլլար 400-450 հազար հոգի փոխադրել Վասպուրականի զանազան շրջաններէն, տեղաւորելու համար Սեբաստիա եւ անոր կից գտնուող շրջաններուն մէջ:

Գալով մայր հողին վրայ մնացած հայուիթեան, եթէ հաշուենք որ մեր շուրջ 4000 գիւղերէն իւրաքանչիւրին մէջ կ'ապրէին միջին հաշուով, 50 ընտանիք եւ իւրաքանչիւր ընտանիք կը բաղկանար 5 անձերէ, կ'ունենանք մօտաւորապէս 1․000․000 հոգիի բնակչութիւն մը, որուն վրայ պէտք է աւելցնել ութը քաղաքներու բնակչութիւնը եւ այսպէսով, կարելի է ենթադրել, թէ Սենեքերիմի հեռա-

ցումէն ետք, մայր հողին վրայ յամառած էր մնալ մօտ մէկ միլիոն հաշուող հայուիթիւն մը:

ԺԲ. դարու առաջին քսանամեակին, հոն հաստատուող Պէնի Սուբմանները, Սելճուքեան Պէնի Օրթուք ճիւղէն, սկսան գործածել «Շահ Արմէն», թագաւոր Հայոց, տիտղոսը, սիրաշահելու համար մեծամասնութիւն կազմող հայ տարրը: Անոնք ամրացան Խլաթի եւ Վանայ լիճի հիւսիսային երկրամասին մէջ, տարածուելով մինչեւ Նփրկերտ, Խոյ, Սալմաստ, Մուշ եւ Սասուն:<sup>(2)</sup>

Անոնք փորձեցին գրաւել հիւսիսային Հայաստանը յաջորդական արշաւանքներով, սակայն պարտութիւն կրեցին Օլթիի առջեւ 1160-ին եւ յաջորդ տարի՝ 1161-ին, Անիի առջեւ:<sup>(3)</sup>

Էյուպեան շրջանին, այս երկրամասը ինկաւ Սալահէտտինի եղբոր՝ էլ Ատէլի տիրապետութեան տակ, ուր 1200-1210 կը տիրէր իր աւագ որդին՝ էլ Աուհատ, ապա՝ 1210-1221 կրտսեր որդին էլ Աշրաֆ, որոնք իրենց դրամներուն վրայ որոշապէս յայտարարեցին իրենց «Շահ Արմէն» տիտղոսը մանաւանդ Մայաֆարդին-Նփրկերտ հատանուած պղինձներուն վրայ, հետեւալ մակագրութիւններով:

— الملك الازحد نجم الدنيا والدين شاه ارمن ايوب ابن الملك الكامل (4)

— الملك الاشرف مظفر الدين شاه ارمن ابو الفتح موسى (5)

Ծանօթ է թէ Յոյները, Հռոմէացիներն ու Արաբները դրամը գործածած են տեղեկատուութեան, քարոզչութեան որպէս միակ ու ազդու միջոց, շրջանառութեան ընդարձակ տարածքի վրայ: Հետեւաբար, էյուպեանները իրենց դրամներով կը ձգտէին պաշտօնականացնել իրենց «Հայոց թագաւոր» ըլլալու հանգամանքը՝ Վասպուրականի մէջ գոյութիւն ունեցող զանգուածներուն մօտ: Անոնք ճիգ չէին խնայեր նաեւ սիրաշահելու համար Հայ տարրը, որուն հետ լաւ վարուած են, փափաքելով կազմել աւատական մեծ պետութիւն մը՝ Հայ տարրին վրայ հիմնուելով: Բարեկամական յարաբերութիւններ մշակած են Սասունի Վիգէն եւ Ամուկի հայ իշխաններուն հետ:<sup>(6)</sup>





Պղինձ գրամ էլ Աշրաֆի

Շահ Արսևն

էյուպեան Մելիքները թոյլատու գտնուած են նաեւ կրօնական ու պաշտամունքի հարցերու կապակցութեամբ, մանաւանդ Իւանէ Չաքարեանի ձախող արշաւանքէն յետոյ Խլաթի վրայ, ուր գերութենէ ազատելու համար, այլ գոհողութիւններու կարգին, իր աղջիկը՝ Թամթան կնութեան տուաւ էլ Մելիք էլ Աուհատին 1209-ին, որուն մահէն յետոյ, Թամթան ամուսնացաւ անոր եղբոր էլ Աշրաֆին հետ:

Մեր մատենագիրները Թամթայի ազդեցութեան կը վերագրեն քրիստոնեաներու եւ հայերու հանդէպ տիրող հանդուրժողութիւնն ու բարեացակամութիւնը:

Յ. Մանանդեան այսպէս կու տայ Գանձակեցիի գնահատանքը. —

«Մեծ օգուտ եղաւ կնոջը Թամթայի սուլթանների տունը գալուց, որովհետեւ նրանք դիրութիւններ տուին քրիստոնեաներին որ գտնուում էին իրենց իշխանութեան տակ եւ մանաւանդ երկրին Տարօնոյ ու Վանքերը որ այնտեղ էին գտնուում հարջի տակ էին, իսկ նրանք թեթեւցրին հարկի չափը եւ մի մասը հարկին էլ բոլորովին վերցրին»:

Որքան ալ փաղաքշական ըլլան Հայ մատենագիրներու վկայութիւնները Շահ Արմէններու բարեացակամ եւ թոյլատու

վերաբերումին շուրջ, որոշ է անշուշտ որ այդ վերաբերումը կը թելադրուէր քաղաքական ծրագրուած նպատակներէ, որոնք կը ձգտէին սիրաշահիլ մեծամասնութիւն կազմող ձեռներէց Հայ տարրը, օգտուելու համար անոր տնտեսական ու վաճառականական մարդերու մէջ ընծայած բարիքներէն եւ քաջալերելու համար այլ նահանգներու մէջ ապրող հայերը, որպէսզի հաստատուին Շահ Արմէններու երկրամասին մէջ:

Այսպիսի տիտղոսով դրամներու հատանումը, կիլիկիայէն դուրս, ուրիշ Հայ թագաւորութեան մը գոյութիւնը չեփոքող՝ անշուշտ մտահոգիչ պիտի ըլլար Լեւոն Ա-ի համար, որ կը ձգտէր մեծ Հայաստանի մը վերականգնումի ծրագրին իրագործման, հայաշատ կեդրոններու կցումով:



## ՉԱՔԱՐԵԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՆԻՆ

Բագրատունեաց զոյգ Հարստութեանց, Շիրակի ու Վանանդի, կործանումէն 140 տարիներ յետոյ, Չաքարեաններու զինուորական փայլուն վերելքն ու նուաճումները կը զուգադիպին Լեւոն Ա-ի իշխանական ու գահակալական շրջաններուն (1187-1219): Սարգիս Չաքարեան, 1185-ին սպասալար է արդէն հայ-վրացական բանակներուն կողմէ եւ որպէս տիրոյթ շնորհուած Չաքարէ սպասալարին: (7)

Ըստ Մանանդեանի «համեմատաբար կարն ժամանակում Չաքարէ եւ Իւանէ եղբայրները նուանցին Սեւանի շուրջ գտնուող բոլոր հայ շրջանները, հին Արարատի գրեթէ ամբողջ նահանգը, նաեւ Գուգարքը, Տայքը, Սիւնիքի եւ Ուտիքի բազմաթիւ գաւառներ»: (8)

Հետեւելով դարձեալ Մանանդեանին՝ «Չաքարեանների ազատագրած եւ քաղաքականապէս վերականգնած Հայաստանը, որը նոյնքան հզօր էր եւ ընդարձակ, ինչպէս եւ Կիլիկիոյ Ռուբինեան թագաւորութիւնը, թէեւ վրաստանին ենթակայ վասալական երկիր էր, սակայն, իրապէս, հանդիսանում էր բոլորովին ինքնուրոյն երկիր»: (9)

Ազատագրուած Հայաստանի մէջ տիրող Չաքարեաններու կախումը վրացական գահակալներէն, վասալական կամ ճորտական գծով, ունէր պարզապէս անուանական բնոյթ: Գործնականապէս, այդ հողերու ազատագրումը իրագործուած էր

առաւելագէս վրացական բանակին կողքին կառուող հազարաւոր հայ մարտիկներու արիւնով:

Այդ բանակներն էին որոնք Չաքարեաններու առջնորդութեամբ, 1191-1200 շրջանին, գրաւեցին յաջորդաբար Շիրակը, Անբերդը, Անին, Բջնին, Դուինը եւ Կարսը:

Այս մասին վկայութիւն մը Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցէն. -

«Պատմական Հայաստանի մեծագոյն մասը ընկել էր Չաքարեանների ձեռքը անկի մեծ քան Բագրատունեաց եւ Սիւնեաց թագաւորութիւնները միասին: Ի գուր չէ նրանց իշխանութիւնը «աշխարհակալ տէրութիւն», «աշխարհակալութիւն», «պետական իշխանութիւն», «թագաւորութիւն» բառերով են սահմանում: Նորանուան Հայաստանը Չաքարեանների ձեռքի տակ, վիրական մի սուկ գաւառ չէ, այլ մի պետութիւն»: (10)

Ուրիշ հաստատում մը եւս. Չաքարեանները՝ տեղաւորուած Հայաստանի մէջ, կը ծրագրէին վերականգնանացնել Բագրատունեաց թագաւորութեան հին փառքը. -

«Չաքարեան տոհմը Չաքարէից սկսած իրեն վերագրել է Բագրատունեաց Շահնշահ տիտղոսը, ելնելով այն բանից, որ Բագրատունեաց հայերի նկատմամբ ունեցել է քաղաքական սեփական եւ տիրական իրաւունք, այլ խօսքով, ժառանգորդն է դարձել նաեւ այդ տարածքի նախկին սեփականատէրերին աւանդական տիտղոսը»: (11)

Շահնշահ կը նշանակէր թագաւոր, ըստ Բագրատունեաց շրջանին ընդունուած սովորութեան, ինչպէս պիտի հանդիպինք քիչ յետոյ, զանազան արձանագրութիւններու մէջ:

Անշուշտ Չաքարեաններու այս բացայայտ իւրացումը պարզ քմայքի արդիւնք չէր, այլ «Չաքարեան իշխանների ու իրենց իշխանութեանը տրուած վերոյիշեալ տիտղոսները նրանց վարած ինքնուրոյն քաղաքականութեանը եւ Բագրատունիների թագաւորական տան ժառանգորդների դերում հանդէս գալը, ի հարկէ պատահական երեւոյթներ չէին: Դրանք արդիւնք էին քաղաքական այն իրադրութեան որ ստեղծուել էր Անդրկովկասում XII դարի վերջին տասնամեակներում եւ XIII դարի սկիզբները, քաղաքական նպաս-



տաւոր պայմաններում հայկական պետականութեան վերականգման. Ձափարեանները ակնկալութիւնները դրան որոշակի դրսեւորումներն էին»։<sup>(12)</sup>

Հայր Ալիշան, իր «Շիրակ» արժէքաւոր ուսումնասիրութեան մէջ, կը յանդի նո'յն եզրակացութեան, շեշտելով թէ Ձափարեանները շինութիւններով վերակենդանացուցին Բագրատունեաց մայրաքաղաքը եւ իբրեւ «յաջորդէ առաջին թագաւորացն Շահնշահ կոչեցան ուրէ՛ք եւ հայօրէն իսկ թագաւոր գրի, որոնց թէեւ պակաս լինէր փառաւոր կոչումն կամ գլխոյ պսակն... սակայն ոչ ինչ պակաս յինճնագլուխ թագաւորէ Ձափարէն վարէր եւ իշխէր ի սահման լայնածաւալ ժառանգութեան իւրոյ... եթէ չէր ի վերայ հասեալ փոթորկին թաթարաց հոչակ իւր թագաւորութիւն արեւելեան հայոց յԱնի որպէս արեւմտեացն Ռուրիկեանց ի նմին ժամանակն ի Սիւս»։<sup>(13)</sup>

Հայ ժողովուրդը Ձափարեանները ճանչցաւ որպէս իր հարգատ առաջնորդները ու Բագրատունեաց թագաւորութեան ժառանգորդները, նուիրականացնելով անոնց Շահնշահ-թագաւոր տիտղոսները, զորս ամբողջովին արդարացուցին։ Շատ հաւանաբար, տարբեր պիտի ըլլար ճակատագիրը Հայ ժողովուրդին, եթէ չպատահէր աւերիչ փոթորիկը Մոնկոլ հրոսակներուն, որոնց աշխարհաւեր արշաւանքները աւերակի վերածեցին Ասիոյ մեծ ու պզտիկ բոլոր երկիրներն ու Հայաստանը։ Շահնշահ եւ թագաւոր տիտղոսներու համարժէք բնոյթը փաստուած է տարբեր շրջաններու արձանագրութիւններով։ Բագրատունի թագաւորները գործածած են առաւելաբար Շահնշահ տիտղոսը։ Այսպէս Հոռոմոց վանքի Սբ. Գէորգ մատրան արձանագրութիւնը՝ ուր յիշուած է. «Ով հոչակաւոր դու եւ մեծանունդ ի վկայս սուրբ Գեորգիոս աւգնիա բարեխաւսութեամբ Գագկայ Շահայնշահի շինողի վկայարան գայտու...»։<sup>(14)</sup>

«Ի — ՆՁԵ (1036) թան եւ Սմբատ Շահնշահ որդի Գագկայ Շահնշահի ետու գիմ գեղս գՍահառունիս ի մեր հանգստարանս թագաւորաց ի տիեզերահոչակ վանսս Հոռոմոսի...»։<sup>(15)</sup>

«Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր Տիառն Պետրոսի Հա-

յոց Կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սմբատա որդւո Գագկա Շահնշահի ի ՆՁԵ (1036) թուականիս ես Ապլըղարիպ մարգպան որդի Գրիգոր իշխանի եւ թոռն Ապուղումրի եւ եղբայր Վահրմա եւ Վասակա շինեցի գՍուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի»։<sup>(16)</sup>

Բագմաթիւ այլ արձանագրութիւններ կարելի է յիշել, ուր Բագրատունի գահակալներ գործածած են Շահնշահ տիտղոսը փոխան թագաւորի։ Այս աւանդութիւնը շարունակած են նաեւ Ձափարեանները սկզբնական շրջանին։<sup>(17)</sup>

Իրենց պետականութիւնը հաստատելէ յետոյ, կը թուի թէ Ձափարեանները նախընտրած են գործածել «Թագաւոր» տիտղոսը։

Այսպէս, Անիի հարաւակողմը Գըզ-Գալէ կամ Կուսանաց Վանք կոչուած եկեղեցիի պատին վրայ յիշուած է. «Սուրբ մեղսաբաւիչ պատարագ որ ի սմա կատարի Սահակադիտոյ է ծնաւդի Ձափարիայի եւ Յիւանի թագաւորացն Հայոց»։<sup>(18)</sup>

Ձափարիայի որդի Շահնշահը Խնձկոնից վանքի 1216 թուականի մէկ արձանագրութեան մէջ կոչուած է «ածաւեր (աստուածասէր) բարեպաշտ թագաւոր»։<sup>(19)</sup>

Յիշատակարանի մը մէջ գրուած Հոռոմոսի վանքին մէջ, Շահնշահի համար ըսուած է «յաջորդեալ գաթոռ թագաւորութեան հաւրն իւրոյ»։ Իսկ անոր որդի Ձափարեանը կոչուած է «թագածին»։<sup>(20)</sup>

Գեղարդի տաճարը շինուած է «ի ժամանակս թագաւորագնոյն Ձափարիայի եւ Իւանէի»։ Իսկ Իւանէ ուրիշ արձանագրութեան մէջ ինքզինք կ'անուանէ «թագագն» եւ «աշխարհակալ»։<sup>(21)</sup>

Խուսափելու համար խճողումէ, մենք յիշեցինք քանի մը արձանագրութիւններ միայն, որոնց թուականները կը գուրգուրուին Լեւոն Ա. ի գահակալութեան շրջանին հետ։

\*  
\*\*

Անկախաբար Շահ Արմէններու եւ Ձափարեաններու տիրա-



պետութեան տակ գտնուող հայահոծ կեդրոններէն, կային նաեւ Վանայ Լիճին Արեւմուտքին տարածուող Տարօնի եւ Սասունի զուտ հայկական նահանգները, ուր հայ տանուտէրներ եւ իշխաններ կ'իշխէին կիսանկախ եւ երբեմն բոլորովին անկախ վիճակի մէջ: 1056-ին կը յիշուի Թոռնիկ Մամիկոնեան որդի Մուշեղի, որ խրոխտ ու պատերազմասէր իշխան մըն էր, Մամիկոնեաններու յատուկ մարտունակ յատկանիշներով. եւ սակայն, անոնց պէս, զուրկ քաղաքական ու դիւանագիտական ճկունութենէ: Ան ամուսնացած էր Մագիստրոս Գրիգոր Պահլաւունիի աղջկան հետ:

Թոռնիկի յաջորդները Չորտուանել Ա. Վիգէն, Չորտուանել Բ. եւ իր երկու զաւակները Հեթում ու Շահնշահ կրցան գոյատեւել մինչեւ 1190:<sup>(22)</sup>

Տարօնի եւ Սասունի հայ բնակչութեան թիւը, ըստ կարգ մը բանասէրներու, գնահատուած է մօտ մէկ միլիոն: Այս թիւը չենք կարծեր որ չափազանցուած ըլլայ: Մտթէնոս Ուռհայեցի իր ժամանակագրութեան մէջ, անդրադառնալով Փիլարտոսի եւ Թոռնիկի պատերազմական գործողութիւններուն, կը յիշէ թէ Մամիկոնեան իշխանը կրցած է փութով Փիլարտոսի դէմ հանել լեռնցիներէ կազմուած բանակ մը, որ կը քաղկանար 50 հազար հետեւակէ եւ 6 հազար հեծեալներէ:<sup>(23)</sup>

Եթէ՞ ոչ խիտ սակայն հոծ բնակչութեամբ քաղաքներու ցանց մը կար Տարօնէն Կիլիկիա երկարող տարածքին վրայ: Անիի ու Կարսի անկումէն ետք, գաղթականութեան ալիք մը սկսաւ տեղաւորուիլ Կապադովկիա, Կոմագենէ, Փոքր Հայք եւ Հայկական Միջագետք, խոյս տալով Սելճուք թուրքերու աւերիչ եւ մահասփիւռ արշաւանքներէն: Ստեղծուեցան կարեւոր հայկական կեդրոններ, որոնք եթէ զերծ մնացին Սելճուք թուրքերու հարստահարութիւններէն, ստիպուեցան սակայն դիմագրաւել բիւզանդական կայսրութեան հնամենի կրօնական ճնշումները եւ դաւանափոխութեան բռնութիւնները:

Դառնացած բայց հոգեպէս աննկուն, հայ զանգուածները կը ձգտէին նոր եւ անկախ պետութեան մը վերականգնման: Առաջին փորձը կատարեց մեր պատմութեան մէջ աննպաստ գիծերով ներկայացուած զինուորական դէմք մը ու քաղաքական հեռատես գործիչ մը՝ Փիլարտոս Վարաժնունին: Ան

փայլուն դիրքի հասած էր Բիւզանդական բանակին մէջ, որպէս զօրավար:

Մանազկերտի ճակատագրական պարտութենէն յետոյ, 1071-ին, ան առիթը յարմար նկատեց ձեռնարկելու համահայկական պետութեան մը հիմնարկութեան: Բիւզանդական կայսրութիւնը զբաղուած ըլլալով ներքին պառակտումներով, ի վիճակի չէր միջամուխ ըլլալու:

Հայ ազնուականներ ու իշխաններ լքելով իրենց հայրենի կալուածները իրենց ճորտերով ու զինուորական ուժերով ապաստանած էին Արեւմտեան Հայաստան: Փիլարտոս զանոնք միացուց իր հովանաւորութեան տակ, աւատապետական զրութեամբ եւ ստեղծեց անկախ պետութիւն մը, որ կը տարածուէր Անտիօքէն մինչեւ Տարօնի սահմանները: Կարեւոր քաղաքներու մէջ տեղաւորեց հայ կառավարող իշխաններ եւ կուսակալներ: Անհրաժեշտ էր նաեւ զինուորական տեսակէտով, ապահովել Տարօնի աջակցութիւնը, արգիլելու համար Սելճուք թափանցումը: Ճիգ թափեց համոզելու Տարօնի եւ Սասունի իշխան Թոռնիկը, որ գործակցի իր ծրագրի իրագործման համար: Անոր մօտ զրկեց կաթողիկոս Գրիգոր Վահրամ Վկայասէր Պահլաւունին, որդին Մագիստրոս Գրիգոր Պահլաւունիի, համոզելու համար իր փեսան, քրոջ ամուսինը:

Թոռնիկ իշխան մերժեց: Դժբախտաբար, ան չունեցաւ քաղաքական հասունութիւնն ըմբռնելու համար հեռատես Փիլարտոսի համահայկական ծրագրի տարողութիւնը: Հարցը վերջացաւ պատերազմով ու Փիլարտոսի պարտութեամբ, թէեւ Թոռնիկ ալ զոհ գնաց նենգօրէն լարուած թակարդի մը: Պէտք է ընդունիլ որ Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը չկրցաւ նաեւ գտնուիլ իր առաքելութեան բարձրութեան վրայ: Ան մերժեց վերադառնալ Փիլարտոսի մօտ եւ մնաց Տարօն, պատճառ դառնալով որ Կաթողիկոսական երկրորդ աթոռ մը ստեղծուի Հոնիի մէջ, Մարաշի մօտ:<sup>(24)</sup>

Թոռնիկ իշխանի եւ Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսի ժխտական վերաբերումը Փիլարտոսի հանդէպ կրնար նաեւ ընտանեկան կամ տոհմային պատճառներ ունենալ, թէեւ պատմական տուեալներ չունինք: Դատելով իր մականունէն, Փի-



լարտոս ծագում առած էր Արարատի Վարաժնունիք գաւա-  
ռէն, որուն բերդաքաղաքն էր Բջնին, նստավայրը Պահլաւու-  
նիններուն: (25) Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի գայն լքեց  
1045-ին, ի նպաստ Բիւզանդական Կայսրութեան եւ փոխարէ-  
նը ստացաւ Միջագետքի, Վասպուրականի եւ Տարօնի կարգ  
մը շրջաններու բռնաշտովութիւնը: (26)

Փիլարտոս ճախողեցաւ 1085-ին՝ չկարենալով տոկալ Արե-  
ւելքէն եւ Հիւսիսէն յարձակող Սելճուք թուրքերու եւ Դանիշ-  
մանտներու ճնշող արշաւանքներուն: Փիլարտոս յաջողած էր  
սակայն հայկական կեդրոններ ու իշխանութիւններ ստեղծել,  
որոնց կառավարիչները հայեր էին: Այսպէս, Ուռհայի մէջ  
կար Թորոս անունով իշխան մը, իսկ Մարաշի մէջ՝ Թաթուլը,  
Մալաթիոյ մէջ՝ Գարրիէլ մը, Գեսունի մէջ՝ Գող Վասիլը, որ  
կրցաւ տոկալ մինչեւ 1116, ու մեռաւ անժառանգ: Իր ամենա-  
յաջող ճորտերը եղան Ռուբինեան իշխանները, որոնք Կիլի-  
կիոյ մէջ հիմնեցին հայկական նոր թագաւորութիւն մը, որ  
պիտի գոյատեւէր մինչեւ 1375: Փիլարտոսի ձեռնարկը թէեւ  
անյաջող, բայց համահայկական պետութեան մը հեռանկարը  
խանդավառեց հետագայ սերունդներն ու քաղաքական գոր-  
ծիչները, որոնց գլխաւոր ախոյեանները պիտի հանդիսա-  
նային Կիլիկիոյ փառապանծ թագաւորը՝ Լեւոն Ա. եւ իր յա-  
ջորդները, հաւանութեամբ եւ գործակցութեամբ Արեւելեան  
Հայաստանի ղեկավար դէմքերուն: Լեւոն Ա. ի հմայքը եւ  
ազդեցութիւնը տարածուած էր մինչեւ Զաքարեաններու հիմ-  
նած իշխանութիւնը: Այսպէս օրինակ, երբ Զաքարէ Զաքար-  
եան կը դիմէ իր խոստովանահօր՝ Մխիթար Գօշին, խնդրելով  
որ հայկական բանակները, վրացական բանակներուն նման,  
չարժուն եւ տեղափոխուող խորաններ ունենան ընկերացող  
քահանաներով միասին, պատարագ մատուցանելու համար,  
Մխիթար Գօշ նման քայլ մը հակառակ գտնելով Հայաստան-  
եայց Եկեղեցւոյ աւանդութիւններուն, կը պատասխանէ.-  
«Մեք ոչ կարեմք առնել զայդ առանց հրամանին կաթողի-  
կոսին Հայոց եւ թագաւորին Լեւոնի»: (27)

Իսկ երբ Լեւոն թագաւոր ու Հոռմկլա նստող Յովհաննէս  
կաթողիկոս համամիտ կը գտնուին Զաքարէ սպասաւարին  
խնդրանքին, Արեւելեան վարդապետները Անիի մէջ գու-

մարուող ժողովի մը ընթացքին, նախանձախնդիր աւանդա-  
կան օրէնքներու պահպանման, կ'ուզեն հակառակիլ եւ համո-  
զել Մխիթար Գօշը, որ միանայ իրենց: Բայց իրաւաբան վար-  
դապետը կը մերժէ առարկելով. «Զի՞ մեղադրէք ինձ զի հրա-  
ման ունի Զաքարէն ի կաթողիկոսէն եւ ի թագաւորէն Լեւոնէ  
առնել զայս եւ մեք թէ կամիմք եւ թէ ոչ, աս ոչ դադարէ զայս  
առնելոյ»: (28)

Որոշ է թէ Կիլիկիոյ նորաստեղծ թագաւորութիւնը եւ իր  
փառասէր ու կորովի թագաւորը իրենց վրայ կեդրոնացուցած  
էին, Կիլիկիայէն մինչեւ Բագրատունեաց Հայաստանի տա-  
րածքին վրայ տեղաւորուած հայ զանգուածներու յոյսերն ու  
ակնկալութիւնները, համահայկական Ամենայն Հայոց Հա-  
յաստանի մը վերաստեղծման հեռանկարով:

Լեւոն թագաւոր կը ձգտէր իր դրամներով, այդ զգացում-  
ներն ու յոյսերը վառ պահել տուայտող բայց լիայոյս զան-  
գուածներուն մօտ: Գուցէ պատմութիւնը տարբեր ճակատա-  
գիր որոշէր Հայ ժողովուրդին, եթէ չըլլար 1225-էն սկսեալ  
մոնղոլական արշաւանքներու նոր դարաշրջանը, որ նոր էջ մը  
պիտի բանար աւերի, մոխրի եւ գաղթականութեան՝ խորտա-  
կումովը գեղեցիկ տեսիլքներու:



**ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՐՆԵՐ**

- 1 և 26— Օրմանեան Ա.րֆ. «Ազգապատում», Տպ. Սեւան, Պէյրուք, 1959, էջ 1198:
- 2 և 6— Ա. Ալպոյանեան «Պատմական Հայաստանի Սահմանները», Գահիրէ, 1950, էջ 311-312:
- 3 և 7— «Հայ ժողովրդի Պատմութիւն», Երեւան, Հտր. Գ., էջ 487, 534, 541:
- 4— Ghalib Edhim, «Catalogue des Monnaies Turkomanes du Musée Imp. Ottoman», 1894.
- 5— Նկար թիւ 196:
- 6— Ա. Ալպոյանեան, նոյն աշխատութիւնը, էջ 312:
- 7— «Հայ ժողովրդի Պատմութիւն» էջ 534:
- 8 և 9— Յ. Մանանդեան «Երկեր», Երեւան, 1977, Հտր. Գ., էջ 138 և 183:
- 10, 11, 19, 20, 21— Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց, «Խաղրակեանք կամ Պոռոշեանք Հայոց Պատմութեան Մէջ», Անթիլիաս, 1969, էջ 6 և էջ 299 Յանելուած:
- 13, 14, 15, 16, 17, 18— Հ. Ղեւոնդ Ալիշան, «Շիրակ», Վեներտիկ, 1881, էջ 30, 31, 41-43, 58, 82 և 101:
- 22— Հեթում և Շահնշահ ապաստանեցան Կիլիկիա: Լեւոն իշխան, հետագային Լեւոն Ա. թագաւոր, զանոնք ամուսնացուց իր Ռուբէն եղբոր երկու աղջիկներուն հետ, Հեթումին պարգեւելով Միսիսը, իսկ Շահնշահին՝ Սելեւկիան: Երկու

եղբայրները մահացան 1193-ին, անորոշ պարագաներու տակ:

23— Մատթէոս Ուռհայեցի, «Ժառանգականութիւն», Երեւան, 1973, էջ 137:

24— Փիլարտոսի մասին արժէքաւոր ուսումնասիրութիւն մը հրատարակած է Վերապտ. Եղիա Քասունի՝ «Կոմմագինեցի Փիլարտոս Հայր», Հալէպ, 1930:

25— Հայկական Սովետական Հանրագիտարան, Երեւան, Հտր. Բ., էջ 536. երկրորդ գաւառ մըն ալ գոյութիւն ունէր նոյն անունով Տարօնի Հայք-Խնուս շրջանին մէջ: Տես՝ Հ. Ս. Հանրագիտարան, Հտր. Ե, էջ 64:

27, 28— Կ. Ա. Մելիք Օհանջանեան, «Կիրակոս Գանձակեցի», Երեւան, 1961, էջ 168 և 177:



**ԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ  
ԱՐԾԱԹ ՏԻՐՀԵՄԸ ԿԸ ԿՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆԸ**

Եօթներորդ դարու կիսուն՝ Մերձաւոր Արեւելքը կ'ենթարկուէր հիմնական փոփոխութեան: Գոյութիւն ունեցող երկու հզօր կայսրութիւնները, Բիւզանդիոնն ու Պարսկաստանը կը քայքայուէին հաւասարապէս, մօտ քառորդ դար տեւող յամառ եւ սպառիչ պատերազմներէ յետոյ (602-628):

Այդ շրջանին քաղաքական բեմ կու գար՝ նոր կրօնի մը խանդավառութեամբ տոգորուած՝ կենսունակ, խիզախ ու թարմ ոյժ մը, որ կարճ ժամանակի մը ընթացքին պիտի կերտէր պատմութեան ամենաընդարձակ կայսրութիւններէն մին: Այդ ոյժը արաբական նորակազմ պետութիւնն էր:

Արձանագրուած յաջողութիւնները սակայն, արաբները պիտի մատնէին վարչական եւ տնտեսական անակնկալ դժուարութիւններու, որոնք դուրս կը մնային իրենց փորձառութեան սահմաններէն: Այդ դժուարութիւններէն մէկն էր զրամական շրջանառութեան հարցը:

Նուաճուած երկիրներէն Սուրիա եւ Եգիպտոս, դարեր ամբողջ, ենթարկուած էին Բիւզանդական զրամական դրութեան: Ընթացիկ մետաղներն էին ոսկին ու պղինձը եւ հազադէպօրէն կը հատանուէր արծաթը: Իրանն ու Իրաքը հետեւած էին Սասանեան դրութեան, ուր տիրապետող մետաղն էր արծաթը: Պարսկաստան ընդհատած էր ոսկի զրամներու հատանումը:

Արաբները սեփական դրամ չունէին իրենց թերակղզիին մէջ եւ հաւասարապէս կը գործածէին բիւզանդական ոսկիներն ու սասանեան արծաթները:

Սկզբնական շրջանին, գրաւուած երկիրներու վարչական կարգն ու սարքը, ինչպէս նաեւ զրամական դրութիւնները պահուեցան անփոփոխ: Ժամանակի ընթացքին սակայն, արաբները աստիճանաբար փոփոխութիւններ մտցուցին զրամներու մակագրութեանց (legend) եւ դրոշմներուն մէջ: Սասանեան զրամներու վրայ երեւցող պահուաւոր գրութիւններու կից սկսան տեսնուիլ կարճ՝ ապա երկար արաբատառ յաւելուածներ: Բիւզանդական ոսկիներն ու պղինձները ենթարկուեցան նմանօրինակ փոփոխութիւններու:

Ապտ Ալ-Մալէք Պըն Մըրուան Պալիֆը (685-705), ՀՃ. 74-76-ին (693-695), ձեռնարկեց զուտ արաբական դրոշմով զրամներու հատանման իր կիսանդրիի պատկերացումով, որ սակայն ընդհատուեցաւ, ցարդ պատմութեան կողմէ չբացատրուած պատճառներով:

ՀՃ. 77-ին (696) Պալիֆը Դամասկոսի մէջ հատանեց արաբատառ եւ կրօնական մակագրութիւններով առաջին ոսկի տիրարը: Երկու տարիներ յետոյ, ՀՃ. 79-ին (698) պիտի հատանուէր առաջին արծաթ տիրահմը, կայսերական կարգ մը փողերանոցներու մէջ:

Օմայեան շրջանի ոսկիները կը կրէին միայն հատանման տարեթիւր առանց զրամահատման վայրի յիշատակութեան. մինչ արծաթները, ծաւալով աւելի ընդարձակ, կը յիշատակեն թուականը, վայրը, խալիֆին անունը, ինչպէս նաեւ հետագային գահաժառանգին եւ այլ պատասխանատու պաշտօնատարներու անունները:

Մեր նիւթէն դուրս կը մնայ մանրամասնօրէն անդրադառնալ արաբական զրամներու ծագման եւ անոնց զարգացման փուլերուն. մեր նպատակն է ուսումնասիրել Պաղտատի թանգարանին կողմէ ձեռք ձգուած եզակի տիրահմ մը, որ կը կրէ ՀՃ. 78 թուականը եւ Արմինիայի մէջ հատանուած ըլլալու յիշատակութիւնը:

Այս տիրահմը կը կշռէ 3 կրամ, 27 մմ. տրամագիծով: Թանգարանին մօտ արձանագրուած է 14472 համարով:





بسم الله ضرب هذا الدرهم بarmينية في سنة ثمان وسبعين

Անուամբ Աստուծոյ այս տիրիեմբ հատանուած է Արմինիայի մէջ  
78 թուին:

Այս նորագիւտ եւ եզակի արծաթով, վերատեսուիթեան կ'ենթարկուի արաբական տիրհեմի սկզբնատարին նկատուող ՀՃ. 79 թուականը, որ իր տեղը կը գիջի ԱՐՄԻՆԻԱ յիշատակուիթեամբ ՀՃ. 78 տիրհեմին:

Ինչ որ մեզ կը հետաքրքրէ առաւելագէս ԱՌԱՋԻՆ տիրհեմին Հայաստան հատանման յիշատակուիթիւնն է:

Սակայն հաւանակա՞ն է արդեօք Հայաստան հատանուած ըլլալու յիշատակուիթիւնը:

Մենք, այլ առիթով, որոշ վերապահուիթիւն յայտնած էինք այն դրամներուն շուրջ, որոնք ՏՈՒՐԻՊԱ ՊԻ ԱՐՄԻՆԻԱ—Արմինիա հատանուած— յիշատակուիթիւնը կը կրէին յատկապէս Օմայեան իշխանատոհմի ժամանակաշրջանին:

Այս նորագիւտ տիրհեմին առնչուիթեամբ, մանրամասնօրէն կ'անդրադառնայ Պաղտատի Դրամագիտական Բաժնի Տնօրէնուհի Տիկ. Մուհապ Տարուիշ Ալ-Պաքրի, 1974-ին հրատարակուած գիրքով մը, որ կը կրէ ԱՐԱԲԱԴՐՈՇՄ ՕՄԱՅԵԱՆ ՏԻՐՀԵՄԸ վերնագիրը: (1) Գիրքին կողքը զարդարուած է ՀՃ. 78-ի եւ Արմինիա հատանուած նորագիւտ տիրհեմի նկարով:

Տիկ. Ալ-Պաքրի իր ներածականին մէջ կ'իմացնէ, թէ հրատարակուիթեան կը յանձնէ իր կողմէ վերամշակուած աշխատասիրուիթիւն մը, որ նախապէս պատրաստուած էր մահազաճ դրամագէտ Նասէր Մահմուտ Ալ-Նաբաշպանտի կողմէ, որ անցեալին մէջ եղած է տնօրէնը Պետական Թանգարանին: Գիրքը կու տայ նկարագրականը Օմայեան շրջանէն, թանգարանին մօտ գտնուող 254 տիրհեմներու, որոնք կ'ընդգրկեն 52-53 տարիներու շրջան մը, 79-132 (698-750):

Թանգարանին Ընդհ. Տնօրէնը՝ Տքթ. Իսա Սալման, ընդարձակ յօդուած մը ունի նո'յն դրամին շուրջ, Պաղտատի Հնագիտուիթեան Տնօրէնուիթեան Տարեգիրք՝ ՍՈՒՄԵՐԻ Թիւ 27 հատորին մէջ, որ լոյս տեսաւ 1973-ին, ուր յիշուած է, թէ նկատի ունենալով նորագիւտ տիրհեմին եզակի եւ կարելոր հանգամանքը, Տնօրէնուիթիւնը նպատակայարմար նկատած է զայն Լոնտոն զրկել, գիտական քննուիթեան ենթարկելով հաստատելու համար անոր վաւերականուիթիւնը:

Տքթ. Սալման եւ Տիկ. Ալ-Պաքրի հաւասարապէս կը պնդեն, թէ դրամը հատանուած է Հայաստանի մէջ: Տիկ. Ալ Պաքրի աւելի մանրամասնելով հարցը, իր գիրքին մէջ, էջ 29, կը բացատրէ թէ՛ Իսլամական շրջանին, Արմինիայի մայրաքաղաքը եղած է ՏԱՊԻԼ (Դուրն) որ հետագային ճանչցուած է ԹԻՖԼԻՍ անուան տակ, ուր հատանուած է այս դրամը: (2)

Տիկ. Պաքրի (էջ 26) կ'եզրակացնէ, թէ ՀՃ. 78-ին հատանուած տիրհեմը արծաթի ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՆ է (ընդգծումը Պ. Ս.) կայսրուիթեան նոր դրամաշարքին մէջ, հիմնուելով հետեւեալ տուեալներուն վրայ.

Ա) ՀՃ. 78-ի յառաջակողմի մակագրուիթիւնները կը գտնուին յաջորդ տարուան՝ 79-ի յետսակողմին վրայ դրոշմուած. իսկ 79 տիրհեմը պիտի մնար անփոփոխ դրոշմը՝ հետագային հատանուած բոլոր արաբական տիրհեմներուն, դարեր ամբողջ:

Բ) ՀՃ. 78-ի յետսակողմի մակագրուիթիւնները պիտի փոխադրուէին 79-ի յառաջակողմը, տողերու եւ հատուածներու փոփոխուիթիւններով, օրինակ՝



ՀՃ. 78 տարուան յառաջամասը ՀՃ 79 տարուան յետսակողմը

1—	الله احد	الله احد الله
2—	الله الصمد لم	الصمد لم يلد
3—	يلد ولم يولد	ولم يلد ولم يكن
4—	ولم يكن له	له كفوا احد
5—	كفوا احد	

Գ) ՀՃ. 79-ի տիրհեմները եւ անոր յաջորդող բոլոր տիրհեմները ունեցած են գծաւոր շրջանակներ, մինչդեռ 78-ի շրջագիծերը՝ կազմուած են կետադրութեամբ:

Անձնապէս, հակառակ «ԱՐՄԻՆԻԱՅԻ ՄԷՋ ՀԱՏԱՆՈՒԱԾ» ըլլալու յիշատակութեան, կը խորհինք թէ բացառիկ այս տիրհեմը հատանուած է Դամասկոսի կեդրոնական փողերանոցին մէջ, որովհետեւ անրնական պիտի ըլլար կայսրութեան մը համար, որ նորաստեղծ իր դրամի ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ կատարէր Հայաստանի նման ծայրանահանգի մը մէջ, — Սուղուրուր քաղաքական ու զինուորական պայմանները հետու էին անգորր ըլլալէ:

Ի՞նչ էր կացութիւնը Հայաստանի մէջ ՀՃ. 78-ին, որ կը համապատասխանէ Փրկչ. 697-ին:

1— Ըստ Ասողիկի, (էջ 102) «Իսկ ի գալ չորրորդ ամին Յուստինիանոս<sup>(3)</sup> ինքն իսաղացեալ գորու ծանու՝ եկն ի կողմն Հայոց ի լեառն որ կոչի Արարտակ»: (4) Յուստինիանոս կ'արշաւէ Հայաստան, ու կը ստիպէ Հայ իշխանները որ ներկայանան իրեն, կ'առնէ պատանդներ եւ հետը կը տանի Սահակ Կաթողիկոսն ու հինգ Եպիսկոպոսներ: «Ի գալ չորրորդ ամին» կը համապատասխանէ (689-690) տարիներուն:

2— Ըստ Ռընէ Կրուսէի, (էջ 309) Մուհամմէտ Պըն Մըրրուան, եղբայրը Ապտ Ալ-Մալէք Պըն Մըրրուան Խալիֆին՝ Հայաստան կ'արշաւէ 693-ին զսպելու համար ծագած ըմբոստութիւնները: (5) Տեղակալ կը նշանակէ Ապտ Ալլահ զօրավարը (տես նաեւ Ասողիկ, էջ 103):

3— Նոյն տարին Բիւզանդական զրդումով, թուրք Խազարներ կը յարձակին արարներուն դէմ, Հայաստանի հողին վրայ: Արարները կը նահանջեն: Քիչ ետք Մուհամմէտի քրոջ որդին կը յաջողի զսպել Խազարները:

4— Այս շփոթութիւններէն յետոյ կը բռնկի հայկական ապստամբութիւնը Սմբատ Բագրատունիի գլխաւորութեամբ՝ յանգելու համար Վարդանակերտի ճակատամարտին ու անոր յաջորդող բախումներուն: Այս դէպքերը Կրուսէ կը դնէ 695-696 տարիներուն, հետեւելով Պրոսպէի Սիւնեաց Պատմութեան (էջ 311): Տես նաեւ Ղեւոնդ (էջ 47): (6)

5— Մովսէս Կաղանկատուացի (էջ 248) կը նկարագրէ թէ «Հայոց 146 (697) թուականին Հայաստան է գալիս Մահմէդ երկրորդը այնտեղից շտապում մտնում է Չոդ: Իսկ ապստամբուած հայերը արարները արգելափակում են Դուինում... Մահմէդ Չոդից վերադարձաւ եկաւ երեք տարի պաշարեց Սեւան ծովապատ բերդ-կղզին, ապա գրաւեց, այն կղզում ում որ գտաւ սրածեց: Այնտեղից անցնելով Հայաստան կոտորեց Բիւզանդական եւ Հայկական զօրքերը»: (7)

6— Օրմանեան (հատուած 522) Մուհամմէտ Պըն Մըրրուանի մուտքը Հայաստան՝ կը դնէ 698-700 թուականներուն միջեւ: Իսկ հատուած 523-ի մէջ կ'աւելցնէ. «... Թէպէտ կանուխէն ալ տեսանք արարացուց իշխանութիւնը Հայաստանի վրայ տարածուած, նոյնիսկ Ներսէս Իշխանցիին կաթողիկոսութեան օրերէն, սակայն ոչ կանոնաւոր եւ ոչ տիրական տիրապետութիւն էր այդ, այլ Յունաց տիրապետութեան դէմ մրցում մը եւ հայոց կողմէն մէկէն միւսին հովանաւորութեան ներքեւ մտնելու երեքուն փոփոխութիւն մը, դիպուածներու փոփոխութեան համաձայն: Արարներու հաստատուն տիրապետութեան թուականն ալ կրնանք ուրեմն 700-ին դնել»: (8)

Եզրակացնելու համար կ'ենթադրենք թէ՝

Ա— Հակառակ «Հայաստանի մէջ հատանուած» ըլլալու յիշատակութեան, կայսրութիւն մը իր ԱՌԱՋԻՆ արծաթ դրամի փորձը պիտի կատարէր մայրաքաղաքի կեդրոնական փողերանոցին մէջ, Դամասկոս, եւ ոչ թէ ծայրանահանգ նկատուող Արմինիայի քաղաքներու փողերանոցներուն մէջ:



Բ— Արմինիայի քաղաքական եւ զինուորական կացութիւնը՝ 690–700 տարիներու միջեւ կը ներկայացնէ խառնակ եւ շփոթ վիճակ մը: Բիւզանդական եւ արաբական կայսրութիւններու հակամարտ շահերը երկիրը կը վերածեն պատերազմական թատերաբեմի: Այլապէս չարաշուք են իսազարներու կրկնակի արշաւանքները եւ կեղեքումները: Հայկական աւագանին բնականաբար պառակտուած՝ կը հակի այս կամ այն կողմ՝ քաղաքական անորոշ դիրքաւորումով: Արմինիա զսպուած չէ տակաւին եւ Մուհամմէտ Պըն Մըրուանի խիստ ու բիրտ արշաւանքներն էին որ պիտի կարենային յարաբերական անդորրութիւն ստեղծել նահանգին մէջ:

Ղեւոնդ (էջ 52) կ'աւելցնէ. «Իսկ Մահմէտ զօրավարն երկրորդ անգամ ելեալ յաշխարհս Հայոց զօրու ծանու՝ յուրուտասաներորդ ամի Արդ էլ Մելեֆի իշխանի եւ զամս երիս հանդարտեալ դադարէր եւ ոչ ինչ չարեաց յուշ լինէր վասն անցիցն ու էաց ընդ զօրն տանկաց ի Վարդանակերտ աւանի»:

Ապտ Ալ-Մալիքի 18րդ տարին կ'իյնայ ՀՃ. 83-ին կամ Փրկչ. 702-ին. հետեւաբար ըստ Ղեւոնդի՝ (698–699, 702) տարիներուն, արաբական ռոմերը յաջողած էին Արմինիան ենթարկելու իրենց հպատակութեան: Պարզ է ուրեմն որ 698-էն առաջ Արմինիա նահանգը զսպուած չէր վերջնականապէս: Անկասկած, Արմինիայի քաղաքներէն եւ ո՛չ մէկը կրնար ձեռնտու եւ ապահով փողերանոց ունենալ, արաբական կայսրութեան առաջին արծաթ տիրահմի փորձերով զբաղուելու համար:

Կ'ենթադրենք հետեւաբար, թէ մինչեւ 750 թուականը կամ վախճանը Օմայեան իշխանատուներին, բոլոր ԱՐՄԻՆԻԱ յիշատակութեամբ դրամները հատանուած են Դամասկոսի կամ կայսերական այլ գլխաւոր փողերանոցներէն մէկուն մէջ: Այս վարկածը կարելի է նաեւ կիրարկել բոլոր այն դրամներուն, որոնք փոխանակ քաղաքային փողերանոցներու, կը յիշատակեն ընդարձակ վարչական նահանգներու անուններ, օրինակ՝

Հատանուած ԱՆՏԱԼՈՒԶԻԱՅԻ մէջ

Հատանուած ԱԶՐՊԷՅՃԱՆԻ մէջ

Հատանուած ԱՐՄԻՆԻԱՅԻ մէջ

Հատանուած ԱՖՐԻՔԱՅԻ մէջ:

Այս դրամները, հատանուած կեղրոնական փողերանոցներու մէջ, հետագային պիտի զրկուէին յիշատակուած նահանգները՝ գուցէ տնտեսական, հարկային կամ վարչական նկատումներով, որոնց մասին մատենագրական աղբիւրները լուռ կը մնան տակաւին:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- 1— الدرهم الاموي العرب تاليف المرحوم ناصر محمود النقشبندي دار الحرية للطباعة - بغداد ١٩٧٤
- 2— Շատ հաւանաբար Տիկ. Ալ-Պաֆր անծանօթ է Արմինիայի վարչական նահանգին եւ անոր քաղաքներուն տեղադրութեան եւ կը շփոթէ Դուինն ու Թիֆլիսը:
- 3— Յուստինիանոս կայսրը գահակալած է երկու անգամ (685–695) եւ (705–711):
- 4— Ստեփաննոս Վրդ. Տարօնցի, Կ. Վրդ. Շահնագարեան, Փարիզ, 1859:
- 5— René Grousset «Histoire d'Arménie», Paris, Payot 1973:
- 6— Ղեւոնդ Վրդ. «Արշաւանգ Արաբացի Հայս», Կ. Վրդ. Շահնագարեան, Փարիզ, 1852:
- 7— Մովսէս Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից Հայոց», «Հայաստան» հրատարակչութիւն, Երեւան, 1969:
- 8— Մաղաֆիա Արք. Օրմանեան, «Ազգապատում», Տպ. «Սեւան», Պէյրութ, 1959:



**ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ**

Արաբական եւ իսլամական դրամներու ուսումնասիրութիւնը մասնաւոր կարեւորութիւն ունի մեր պատմութեան որոշ շրջաններուն լուսաբանութեան համար:

Այդ դրամներուն վրայ յիշուած մակագրութիւնները պատմութիւնը կ'օժտեն հաստատ տուեալներով եւ կոուաններով, վերականգնելու համար մութ ու շփոթ հարցեր: Նման տեղեկութիւններ կ'ամբողջացնեն ու կը սրբազրեն մեր մատենագրութեան մէջ, ընդօրինակութիւններու ընթացքին, սպրդած ժամանակագրական վրէպներ, թուականներու աղաւաղումներ եւ անուններու աղճատումներ:

Արաբական դրամները կը յիշեն առ հասարակ հատանման վայրը, թուականը եւ անունները ոստիկանին, փոխարքային եւ խալիֆային: Երբեմն յիշուած են նաեւ պատասխանատու տեղակալներու անուններ:

Ճիշդ է որ այս բոլոր տեղեկութիւնները միշտ յիշուած չեն միասնաբար, միեւնոյն դրամին վրայ: Փողերանոցներու պատասխանատուները բաւականացած են յիշելով երբեմն հատանման վայրն ու թուականը, երբեմն ոստիկանին անունը, այլ դրամներու վրայ այս կամ այն տեղեկութիւնը միայն:

Ինչ կը վերաբերի Հայաստանի ԱՐՄԻՆԻԱ նահանգին, որուն մէջ վարչականօրէն կը մտնէին Արեւելեան եւ Արեւ-

մտեան Հայաստանները, Աղուանքն ու Վրաստանը, հոն հատանուած են ոսկի-տինարներ, արծաթ-տիրհեմներ եւ պղ-դինձ-ֆիլսեր, որոնք կը կրեն ԱՐՄԻՆԻԱ անունը:

Մենք կը խորհինք, թէ մասնաւոր ուշադրութիւն կեդրոնացնելու է պղինձ ֆիլսերու վրայ, որոնք հատանուած են տեղական փողերանոցներու մէջ, այսինքն՝ Արմինիայի տարածքին վրայ գտնուող քաղաքի մը կողմէ, ներքին շրջանառութեան եւ առեւտուրի համար, եւ հազուադէպօրէն դուրս ելած են Արմինիայի սահմաններէն, թէեւ Արաբական կայսրութեան մէջ, նման դրամներ, անկախ փողերանոցի աշխարհագրական դիրքէն, կրնային ազատօրէն տեղափոխուիլ պահելով իրենց ինքնուրոյն արժէքը:

Հետեւաբար այս պզտիկ ֆիլսերու վրայ յիշուած մակագրութիւնները՝ զուտ տեղական պայմաններով, մեզի համար պատմագրական թանկագին կոուաններ են:

Կը հրատարակենք երկու ֆիլսեր, պատմական առնչութիւններով:

ԱՐՄԻՆԻԱ (Պատ. թիւ 1) որոշ չէ թէ Հայաստանի որ քաղաքին մէջ հատանուած է այս դրամը: Շատ հաւանաբար դրոշմուած է արաբական տիրապետութեան շրջանին, ոստիկաններու նստավայր՝ Դուլին քաղաքին մէջ, արաբերէն լեզուով անվարժ կամ անձանօթ փորագրիչի մը կողմէ: Տրամագիծն է 21 մմ. եւ կը կշռէ 2.20 կրմ.:

Մակագրութիւններն են.

Պատկեր թիւ (1)

(Ա)



لا اله  
الا الله  
وحده

بسم الله (مر)

اسحق بن مسلم

Յանուն Աստուծոյ եւ հրամանաւ  
Իսհակ Պըն Մուսլիմի



Պատկեր քիւ (1)

(Բ)



محمد  
رسول  
الله

بسم الله ضرب هذا الفليس (بارمته)

Յանուս Աստուծոյ այս փիլսք  
հատաճուած է (Արմինի)ի մէջ

Փակագիրներուն մէջ առնուած են երկու սխալ գրոշմուած բառեր․

ա․— Հրամայեց բառին համապատասխան (امر) ի սկզբնական (أ) մոռցուած է որով բառը կը կարգացուի ՄԱՐԱ փոփոխանակ ԱՄԱՐԱ-ի:

բ․— Պի Արմինիա բառը պակաս ատամ կամ գծիկ մը ունենալով կը կարգացուի «Պի Արմինէ» կամ «Պի Արմինիէ»:

Այս դրամէն նմոյշ մը կայ Լոնտոնի Բրիտանական Թանգարանին մէջ, յիշուած John Walker-ի կողմէ, իր Post reform Umeiyad coins հաւաքածոյին մէջ, թիւ 748-ի տակ, (1) ուր Արմինիա եւ ԱՄԱՐԱ (հրամայեց) բառերը նմանապէս սխալ գրուած են:

Հեղինակը նոյն էջի ծանօթութիւններու բաժինին մէջ կը յիշէ, թէ երկու այլ կարեւոր հաւաքածոներու մէջ, ԱՐՄԻՆԻԱ բառը տառասխալով գրոշմուած է ՐԱՄԻՆԻԱ - : Sessu زامينيه թիւ 2578 եւ Նիւթզըլ՝ 1940:

Այս սխալները կը փաստեն թէ մէկէ աւելի կաղապարի գրոշմներ փորագրուած են նոյն կամ զանազան փողերանոցներու կողմէ:

Բայց ո՞վ է Իսհակ Պըն Մուսլիմ, որուն անունը գրոշմուած է այս փողերուն վրայ:

Պատմ. Գիտ. Դոկտ. Ա. Տ. Ղեւոնդեան զայն կը յիշէ իր «Արմինիայի Ոստիկանների ժամանակագրութիւնը» (2) յղւածին մէջ, թիւ 22, «Իսհակ Իբն Մուսլիմ Ալ Ուկայլի» اسحق بن مسلم العقيلي Հայաստանի ոստիկան եղած է ըստ Թապարիի, 745-750 թթ. միջեւ: Հիճրի 132 (749) յիշուած է անթուական դրամի մը վրայ:

Իսհակ Պըն Մուսլիմ ոստիկան էր Արմինիայի ընդարձակ նահանգին, երբ արաբական կայսրութեան մէջ տեղի ունեցաւ ճակատագրական փոփոխութիւն մը: Օմայեան հարստութիւնը հասած ըլլալով ջլատուածի եւ քայքայուածի գազաթնակէտին, խալիֆայութիւնն ու կայսրութեան ղեկը անցան Ապպասեան հարստութեան՝ Պաղտատ մայրաքաղաքով: Ծայր տուին քաղաքացիական պատերազմներ եւ խշրտումներ: Տեղակալներէն կամ ոստիկաններէն ոմանք հաւատարիմ մնացին հին վարչակարգին կամ խալիֆայութեան եւ մերժեցին նոր հարստութեան ենթարկուիլ: Անոնցմէ մէկն էր Իսհակ Պըն Մուսլիմ Ալ Ուքայլի:

Ըստ Թապարիի (3) Հ. 132-ին (մեր թուականով՝ 749) Ապպասեան բանակներ ուզած են նուաճել Խառեսնի եւ Ճիզիրէի շրջանները: Օմայեան վերջին խալիֆան՝ Մըրրուան հրամայած է Արմինիայի ոստիկան Իսհակ Պըն Մուսլիմին օգնութեան հասնելու Ճիզիրէի հաւատարիմ քաղաքներուն:

Իսհակ իր բանակով կ'ուղղուի նախ Ռագաւա, ուր կառավարիչ էր իր եղբայրը՝ Պաքթար Պըն Մուսլիմ (بكار بن مسلم العقيلي) ապա դէպի Ոււհայ եւ յետոյ Սամոսատ, ուր ապպասեան խալիֆին եղբոր Ապու Ճա'ֆարի բանակները զինք կը պաշարեն եօթը երկար ամիսներ: Օմայեան խալիֆ Մըրրուանի մահաւամբ, Իսհակ կը միանայ ապպասեան Ապու Ճա'ֆարին:

Եագուպին (4) քիչ մը տարբեր կը ներկայացնէ անցուղարձերը, աւելցնելով որ Իսհակ հաւատարմութեան երդում տուած ըլլալով Օմայեան խալիֆային, հաւատարիմ պիտի մնար մինչեւ անոր մահը: (5) Սակայն երբ իմացաւ Մըրրուանի վախճանը, ընդունեց նոր վարչակարգը՝ միանալով Ապու Ճա'ֆարին, որուն մօտ մեծ յարգանք կը վայելէր:

Անդրադառնալով յաջորդ տարուան (Հ. 133) դէպքերուն, Եագուպի կ'աւելցնէ, թէ Ապու Ալ Ապպաս (Հ. 132-136)



(749-754) նոր հարստութեան առաջին խալիֆան եւ հիմնադիրը, որպէս ոստիկան, Հայաստան ղրկած է Մուհամմէտ Պըն Սուլը, որ բազմամարդ բանակով մը ուղղուած է Արմինիա, ուր կը գտնուէր Իսհակ Պըն Մուսլիմի տեղակալը: Կը թուի, թէ այս տեղակալը չէր ենթարկուած, քանի որ ապստեան նոր ոստիկանը Արմինիան գրաւած է պատերազմով: Եագուպի կը յիշէ Բայլականի<sup>(6)</sup> պարագան, որուն բնակիչները՝ լքելով քաղաքը, ամրացած են միջնաբերդին մէջ, խումբ մը զատարկապորտերու հետ: Քաղաքին կառավարիչն եղած է Ուարտ Պըն Սաֆֆուան Ալսամի Պըն Ուալտ Սամա Պըն Լու'այ: Նոր ոստիկանը բերդը գրաւած է պաշարումէ յետոյ ու սպաննած շատերը:

Առան-Աղուանք -(պատկ. թիւ 2): Պղինձ ֆիլս մը 19 մմ. տրամագիծով եւ 2.40 կրմ. կշիռով որ հատանուած է Աղուանքի անորոշ փողերանոցներէն մէկուն մէջ: Հետեւաբար կ'իյնայ Արմինիայի վարչական նահանգին մէջ: Յիշուած է թուականը եւ փոխարքային անունը առանց ոստիկանի անուան: Մակագրութիւններն են.—



لا اله الا  
الله وحده  
لا شريك له

Պատկեր քիւ 2

بسم الله ضرب هذا الفلص باران سنة ثلث وخمسين ومئة  
Յանուն Աստուծոյ այս փողը հատանուած է Առանի մէջ 153 թուին:

ما امر به  
المهدي أحمد  
بن أمير المؤمنين

محمد رسول الله بالهدى ودين الحق ليظهره على الدين كله (و) لو كره المشركون  
Հրամանաւ հաւատացեալներու հրամանատարի որդի՝ Ալ-Մահաթի Ահմատի (հատանուած):

Գուրանէն առնուած հատուածին մէջ մոռցուած է (յ) տառը զոր առած ենք փակագիծի մէջ:

Ա. Տ. Ղեւոնդեան այս դրամը կը յիշէ իր «Ոստիկաններու ժամանակագրութեան» մէջ, թիւ 32, եւ նոյն շրջանին համար, Արմինիայի ոստիկան կը յիշէ Պաքթար Պըն Մուսլիմ Ալ-Ուկայլի (769-771): (بكار بن مسلم العقيلي)

Ֆասմէր իր «Ժամանակագրութիւն Հայաստանի Ոստիկաններու» ուսումնասիրութեան մէջ,<sup>(7)</sup> նոյն ոստիկանը կը յիշէ 152-153 տարիներու ընթացքին:

Ըստ Zambaur-ի<sup>(8)</sup> (էջ 272), Պաքթար Պըն Մուսլիմ Արմինիա ղրկուած է 152-ին (մեր թուականով՝ 769), եւ կ'աւելցնէ թէ դրամը հատանուած է Դուինի մէջ:

Թապարի կը յիշէ, թէ Ապստեան խալիֆ՝ Ալ-Մանսուր Արմինիայի ոստիկան նշանակած է Պաքթարը՝ Հ. 153-ին:<sup>(9)</sup> Դրամին վրայ յիշուած փոխարքայ Ալ Մահաթի Ապու Ապտալ-լահ Մուհամմէտ Պըն Ալ Մանսուր Ապու Ճա'ֆար Ապտալլահ խալիֆ պիտի դառնար Հ. 158-169 (775-785). կը թուի թէ իր փոխարքայութեան շրջանին, ինքն էր պատասխանատու ոստիկանը Արմինիա նահանգին, մինչդեռ Պաքթար Պըն Մուսլիմ իր կողմէ լիազօրուած տեղակալ մը:

Ինչպէս մատնանշեցինք արդէն, նկարագրուած այս դրամները իրենց մակագրութիւններով նորութիւններ չեն անոնց համար, որ ուսումնասիրած են ոստիկաններու ժամանակագրութիւնը Արմինիա նահանգին մէջ: Մեր նպատակն էր մասնաւորապէս շեշտել կարեւորութիւնը այս աննշան թուող պզտիկ փողերուն եւ անոնց թանկագին նպաստը մեր պատմագրութեան համար: Իսկ եթէ պատահի որ օր մը գտնուին ցարդ մեզի անծանօթ մնացած դրամներ, անոնք կրնան իրենց մակագրութիւններով նոր լոյս սփռել կամ ճշգրտմ մը թելադրել մեր պատմութեան որոշ շրջաններուն համար:



## ԱՂԲԻՒՐՆԵՐ

- 1— «The Muhemmeden coins in the British Museum» Vol. II, page 229.
- 2— Պատմա-Բանասիրական Հանդես, 1978, էջ 117:
- 3— Թապարի, Հատ. 5, րժ. 9, էջ 139:
- 4— تاريخ يعقوبي المجلد الثاني بيروت ١٩٧٠ صفحة ٣٥٤
- 5— Հաւատարմութեան այս երդումը البيعة տուած էր Օմայ-յեան խալիֆային որմէ կը ձերբագատուէր միայն խալիֆային մահով:
- 6— Բայլական, ըստ Համուիի ֆաղաֆներու համայնագիտարանին, կը գտնուէր Տերպինտի կամ Պապ էլ Ապուապի մօտ, Շիրուանի մերձակայքը, Մեծն Արմինիայի մէջ: Ըստ Հայկ. հանրագիտարանին հտ. Բ. միջնադարեան ֆաղաֆ՝ Կուր եւ Երասխ գետերու միախառնման մօտակայքը այժմ Օրենկալա ֆաղաֆատեղին: Կործանուած է Թաթար-Մոնկոլ արշաւանքներու հետեւանքով:
- 7— Միսիթարեան տպ. Վիեննա, 1933, էջ 28:
- 8— الانساب والاسرات الحاكمة في التاريخ الاسلامي، القاهرة ١٩٥١
- 9— Sbu hawt. 5, hawtunad 9, էջ 284:

## ՀԱՅԱՉԳԻ ԱԹԱԲԵԿ ԵՒ ՄՈՒՍՈՒԼԻ ՍՈՒԼԹԱՆ ՊԱՏՐ ԷՏ ՏԻՆ ԼՈՒԼՈՒ

ԺԲ. դարու վերջաւորութեան, Միջին Արեւելքի մէջ երկու հզօր կայսրութիւններ՝ ներքին պառակտումներու պատճառով, քայքայուած էին արդէն: Մեծ Սելճուքներու գահը կռուախնձոր դարձած էր փառատենչ ժառանգորդներու միջեւ, իսկ էյուպեան կայսրութիւնը՝ Սալահ էտ Տինի մահէն ետք, բաժնուած էր իր բազմաթիւ որդիներուն եւ եղբօրորդիներուն միջեւ, կորսնցնելով երբեմնի իր հմայքն ու համերաշխութեան ոգին: Ստեղծուած էին փոքր մելիթութիւններ, որոնց գահակալները, հակառակ իրենց ուռուցիկ տիրոջներուն, կ'իշխէին համեստ տարածքով զաւառներու վրայ: Այդ ինքնավար շրջաններէն մէկն էր Մուսուլի Աթաբեկութիւնը՝ յարակից կարգ մը բերդերով եւ Մինճար քաղաքով, որուն հիմադիրն էր ծագումով թուրք Իմատ էտ Տին Պըն Ձենկի Պըն Սունկուր, որ իր կարգին, եւ աւատապետական սովորութիւններու գծով՝ զայն որպէս տիրոյթ ստացած էր Հիճրի 521 թ.ին (1127) Մեծ Սելճուքներու Սուլթան Մահմուտ Պըն Մելիթազէն:

Ձենկիներու հարստութիւնը Մուսուլի մէջ գոյատեւեց Հ. 521-646 թթ. (1127-1219 թթ.):

ԺԳ. դարուն Մուսուլի մէջ կը հանդիպինք բացառիկ կարողութիւններով օժտուած քաղաքական մեծ դէմքի մը, նախ՝



աթաբեկ տիտղոսով, ապա մելիք Մուսուլի, որ քառասուն հինգ տարիներ միահեծան կերպով իշխեց գահին վրայ, սկսելով ստրուկի անփառունակ վիճակէն, հասնելու համար պալատական խնամակալի, դաստիարակի (աթաբեկ) եւ թագաւորի (մելիք) դիրքերուն:

Այս բացառիկ դէմքը ծագումով հայ՝ Պատր էտ Տին Լուլուն է, որդի Ապտուլլահի, որ մանուկ հասակին՝ որպէս ստրուկ գնուած է զերձակի մը կողմէ Մուսուլի մէջ եւ ապա՝ ծախուած նոյն քաղաքի Մուլթան Նուր էտ Տին Արսլանշահ Պըն Ըզ էտ Տին Մաս'ուտի (1192-1210 թթ.), որուն մօտ՝ իր ուշիմութեան շնորհիւ, յաջողած է հասնիլ նախանձելի դիրքի:

Ըստ արաբական անձնանուններու բառարանին՝ Լուլու ծնած է 1174 թ.ին եւ մեռած՝ 1259 թ.ին, 85 տարեկան հասակին մէջ<sup>(1)</sup>: Դժբախտաբար յիշուած չէ թէ Հայաստանի ո՞ր շրջանէն բերուած է ան որպէս ստրուկ կամ մեմլուք (գերի): Սակայն, նկատի ունենալով ժ.Ռ. դարու քաղաքական փոթորկոտ իրադարձութիւնները, կարելի է ենթադրել որ ան վասպուրականցի հայ մըն էր, եկած հաւանաբար՝ Խլաթի շրջանէն: Իսկ Ապտուլլահ հայրանունը կրնայ ըլլայ անունը զինք գնող զերձակին եւ կամ՝ վերադիր անուն մը՝ իր ստրուկ վիճակին, քանի որ անուան տառացի թարգմանութիւնը կը նշանակէ ստրուկ կամ գերի Աստուծոյ:

Ըստ մատենագիր Շամս էտ Տին Տահապիի՝ «Պատր էտ Տին Լուլու Ալ Արմանի (հայագրի, Պ.Ս.) սպրած է աւելի քան 80 տարիներ եւ մեռած է 657 թ.ին (1258 թ.): Անոր մահով վերջ գտած է Մուսուլի մելիքութիւնը»: Մատենագիրը զայն կը կոչէ «Ալ Մուլթան Ալ Մալիք Ալ Ռահիմ (ողորմած, Պ.Ս.), որ եղած է քաջակորով, պատկառելի, դիւանագէտ եւ գիտնական՝ թէեւ քիչ մը բռնակալ ու կրօնական զգացումէ զուրկ»<sup>(2)</sup>:

Ուրիշ մատենագիր մը՝ Իպն Դադրի Պարտի, իր Ան-Նըճում Ազ-Չահիրա գիրքին մէջ կը գրէ. «Լուլու եղած է ողորմած եւ Ապու Ալ Ֆատա'էլ (արժանիքներու տէր, Պ.Ս.)»: Ըստ մատենագիրին, Մուսուլի այս թագաւորը եղած է գահակալներուն լաւագոյնը: Անդրադառնալով կենսագրութեան, հակիրճ տողերով կը յայտնէ թէ ան եղած է ստրուկը Նուր էտ Տին Արսլանշահի, որդի Ըզ էտ Տին Մաս'ուտի, որդի Մաուտուտի, որդի Չենկի Պըն Սուեկուր թուրքին<sup>(3)</sup>:

Երբ Նուր էտ Տին կը մեռնի, գահը կը ժառանգէ անոր զաւակը՝ Ալ-Ղահեր, որ Ֆիդիքապէս վատաոզջ ըլլալով կը մահանայ Հ. 614 թ.ին (1217 թ.) ձգելով երկու մանկահասակ ժառանգորդ զաւակներ, որոնց խնամակալ կը նշանակէ Լուլուն: Այս վերջինը յաջորդաբար կը սպաննէ ժառանգորդները, եւ կը տիրէ գահին: Ապա նկարագրելով անոր արժանիքները, Իպն Դադրի Պարտի կ'աւելցնէ՝ «Պատր էտ Տին եղած է չափազանց գործունեայ, իրագեկ, պրպտոջ եւ պատշաճութիւնները յարգող անձնաւորութիւն մը, որ վայելչօրէն կ'ընդունէր օտար դեսպաններն ու պատուիրակութիւնները: Տեւապէս կը հետաքրքրուէր իր հպատակներուն վիճակով եւ շատ քիչ բան կը խուսափէր անոր ուշադրութենէն: Մեծ զուժարներ կը ծախսէր ան արդարամիտ դատաւորներ պահելու համար: Ունէր նաեւ լրտեսներու ընդարձակ ցանց մը: Եթէ պատահէր որ իր հպատակներէն մէկը, իր երկրին մէջ 100 տիրահմի (արծաթ դրամ, Պ.Ս.) վնասի ենթարկուէր, Լուլու սիրով յանձն կ'առնէր 10.000 տինար (ոսկեդրամ, Պ.Ս.) ծախսել դարմանելու համար վնասը»:

Համաձայն թրքական անձնանուններու բառարանին՝ Լուլու եղած է մելիքութեան խորհրդական, խնամակալ եւ աթաբեկ Հ. 607 թ.էն (1210 թ.) սկսեալ: Լուլու յամառօրէն պաշտպանած է ժառանգորդներուն իրաւութները իրենց երկու հօրեղբայրներուն՝ Մելիք Իմատ էտ Տինի եւ Մուզաֆֆար էտ

1. - قاموس الاعلام، خير الدين الزركلي، ج ٦، ص ١١١.

2. - كتاب دول الاسلام للحافظ شمس الدين الذهبي، القاهرة، ١٩٧٤، ص ١٦١، ١٦٢.

3. - تغري بردي، مطبعة دار الكتب المصرية، ١٩٣٨، ج ٧، ص ٧٠.



Տինի ոտնձգութիւններուն դէմ, որոնք կը ձգտէին Մուսուլը կցել իրենց տիրոյթներուն<sup>(4)</sup>:

Այդ շրջանին Լուլու գտնելով լեզու էյուպեան մելիքներուն հետ, յաջողած է իշխանութեան կցել նաեւ Ճեզիրէն ու սպառնալ Հալէպին:

Լուլուի հայկական ծագման մասին կը խօսի նաեւ ուրիշ մատենագիր մը՝ Ալ Իմամ էտ Տին Ապի՛լ Ֆիտա՛ Իսմայիլ Օմար Պըն Քեսիր Ալ Գարաշի էտ Տիմըշքի, որ մահացած է Հ. 774 թ.ին (1372 թ.): Ան կը հաղորդէ թէ «Հուլակուի աւերիչ պատերազմներէն ետք, երբ մոնկոլ աշխարհակալը կը գրաւէ Արքասեան կայսրութեան մայրաքաղաք Պաղտատը, Պատը էտ Տին Լուլու թանկագին նուէրներով եւ գանձերով կ'ուղղուի Հուլակուի մօտ՝ սիրաշահելու համար նոր աշխարհակալը: Հուլակու գայն կ'ընդունի յարգանքով եւ պատշաճութեամբ: Վերադարձին, մօտ 80-ամեայ ծերունին կ'ապրի տարի մը, ու կը վախճանի: Ան թաղուած է Պատրիյէի դպրոցին մէջ (Պատրի անուամբ եւ իր կողմէ կառուցուած, Պ. Ս.): Իր հպատակները խոր սուգի մէջ մտած են, որովհետեւ ան սիրուած էր իր բարի վարմունքին եւ արդարամտութեան համար»<sup>5</sup>:

Պատը էտ Տին Լուլու եղած է առատաձեռն մեկենաս մը եւ քաջալերող՝ արուեստի ու գրականութեան: Անոր օրով եւ իր շնորհիւ Շէյխ Լզ էտ Տին կը պատրաստէ Ալ Քամէլ Ֆիլ Թարիխ պատմութեան գիրքը, որուն համար կ'արժանանայ վարձատրութեան եւ շնորհներու: Լուլու կը գնահատէր բանաստեղծները, որոնց կը վճարէր. մինչեւ 1000 տինարի հասնող նիւթական պարգեւներ: «Այս Պատը էտ Տին Լուլուն հայ էր ծագումով՝ գնուած դերձակի մը կողմէ: Յետոյ՝ պատկանեցաւ Մուսուլի տիրոջ՝ Նուր էտ Տին Արսլանշահին:

Ան վայելուչ էր ու բախտաւորուեցաւ, յառաջանալով պետական գործերուն մէջ: Լուլու դաւադրութեամբ սպաննեց իր տիրոջ զաւակները, այնպէս որ օրինաւոր ժառանգորդներ չմնալով, ասպարէզը մնաց իրեն համար:

«Ան ամէն տարի Ալիի (մարգարէին փեսան ու հօրեղբորորդին, Պ. Ս.) ուխտատեղիին (Մաշհատ) կը նուիրէր 1000 տինար կշռող<sup>(6)</sup> ոսկի կանթեղ մը: Ան պատկառելի էր ու սիրուած: Հպատակները գայն կը կոչէին «ոսկեայ մական»: Չափազանց եռանդուն էր, իմաստուն եւ խորամանկ: Տարուէ տարի ոսկեայ կանթեղի մը նուէրը Ալիի շիրիմին, կը նշանակէ թէ ան կը պատկանէր Շիի յարանուանութեան: Աստուած աւելի լաւ գիտէ [ճշմարտութիւնը]»<sup>(7)</sup>:

Պաղտատի Հնագիտական Սպասարկութեան կողմէ հրատարակուող «Մուամեր» տարեգիրքի 1968 թ.ի հատորին մէջ՝ Մուսուլի ինքնատիպ ոճով կառուցուած եւ պատմական նշանակութիւն ունեցող ճարտարապետական կոթողներուն (մզկիթներ, դպրոցներ, ուխտատեղիներ, շիրիմներ եւն.) նուիրուած ուսումնասիրութեամբ մը, Սա'իտ Տիումֆի կը յանգի ա'յն եզրակացութեան թէ Մուսուլի ճարտարապետական կառուցումներու ամենէն փայլուն ժամանակաշրջանը եղած է Պատը էտ Տին Պըն Ապտուլլահ Ալ Արմանիի (հայազգի, Պ. Ս.) շրջանը<sup>(8)</sup>:

Արեւելագէտ Տէյվիտ Թալպոթ Ռայս իր «Իսլամական Արուեստ» գիրքին մէջ (էջ 99), բաղդատութիւններ ընելով Վասպուրականի եւ Միջագետքի ճարտարապետական ոճի նմանութիւններուն շուրջ՝ կ'անդրադառնայ նաեւ Մուսուլի

4. - قاموس الاعلام شمس الدين سامي، مجلد ٢، ص ١٢٥٥.

5. - كتاب البداية والنهاية في التاريخ للإمام الخفاف عماد الدين ابي الفداء اسماعيل عمر بن كثير القرشي الدمشقي. مطبعة السعادة بمصر، ج، ١٣، ص/٢١٤.

6. Լուլուի կողմէ հատանուած ոսկեդրամ տիւնարը կը կշռէ 6.30 կրմ.: Հետեւաբար իր կողմէ նուիրուած կանթեղը, որպէս ձոյլ մետաղ հաւասար է 6 քիլօ եւ 300 կրամ ոսկիի:

7. - الكامل في التاريخ ابن الاثير، دار الكتب العربي، ١٩٦٧.

8. - سومر، مجلة علمية في اثار العراق وتاريخه، يصدرها الاثار العامة، بغداد. المجلد ٢٤، ١٩٦٨، ص ١٧١-١٨١، سعيد الديوجي.



չինարարական վերելքին ու կը շեշտէ Լուլուի հայկական ծագումը:

Անվիճելի է ուրեմն թէ Պատր էտ Տին Լուլու հայ էր ծագումով եւ բացառիկ տաղանդով ու կարողութիւններով օժտուած քաղաքական դէմք մը, որ Պենի Չենկի տոհմին երեք գահաժառանգներու խնամակալութիւնը ստանձնելէ յետոյ, հիմնեց իր սեփական հարստութիւնը, որ սակայն եղաւ կարճատեւ՝ Հուլիուսի շրջանին արշաւանքին պատճառով:

Աթաբեկութեան շրջանին իր սաները եղած են.

—Ըզ էտ Տին Մաս'ուտ Պըն Արսլանշահ Հ. 607-615 թթ. (1210-1218 թթ.):

—Նուր էտ Տին Արսլանշահ Պըն Մաս'ուտ Հ. 615-616 թթ. (1218-1219 թթ.):

—Նասրը էտ Տին Մահմուտ Պըն Մաս'ուտ Հ. 616 թ (1219 թ.):

Հակառակ երկարամեայ, փոթորկալից եւ տազնապալի իր գահակալութեան, Լուլու եղած է բացառիկ՝ տաղանդով օժտուած քաղաքական դէմք մը, թէեւ՝ հակասական մղումներով, երբեմն բիրտ, սակայն արդարակորով, աններող՝ բայց ողորմած, յարատեւ պատերազմող զբաղի երկիրներուն հետ, սակայն նոյն ատեն մեկենաս եւ քաջալերող գիրի ու գրականութեան, արուեստներու եւ շինարարութեան, ու դեռ բարեխնամ եւ շահագրգիռ իր հպատակներուն վիճակով եւ առօրեայով:

Տէյվիտ Ռայս, Պատր էտ Տինի պղինձի արուեստի հաւաքածոյին մէջ գտած է արծաթով զարդարուած ափսէ մը, նուիրուած Լուլուին, որուն յիշատակարանը փոխանակ Ապու Ալ Ֆատաէլ տիտղոսին (արժանիքներու տէր)՝ զայն որակած է Ապու Ալ Մազալէմ (բռնութեանց տէր)<sup>(9)</sup>: Հակառակ այս նախատական արձանագրութեան, Լուլու զայն պահած է իր

մօտ որպէս արուեստի գործ ու շատ հաւանաբար, ըստ իր սովորութեան, նաեւ վարձատրած արուեստագէտը:

Լուլուի գահակալութեան շրջանին, Մուսուլ դարձաւ մշակոյթի կարեւոր կեդրոն մը, իր ուրոյն դպրոցով, որուն ամենացայտուն գործերէն մէկն է 1217-1218 թթ.ուն մասնաւորապէս իրեն համար պատրաստուած եւ նկարազարդուած ֆիթապ էլ Աղանին (Գրական Գործերու Հաւաքածոյ)<sup>(10)</sup>: Այս մեծածաւալ հաւաքածոն, որուն ներկայ հրատարակութիւնները կը տարուբերին 20-22 հատորներու միջեւ, մինչեւ այսօր փնտռուած եւ ժողովրդական հատնրաիր ժողովածու մըն է: Դժբախտաբար, Լուլուի օրով պատրաստուած եւ նկարազարդուած հատորներէն փրկուած են միայն հինգ հատորներ, որոնք կը գտնուին Պոլսոյ եւ եւրոպական այլ թանգարաններու մէջ: Պոլսոյ հատորին սկիզբը կայ Լուլուի նկարը, որուն անունը փոքր տառերով գրուած է իր երկու բազուկներուն վրայ (տես՝ նկար թիւ 1):

Լուլուի անունը պիտի անմահանար սակայն պալատական մատենագիր, Իպն էլ Ասիրի մեծածաւալ պատմութեան գիրքով, որ կը բաղկանայ ինը հատորներէ՝ Ալ Քամել Ֆիլ Ռարիխ (Կատարեալը, (կամ Ամբողջականը) Պատմութեան Մէջ) խորագիրով:

Ըստ բնկալեալ սովորութեան, պատմութիւնը կը սկսի Աղամէն ու կը վերջանայ Հ. 623 թ.ին (1226 թ.): Հեղինակը պիտի մահանար չորս տարիներ ետք՝ 1230 թ.ին: Ներածականին մէջ (էջ 7), Իպն էլ Ասիր կը յայտնէ, թէ գիրքը պատրաստուած է թելազրութեամբ՝ ողորմած, գիտուն, յաղթական, տիեզերեալ, իսլամութեան եւ հաւատացեալներու սիւն, աշխարհի մէջ արդարութիւն վերականգնող իր տիրոջ Պատր Տին Լուլուի, մաղթելով որ Աստուած անոր տէրութիւնը պահէ անսասան:

Իպն էլ Ասիրի պատմութիւնը թանկագին աղբիւր է Միջին

9. D. R. Rice, «The Brasses of Badr el Din Lulu», Bulletin of the School of Oriental and African Studies, XIII 1950, p. 633.

10. «Islamic Art Chamber's Encycl.», vol. 7, p. 765.





Նկար թիւ 1

Արեւելքի, Խաչակիրներու, Հայաստանի եւ Կիլիկիոյ պատմական իրադարձութիւններուն կապակցութեամբ:

Լուլուի նման փառասէր գահակալ մը, անշուշտ, պիտի հատանէր նաեւ իր սեփական դրամները: Մեզի հասած են նմոյշներ իր անուամբ ոսկի տինարներու եւ պղինձէ ֆիլսերու: Պղինձ ֆիլսերը երբեմն շեղելով իսլամական աւանդական սովորութիւններէն հետեւած են սելճուքեան եւ օրթուքեան պատկերաւոր դրամներուն: Մանօթ փողերանոցներ են Մուսուլը ու Ճեզիրէն<sup>(11)</sup>: Կ'անդրադառնանք

11. Ghalib Edhem, «Monnaies Turcomanes», նաեւ տես՝

العملة الإسلامية في العهد الأتابكي، محمد باكر الحسيني، مطبعة الحافظ، بغداد، 1977.

ոսկեդրամի մը՝ իր մակագրութիւններով (տես՝ նկար թիւ 2): Դրամին վրայ Լուլուի անունը յիշուած է արքայի տիտղոսով, որպէս կրօնքի եւ աշխարհի լիալուսին<sup>(12)</sup>:



Նկար թիւ 2

Հետեւելով տիրող սովորութիւններուն, Լուլու իր դրամներուն վրայ կը կրէ կրօնքի եւ աշխարհի զեղեցկութեան լուսափայլի տիտղոսը՝ «Պատր»: Նման տիտղոսներ գործածած են բոլոր իսլամ մելիքները, շահագործելու համար զանգուածներու կրօնական զգացումները:

Ոսկի դրամը հատանուած է Հ. 645 թ.ին (1247 թ.) Մուսուլի մէջ, Ալ Մուլթա'սեմ Պիլլահ խալիֆին օրով Հ. 640-656 թթ. (1242-1258 թթ.): Անոր օրով, Հուլակուի արշաւանքով վերջ պիտի գտնէր Արբասեան տոհմի գահակալութիւնը Պաղատի մէջ:

Այս դրամին տրամագիծն է 28 մմ. եւ կը կշռէ 6.30 կրմ.:

12. Պատր բառին տառացի թարգմանութիւնն է լիալուսին, որ արաբական ըմբռնումով եւ բանաստեղծութեան մէջ նկատուած է որպէս գերազոյն զեղեցկութեան խորհրդանիշ:



لولو  
محمد رسول الله  
صلى الله عليه  
بدر الدنيا  
والمدین اتابك

Լուլու  
Մուհամմետ մարգարէ Աստուծոյ,  
Ալլահին  
Աղօթքները իջնեն վրան  
Լիալուսին աշխարհի  
եւ կրօնքի՝ Աթաբեկ

محمد رسول الله ارسله  
بالمهدى ودين الحق ليظهره  
على الدين كله ولو كره  
المشركون

Մուհամմետ առաքեալ Աստուծոյ,  
գոր դրկեց ուղիղ եւ ճշմարիտ  
կրօնքով  
գայն ցոյց տալու բոլոր կրօնքներու  
վրայ ի հեճուկս անհաւատներու  
հակակրանքին:

الامام  
لا اله الا الله  
وحده لا شريك له  
المعصم بالله  
امير المؤمنين

Իմամ  
Ալլահէն գառ Աստուած չկայ  
միակն է առանց ընկերակցի  
Ալ Մութա'սեմ Պիլլահ  
իշխան հաւատացեալներու

بسم الله ضرب هذا الدينار  
بالموصل سنة خمس واربعون وستاية

Յանուն Աստուծոյ այս տինարը  
հատանուած է Մուսուլի մէջ  
645 թ.ին

لله الامر من قبل ومن بعد  
ويومئذ يفرح المؤمنون بنصر الله

Կամքը Տէրոջն է ինչպէս անցեալին  
մէջ այնպէս ալ ապագային եւ օր մը  
պիտի ուսխանան հաւտացեալները  
Տէրոջ յաղթանակով:

Հիմնուելով դրամի վրայ յիշուած խալիֆին անուան  
առկայութեան, մեզի կը թուի թէ Լուլու դիւանագիտական  
նկատումներով ընդունած է Սիւննի խալիֆին գերակայու-  
թիւնը որպէս կրօնական պետ: Իսկ Ապի'լ Ֆիտա'ի եզրա-  
կացութիւնը՝ թէ Լուլու կրնայ պատահանած ըլլալ Շիի  
յարանուանութեան, ամէն տարի ոսկիէ կանթեղի մը նուի-

րուսով Ալիի շիրիմին, կրնայ թելադրուած ըլլալ, բնակչու-  
թեան մեծամասնութեան, կամ՝ կարեւոր զանգուածին կրօ-  
նական զգացումները բաւարարելու մտահոգութեամբ:

Հայագգի Լուլուի պղինձէ պատկերադրոշմ ֆիլիսներէն կը  
ներկայացնենք նմոյշ մը, հատանուած Մուսուլի մէջ 2. 631  
թ.ին (1233 թ.), ուր գահակալը կը ներկայանայ անմօրուս:  
Ֆիլսը կը կշռէ 7.50 կրամ, 24 մմ. տրամագիծով (տես՝ նկար  
թիւ 3):



Նկար թիւ 3

Լուլուի կիսանդրին շուրջ եղած մակագրութիւնը կը  
յիշատակէ միայն հատանման վայրն ու թուականը, իսկ  
յետսակողմը, յիշուած է օրուան խալիֆին՝ Մուսթանսըրի  
անունը եւ շրջագիծին մէջ,

بدر الدنيا والدين الملك الكامل الملك الاشرف

Կը թուի թէ այս շրջանին Լուլու ճորտ դարձած է էյուպեան  
տոհմի գլխաւոր մելիք Ալ Քամելին (1218-1237 թթ.) եւ անոր  
եզրօր՝ մելիք Ալ Աշրաֆին (1210-1237 թթ.) որ 1210-1220  
թթ.ուն տիրած է Խլաթի, Մայաֆարդինի, Սինճարի եւ Խա-  
ռանի, իսկ 1229-1237 թթ.ուն Սուրիոյ հարաւային շրջանին:

Լուլուի մահով վերջ պիտի գտնէր իր հիմնած հարստու-  
թիւնը: Իրեն յաջորդած է իր որդին Ալ Մալեք Ալ Մալեհ  
Իսմայիլ՝ Մուսուլի մէջ: Իր երկրորդ որդին՝ Ալ Մուճահեա



Իսհազ, իշխած է ձեզիբէի մէջ, իսկ երրորդ որդին՝ Ալ Մուզաֆֆար Ալի՝ Սինճարի վրայ<sup>(13)</sup> :

Պատր էտ Տին Լուլու անուղղակիորէն պատճառ պիտի դառնար նաեւ պալատական ոճիրներու եւ յեղաշրջումի մը՝ Գահիրէի արքունիքէն ներս: Եգիպտոսի էյուպեան տոհմին վերջին գահաժառանգ Ալ Մալեք Ալ Սալեհ իր հարձերէն մէկը՝ Շաճարեթ էտ Տուրը բարձրացուցած էր թագուհիի դիրքին, մանչ գաւակի մը՝ Խալիլի ծնունդէն ետք: Խալիլ մեռաւ մանկահասակ: Շաճարեթ էտ Տուրը, որ ըստ Ապի՛լ Ֆատա՛ի ծագումով հայ ստրկուհի մըն էր, բարձրացաւ Եգիպտոսի գահին՝ սուլթանուհի տիտղոսով:

Նկատի ունենալով սակայն նման դիրքի մը ստեղծած դժուարութիւնները մոլեռանդ զանգուածներուն մօտ, որոնք նուաստացում կը նկատէին կառավարուիլ կնոջ մը կողմէ, թագուհին ամուսնացաւ թուրքմէն մեմլուքներու ամենէն ազդեցիկ էմիրներէն՝ Ալ Մա՛ըզ Այպաք Ալճաշընկերի հետ, որ հաւատարիմ զօրավարներէն մէկն էր իր ամուսնոյն՝ Ալ Սալեհի: Հետագային՝ Շաճարեթ էտ Տուրը իմանալով թէ իր ամուսինը նշանուած է ու կը մտադրէ Պատր էտ Տին Լուլուի աղջիկը իրեն երկրորդ կին առնել, նախանձէ տարուած՝ իր ամուսինը խեղդամահ կ'ընէ բաղնիքին մէջ, իր ծառաներուն միջոցով, թէեւ իր կարգին կը սպաննուի Այպաքի կողմնակից զօրականներուն կողմէ<sup>(14)</sup> :

13. - المختصر في اخبار البشر، تاريخ ابي الفدا، دار المعرفة - بيروت، ج، 3، ص 213

14. - ابي الفدا، ج، 3، ص 192

### ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՁ

Առանց վարանումի կարելի է արձանագրել որ հայկական դրամագիտութիւնը, վերջին քսան տարիներու ընթացքին, բոլորեց զարթօնքի նոր շրջան մը, ե՛ւ հայրենիքին մէջ, ե՛ւ արտասահմանի: Այդ մարզին մէջ անտես չմնաց նաեւ արաբական տիրապետութեան շրջանին Հայաստանի մէջ հատանուած կամ շրջանառութեան դրուած արաբական դրամներու հարցը: Այս գծով ուշագրաւ են Խ. Մուշեղեանի ստորագրութեամբ լոյս տեսած հետեւեալ երկու յօդուածները՝ Հայաստանում Տարածուած Վաղ Արաբական Դրամներ («Լրաբեր», Երեւան, 1973, թիւ 12, էջ 32-47), եւ Արքայական Դրամների Թողարկումը Խալիֆաթի «Արմենիա» Նախանգում Ը-Ժ. Դարերում, («Պատմա-Բանասիրական Հանդէս», Երեւան 1973, թիւ 4, էջ 143-156):

Երկրորդ յօդուածին կցուած է «Յաւելուած Ցանկ» մը՝ 215 դրամներու, ցանկ՝ ուր մանրամասնօրէն յիշուած են հատանման Հիճիրի եւ Փրկչական թուականները, փողերանոցները, գահակալող խալիֆէին, գահաժառանգին եւ այլ պետական անձնաւորութիւններուն անունները:

Բժախնդիր պրպտումով, ցանկին վերջին սիւնակին մէջ տրուած են մատենագիտական այն աղբիւրները, ուր խնդրոյ առարկայ դրամները յիշատակուած եւ ուսումասիրուած են



արաբական դրամագիտութեան մէջ հեղինակութիւն նկատուող մասնագէտներու կողմէ:

Առաջին յօդուածին մէջ, ուր արաբական վաղ շրջանի, կամ Օմայեան իշխանատոհմի դրամները կ'ուսումնասիրուին, Մուշեղեան անդրադարձած է 41 այլ դրամներու, ինչ որ ցանկին ընդհանուր թիւը կը բարձրացնէ 256 հայ-արաբական դրամներու:

Ենթադրարար, հեղինակը իր տրամագրութեան տակ ունեցած չէ արաբական դրամագիտութեան նուիրուած յարաբերաբար նոր հրատարակութիւններ: Այսպէս, օրինակ, ձորճ Մայլզ բացարձակ հեղինակութիւն մըն է արաբական դրամագիտութեան, իր բազմահատոր հրատարակութիւններով եւ յօդուածներով: Արաբական երկիրներէն հեղինակութիւններ են Գահիրէի Իսլամական Թանգարանի տնօրէն՝ Ապտիւլ Ռահման Ֆըհմի, Պաղտատի Թանգարանի տնօրէն՝ Մուհամմէտ Պաքէր էլ Հուսէյնի, Դամասկոսի Թանգարանի նախկին տնօրէններէն՝ Ապուլ-Ֆարաճ էլ Լշ եւ ուրիշներ:

Թէեւ անվիճելի արժէք կը ներկայացնեն 19-րդ դարու վերջերը հրատարակուած Լավուայի, Թիզըն-հաուզընի, Մարքովի, Նիւթցըլի, Լէյն Փուլի եւ ուրիշներու ճոխ հաւաքածոները, որոնք անպայմանօրէն կը պահեն իրենց մատենագիտական աղբիւրներ ըլլալու հանգամանքը, ասով հանդերձ կը կարօտին ժամանակի ընթացքին յայտնաբերուած նորութիւններով ամբողջացումի:

Օգտագործելով պատեհութիւնը, Ս. Մուշեղեանի ուշադրութեան կը յանձնենք, կարգ մը աղբիւրներէ քաղուած դրամներու ցանկ մը, զոր լոյս կ'ընծայենք հետագայ էջերուն մէջ՝ մատենագիտական եւ պատմական ծանօթութիւններով:

Ս. Մուշեղեան կուռ ու ամփոփ գիծերով կ'անդրադառնայ նորաստեղծ արաբական կայսրութեան կողմէ դրամահատման մարզին մէջ ձեռք առնուած միջոցառումներուն: Սկզբնական շրջանին, արաբները կը հետեւին ճկուն եւ հանդուրժող քաղաքականութեան, խուսափելով կտրուկ եւ արմատական փոփոխութիւններէ: Չանազան մշակոյթներով սնած շրջաններու մէջ անոնք հետեւեցան տեղական աւան-

դութիւններուն: Սակայն, մօտաւորապէս 50 տարիներու փոխանցման հանգրուանէ մը ետք, Հիճրիի 77-ին (695/6) Ապուլ Մալէք Պըն Մրուան հատանեց առաջին ոսկեդրամ տինարը, զուտ արաբական դրոշմով, որուն պիտի հետեւէին, քանի մը տարիներ յետոյ, արծաթ տիրհեմնու պղինձ Ֆիլսը:

Օմայեան շրջանին, ոսկի տինարները կը կրեն հատանման տարեթիւը, առանց փողերանոցի յիշատակութեան: Ընդունուած կարծիքը ա'յն է թէ անոնք հատանուած են կայսրութեան մայրաքաղաք՝ Դամասկոսի փողերանոցին մէջ: Հետեւաբար անհրաժեշտ չէ նկատուած յիշել հատանման վայրը:

Տարբեր պիտի ըլլար պարագան արծաթ-տիրհեմին եւ պղինձ-Ֆիլսին համար: Կայսրութեան ընդարձակումով, երկրորդական հատանման վայրեր հաստատուեցան կեդրոնական փողերանոցներու հսկողութեան տակ, դիւրացնելու համար ելեւմտական վարչամեքենային մեծածաւալ գործունէութիւնը, եւ մանաւանդ հակալիչուելու համար տուրքերու եւ հարկերու զանձումը:

Արծաթներու վրայ, հատանման վայրէն զատ յիշուած են թուականը, խալիֆէին անունը, երբեմն դահաժառանգին, պատասխանատու վերակացուններու եւ մանաւանդ նահանգներուն մէջ տեղակալի հանգամանքով տիրող ոստիկաններուն (էմիրներու) անունները:

Այս կարգի դրամներն են մասնաւորապէս որ նոր լոյս կը սփռեն 7-10-րդ դարերու հայ ժողովուրդի արաբական շրջանին պատմութեան վրայ, որովհետեւ վերջնական կերպով լուսաբանուած չէ տակաւին Հայաստանի մէջ պաշտօնավարող յարափոփոխ ոստիկաններու ցանկը:

Նոյն կարեւորութիւնը ունին Հայաստանի զանազան շրջաններու մէջ հատանուած պղինձ Ֆիլսերը, որոնք թէեւ որպէս օգնական «մանրուք» հատանուած են, տեղական շրջանառութեան համար, ասով հանդերձ, կրնան երբեմն օգտակար տեղեկութիւններ հայթայթել պատմութեան:

Մուշեղեան իր երկու յօդուածներուն մէջ կը յիշէ Արմինիա նահանգին մէջ տեղադրուած 11 փողերանոցներ:



- |                            |                   |
|----------------------------|-------------------|
| 1. Արմինիա                 | ارمينية           |
| 2. Առան                    | اران              |
| 3. Գանձակ                  | جنزة              |
| 4. Դուիմ                   | ديبل              |
| 5. Թիֆլիս                  | تفليس             |
| 6. Հարունապատ              | هرون اباد         |
| 7. Հարունիէ                | هرونية            |
| 8. Մա'տան Պանունայս        | معادن باجنيس      |
| 9. Պարտաւ                  | بردعة             |
| 10. Մատինէդ Պալխ էլ-Պայտա' | مدينة بلخ البيضاء |
| 11. Տերպենտ                | باب الابواب       |

Ըստ Ապտիւլ Ռահման Ֆրէմիի, արաբական կայսրութեան մէջ 82 փողերանոցներ դրամ հատանած են<sup>(1)</sup>: Ճոն Ուոքըր կը յիշէ մօտ 115 փողերանոցներ<sup>(2)</sup>: Հետագային, այս թիւը պիտի բարձրանար 150 տեղանուններու: Ընդհանրապէս յիշուած վայրերը քաղաքներու անուններ են, որոնց մեծամասնութեան աշխարհագրական դիրքը ծանօթ է: Կայ սակայն կարեւոր թիւ մը փողերանոցներու, որոնց տեղադրութիւնը տակաւին կը մնայ անորոշ եւ վիճելի:

Ասոնց կից կան կարգ մը փողերանոցներ, որոնք յիշատակուած են նահանգներու անուններով, փոխանակ քաղաքներու: Կու տանք քանի մը օրինակներ.

**ԱՐՄԻՆԻԱ** Հայաստանը իր վարչական սահմաններով, որոնց մէջ կ'իյնան Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանները, Վրաստանն ու Աղուանքը:

- |                   |  |
|-------------------|--|
| <b>ԱՌԱՆ</b>       | Աղուանքը:  |
| <b>ԱԼ-ՌԻՐՏՈՆ</b>  | Զինուորական կարեւոր կայք մը, որ կը պարփակէր Յորդանանի նահանգը:                                     |
| <b>ԱԼ-ԱՆՏԱԼՈՍ</b> | Սպանիան՝ ընդհանրապէս:  |
| <b>ԱԼ-ԱՖՐԻՔԻԱ</b> | Հիւսիսային Ափրիկէն՝ բացի Եգիպտոսէն, որ ծանօթ էր «Միսր» անուան տակ:                                 |
| <b>ԱԼ-ՄԱՂՐԷՊ</b>  | Արեւմուտք: Ընդարձակ իմաստով Հիւսիսային Ափրիկէի բոլոր երկիրները, ներառեալ Եգիպտոսը <sup>(3)</sup> : |

**ԱԼ-ԻՐԱԲ** Մա'մունի շրջանին հատանուեցաւ առաջին տինարը (ոսկի) 199 թ.ին (814-5) Իրաք հատանման վայրանունով<sup>(4)</sup>, որ տակաւին կ'ընդունէր մը կը մնայ դրամագէտներուն համար, քանի որ կայսրութեան գլխաւոր փողերանոցը, Մատինէդ-էլ-Սալամ՝ մայրաքաղաքն էր կայսրութեան, եւ կ'իյնար Իրաքի մէջ:

**ԱՐՄԻՆԻԱ.**— Մեզ հետաքրքրող այս յորջորջումը արաբական դրամներու վրայ, որպէս փողերանոց կամ հատանման վայր, մեզ կ'առաջնորդէ կարգ մը բարդութիւններու: Ի՞նչ հասկնալու է ԱՐՄԻՆԻԱ մակագրութեամբ: Արմինիայի ո՞ր քաղաքը, Դուի՞ն, Առա՞ն, Թիֆլի՞ս, Պարտա՞ւ թէ՛ այլուր: Անշուշտ այս քաղաքները ունեցած են իրենց սեփական փողերանոցները, ուր պարբերաբար հատանուեցան արծաթ

1.— الدكتور عبد الرحمن فهمي محمد، موسوعة النقود العربية وعلم التعميمات، القاهرة، ١٩٦٥، ص. ٢٨٥/٢٥٠.  
 2.— John Walker, «A Catalogue of the Arab Byzantine and Post Reform Umayyad Coins», 1956, p. IXX-XCII. Յետայսու՝ Walker:

3.— Ֆրեմի, էջ 95:  
 4.— Ֆրեմի, էջ 99:



(տիրհեմ) եւ պղինձ (Ֆիլս) զրամներ, փողերանոցներու առանձին յիշատակութեամբ, ինչպէս մանրամասնօրէն յիշատակուած են Մուշեղեանի քոնփիւսին մէջ: Հետաքրքրական է սակայն նշել թէ «Արմինիա» մակագրութեամբ արծաթները հատանուած են աւելի յաճախադէպ քան քաղաքային փողերանոցներու թողարկումները, մասնաւորաբար ՕՄԱՅԵԱՆ իշխանատոհմին յիսնամեայ զրամահատանման տեւողութեան՝ 77-132 թթ. (696-750) ընթացքին:

Մուշեղեանի ցանկին մէջ («Լրարբեր», 1973, թիւ 12, էջ 37-38), կը նշմարենք ԱՐՄԻՆԻԱ անուամբ 19 թողարկումներ արծաթ տիրհեմներու, որոնք կ'երկարին Հիճիրի 81 թուականէն մինչեւ 123 թուականը (700-740), մինչդեռ քաղաքային փողերանոցներէն յիշուած են միայն

	Տարիներ՝	Թողարկում՝
Դուիւն (Տեպիլ)	84, 85, 86, 87 (703-705)	4 »
Առան	89, 90 (707-709)	2 »
Թիֆլիս	86 (705)	1 »
Գանձակ	94 (712/3)	1 »
(կասկածելի ընթերցումով)		

Հետեւաբար, քաղաքային փողերանոցներու սահմանափակ թողարկումները բազմաթիւ արծաթեան Արմինիա նահանգին կանոնաւոր եւ երկարատեւ թողարկումներուն, մեզ կը մղեն նկատի առնելու զրամագիտութեան կողմէ արձանագրուած կարգ մը մատնանշումներ:

Ա.— Ըստ հին մատենագիր Ալ-Մաքրիզիի, Խալիֆէ Հիշամ Պըն Ապտուլ Մալիքի օրով (105-125/724-743) մասնաւոր հրովարտակով վերատեսութեան ենթարկուած է տիրհեմին կշիռը եւ զրամահատանման գործողութիւնը կեդրոնացած կայսրութեան գլխաւոր փողերանոց՝ Ուասէզի մէջ, որ հիմ-

նուած էր 84 (703) թուականին<sup>(5)</sup>: Տոքթ. Ֆըհմի կը խորհի թէ Ուասէզի կից յարատեւած ըլլալու է նաեւ Դամասկոսի աւագ փողերանոցը<sup>(6)</sup>:

Բ.— Ըստ Եունկֆլայշի, ժազ տը Մորկան Ուասէզի մէջ կատարած պեղումներու ընթացքին գտած է մեծ քանակութեամբ արծաթ տիրհեմներ՝ չգործածուած վիճակի մէջ, որոնք կը կրեն Ալ-Անտալոս եւ Ալ-Աֆրիքիա փողերանոցներու անունները, հաւանաբար յիշեալ վայրերը զրկելու համար<sup>(7)</sup>:

Փողերանոցային վիճակի մէջ (mint condition) գտնուած այդ զրամները կը հաստատեն մատենագիր Ալ-Մաքրիզիի հաղորդածը: Դժուար չէ եզրակացնել, թէ այդ զրամները, հակառակ հեռաւոր նահանգներու անուններուն յիշատակութեան, գործնականօրէն հատանուած էին Ուասէզի կեդրոնական փողերանոցին մէջ, հետագային զրկուելու համար յիշուած գաղութները՝ շրջանառութեան համար: Շատ հաւանաբար, այս ձեւով, պետութիւնը կը ձգտէր հակակշիռ տակ առնել տուրքերու եւ այլ եկամուտներու գանձումը:

Գ.— Պէտք չէ նաեւ անտեսել որ Արմինիա իր վարչական ընդարձակ սահմաններով կը նկատուէր կայսրութեան համար անհանդարտ եւ վտանգաւոր ծայրաշրջան մը (սուղուր), եւ պաշտպանութեան զօտի մը բիւզանդական ոտնձգութիւններու դէմ: Նահանգը ենթակայ էր տեւական փոթորիկներու: Անկախաբար բնիկ նախարարներու կազմակերպած ապստամբութիւններէն, թօթափելու համար օտար լուծը, կանոնաւոր կերպով կ'ըմբոստանային նաեւ կեդրոնախոյս ձգտումներով համակուած էմիրներ, զինուորականներ եւ արաբական ցեղախումբեր, որոնք տեղաւորուած էին Հայաստանի մէջ,

5.— Walker, p. LXIII.

6.— Ֆրիմի, էջ 67:

7.— Walker, p. LXIII, եւ Ֆրիմի, էջ 67:



իրենց հետ բերելով իրենց տոհմային պայքարներն ու փոխվրէժի աւանդական վէճերը:

Ըստ արաբ մատենագիր Ալ-Եագուպի, Հարուն էլ Ռաշիտ խալիֆան (170-193/786-809) իր գահակալութեան 23 տարիներու ընթացքին, յաջորդաբար 22 ոստիկաններ զրկած է Արմինիա, վերահաստատելու համար անդորրութիւնը<sup>(8)</sup>: Նման անկայուն պայմաններու տակ կայսրութիւնը կրնար խոհեմ չնկատել Արմինիա նահանգին քաղաքներուն մէջ կանոնաւոր կերպով զրամ հատանելու քաղաքականութիւնը:

Դ.— Դժբախտաբար աղբիւրներ չունինք Արմինիա նահանգին տարածքին վրայ յայտնաբերուած դրամագանձերու մանրամասնութեանց շուրջ: Խ. Մուշեղեանի կողմէ հրատարակուած գիրք մը, ուսերէն լեզուով եւ հայերէն ամփոփումով<sup>(9)</sup> կ'ընդգծէր որ «արաբական տիրապետութեան սկիզբից մինչեւ Ը. դարի կէսը, այսինքն Խալիֆաթի Օմայեան հարստութեան ժամանակ, գանձերը ընդհանրապէս հազուադէպ են»<sup>(10)</sup>:

Հայ-արաբական դրամագիտութեան բնագաւառը պեղուած չէ տակաւին: Կը կարօտի մատենագրական պրպտումի: Յարդ հանդիպած չենք հայ հին մատենագրութեան մէջ ամենագոյզն ակնարկութեան մ'իսկ: Սակայն մինչեւ նորայայտ աղբիւրներու յայտնութիւնը կը խորհինք թէ՛

1.— Արմինիա նահանգի քաղաքային փողերանոցներուն մէջ հատանուած են անտարակոյս բոլոր պղինձ ֆիլսերը, որոնք որպէս օգնական դրամ, մանր առեւտուրի դիւրացման հա-

8.— تاريخ يعقوبي دار بيروت للطباعة والنشر، ١٩٧٠، ص. ٤٢٦ - ٤٢٨. Եստայսու՝ Եագուպի:

9.— Խ. Մուշեղեան, Դուրինի Դրամագիտական Շրջանառութիւնը Դրամագիտական Տուեալներով, Երեւան, 1962:

10.— Նոյնը, էջ 172:

մար, կրնային հատանուիլ ոեւէ ոստիկանի կամ տեղակալի կողմէ, իր անձնական հսկողութեան տակ, առանց դրամական լուրջ եւ հակակշռուած դրութեան մը կիրարկման:

2.— Օմայեան շրջանին, հակառակ «Արմինիա» մակագրութեան, արծաթ տիրհեմները հատանուած ըլլալու են կայսրութեան գլխաւոր փողերանոցներէն՝ Դամասկոսի եւ Ուասէ-դի մէջ: (77-132/696-750):

3.— Սովորութիւնը կրնայ շարունակուած ըլլալ նաեւ Ապպասեան գերդաստանի գահակալութեան սկզբնական շրջանէն մինչեւ Հարուն էլ Ռաշիտի օրերը, երբ խալիֆը (170-193/786-809) ապակեդրոնացման քաղաքականութեամբ, ազատութիւն ընծայեց մեծ թիւով նահանգային եւ քաղաքային փողերանոցներու սեփական տիրհեմներ հատանելու, միանգամայն յիշելով ելեւմտական պատասխանատուներու, փողերանոցներու վարիչներու, ոստիկաններու եւ այլ տեղակալներու անունները:

Հետաքրքրական է յիշել, թէ ոստիկաններէն ոմանք, որոնց պաշտօն տրուած էր Հայաստանի մէջ անդորրութիւնը վերահաստատելու կամ ըմբոստութիւնները զսպելու, բաւականացած են իրենց տեղ զինուորական կամ ելեւմտական տեղակալներ զրկելով գլխահարկը կամ այլ տուրքեր հաւաքելու, կամ՝ պատժական արշաւանքներ կատարելու համար, առանց անձնապէս Հայաստան ոտք դնելու:

Ալ-Եագուպի, թուելու ատեն Հարուն էլ Ռաշիտի կողմէ նշանակուած ոստիկաններու անունները, մասնաւոր յիշատակութեամբ կ'ընդգծէ անունները անոնց, որոնք անձնապէս մեկնած են իրենց պաշտօնավայրը. օրինակ՝ Ալ-Ֆատլ-Պըն Եահեա Պըն Խալէտ Ալ-Պարմաքին<sup>(11)</sup>:

Թէեւ մատենագրական եւ այլ հիմնական փաստեր չունինք տակաւին, սակայն ամենահնարաւոր սահմաններուն մէջ

11.— Եագուպի, էջ 426:



կ'իյնայ ենթադրել, թէ Հարուն էլ Ռաշիտէն ետք, «Արմինիա» մակագրութեամբ արծաթները հատանուած ըլլան Դուինի մէջ, նկատի ունենալով անոր քաղաքական, ռազմական եւ մանաւանդ առեւտրական կարեւորութիւնը:

ԱՌԱՆ.— Արաբական մատենագրութեան մէջ Առանը (Աղուանք) կ'իյնայ Արմինիա նահանգին վարչական սահմաններուն մէջ: Ան երբեմն յիշուած է քաղաքի իմաստով, եւ յաճախ՝ վարչական-զինուորական շրջանի առումով: Արաբներուն մօտ ընդհանրացած էր այս շփոթը: Մինչեւ այսօր եզրիպտոսի մը համար, սուրիացին կը կոչուի ՇԱՄՅԻ, մայրաքաղաք՝ Շամ-Դամասկոսի գծով:

Առանի վերաբերեալ արծաթներուն շարքին կը հանդիպինք երբեմն պարզ ձեւով գրուած՝ ضرب باران (Տուրիպա պի Առան) եւ կամ երբեմն ալ՝ ضرب بمدينة اران (Տուրիպա պի Մատինէդ Առան) այսինքն հատանուած Առան քաղաքին մէջ: Այս երկրորդ ձեւին կը հանդիպինք Հարուն էլ Ռաշիտի յաջորդ՝ էլ-Մամունի օրով հատանուած արծաթ տիրհեմներէն ոմանց վրայ, որպէս հետեւանք քաղաքային փողերանոցներուն տրուած հատանման իրաւունքներուն:

Առանն ալ, իր կարգին, կը բաժնէ Արմինիա նահանգին քաղաքական խոռվայոյզ վիճակը: Հետեւաբար, ճիշդ պիտի ըլլար ենթադրել, որ արծաթ-տիրհեմները հատանուած ըլլալու են, Արմինիայի նման, կայսրութեան գլխաւոր փողերանոցներուն մէջ, ինչպէս Դամասկոս, Ուասէզ, եւ հետագային Մատինէզ էլ Սալամ, մինչեւ Ռաշիտի շրջանը: Տեղական փողերանոցը կրնար առաւելաբար պղինձ-ֆիլսեր հատանել մանր առեւտուրի համար:

ԴՈՒԻՆ.— Արաբական մատենագրութեան մէջ յիշուած ՏԱՊԻԼ (Դուին) քաղաքը, Արմինիա ընդարձակ նահանգին գլխաւոր կեդրոնն էր, եւ յաճախ նստավայրը՝ տեղակալ ոստիկաններու: Դուին՝ հակառակ կայսրութեան կեդրոնէն ունեցած իր հեռաւորութեան, եղաւ մէկը այն սակաւաթիւ փողերանոցներէն, որոնք վաղահասօրէն արծաթ հատանցին: Արաբական արծաթներուն համար որպէս սկզբնական

տարեթիւ ընդունուած է Հիճիրի 80 տարին: Դուինի մէջ առաջին արծաթը հատանուած է յաջորդ տարին, Հիճիրի 81 թ.ին: Սակայն չորս յաջորդական թողարկումներէ յետոյ, շարքը կը դադրի, ենթարկուելով Հիշամ Պըն Ապտուլ Մալէքի կեդրոնացման միջոցառումներուն: Ռաշիտէն ետք պիտի վերագտնէր իր աշխուժութիւնը, հատանելով «Արմինիա» մակագրութեամբ արծաթներու շարքը: Անժխտելի է անշուշտ Դուինի առեւտրական կարեւորութիւնը տարանցիկ վաճառականութեան որպէս կեդրոն:

ՀԱՐՈՒՆԱՊԱՏ.— Այս փողերանոցին անուամբ հետաքրքրական արծաթներ հասած են մեզի, վէճ ստեղծելով դրամագիտական շրջանակներու մէջ: Մուշեղեան թիւ 32 եւ 33 դրամներով («Պատմա-Բանասիրական Հանդէս», 1973, թիւ 4, յաւելուած) կը նկարագրէ 168/169 (784/5) թուականներուն թողարկուած արծաթներ, որոնք կը կրեն ՀԱՐՈՒՆԱՊԱՏ-ԱՐՄԻՆԻԱ անունները: Այլ անձնանուններու սիւնակին տակ կը յիշուի ՀԱՍԱՆ անունը:

Ձանց ընելով կրօնական սովորական բանաձեւերը կու տանք մեզ հետաքրքրող մակագրութիւնները.—  
ضرب هذا الدرهم بهرون اباد سنة تسعة وستين ومائة  
Յառաջակողմ.  
(այս տիրհեմը հատանուած է Հարունապատի մէջ՝ 169 տարեթիւին)

Յետսակողմ

ارمينية

حس

Արաբական դրամագիտութեան համար հետաքրքրական երեւոյթ է որ հատանման վայրէն զատ յիշուի այլ երկրի մը կամ նահանգի մը անունը: Անկասկած որոշ առիթով մը հատանուած է այս դրամը, եւ առնչութիւն ունի հայ ժողովուրդի պատմութեան հետ:

Յետսակողմի դաշտի վարի մասին մէջ, քուֆի տառերով դրոշմուած բառը, առանց կէտադրութեան, կրնայ ՀԱՍԱՆ կարդացուիլ, ինչպէս նշանակած է Մուշեղեան, հետեւելով կարգ մը դրամագէտներու ընթերցումին: Սակայն, կրնայ



նաեւ կարգացուիլ ձէՅՇ - բանակ - իմաստով: Դժբախտաբար, ընթերցման նման շփոթութիւններ եւ բարդութիւններ սովորական են կէտազրութենէ զուրկ քուֆի գրելաձեւով բառերուն համար, մանաւանդ երբ փորագրիչը մանր գիրերով պատրաստած է կնիքը, առանց մասնաւոր բժախնդրութեան:

Բառը ձէՅՇ կարգալու համար, անհրաժեշտ է որ ակոսներէն առաջինը ըլլար համեմատաբար աւելի բարձր, փաստելու համար «Նա» տառին առկայութիւնը: Ուրիշներ կ'առարկեն թէ վերջին գիրը «Շին» որոշ կորութիւն պէտք է ունենայ: Անձնապէս, քննելով զանազան նմոյշներ, կը հանդիպինք գրելակերպի տարբերակներու եւ կ'ենթադրենք թէ կարծիքներու տարբերութիւնը արդիւնք է իւրաքանչիւր հեղինակի ձեռքին տակ գտնուող նմոյշի զանազանութեան:

Ստորեւ կը ներկայացնենք նմոյշ մը:



Տորթ. Ապտիւլ Ռահման Ֆըհմի, իր մեծածաւալ հատորին մէջ<sup>(12)</sup>, այս դրամին կ'անդրադառնայ 1708 համարին տակ, շեշտելով, թէ Հարունապատ անուամբ քաղաք մը յիշատակուած չէ արար մատենագրութեան մէջ, մանաւանդ Նագութ էլ-Համուի «Քաղաքներու Համայնագիտարան»ին կողմէ<sup>(13)</sup>: Տորթ. Ֆըհմի կ'ենթադրէ, թէ այս փողերանոցը կրնար գտնուիլ հայ-արաբական սահմաններուն վրայ տեղ մը<sup>(14)</sup>:

Յետասկողմի բառը կը կարգայ ձէՅՇ - բանակ, եւ կը խորհի թէ դրամը հատանուած է պատմական ղէպքի մը առիթով:

Պաղտատի Թանգարանի դրամագիտական բաժնի տնօրէն՝ Սուհամէտ Պաքըր էլ-Հուսէյնի՝ «Իսլամական Դրամներ» խորագրեալ իր գիրքին մէջ<sup>(15)</sup>, էջ 41, ծանօթ. 55, կը հետեւի Տորթ. Ֆըհմիին:

Դամասկոսի պետական Թանգարանի նախկին տնօրէն՝ Ապուլ-Ֆարաձ էլ-Ըշ, 1972 թ.ին հրատարակուած «Ում Հաճարայի Գանձը»<sup>(16)</sup> խորագրեալ իր գործին մէջ, կը նկարագրէ 364 համարով եւ 169 (785/6) տարեթիւով նմոյշի մը ուսումնասիրութիւնը:

Ապուլ-Ֆարաձ համաձայն չէ Լը Սթրանժի տեղադրութեան, որ Հաուքալի վրայ հիմնուելով, Հարունապատը կը նոյնացնէ Ալ-Չուպայտիյէի հետ<sup>(17)</sup>:

Գոտրինկթըն<sup>(18)</sup> Հարունապատը կը տեղադրէ Քիւրտիս-

12.— Shu' dawṣaḡarūḡhiḡi p̄hi 1:

13.— *ياقوت الحموي، معجم البلدان.*

14.— Ֆրիմի, էջեր 283 եւ 506:

15.— *محمد باقر الحسيني. العملة الاسلامية، مطبعة دار الجاحظ، ١٩٦٦.*

16.— *محمد ابو الفرج العشي، كنز ام حجرة الفضي، ١٩٧٢، ص. ٧٩ - ٨١.*

17.— Le Strange, «The Lands of Eastern Califate», Cambridge, 1904, p.

192.

18.— Codrington, «A Manual of Muslim Numismatics», London, 1904.



տանի մէջ, ձիպալի՝ Քրքմընչահ եւ Համատան քաղաքներու միջեւ:

Ապուլ-Ֆարաճ կ'եզրակացնէ թէ հաւանաբար, Հարունապատ անունը տրուեցաւ նորաշէն կամ արդէն գոյութիւն ունեցող վայրի մը, որ երկար կեանք չունեցաւ եւ կամ անունն էր ոստիկանական ապարանքի մը, որ տեղակայներու նստավայր դառնալով, կ'ակնկալուէր ժամանակի ընթացքին կարեւոր կեդրոնի կամ քաղաքի վերածել. սակայն քաղաքական եւ վարչական աննպաստ պայմաններու բերումով կրնար չբացած եւ մոռցուած ըլլալ, տեղադրումն ալ անյայտ:

Ապուլ-Ֆարաճ անդրադառնալով յետսակողմի բառին, կը մերժէ ձէՅՇ ընթերցումը, եւ կ'առաջարկէ ՀԱՍԱՆ ձեւը, ու կը խորհի թէ անձնանունն է տեղական փողերանոցի մը գլխաւոր վերակացուն:

Յարդ մեզի ծանօթ տիրահմները կը կրեն 168-169 (784/5-785/6) թուականները միայն: ՀԱՍԱՆ-ձէՅՇ կնճիռին առնչութեամբ դրամագէտներու կարծիքները կը տարբերին:

Լավուա<sup>(19)</sup>, Սթիբըլ<sup>(20)</sup>, Թիզընհաուզըն<sup>(21)</sup> եւ մասամբ Լէյն Փուլ կը նախընտրեն ՀԱՍԱՆ ընթերցումը: Այս պարագային, դրամագէտներէն ոմանք, այս տիրահմները կը վերագրեն Հասան Պըն Քահթապային, որ Արմինիայի ոստիկան եղած է առաջին անգամ 136-ին (756) եւ երկրորդ անգամ 154-158-ին (770-774/5), ըստ Ֆասմէրի<sup>(22)</sup> եւ Զամպորի<sup>(23)</sup> ցուցակներուն: Փաստեր չունինք որ ան ոստիկան եղած է երրորդ շրջանի մը համար՝ 168/169 (784-786) տարիներուն:

19.— H. Lavoix, op. cit., vol. I, No. 735.

20.— J. G. Stickel, «Handbuch Zue Morgenlandischen», Muzkunde, 1870.

21.— W. Tiesenhansen, «Monnaies des Khalifes».

22.— Ռ. ՖԱՍՄԷՐ - Վիեննա, Միսիթարիան տպարան, 1933:

23.— معجم الانساب والاسرات الحاكمة في التاريخ الاسلامي, Zambaur

مطبعة جامعة فؤاد الأول, ١٩٥١.

Լէյն Փուլ նկատի ունենալով այս պարագան, երկընտրանքի մէջ է ՀԱՍԱՆ ձեւը իւրացնելու, մանաւանդ որ կը պակսի բառին ԱԼ որոշիչ յօդը - ԱԼ-ՀԱՍԱՆ -, եւ կը ցուցակագրէ առանց այլ մեկնութեան:

Պուսոյ պետական Թանգարանի դրամագիտական բաժնի տնօրէններ՝ Իպրահիմ եւ Ճեվրիյէ Արթուր, 1971 թ.ին իրենց իսկ կողմէ հրատարակուած ցուցակագիրքին մէջ (Corpus) կ'անդրադառնան նոյն դրամին<sup>(24)</sup>:

Յետսակողմի բառը ՀԱՍԱՆ կարգալէ ետք, Հարունապատի տեղադրութեան համար կը մատնանշեն թէ այս քաղաքը կը գտնուի Վանի նահանգին մաս կազմող՝ Պաշքալէի շրջանին (Նահիյէ) մէջ:

Աւելի մանրամասնութեան համար, մեր կողմէ եղած դիմումի մը ընդառաջելով, Իպրահիմ Արթուր 1973 թ.ի Յուլիսին գրուած նամակով մը կ'իմացանէր թէ վերատեսուութեան ենթարկելով իր նախկին դիրքը, այժմ Հարունապատը կը տեղադրէր «Հայաստանի մէջ, Զապ գետին արեւելքը՝ իրանեան սահմանին մօտ գիւղ մը: Իսկ գետին արեւմուտքը կը գտնուի Պաշքալէն»: Իպրահիմ Արթուր կ'աւելցնէ թէ բախտաւոր եղած էր հանդիպելու Հարունապատ անուան, հրատարակութեան մը մէջ, որ կը կոչուի «Թուրքիոյ Բնակուած Վայրերու Ուղեցոյց»<sup>(25)</sup>: Ապա՝ թէ 1936 թ.ին հրատարակուած քարտէսի մը վրայ Հարունապատը յիշատակուած է Զապ գետին արեւելեան կողմը, իրանի սահմաններուն մօտ<sup>(26)</sup>:

Իպրահիմ Արթուրի տեղադրութիւնը մեզի կը թուի ամենէն համոզիչը եւ մենք ալ ունինք այն համոզումը, թէ այս փողերանոցը կը գտնուէր պատմական Հայաստանի Վասպուրականի սահմաններուն մօտ:

24.— Ibrahim Artuk, Cevriye Artuk, «Istanbul Arkeoloji Muzeleri Tes-hirdeki Islamie Sikkeler Katalogu», Istanbul, 1971, p. 55, No. 203.

25.— «Turkiyede Meskun Yerler Kilavuzu», vol. I. Ankara, P. 483.

26.— Meridional between 43-44 degree, Altitude between J-K.







ընթացքին. ստիպելով կայսրութիւնը որ ապստամբ չըջանաներուն մօտ կեդրոնացնէր իր ռազմավարչական կեդրոնը, ու մասնաւոր դրամ հատանէր ԱՐՄԻՆԻԱ-ՃԷՅՇ (բանակ) մակազրութիւններով:

Ե.— Եթէ յանդուզն չնկատուի մեր եզրակացութիւնը, մենք համոզուած ենք թէ ՀԱՐՈՒՆԻԷ եւ ՀԱՐՈՒՆԱՊԱՏ անունները կը վերաբերին միեւնոյն քաղաքին, որ Իպրահիմ Արթուրի տեղադրութեան համաձայն, կրնար գտնուիլ ռազմագիտական նկատումներով, Չապ գետին եւ Պաշքալէի միջեւ:

Բացառուած չէ որ միեւնոյն քաղաքը ունենայ երկու անուանաձեւեր, մին իրանական տարագով, իսկ միւսը՝ արաբական: Ապագասեան շրջանին գերակշիռ դեր ունէր հին իրանեան ազնուականութիւնը եւ մանաւանդ մշակոյթի բազմապիսի ազդեցութիւններով կը տիրէր պալատական կեանքին, ինչպէս նաեւ բարքերու, արուեստի եւ լեզուի բնագաւառներուն վրայ:

Արաբական դրամագիտութեան համար մեր առաջադրած եզրակացութիւնը բացառութիւն չէ ինքնին: Նոյն ձեւով ունինք նաեւ այլ փողերանոց մը՝ էլ Մուպարաքիյէ եւ Մուպարաքապատ<sup>(32)</sup>:

ՄԱՍԱՆ ՊԱՃՈՒՆԱՅՍ ( معدن باجنيس ).— Եագութ ճշգրէտ քաղաքն ուղիղ ընթերցումը կ'աւելցնէ թէ կը յիշուի Արճէշի հետ միասին, Խլաթի շրջանին մէջ եւ մաս կը կազմէ Չորրորդ Հայքին, հարուստ՝ աղի, պղինձի եւ մականգիրայի հանքերով<sup>(33)</sup>: Արմինիա հատուածին տակ<sup>(34)</sup> կը թուէ

32.— Ֆրիմի, էջ 277:

33.— Եագութ, հատոր Ա., էջ 314:

34.— Եագութ, հատոր Ա., էջ 160:

Չորրորդ Հայքի քաղաքները, Շմշաթ (Արշամաշատ), Կալիկուլա (Կարին), Արճէշ եւ Պաճունայս:

Արամ Տ. Ղեւոնդեան Պաճունայսը կը տեղադրէ Ապահունեաց գաւառին մէջ եւ կամ՝ «Ծայրայեղ դէպքում մի քիչ հեռու՝ Հարք գաւառում կամ Խլաթում»<sup>(35)</sup>:

Իպրահիմ Արթուրի Հիճիրի 195 տարեթիւով տիրհեմի մը անդրադառնալով, Պաճունայսը կը տեղադրէ Ամիդի եւ Մալաթիոյ միջեւ անորոշ վայր մը, ուր երկաթի եւ պղինձի հանքեր կը գտնուին:

Քաղաքին կցուած Մա'տան բառը թէեւ արաբերէն կը նշանակէ մետաղ եւ հանք, սակայն ատիկա պատճառ չէ որ անպայմանօրէն գայն պէտք է տեղադրել հարուստ շրջանի մը մէջ: Մա'տան կը նշանակէ նաեւ փողերանոց<sup>(36)</sup>, ինչպէս օրինակ չափազանց հազուագիւտ եւ նշանաւոր Օմայեան Հիճիրի 105 տարեթիւով ոսկի տինարը, որ կը կրէ հետեւեալ մակազրութիւնը معدن امير المؤمنين, այսինքն՝ «Հաւատացեալներու իշխանին փողերանոցը»:

Պաճունայս անունը կրնայ նաեւ ըլլալ ազաւաղուած ձեւը ԲՉՆՈՒՆԵԱՅ գաւառին:

ՄԱՏԻՆԷԴ ՊԱԼԽ ԷԼ-ՊԱՅՏԱՅ ( مدينة بلخ البيضاء ).— Մինչեւ այսօր միակ տարեթիւն է Հիճիրի 111 (729-730) թուականով տիրհեմ մը: Թէ որքան համոզիչ են փաստերը, այս փողերանոցը զանազանելու սովորական ՊԱԼԽ (Խորասան) քաղաքէն, ատիկա կը մնայ վիճելի: Արաբական բազմաթիւ քաղաքներ ունին գերադիր ածականներ: Այսինքն՝ Հալէպ քաղաքը ծանօթ է նաեւ Հալապ էլ-Շահպա՝ կամ միայն էլ-Շահպա՝ անուններով: Էլ-Շահպա՝ կը նշանակէ գորշագոյն, ինչպէս Պալսին կցուած «Պալտա» կը նշանակէ սպի-

35.— Արամ Տ. Ղեւոնդեան, «Արաբական Ամիրայութիւնները Բագրատունեաց Հայաստանում», Երևան, 1965, էջ 222:

36.— «Catalogue Du Musée National de Damas», Damas 1969, p. 183.



տակագոյն: Հին մատենագրութեան մէջ Հալէպը ծանօթ է նաեւ Հալէպ էլ-Մահրուսա, կամ՝ էլ-Մահրուսա անուններով, այսինքն՝ Աստուածապահպան Հալէպ:

Մուշեղեանի ցանկին թիւ 42 եւ թիւ 44 տիրահմները, հատանուած Հիւսիսի 170 եւ 171 տարիներուն (786-787/8) Հարունիէի փողերանոցին մէջ, անձնանուններու եւ յիշատակութիւններու սիւնակին մէջ կը յիշատակեն ۵ جاج) անորոշ մակագրութիւնը, զոր հեղինակը թարգմանած է «փառք շատ» ձեւով: Կ'ենթադրենք թէ վերջնական արդիւնք է թիւրիմացութեան: Ապուլ - Փարաճ էլ-Էշ, «Ում Հաճարայի Գանձը» խորագրեալ իր գործին մէջ (էջ 102, թիւ 407), կ'անդրադառնայ նմանօրինակ տիրահմի մը, ուր մակագրութիւնը նկարագրուած է այլապէս, օրինակ

جا

۵ ج

Ենթադրութիւններու գծով՝ Ապուլ-Փարաճ կ'առաջարկէ ամբողջացնել يوسف ձեւով եւ դրամը վերագրել Եուսէֆ Պըն Ռաշէտ էլ-Սուլամիին, որ Հիւսիսի 170/171 տարիներուն Հայաստանի ոստիկան եղած է: Ամէն պարագայի տակ հարցը կը մնայ անորոշ եւ կը կարօտի աւելի բացատրութեան:

\*  
\* \*

Արաբական կայսրութիւնը որ կը տարածուէր Հնդկաստանէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս, երկար դարերու ընթացքին շարունակեց հատանել գրեթէ միօրինակ դրամներ, կրօնական բանաձեւերով եւ սակայն հարուստ պատմական յիշատակութիւններով: Բացառութիւն կը կազմեն թուրքմէն, սելճուք եւ օրթուքեան պատկերազարդ դրամները:

Արաբական դրամագիտութեան գլխաւոր կնճիռներն ու դժուարութիւնները արդիւնքն են կէտադրութենէ զուրկ՝ բուֆի գրելակերպին եւ անոր ստեղծած շփոթութիւններուն: Կնիքներու անբժանելի պատրաստութիւնը կրնայ շփոթ

12	45	100	550	Պիւսիս	1200
13	06	100	1058	Պիւսիս	1200
14	06	100	1061	Պիւսիս	1200
15	06	100	1062	Պիւսիս	1200
16	06	100	1063	Պիւսիս	1200
17	06	100	1064	Պիւսիս	1200
18	06	100	1065	Պիւսիս	1200
19	06	100	1066	Պիւսիս	1200
20	06	100	1067	Պիւսիս	1200
21	06	100	1068	Պիւսիս	1200
22	06	100	1069	Պիւսիս	1200
23	06	100	1070	Պիւսիս	1200
24	06	100	1071	Պիւսիս	1200
25	06	100	1072	Պիւսիս	1200
26	06	100	1073	Պիւսիս	1200
27	06	100	1074	Պիւսիս	1200
28	06	100	1075	Պիւսիս	1200
29	06	100	1076	Պիւսիս	1200
30	06	100	1077	Պիւսիս	1200
31	06	100	1078	Պիւսիս	1200
32	06	100	1079	Պիւսիս	1200
33	06	100	1080	Պիւսիս	1200
34	06	100	1081	Պիւսիս	1200
35	06	100	1082	Պիւսիս	1200
36	06	100	1083	Պիւսիս	1200
37	06	100	1084	Պիւսիս	1200
38	06	100	1085	Պիւսիս	1200
39	06	100	1086	Պիւսիս	1200
40	06	100	1087	Պիւսիս	1200
41	06	100	1088	Պիւսիս	1200
42	06	100	1089	Պիւսիս	1200
43	06	100	1090	Պիւսիս	1200
44	06	100	1091	Պիւսիս	1200
45	06	100	1092	Պիւսիս	1200
46	06	100	1093	Պիւսիս	1200
47	06	100	1094	Պիւսիս	1200
48	06	100	1095	Պիւսիս	1200
49	06	100	1096	Պիւսիս	1200
50	06	100	1097	Պիւսիս	1200
51	06	100	1098	Պիւսիս	1200
52	06	100	1099	Պիւսիս	1200
53	06	100	1100	Պիւսիս	1200
54	06	100	1101	Պիւսիս	1200
55	06	100	1102	Պիւսիս	1200
56	06	100	1103	Պիւսիս	1200
57	06	100	1104	Պիւսիս	1200
58	06	100	1105	Պիւսիս	1200
59	06	100	1106	Պիւսիս	1200
60	06	100	1107	Պիւսիս	1200
61	06	100	1108	Պիւսիս	1200
62	06	100	1109	Պիւսիս	1200
63	06	100	1110	Պիւսիս	1200
64	06	100	1111	Պիւսիս	1200
65	06	100	1112	Պիւսիս	1200
66	06	100	1113	Պիւսիս	1200
67	06	100	1114	Պիւսիս	1200
68	06	100	1115	Պիւսիս	1200
69	06	100	1116	Պիւսիս	1200
70	06	100	1117	Պիւսիս	1200
71	06	100	1118	Պիւսիս	1200
72	06	100	1119	Պիւսիս	1200
73	06	100	1120	Պիւսիս	1200
74	06	100	1121	Պիւսիս	1200
75	06	100	1122	Պիւսիս	1200
76	06	100	1123	Պիւսիս	1200
77	06	100	1124	Պիւսիս	1200
78	06	100	1125	Պիւսիս	1200
79	06	100	1126	Պիւսիս	1200
80	06	100	1127	Պիւսիս	1200
81	06	100	1128	Պիւսիս	1200
82	06	100	1129	Պիւսիս	1200
83	06	100	1130	Պիւսիս	1200
84	06	100	1131	Պիւսիս	1200
85	06	100	1132	Պիւսիս	1200
86	06	100	1133	Պիւսիս	1200
87	06	100	1134	Պիւսիս	1200
88	06	100	1135	Պիւսիս	1200
89	06	100	1136	Պիւսիս	1200
90	06	100	1137	Պիւսիս	1200
91	06	100	1138	Պիւսիս	1200
92	06	100	1139	Պիւսիս	1200
93	06	100	1140	Պիւսիս	1200
94	06	100	1141	Պիւսիս	1200
95	06	100	1142	Պիւսիս	1200
96	06	100	1143	Պիւսիս	1200
97	06	100	1144	Պիւսիս	1200
98	06	100	1145	Պիւսիս	1200
99	06	100	1146	Պիւսիս	1200
100	06	100	1147	Պիւսիս	1200



ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՑԱՆԿ ՀԱՏԱՆՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ԱՐՄԻՆԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՋ

Ոս.— Ոսկի Տինար Ար.— Արծաթ Տիրեւ Պղ.— Պղինձ Ֆիւս

Թիւ	Տարեթիւ		Յիշատակում		Փանակալոյ խալիֆաներ	Ֆանակալոյ խալիֆաներ	Յատկանշական յիշատակութիւններ եւ անճանաչումներ	Մատենադարական աղբիւրներ
	Մտղ.Նորի	Փրկչ.	Գրուիմ	Դիւիմ				
1	Պղ. 86	705	Դուիմ	Դիւիմ	Ալուալիս Պըն Ապուլի Մալէֆ الولد بن عبد الملك	Ալուալիս Պըն Ապուլի Մալէֆ الولد بن عبد الملك	Սարրաֆ, 24 (Ա.)	
2	Ոս. 93	711/2	Դուիմ	Դիւիմ	Ալ Մանսուր Ապուլ	Ալ Մանսուր Ապուլ	Սարրաֆ, 25	
3	Ար. 143	760/1	Արմինիա	Արմինիա	Հափար Ապտալիս	Հափար Ապտալիս	Սարրաֆ, 26 Ֆրիսի, 1562	
4	Ար. 144	761/2	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Ֆրիսի, 1563	
5	Ար. 145	762/3	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	BMC, 25 էջ, 39 (Բ)	
6	Ար. 145	762/3	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Ֆրիսի, 1564	
7	Ար. 146	763/4	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Ֆրիսի, 1565 Սարրաֆ, 100	
8	Ար. 146	763/4	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	RIC, 223 (Գ)	
9	Ար. 147	764/5	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	BMC, 26, էջ 40	
10	Ար. 149	766/7	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	RIC, 224	
11	Ար. 149	766/7	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Սեփական	
12	Ար. 150	767/8	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	BMC, 29, էջ 40 Ֆրիսի, 1566	
13	Պղ. 163	779	Պարտաւ	Պարտաւ	Ալ Մըհաբի Ապուլ Ապտալիս Մոհամմէտ المهدي ابو عبدالله محمد	Ալ Մըհաբի Ապուլ Ապտալիս Մոհամմէտ المهدي ابو عبدالله محمد	RIC, 367	
14	Ար. 176	792/3	Արմինիա	Արմինիա	Ալ-Մաշիս Ապուլ Հափար Հարուն الرشيد ابو جعفر هرون	Ալ-Մաշիս Ապուլ Հափար Հարուն الرشيد ابو جعفر هرون	Սեփական (Դ)	

15	Ար. 183	799	Արմինիա	Արմինիա	Ասիդ Բն Իրիճ	Ասիդ Բն Իրիճ	Արքուս, 183 (Ե)
16	Պղ. 184	800	Արմինիա	Արմինիա	Ահմ Բն Մոհմ	Ահմ Բն Մոհմ	RIC, 364 (Զ)
17	Ար. 191	806/7	Մա'ատան	Մա'ատան	Ամ Ջեֆր Մոհմ رسول الله مما امر به الامين احمد بن امير المؤمنين داود	Ամ Ջեֆր Մոհմ رسول الله مما امر به الامين احمد بن امير المؤمنين داود	Արքուս, 256 (Է)
18	Պղ. 193	808/9	Արմինիա	Արմինիա	Ապպա Պէն Ջաֆըր العباس بن زفر	Ապպա Պէն Ջաֆըր العباس بن زفر	RIC, 365 (Ը)
19	Ար. 194	809/10	Մա'ատան	Մա'ատան	Ալ-Ասիմ Ապուլ Մուսա Մոհամմէտ	Ալ-Ասիմ Ապուլ Մուսա Մոհամմէտ	RIC, 245
20	Ար. 195	810/11	Մա'ատան	Մա'ատան	Ալմին Աբու Մուսի Մոհմ	Ալմին Աբու Մուսի Մոհմ	Արքուս, 279
21	Ար. 195	810/11	Մա'ատան	Մա'ատան	Մա'ատան	Մա'ատան	RIC, 247
22	Ար. 211	826/7	Մատինէր	Մատինէր	Ալ-Մա'ատան Ապուլ Հափար Ապտալիս Ամուն Աբու Ջեֆր عبد الله بن يحيى	Ալ-Մա'ատան Ապուլ Հափար Ապտալիս Ամուն Աբու Ջեֆր عبد الله بن يحيى	RIC, 263
23	Ոս. 241	855/6	Դուիմ	Դուիմ	Ալ-Մուրաուաֆֆէլ Ապուլ Ֆատըլ Հափար الموكل ابو الفضل جعفر	Ալ-Մուրաուաֆֆէլ Ապուլ Ֆատըլ Հափար الموكل ابو الفضل جعفر	ANS, (Թ)
24	Ոս. 243	857/8	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Ֆրիսի, 2119
25	Ար. 244	858/9	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արքուս, 339
26	Ոս. 246	860/1	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Արմինիա	Սարրաֆ, 214



ստեղծել եօթը եւ եօթանասուն, կամ՝ ինը եւ իննիսուն թուանշաններուն ճշգրիտ ընթերցման շուրջ, ինչպէս փողերանոցներու անսխալ վերձանման առնչութեամբ:

Բազմաթիւ ճորտ, կիսանկախ կամ կեղբոնախոյս իշխաններ (էմիր) դրամ հատանած են, որոնց անուններուն շուրջ լուռ կը մնան մատենագրական աղբիւրները: Կարելոր թիւ մը փողերանոցներու կը մնայ տակաւին անորոշ եւ վիճելի տեղադրութեամբ:

Հայ-արաբական դրամագիտութեան ճիւղը փոքր մարզ մըն է անշուշտ բաղդատմամբ կայսրութեան հատանած դրամներուն, բայց խիստ կարելոր հայոց պատմութեան հետ առնչութիւն ունեցող իր կապերով: Անպայմանօրէն այս մարզը պիտի ըլլար աւելի ընդարձակ եւ շահեկան, եթէ Բագրատունիներու շրջանին, Հայ Բագրատունի իշխաններն ու թագաւորները, հետեւելով այլ կիսանկախ էմիրներու օրինակին, գէթ պղինձ դրամներ հատանէին զուտ հայատառ կամ հայ-արաբ տառերով:



**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅԱՆԿԻՆ**

Ա.— Հաւաքածոյ Ապտուլլահ Շուքր Ալ-Սարրաֆի, նուիրում Պաղտատի պետական թանգարանին — Տես պարբերագիրք 1979, بغداد - عدد خاص - المسكرات, Յետայսու՝ ՍՍՐՐԱՖ:

Բ.— Stanley Lane Poole, «The Coins of the Eastern Khaleefehs, in the British Museum», London, 1875. Յետայսու՝ BMC.

Գ.— George C. Miles, «Rare Islamic Coins», The American Numismatic Society, New York, 1950. Յետայսու՝ RIC.

Դ.— Պըխ բառը ներկայիս ո՛չ գործածական, արար ցեղայնութեան արարածին մէջ կը համապատասխանէր «կենաց» մաղթանքին, «Ապրի՛-կեցցէ՛» իմաստով: Յանախ կը հանդիպինք արարական դրամներու վրայ, առանձին կամ կրկնուած՝ Պըխ Պըխ ձեւերով:

Ե.— Ibrahim and Cevriye Artuk, «Istanbul Arkeoloji Muzeleri Teshirdeki Islamie Sikkeler Katalogu», Istanbul, 1971. Յետայսու՝ ԱՐԹՈՒԲ:

Զ.— Մայր գործ վերապահութեամբ կը յիշէ այս դրամը, փողերանոցին Առան ընթերցումը կասկածի տակ դնելով:

Է.— Մուշեղեանի ցանկին մէջ, թիւ 98, այս դրամը նկարագրուած է այլ ձեւով, الامين محمد بن امير المؤمنين որ տառացիօրէն կը նշանակէ «Ալ-Ամին Մուհամմէտ՝ որդին ուղղահաւատների տիրոջ, մայր»: Դժբախտաբար ձեռքի տակ չունինք հեղինակին աղբիւրը: Սակայն «մայր» բառը առանձին իմաստ չունի մակագրութեան մէջ: Դրամը կը պատկանի Հարուն Ալ Ռաշիտի կնոջ եւ Ալ-Ամինի մօր՝ Զուպայտային, որ իր տղուն՝ Ճա՛ֆարի անուամբ կը կոչուէր Ում Ճա՛ֆար (մայր Ճա՛ֆարի)

ըստ արարական ընկալիչ սովորութեան: Ան ուխտագնացութեան ձեռնարկեց Մեքէէ 190-ին (805/6) եւ հաւանաբար իր վերադարձին, գահաժառանգ որդին՝ Ալ-Ամին, յուշադրական այս տիրիւմը հատանեց մօրը անուամբ: Տես՝ Եագուպի, էջեր 428, 433, 434:

Մեզի ծանօթ նմուշներուն թարգմանութիւնը պիտի ըլլար — «Մայր Ճա՛ֆարի... հատանուած հրամանով հաւատացեալներու իշխան՝ Ալ-Ամին Մուհամմէտի »:

Ը.— Հաւանաբար ամբողջական անունն էր Ալ-Ապպաս Պըն Զուֆար Ալ-Հիլալի العباس بن زفر الهلالي.

Թ.— Annual Report of the American Numismatic Society, 1968, p. 10.





1. — Annual Report of the American Numismatic Society, New York, 1970. — P. 10.  
 2. — Stanley Lane Poole, «The Coins of the Eastern Khazars», London, 1878. — BMC.  
 3. — George C. Miles, «Race Islamic Coins», The American Numismatic Society, New York, 1970. — BMC.  
 4. — ...  
 5. — ...  
 6. — ...

7. — ...  
 8. — ...  
 9. — ...  
 10. — ...  
 11. — ...  
 12. — ...  
 13. — ...  
 14. — ...  
 15. — ...  
 16. — ...  
 17. — ...  
 18. — ...  
 19. — ...  
 20. — ...

ՄԱՍ Բ.

ՀԱՅ

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՇՈՒՐՁ



Հ Ա Մ Մ Մ

Յ Ա Ն  
Մ Մ Մ Պ Պ Ո Շ Պ Մ Մ Մ Պ Պ  
Ջ Ղ Պ Ո Շ

**ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ  
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ**

(ԸՍՏ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՒ)

Լուկուլլոս, առանց ծերակոյտին կանխօրօք արտօնութեան, եւ Մոփքի թագաւորին մեղսակցութեամբ, Հայաստանի սահմաններէն ներս խուժեց Ք. Ա. 69 թ.ի գարնան եւ պաշարեց Տիգրանակերտը:

Հոռոմ պատերազմի մէջ չէր Հայկական Կայսրութեան հետ: Սակայն Լուկուլլոս կը ծրագրէր անակնկալ յարձակումով մը, չփոթութեան մատնել Մեծն Տիգրանը, որ պատերազմական գործերով կը գտնուէր Ասորիք<sup>(1)</sup>:

Նպատակէս դուրս կը մնայ մանրամասնօրէն անդրադառնալ պատերազմական գործողութիւններուն, եւ անոնց զարգացման փուլերուն: Սակայն, Ք. Ա. մօտ 77 թ.ին հիմնուած նոր մայրաքաղաքը, որուն պարիսպներն իսկ տակաւին ամբողջացած չէին, յանձնուեցաւ հռոմէական բանակներու կողոպուտին, Ք. Ա. 69 թ.ի Հոկտ. 6-ին:

---

1.— Տես՝ Ս. Մ. Կրկեաշարեան, Տիգրան Բ.ին վերաբերող մի կարեւոր ուղղում, «Պատմաբանասիրական Հանդէս», Երեւան, 1967, թիւ 4, էջ 275-278:



Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցող հայկական եւ հռոմէական բանակներուն զորաթիւերը անհեթեթ համեմատութիւններով ներկայացուած են Հռոմի համակիր աղբիւրներու կողմէ: Ըստ Պլուտարքոսի եւ Ապպիանոսի, հռոմէական զօրքին թիւը եղած է 15·000 լեգէոնական, իսկ հայկական բանակին թիւը՝ 300·000 հոգի: Հետեւաբար, հռոմէացիք կռուած են իրենցմէ 20 անգամ գերազանց հայկական ուժերու դէմ, եւ յաղթած:

Հռոմի պատմութեան մասնագէտներէն ոմանք, առանց քննական եւ խղճամիտ պրպտումի, հետեւած են Պլուտարքոսի եւ Ապպիանոսի հաղորդած թիւերուն: Ուրիշներ սակայն, հիմնուելով փոքր-ասիական, հելլենիստական եւ չէզոք աղբիւրներու վրայ, ժխտած են հռոմէական անհեթեթ, դիտումնաւոր եւ չափազանցուած նկարագրութիւնները: Նորագոյն պատմագրութիւնը նկատի առնելով ռազմական, տեղեկագրական ինչպէս նաեւ ճակատամարտի վայրին պայմաններն ու փոխադրական միջոցները, գիտական փաստերով յանգած է այն համոզիչ վարկածին որ հայկական բանակը չէր կրնար անցնիլ 70-80·000 հոգիի թիւը: Յակոբ Մանանդեան, իր «Քննական Տեսութիւն Հայ ժողովուրդի Պատմութեան» Ա. հատորին մէջ<sup>(2)</sup>, մանրակրկիտ կերպով ուսումնասիրած է հայ եւ հռոմէական բանակներու զորաթիւերը:

Որոշ է թէ հռոմէական աղբիւրներ եւ մատենագիրներ, դիտումնաւոր կերպով իրենց հաղորդումներն ու պատմական անցուղարձերը խճողած են միակողմանի եւ խեղաթիւրուած տուեալներով, պանծացնելու համար Հռոմի փառքն ու գինուորական յաղթանակները եւ նոյն ատեն՝ նուաստացնելու թշնամին:

Մանանդեան իրաւացիօրէն կը շեշտէ թէ հռոմէական

2.— Յ. Մանանդեան, Քննական Տեսութիւն Հայ ժող. Պատմ., Ա. Հատոր. Երեւան, 1944, էջ 198-208:

աղբիւրներ զանց առած են յիշելու պատերազմին մասնակցող ոչ-հռոմէացի օժանդակ բանակները, որոնք ճակատամարտին մասնակցեցան որպէս դաշնակից ուժեր, ինչպէս Գաղատիոյ, Թրակիոյ եւ Բիւթանիոյ զօրաբաժինները, գուցէ նաեւ Մոփքի բանակները: Մէջբերենք Մանանդեանէն.

«Օգնական այդ զօրքերը որոնցից որոշակի յիշուած են գալատացիները, թրակացիները եւ բիւթանացիները՝ կազմում էին, ըստ երեւոյթին, Լուկուլլոսի զօրաբանակի նշանաւոր մասը: Ուստի մենք սխալուած չենք լինի, եթէ Լուկուլլոսի ամբողջ զօրքի թիւն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում ո՛չ թէ մօտ 15·000, այլ աւելի քան 30·000:

«Այսպիսով հռոմէական եւ հայկական բանակների վերոյիշեալ մէկ առ քսան յարաբերութիւնը, ինչպէս տեսնում ենք, ակներեւ մի սխալ է: Ընդունելով, որ օգնական դաշնակից զօրամասերի թիւը պակաս չէր լինի հռոմէական զօրքի թուից՝ դժուար չէ համոզուել, որ Տիգրանի զօրքն կարող էր Լուկուլլոսի զօրքից աւելի լինել ո՛չ թէ քսան, այլ առ առաւելն երկու անգամ<sup>(3)</sup>»:

Անշուշտ հարցը ներկայացուած է լոկ վարկածային գծով, որով հեռու է հիմնական եզրակացութիւն մը րլլալէ:

Վստահաբար, աւելի համոզիչ կոուան ունինք հարցին մօտենայու դրամագիտական տուեալներով, երբ նկատի ունենանք Տիգրանակերտի գրաւումէն ետք ձեռք ձգուած աւարր եւ անոր բաշխումը հռոմէացի գինուորներուն միջեւ: Ըստ Պլուտարքոսի՝ «Լուկուլլոս բռնագրաւած էր բոլոր գանձերը եւ քաղաքը կողոպուտի ենթարկած գինուորներուն միջոցով, որոնք այլ հարստութիւններու կարգին, ձեռք ձգեցին 8·000 տաղանդ արծաթ դրամի վերածուած: Բացի այդ (այսինքն հարստութիւնները, Պ. Ս.) ան (Լուկուլլոս) իւրաքանչիւր գինուորի տուաւ ստացուած աւարէն 800-ական տրախմի»<sup>(4)</sup>:

3.— Նոյնը, էջ 202:

4.— H. Manandian, «Tigrane et Rome», Lisbonne, 1963, p. 121.



Յստակ է ուրեմն թէ գինուորներուն բաժնուած 800-ական տրախմին վերցուած էր 8.000 տաղանդի կշիռով արծաթ դրամներու աւարէն, բացի այլ կողոպտուած հարստութիւններէ:

Եթէ ճիշդ է Պլուտարքոսի այս պարբերութեան իմաստին մեր ըմբռնումը, կրնանք ուրեմն ճշդել թիւը գինուորներուն, որոնք օգտուած են այս բաշխումէն, հիմնուելով ձեռք ձգուած դրամական հարստութեան ընդհանուր կշիռին եւ տրախմիի արժէքին փոխ-յարաբերութեան վրայ:

Նախ ուսումնասիրենք տաղանդին արժէքը. տաղանդը ընդհանրացած կշռային չափ մըն էր, սակայն զանազան արժէքներով: Ան ունէր իր ստորաբաժանումները:

Ըստ բաբելոնական կշռային դրութեան, տաղանդը կը բաժնուէր 60 մինայի եւ մինան՝ իր կարգին, 60 շէքէլի: Հելլենիստական աշխարհի մէջ, որուն ազդեցութեան տակ էր Ադդիկեան տաղանդը, անկը բաժնուէր 60 մինայի եւ մինան իր կարգին՝ 100 տրախմի:

Քանի որ այս երկու տուեալները անհրաժեշտ են մեր ուսումնասիրութեան համար, ուրեմն կու տանք ցանկ մը գլխաւոր դրութիւններու (systems):

ԿՇՌԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ	ՏԱՂԱՆԴ	ՏՐԱԽՄ
Բաբելոնական	30 քիլո 024 կրմ.	4.17 կրմ. <sup>(5)</sup>
Ադդիկեան	26 քիլո 194 կրմ.	4.36 կրմ. <sup>(6)</sup>
Փիւնիկեան	21 քիլո 180 կրմ.	3.53 կրմ. <sup>(7)</sup>

5.— Harold Mattingly, «Coins of the Roman Empire», p. XLIV.

6.— B. Kisch, «Scales and Weights».

7.— Նոյնը:

Փիւնիկեան տաղանդը իր ամենաթոյլ կշիռով, սահմանափակ գործածութիւն ունէր Փիւնիկէի, Կիլիկիոյ եւ կարգ մը փիւնիկեան ազդեցութեան տակ գտնուող շրջաններու մէջ: Բաբելոնական տաղանդը կորսնցուցած էր իր կարեւորութիւնը Մեծն Աղեքսանդրի նուաճումներէն եւ նոր իրաւաւարդի հաստատումէն ետք:

Ընդհանրացած կշռային դրութիւնը ադդիկեանն էր, հելլենիստական գրեթէ բոլոր երկիրներուն մէջ: Կասկածէ դուրս է որ Տիգրանակերտի մէջ բռնադրուուած 8.000 տաղանդը պէտք է հաշուել ադդիկեան կշռային դրութեամբ, որովհետեւ՝

Ա.— Մեծն Տիգրան շատ հաւանաբար իր հարուստ զանձերը դիզած էր նորակառոյց մայրաքաղաքին մէջ, նորակազմ Հայկական Կայսրութեան կողմէ նուաճած երկիրներէն զանձուած հարկերով եւ տուրքերով: Այդ երկիրները բոլորն ալ հելլենիստական մշակոյթով սնած ըլլալով՝ կը հետեւէին ադդիկեան կշռային դրութեան:

Բ.— Ուսումնասիրելով ժամանակակից եւ դրացի պետութիւններն ու անոնց դրամները, կը համոզուինք թէ անոնք ալ կիրարկած են ադդիկեան կշռային դրութիւնը: Օրինակ՝

1.— Պարթեւ ԱՐՏԱԻԱՆԻ (88-77 թթ. Ք. Ա.) 10 կտոր տրախմիներու միջինն է 3.95 կրամ<sup>(8)</sup>:

2.— Պարթեւ ՍԱՆԱՏՐՈՒԿԻ (77-70 թթ. Ք. Ա.) 10 կտոր տրախմիներու միջին կշիռն է 3.95 կրամ<sup>(9)</sup>:

3.— Կապադովիոյ ԱՐԻՈՒԱՐՁԱՆԷՍ ՀՌՈՄԷԱՍԷՐԻ (95-62 Ք. Ա.) 10 կտոր դրամներու միջին կշիռն է 4.02 կրամ<sup>(10)</sup>:

8.— B. M. C. & (British Museum Catalog), Warwick Wroth, «Coins of Parthia», Bologna, 1964, p. 39, Artabanus, No. 8-17.

9.— B. M. C., Warwick Wroth, «Sinatrus», p. 42, No. 1-19.

10.— B. M. C., Warwick, «Greek Coins of Galatia, Cappadocia and Syria», p. 39, No. 1-10, Arioparzanus.



4.—Մեծն Տիգրանի մէկ տրախմին, ըստ բրիտանական թանգարանի հաւաքածոյին (թիւ 13), կը կշռէ 4.08 կրամ<sup>(11)</sup>:

5.— Տիգրանեան ուրիշ տրախմի մը, յիշուած Զ. Պտուկեանի կողմէ, կը կշռէ 4.13 կրամ<sup>(12)</sup>:

Թէեւ աղբիկեան օրինաւոր կշիռով տրախմիները պէտք է կշռեն 4.36 կրամ, սակայն գործնականօրէն կարելի չէ եղած միօրինակ եւ հակակշռուած ձեւով դրամներ հատանել: Տիգրան Մեծի յաջորդ՝ Արտաւազդ Ա.ի օրով տրախմիները կը տարուբերին 3.62 եւ 3.49 կրամի սահմաններուն մէջ:



Տիգրան Բ.ի արծաթ տրախմին  
(Տրամագիծը բազմապատկուած երկու անգամ)

Այս տուեալներով, տրամաբանական պիտի ըլլար որպէս հիմ ընդունիլ տիգրանեան տրախմիի միջին կշիռ մը, հիմնուելով ծանօթ երկու նմոյշներուն վրայ, որոնք կը կշռեն 4.08 եւ 4.13 կրամ, որոնցմէ կը ստանանք 4.10 կրամի յայտարար միջին մը:

11.— B. M. C., Percy Gardner, «Seleucid Kings», p. 105.  
12.— Զ. Պտուկեան, «Արտաշէսեան Հարստութեան Դրամներ», Վիեննա, 1969, էջ 47:

Ճշգրտած ըլլալով տաղանդին եւ տրախմիին արժէքներուն փոխարարներութիւնները, կրնանք եզրակացնել թէ Տիգրանակերտի մէջ ձեռք ձգուած 8.000 տաղանդի կշիռով հատանուած դրամները, աղբիկեան կշիռով կը հաւասարէին 209.568 քիլոյի: Եթէ այս ընդհանուր գումարը վերածենք տրախմիի, 4.10 կրամի միջին հիման վրայ, կը ստանանք 51.114.145 կտոր տրախմի: Քանի որ իւրաքանչիւր զինուոր ստացած է 800 (ութը հարիւր) տրախմի այս աւարէն, ուրեմն՝ զինուորներուն թիւը եղած է (51.114.568 բաժանեալ 8-ով) 63.892 զինուոր:

Հետեւաբար, Տիգրանակերտի ճակատամարտին հռոմէացիք եւ հայեր ճակատած են ո՛չ թէ մէկի դէմ քսան կամ մէկի դէմ երկու համեմատութիւններով, այլ՝ գրեթէ համազօր բանակներով:

Ակնբախտ երեւոյթ է արդէն որ տիգրանեան տրախմիները չափազանց հազուագիւտ են, մինչդեռ՝ քառադրամները (Tetradrachms) յարաբերաբար աւելի առատ: Այս երեւոյթը կարելի է բացատրել վերոյիշեալ կողոպուտով, երբ միլիոններու հասնող տիգրանեան տրախմիներ, լեզէոնականներու ձեռքը անցնելէ ետք, շատ հաւանաբար յանձնուեցան Հռոմի կամ կայսերական այլ փողերանոցներու, զանոնք վերստին ձուլելու նպատակով, ու վերածուեցան հռոմէական արծաթ դրամներու:



**ՏԻԳՐԱՆ Դ.Ի ԵՒ ԵՐԱՏՈՅԻ  
ԱՐԻՒՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ՀԱՐՑԻՆ ՇՈՒՐՋ**


Տիգրան Դ.ի եւ Երատոյի կարճատեւ եւ ընդմիջուած գահակալութիւններով վերջ կը գտնէ Արտաշէսեան տոհմի շուրջ երկու հարիւր տարիներու հարստութիւնը: Դրամագիտական գծով վերջ պիտի գտնէր նաեւ Արտաշէսեան խոյրով զրոյժուած աւանդական դրամներու շարքը:

Տիգրան Դ. իշխած է Ք. Ա. 8-5 թթ., եւ ապա՝ ընդմիջումէ մը ետք, ան կրկին գահին տիրացած է Ք. Ա. 2 - Ք. Ե. 1 թթ., այս անգամ՝ Երատոյի հետ միասնաբար:

Տիգրան-Երատոյ դրամները ունին հետաքրքրական առանձնայատկութիւններ: Առաջին անգամ ըլլալով՝ մենք կը հանդիպինք դրամներու, ուր թագաւորին եւ թագուհիին կիսանդրիները զրոյժուած են իրարու կից, միասնաբար (տես՝ նկար թիւ 1):

Այս պղինձէ դրամը կը կշռէ 6.20 կր., 19 մմ. անհաւասար տրամագիծով:

Դրամին յառաջակողմին վրայ, Տիգրան Դ. կը ներկայանայ աջ դարձած, հայկական, աւանդական բարձր խոյրով, որ կը վերջանայ հինգ բրգաձեւ ատամներով: Արքան ունի երկար եւ սրածայր մօրուք, զոր նախորդները չեն կրած: Թագուհին կը կրէ անորոշ ձեւով խոյր մը, նոյնպէս բարձրաձեւ, բայց հաւանաբար տարբեր Արտաշէսեան խոյրէն, որուն վերի մասը կը թուի դէպի վար հակած ըլլալ:



Նկար թիւ 1

Դրամին յետսակողմը կը ներկայանայ առատութեան դիցուհին, դէպի ձախ: Զախ ձեռքով բռնած է առատութեան եղջիւր մը, իսկ աջ ձեռքը՝ երկարած դէպի առաջ, բռնելով անորոշ առարկայ մը, հաւանաբար դափնեպսակ մը: Դրամին աջ կողմը երկու շարքով գրուած են [B]ΑΣΙΑΦΣ ΤΙΓΡΑΝΟΥ: Իսկ ձախ կողմը՝ ΜΕΓΑΛΟΥ, թէեւ յոգնած գրութեամբ: Դիցուհիին ոտքին տակ կը կարգացուին ΤΕ գիրերը, որոնք, շատ հաւանաբար, Սելեւկեան թուականութեան հաշիւով հաւասար են 305 թուականին, կամ՝ մեր թուականութեամբ  $313/312-305 = \text{Ք. Ա. } 8/7$  տարեթիւին<sup>(1)</sup>: Ներկայ պատմա-

1.— «Սելեւկեան բուականութեամբ նշուած դէպքերի ժամանակը որոշելիս, եթէ դէպքը մ. թ. ա. է կատարուել, 313-ից հանում է Սելեւկեան նշուած բուականը (օրինակ՝ Սելեւկեան 200 թ. = 313-200 = մ. թ. ա. 113-ին), եթէ մ. թ. ընթացում՝ Սելեւկեան նշուած բուականից հանում է 312 (օրինակ՝ Սելեւկեան 522 թ. = 522-312 = մ. թ. 210-ին)» (Հայկական Սովետական Հանրագիտարան, Դ. հտր., Երևան, 1978, էջ 221):



գրութիւնը այս թուականը կ'ընդունի որպէս Տիգրան Դ-ի գահակալութեան սկզբնաշրջան:

Հաւանական պիտի ըլլար ենթադրել թէ այս դրամները հատանուած են Տիգրան Դ-ի եւ Երատոյի ամուսնութեան, եւ կամ ալ գահակալութեան խնդակցութիւններուն առիթով: Այլապէս հետքը քրական երեւոյթ մըն է ա'յն որ, օրինակ, Նապաթէական դրամաշարքէն, նոյն շրջանին յատուկ կարգ մը դրամներ կը կրեն զուգակից կիսանդրիններու դրամներ, օրինակ՝ Օպոտաս Գ. եւ Շաքիլաթ (Ք. Ա. 30 - Ք. Ե. 9 թթ.) (նկար թիւ 2), Արեթաս Դ. եւ Շաքիլաթ (Ք. Ա. 9 - Ք. Ե. 40 թթ.) (նկար թիւ 3): Նմանօրինակ դրամներու հատանումը, այն շրջանին, կրնար նաեւ վարակիչ նորածեւութիւն մը ըլլալ, քանի որ Տիգրան Դ-ի նախորդներէն եւ ոչ մէկը նման դրոշմով դրամներ հատանած է, տեղ տալով թագուհիին կիսանդրին: Պատմագիտական փաստեր չկան որ Նապաթէական արքայատոհմը արիւնակցական ամուսնութիւններ կնքած է<sup>(2)</sup>:



Նկար թիւ 2



Նկար թիւ 3

Մասնաւոր նշանակութիւն ունի եզակի պղինձ դրամ մը, որ կը գտնուի Բարիզի Պետական թանգարանին մէջ, ուր Տիգրան Դ. կը ներկայանայ հայկական խոյրով դէպի աջ՝ եւ Արքայից Արքայ (ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΗΣ) տիտղոսով: Իսկ յետսակողմը Երատոյ թագուհին ձախ դարձած, առանց

խոյրի: «Վարսերը հաւաքած են գլխի շուրջ ժամանակակից բարձրաստիճան հռոմէուհիներու վարսայարդարման օրինակով: Այդ արտայայտում էր հռոմէական ճաշակի եւ ազդեցութեան ներթափանցումը Հայաստան»<sup>(3)</sup>: Դրամին շուրջ գրուած է ΕΡΑΤΩ ΤΙΓΡΑΝΟΥ ΑΔΕΛΦΗ (Երատոյ քոյր Տիգրանի (նկար թիւ 4):



Նկար թիւ 4

Նմանօրինակ դրամ մը գտնուի Կլասկոյի համալսարանի Հիւնտերիըն թանգարանին մէջ, ուր Տիգրանի տիտղոսները յիշուած են այլապէս ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ (նոր Տիգրանի մեծ թագաւորին): Յետսակողմը յար եւ նման է նախորդ դրամին, թագուհին ներկայացնելով պարզ վարսակալով եւ «քոյր Տիգրանի» մակագրութեամբ:

Կարգ մը պատմաբաններ Տիգրան Դ-ն ու Երատոն կը նկատեն եղբայր-քոյր եւ ամուսիններ: Հաւանաբար այս դրամին վրայ յիշուած «Արքայ քոյր» բառերը առաջնորդած ըլլան զիրենք նման եզրակացութիւններու: Հին մատենագիրներէն միայն Տակիտոս իր ժամանակագրութիւններուն մէջ յիշատակած է Տիգրանի եւ Երատոյի արիւնակցական կապերուն մասին: Սակայն Տակիտոս, որ ապրած է Ք. Ե. 55-120 թթ. շրջանին, իր ժամանակագրութիւնները գրած է հաւանաբար երկրորդ դարուն սկիզբները, Տիգրանի եւ Երատոյի գահակալութեան ժամանակաշրջանէն մօտ 100

2.— «Seaby Coin and Medal Bulletin», March, 1979, pp. 81-84.

3.— Բ. Ն. Առաքելեան, «Ակնարկներ հին Հայաստանի Արուեստի Պատմութեան», Երեւան, 1976, էջ 69:



տարիներ ետք: Շատ հաւանական է որ այդ շրջանին տակաւին շրջանառութեան մէջ էին Տիգրան-Երատոյ դրամներ, «քոյր Տիգրանի մակագրութեամբ», որոնք Տակիտոսը մղած են իր հաղորդումին, թէ՛ Տիգրան եւ Երատոյ եղբայր-քոյր եւ ամուսիններ են: Պէտք չէ աննկատ ձգել նաեւ այն պարագան որ Տակիտոսի ժամանակագրութեան շուրջ կան լուրջ վերապահութիւններ<sup>(4)</sup>:

Դիոն Կասիոս իր «Հռոմի Պատմութեան» մէջ, խօսելով Տիգրան Դ-ի սպանութեան եւ Երատոյի գահէն հրաժարելու անցուղարձերուն շուրջ, արիւնակցական նման կապերու մասին ակնարկութիւն չ'ըներ<sup>(5)</sup>:

Սակայն հայ պատմաբաններէն ոմանք ազդուելով Տակիտոսի հաղորդումէն եւ Տիգրան-Երատոյ դրամներէն, Երատոն կը նկատեն գահակից, թագաւորաքոյր եւ ամուսին:

Լէօ կը գրէ. «Այս չորրորդ Տիգրանի հետ թագաւորում էր եւ նրա քոյրը, Երատոյ անունով, որ նրա կինն էլ էր: Քրոջ եւ եղբոր ամուսնութիւնը միայն այն էր ցոյց տալիս, թէ Հայաստանում դեռ ուժեղ էին տոհմային կազմի աւանդութիւնները եւ թէ դա արդէն գերազանցօրէն գրադաշտական մի երկիր էր, քանի որ այդպիսի ամուսնութիւնը թոյլատրում էր այդ կրօնով»<sup>(6)</sup>:

Լէոյի վերոյիշեալ հատորի ծանօթութիւններու բաժնին մէջ, հրատարակիչները կ'աւելցնեն թէ «թագաւորական ընտանիքում եղբոր եւ քրոջ ամուսնութիւնը «տոհմային կազմի աւանդութիւններ» միայն հեռաւոր արձագանգը չէ: Այն ընդունուած եւ տարածուած երեւոյթ էր հելլենիստական ստրկատիրական երկրների միապետների ընտանիքներում եւ այդ սովորութիւնը հանդիպում է ինչպէս Սելեւկեանների, այնպէս եւ Պտղոմէոսականների տոհմում: Այդ սովորու-

թիւնից անմաս չմնացին նաեւ Արտաշէսեանները, որոնց արժուանքի նիստուկացը շատ բաներում ընդօրինակում էր հելլենիստական միւս պետութիւնների սովորութիւնները»<sup>(7)</sup>:

Տիգրան Դ-ի եւ Երատոյի արիւնակցական եւ ամուսնական կապերը հիմնաւորելու համար, Լէոյի եւ իր հրատարակիչներու տուած բացատրութիւնները վիճելի են: Առընչութիւններ փնտռել հեռաւոր Եգիպտոսի Պտղոմէոսական արքունիքին եւ Արտաշէսեաններու արքունիքին միջեւ, ամուսնական բարքերու գծով, բաղադատական հեռաւոր զուգահեռներ են: Իսկ Սելեւկեաններու պարագային, որոնք սահմանակից եղած են Հայաստանի, ընդունուած է այսօր, թէ անոնք ընդհանրապէս եղած են միակին եւ հեռու արիւնակցական կապերէ, բացի այրի Լաւոթիկէի պարագայէն, որ ամուսնացած էր իր եղբոր՝ Դիմիտրիոս Ա-ի (Ք. Ա. 162-150 թթ.) հետ եւ Կղէոպատրա Թէայի պարագան, որոնց պատմութիւնը տակաւին կը կարօտի լուսաբանութեան:

Ճիշդ է որ հայ զանգուածները կրնան ազդուած ըլլալ զրադաշտական կրօնի սովորութիւններէն, բայց Արտաշէսեաններու օրով արքունիքը խորապէս ինկած էր հելլենիստական մշակոյթի եւ բարքերու ազդեցութեան տակ: Տիգրան Մեծի եւ թագուհի Կղէոպատրայի շրջանին, Հայաստանի մէջ հիմնական կերպով հաստատուած էր հելլենիզմը, որուն կարկառուն ներկայացուցիչներէն մէկը պիտի ըլլար Արտաւազդ Բ., յունարէն լեզուով գրած իր հեղինակութիւններով:

Ըստ Մանանդեանի՝ «Տիգրան Գ-ին յաջորդեց նրա որդին, Տիգրան Դ-ը, եւ սրա հետ թագաւորեց նաեւ քոյրը՝ Երատոն, որը նրա կինն էր: Եղբոր եւ խորթ քրոջ ամուսնութիւնը, որ տարբեր մայրերից էին ծնած, թոյլատրելի էր ո՛չ միայն ըստ գրադաշտական կրօնի, այլեւ ըստ յունական որոշ օրէնսդրութիւնների»<sup>(8)</sup>:

4.— «Dictionnaire Encyclopédique Quillet», Paris, 1970, p. 6667.

5.— «Histoire Romaine de Dion» LV An de Rome 755.

6.— Լէօ, «Պատմութիւն», Ա. հտր., «Երկերի ժողովածու», Ա. հտր., Երեւան, 1966, էջ 332:

7.— Նոյնը, էջ 537, ծան. 56:

8.— Յ. Մանանդեան, «Քննական Տեսութիւն Հայ ժողովրդի Պատմութեան», Ա. հտր., Երեւան, 1944, էջ 295:



Դժբախտաբար, Յակոբ Մանանդեան չի յիշեր իր աղբիւրը, ճշդեւու համար Երատոյի տարբեր մօրմէ ծնած, եւ խորթ քոյր ըլլալու հանգամանքը: Որոշ չէ նաեւ թէ յունական ո՞ր «որոշ օրէնսդրութիւնները» թոյլատու եղած են արիւնակիցներու միջեւ ամուսնութեան: Շատ հաւանաբար, Մանանդեան ուզած է մեղմացնել ընթերցողին մօտ եղբայր-քոյր ամուսնութեան ճնշիչ տպաւորութիւնը:

Մանանդեան կը շեշտէ. «Թէ ի՛նչպիսի խոր արմատներ էր ունեցել հելլենական կրթութիւնը հայկական արժուանքում՝ այդ երեւում է նրանից, որ Տիգրանի որդին՝ Արտաւազը գրած է եղել յունարէն լեզուով ողբերգութիւններ, նաոեր, եւ պատմական երկեր»<sup>(9)</sup>:

Արտաւազը Բ.ի սպանութենէն ետք անոր զաւակները փոխադրուեցան Հոռոմ: Հետեւաբար, Տիգրան Գ. ու նաեւ իր յաջորդը՝ Տիգրան Դ. Հոռոմի մէջ ստացան հոռոմէական դաստիարակութիւն, անկախ իրենց հելլենիստական ընտանեկան դաստիարակութենէն: Ուրեմն բնական պիտի ըլլար խորհիլ թէ Տիգրան Դ. ԽՈՐԹ էր զրազաշտական կրօնի սովորութիւններուն եւ բարբերուն, որոնք չէին թոյլատրեր արիւնակցական ամուսնութիւններ:

Կրօնական ըմբռնումներու դժով նշանակելի կէտ մըն է որ Արտաշէսեան բոլոր զրամներն ալ կը կրեն հելլենիստական դրոշմներ եւ յունական դիցաբանութեան յատուկ կերպարով աստուածներ, ինչպէս Յաղթանակը, Բախտը, Հերակլը, քաղաքներու պաշտպան ոգիներն ու դիցուհիները, գետերու դիցուհիները եւ պատահական կերպով փիղ, ձի եւ այլ դրոշմներ, որոնք յաճախակի կերպով զրոշմուած են Սելեւկեան զրամներու վրայ:

Այս տուեալները համոզիչ կոուսններ են խորհելու թէ գոնէ Արտաշէսեան արքունիքը հեռու կը մնար զրազաշտական կրօնի սովորութիւններէն ու բարբերէն, եւ ամբողջովին կլանուած էր հելլենիստական մշակոյթի ըմբռնումներով ու

9.— Նոյնը, էջ 243:

բարբերով, ուր եղբայր-քոյր արիւնակցական կապերը պիտի հանդիսանային որպէս խորթ երեւոյթ:

Տարբեր վերլուծում ունի Վենետիկի Մխիթարեան միաբան Սահակ Տէր Մովսէսեան, որ խօսելով արքայուզուններու դաստիարակութեան հարցին շուրջ, կը գրէ. «Իր որդւոյն դաստիարակութիւնն օտար դայեակի մը յանձնելու եւ իրմէ հեռու խնամել տալու սովորութիւնն՝ ունէր նաեւ քաղաքական լուրջ պատճառներ: Այդպէս ընելով՝ կրտսեր նախարարական գերդաստանին տանուտէրներն աւելի զօրաւոր եւ ազդեցիկ նախարարներու խնամքին յանձնելով իրենց որդւոց դաստիարակութիւնը, կ'ապահովէին այդ հոյակապ եւ զօրաւոր տոհմերուն բարեկամութիւնն եւ պաշտպանութիւնը: Իսկ աւագ նախարարաց ազնիւ որդիները՝ նախարար դաստիարակի ձեռքով հրահանգուած եւ անոր դայեակ տիկնոջ կաթով սնած՝ կը դառնային իբր հարագատ եղբայր եւ քոյր դաստիարակ նախարարին սննդակից որդւոց, որոնց մէջ յանախ ամուսնութիւններ կը կնքուէին...»<sup>(10)</sup>:

Ուշագրաւ է թէ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ հրատարակուած մեծածաւալ «Հայ Ժողովրդի Պատմութեան» Ա. հատորը անդրադառնալով այս շրջանի իրադարձութիւններուն, կը շեշտէ թէ «Տիգրան Գ. ուղիղ տասը տարի անց էր կացրել Հոռոմում, իւրացրել հոռոմէական բարբերը, լատիներէն լեզուն»<sup>(11)</sup>: Յաջորդ էջին մէջ յիշուած է թէ Տիգրան Գ.ի մահէն ետք «...գահակալում են Տիգրան Դ.ը եւ նրա քոյր էրատոն, Տիգրան Գ.ի զաւակները»<sup>(12)</sup>:

Ոչ մէկ ակնարկութիւն թէ անոնք ամուսիններ եղած են ըստ

10.— Հ. Սահակ Տէր Մովսէսեան, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, Ս. Ղազար, 1922, էջ 374-375:

11.— «Հայ Ժողովրդի Պատմութիւն», Ա. հտր., հրատարակութիւն Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի, Երեւան, 1971, էջ 631:

12.— Նոյնը, էջ 632:



զրադաշտական սովորութիւններու, այլ՝ ընդհակառակը, շեշտուած է իրենց հօր, հոռմէական դաստիարակութեան իւրացումը, որ նման բարքեր չէր թոյլատրեր:

Հոռմէական դաստիարակութիւնը աւելի շեշտուած պէտք է ըլլար Տիգրան Դ-ի եւ Երատոյի մօտ:

Վերոյիշեալ հրատարակութեան հաշուումներով, Արտաւազդ Բ. սպաննուեցաւ Ք. Ա. 31 թ.ին, շուրջ 55 տարեկան հասակին մէջ (13): Տիգրան Գ. այդ ժամանակ շատ հաւանաբար 30 տարեկան էր երբ տարուեցաւ Հոռմ, ուր մնաց 10 տարիներ: Եթէ ընդունինք որ Տիգրան Դ. եւ Երատոյ ԻՍԿԱՊԷՍ ՀԱՐԱՋԱՏ ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ ԷՒՆ, ուրեմն արդէն ծնած ըլլալու էին եւ մանկահասակ՝ ոչ աւելի քան 5-10 տարեկան: Հոռմ, անշուշտ, ամէն ջանք թափեց զանոնք «հոռմէականացնելու», որպէս ապագայ դրածոյ գահակալներ: Դժուար պիտի ըլլար ընդունիլ թէ նման պայմաններու տակ, անոնք հաշտ մնացած ըլլային զրադաշտական սովորութիւններու հետ:

Երատոյի արքայաքոյր եւ ամուսին ըլլալու վարկածը կը մնայ վիճելի եւ կը կարօտի պրպտումի ու լուսաբանութեան, որովհետեւ.

Ա.— Ճիշդ պիտի չըլլար Տակիտոսի միակողմանի հաղորդումը իւրացնել առանց վերապահութիւններու: Պատմագրութիւնը սովորաբար իր եզրակացութիւնները կը հիմնաւորէ մատենագրական այլազան աղբիւրներու հաղորդումներու բաղադրական ուսումնասիրութեամբ, մօտենալու համար ճշմարտութեան: Տակիտոս նկատուած է սովորաբար վիճելի եւ միակողմանի մատենագիր:

Բ.— Թէեւ մեր պատմագրական ծանօթութիւնները Արտաշէսեան գահակալներուն շուրջ եւ մանաւանդ արքունիքին եւ ընտանեկան բարքերուն կապակցութեամբ հազուադէպ են, ասով հանդերձ, իրենց մասին զրոյ մատենագիր-

ները պիտի չքաշուէին խժրժելու «բարբարոս» ժողովուրդի մը՝ Մեծն Տիգրանէն սկսեալ, բարքերը եւ արիւնակցական կապերը: Նման ակնարկութիւն եղած չէ բացի Տակիտոսի եւ Տիգրան-Երատոյ պարագայէն:

Գ.— Թագաւորներու մօտ ամուսնութեան հարցը կապուած էր անպայմանօրէն քաղաքական, դիւանագիտական եւ զինուորական շահագրգռութիւններու հետ: Այսպէս ըրած էր Մեծն Տիգրան՝ ամուսնանալով Պոնտոսի Միհրդատ թագաւորի աղջկան՝ Կղէնպատրայի հետ: Ապա՝ սա իր աղջիկը ամուսնացուց Ատրպատականի արքայազունին՝ Միհրդատի հետ: Նոյն մտահոգութեամբ Արտաւազդ Բ. իր քոյրը ամուսնացուց Պարթեւ արքայորդի Բակուրի հետ: Նոյն հաշիւներով Անտոնիոս ուղեց իր որդին՝ Աղեքսանդրը, ծնած Կղէնպատրայէն, ամուսնացնել Արտաւազդ Բ. ի աղջկան հետ:

Հետեւաբար երբ կենաց ու մահու պայքար կը մղուէր Հայաստանի մէջ, պահելու համար երկրին անկախութիւնը պարթեւ ու հոռմէական ոտնձգութիւններու դէմ, երբ երկրին մէջ պարթեւասէր եւ հոռմէասէր կուսակցութիւններ իրենց պայքարներով կը տկարացնէին ներքին ճակատը, ճիշդ պիտի ըլլար ենթադրել, թէ արեւմտեան բարքերով սնած Տիգրան Դ. քաղաքական մտահոգութիւններէ մղուած, փոխանակ իր քրոջ հետ ամուսնանալու, փնտոէր զօրաւոր դաշնակից մը, եթէ ոչ դրացի պետութիւններէն, առնուազն երկրին մէջ ազդեցիկ նախարարական տուներէն, կնքելով քաղաքական ամուսնութիւն մը:

Մենք համոզուած ենք թէ Երատոյ կը ներկայացնէր չէզոք բայց զօրաւոր նախարարական տոհմ մը, զոր հոռմէացիները ուղեցին սիրաշահիլ, զայն առանձին գահ բարձրացնելով Տիգրանի սպանութենէն ետք: Ան հեռացուեցաւ երբ չարդարացուց Հոռմի ակնկալութիւնները որպէս դրածոյ թագուհի:

Դ.— Ինչ կը վերաբերի դրամներուն վրայ յիշուած «Արքայաքոյր» տիտղոսին, բացառուած չէ որ այդ տիտղոսը առնուած ըլլայ սելեւկեան պալատական բարքերէն: Սելեւկեան հարստութեան մօտ թագուհին կը նախընտրէր



ինքզինք կոչել ՔՈՅՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ, որ ինքնին աւելի բարձր տիտղոս մը կը նկատուէր, քան՝ թագուհի կոչումը<sup>(14)</sup> :

Ե.— Կ'արժէ նաեւ ընդգծել թէ իր դրամներուն վրայ, Երատոյ չի կրեր Արտաշէսեան թագաւորական խոյրը, այլ իր մագերը հաւաքած է վարսակալով մը: Ան չէ գործածած նաեւ ԹԱԳՈՒՀԻ տիտղոսը: Եթէ հարազատ քոյրն ըլլար Տիգրան Դ-ի եւ ամուսինը, նուագագոյն չափով ակնկալելի պիտի ըլլար որ համահաւասար իրաւունքով ան գործածէր «թագուհի» տիտղոսը եւ Արտաշէսեան խոյրը, օրինակահանցնելու համար իր գահակալական իրաւունքները:

Ճիշդ է թէ մինչեւ այսօր մեր տրամադրութեան տակ գտնուող դրամները հազուագիւտ են, սպառիչ կերպով արտայայտուելու համար այս հարցին շուրջ: Բայց նկատի ունենալով այն պարագան թէ Արտաւազդ Դ. դրածոյ թագաւորը, ծագումով ատրպատականցի, որմէ դրամ ունինք Օգոստոսին հետ միասնաբար, գործածած չէ Արտաշէսեան խոյրը, իրաւունք կ'ունենանք ենթադրելու թէ Արտաշէսեան խոյրը վերապահուած էր բացարձակապէս Արտաշէսեան տոհմին հարազատ ժառանգորդներուն:

Զ.— Այս առնչութեամբ կ'արժէ յիշատակել դեղին նոնաքարէ պատրաստուած փորագիր քարի մը նկարը, որուն վրայ կանացի դիմագիծով իշխանուհի մը կը կրէ Արտաշէսեան խոյրը<sup>(15)</sup>: Ըստ հեղինակին, այս քարը (գեմման) պէտք է վերագրել Երատոյ թագուհիին, հիմնուելով Տիգրան Դ-ի հեռացումէն ետք որպէս թագուհի Երատոյի առանձին իշխած ըլլալու հանգամանքին վրայ, եւ նկատի ունենալով

14.— E. Bickerman, «Institutions des Seleucides», Paris, 1938, p. 26.

15.— Բ. Ն. Առաքեյան, «Ակնարկներ Հին Հայաստանի»... էջ 34 եւ տախտակ 51: Նաեւ տես՝ «Հայ Ժողովրդի Պատմութիւն» (Ա. հոր., Երեւան, 1971, էջ 625), ուր նոյն փորագիր քարի նկարը արտատպուած է «Արտաշէսեան հայ թագուհի» վերապահ բացատրութեամբ:

այդ շրջանին յատուկ արուեստի ոճական նմանութիւնները:

Դժբախտաբար քարին շուրջ որեւէ գրութիւն արձանագրուած չէ: Տրուած չեն նաեւ այլ մանրամասնութիւններ քարին չափերուն, վաւերականութեան եւ գտնուած վայրին շուրջ:

Բնական պիտի ըլլար ակնկալել որ թագուհի մը իր պաշտօնական կնիքին շուրջ փորագրէր իր անունն ու տիտղոսը: Անանուն քար մը, միայն Արտաշէսեան խոյրով, կրնայ պատկանիլ ուրիշ անձանոթ Արտաշէսեան իշխանուհիի, առանց փաստացիօրէն պատկանելու Երատոյին:

Տիգրան Դ-ի եւ Երատոյի արիւնակցական կապերու վարկածը կը կարօտի մանրակրկիտ լուրջ ուսումնասիրութեան:



**ՀԵԹՈՒՄ Ա.Ի ՀԵԹՈՒՄ-ԶԱՊԷԼ ԵՒ  
ԵՐԿԼԵԶՈՒԵԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

Հեթում Ա.ի (1226-1270 թթ.) գահակալութեամբ՝ Կիլիկիոյ մէջ սկսաւ նոր հարստութիւն մը, որ տեւեց 115 տարիներ:

Հեթումի 45 տարիներու երկարատեւ իշխանութիւնը Հայկական Կիլիկիոյ պատմութեան համար եղաւ բացառիկ նշանակութեամբ շրջան մը: Կիլիկեան Պետութիւնը՝ դիւանագիտական ու տնտեսական մարզերու մէջ ձեռնարկեց քաղաքական միջազգային տարողութիւն ունեցող ծրագիրներու հետապնդման:

Հեթում Ա. օժտուած էր բացառիկ տաղանդով ու կը վայելէր աջակցութիւնը նոյնքան օժտուած եւ կարող օգնականներու: Իր հայրը՝ Կոստանդին Պալլ, երկար տարիներ պահեց իր խնամակալի եւ խորհրդատուի պաշտօնը, միշտ մնալով մղիչ ոյժը ազգային կուսակցութեան: Երէց եղբայրը՝ Սմբատ, որ սպարապետն էր կիլիկեան բանակներուն, հաւասար ճարտարութեամբ գործածեց սուրն ու գրիչը, դառնալով կոթողական դէմք մը ԺԳ. դարու Կիլիկիոյ պատմութեան մէջ:

Հեթում Կիլիկիոյ գահը բարձրացաւ պատմական շփոթ պայմաններու մէջ: Թուենք գլխաւորները:

Ա. — Ան կը բազմէր գահի մը վրայ, որ թափուր կը մնար: Անտիոքի Պոհեմոնտ իշխանի որդին՝ Ֆիլիբ, որ ամուսնանալով Լեւոն Ա.ի աղջկան՝ Զապէլի հետ, գրաւած էր գահը, եւ

կողոպտած ըլլալով արքունի գանձերը՝ արժանացած էր դաւաճաններու պատիժին ու սպաննուած էր բանտին մէջ: Հետեւաբար՝ Անտիոքի իշխանութիւնը յարմար առիթի կը սպասէր վրէժ լուծելու համար Կիլիկիայէն: Աւելցնենք որ այս ամուսնութիւնը անըմբռնելի կը թուի, որովհետեւ Ֆիլիբի հայրը՝ Պոհեմոնտ, նոյն այն իշխանն էր, որ 1203-1216 թթ. երկարատեւ պատերազմի մէջ էր Լեւոն Ա.ի հետ, մերժելով Ռուբէն-Ռէյմոնտի գահակալական իրաւունքները Անտիոքի վրայ:

Բ. — Սելճուքները զօրաւոր պետութիւն մը ստեղծած էին եւ կը սպառնային Կիլիկիոյ, անոր խորտակումը ծրագրելով:

Գ. — Չորրորդ Խաչակրութիւնը 1204 թ.ին շեղած էր իր նպատակէն, ու փոխանակ Երուսաղէմը ազատագրելու, բաւականացած էր գրաւելով Պոլիսն ու կողոպտելով անոր հարստութիւնները:

Կիլիկիան մեկուսացած էր, եւ երկրին պաշտպանութեան համար անհրաժեշտ էր ստեղծել զօրաւոր բանակ մը, որուն ծախքերը առաւելարար պիտի հոգացուէին վաճառականութեան զարգացումով զոյացած եկամուտներով, որոնք պետութեան գլխաւոր աղբիւրներն էին: Հեռատես եւ դիւանագէտ Հեթում ձեռք առաւ միջոցներ, որոնց կիրարկումը կը գտնենք իր կողմէ հատանուած արծաթ դրամներու ուսումնասիրութեամբ:

Հեթում Ա. իր՝ մօտ կէս դար տեւող գահակալութեան ընթացքին, հատանած է միայն երկու դրոշմներով արծաթ դրամներ, որոնցմէ առաջինը՝ ՀԵԹՈՒՄ-ԶԱՊԷԼ կոչուած արծաթներն են, իսկ երկրորդը՝ հետաքրքրական այն արծաթները, որոնք ծանօթ են ԵՐԿԼԵԶՈՒԵԱՆ անունով:

ՀԵԹՈՒՄ-ԶԱՊԷԼ: Այս դրամները հատանուած են յամառ յարատեւութեամբ եւ հետեւողականութեամբ մինչեւ Հեթումի մահը՝ 1270 թ.: Դրոշմը կը ներկայացնէ Հեթում եւ Զապէլ միասին դիմահայեաց, եւ երկուքին միջեւ խաչ մը: Շուրջը գրուած է՝ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՅ (Աստուծոյ) է, (տարբերակներով): Յետսակողմը՝ առիւծ մը դէպի աջ, բռնած՝ խաչ



մը: Շուրջը՝ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՅ (տարբերակներով), առանց Չապէլ թագուհի անուան յիշատակութեան (տես՝ նկար թիւ 1):



Նկար թիւ 1

Այս պահպանողական երեւոյթը մեզ մղէ պրպտելու անոր զրգապատճառները եւ ընելու կարգ մը բարձրագոյնութիւններ:

1.— Անպայմանօրէն Հեթում Ա. եւ իր փոզերանոցի պատասխանատուները զուրկ չէին երեւակայութենէ կամ նորարարութեան բնական եւ մարդկային ձգտումներէ: Չապէլ թագուհիի մահէն (1252 թ.) ետք, կ'ակնկալուէր որ փոխուէր գրոջմը, եւ Հեթում այլ գրոջմ մը զնէր զրամներուն վրայ: Սակայն գրոջմի շարունակումը կը թուի թէ ունեցած է անհրաժեշտ եւ հրամայական պահանջներ:

2.— Այս զրամին վրայ Չապէլի պատկերը ընդհանրապէս հայ զրամագէտներու կողմէ նկատուած է որպէս թագաւորական գահի ժառանգական իրաւունքի նուիրագործման արտայայտութիւն: Հայր Սիպիլեան կը խորհի թէ՛ «Հեթմոյ Ա.ի զրամները միշտ Չապէլ թագուհուն հետ կը ներկայանայ, ի հարկէ անոր համար՝ որ Չապէլ բնական ժառանգ ըլլալով՝ կարելի է իրաւունք մը կամ պատիւ մը սեպուած ըլլայ անոր պատկերը զրամոց վրայ գրոջմել»(1):

1.— Հ. Կրեմէս Կ. Սիպիլեան, «Գասաւորութիւն Ռուբինեան Դրամոց», Վիեննա 1892, էջ 25:

Դոկտ. Չարեհ Պտուկեան, արդիական դասաւորումով մը պատրաստուած իր հատորին մէջ կը գրէ. «Թագաւորը եւ թագուհին բացայայտօրէն ընդունած են այն իրողութիւնը, թէ թագուհին թագաւորական սերունդէ էր, իսկ Հեթում իր կողակիցը (consort)»(2), հետեւաբար՝ Հեթումը կը ձգէ երկրորդական գծի վրայ:

Չապէլի ժառանգական իրաւունքը շեշտած են այս կամ այն ձեւով՝ Սմբատ Սպարապետ իր «Տարեգիրք»ին մէջ, Հայր Ղեւոնդ Ալիշան իր «Սիսուան»ով, Օրմանեան Պատրիարք իր «Ազգապատում»ին մէջ եւ ուրիշներ: Բայց զրամագիտական գծով հարցը կը մնայ անորոշ եւ ոչ համոզիչ:

Եթէ Չապէլ գահաժառանգ էր օրինական իրաւասութիւններով, պիտի ակնկալուէր ուրեմն որ զրամներուն վրայ արձանգորուէր նաեւ իր անունը որպէս թագուհի, փոխանակ իր կողակիցին՝ Հեթումի անուան առանձին յիշատակութեան:

Ըստ Սմբատ Սպարապետի ժամանակագրութեան՝ «Ի թուին ՈԿԵ (1216) . . . Չայսու ժամանակաւ եղիւ թագաւորին Լեւոնի դուստր եւ անուանեաց զանուն նորա Չապէլ. եւ յայնմհետ խորհէր զդուստրն իւր ժառանգ թագաւորութեան իւրոյ, գոր եւ իշխանքն իւր նոյնպէս տային նմա խորհուրդ, թէ յորժամ ետ տէր Աստուած զաւակ յերանաց քոց, արա զնա տէր ժառանգութեան քո եւ լոյժ գերդումն մեր գոր արարեալ եմք Ընովքինի եւ կապեա ընդ դստեր քո, եւ մեք ծառայեմք նմա որպէս արու զաւակի . . . Եւ թագաւորն հաւանեցաւ ի բանս իշխանաց իւրոյ»(3):

Ապա՝ Սմբատ Սպարապետ կը շեշտէ Չապէլի ժառանգութիւնը. «Եւ . . . ՈԿԸ (1219) պատահեաց ախտ հիւաղութեան թագաւորին Լեւոնի, ուստի եւ մեռան իսկ: Եւ միւնչդեռ

2.— Paul Z. Bedoukian, «Coinage of Cilician Armenia», New York, 1962, p. 82.

3.— Սմբատայ Սպարապետի «Տարեգիրք», Վենետիկ, Ս. Ղազար, 1956, էջ 219-220:



կենդանի էր... խրատը [իշխանները]... անարատ հաւատ պահել տղայ դստերն իւրոյ Զապիլի, գոր թողոյր ժառանգ տէրութեան իւրոյ»... (4):

Օրմանեան Պատրիարքի համաձայն, «ապագային ապահովութեան համար ալ սաստիկ երդումներով ջանաց պարտաւորել իշխանները ու գորավարները, եւ նոյնիսկ զինուորներու գունդերը, թէ պիտի յարգեն իւր կամքը եւ պիտի հնազանդին իրեն աղջկան ու անոր խնամակալներուն: ... Եւ վախճանեցաւ [Լեւոն] 1219 Մայիս 2-ին, Հինգշաբթի օր...»(5):

Զապէլ իշխանուհին, որ ծնած է 1216 թ.ին(6), հօրը մահուան տարին ըլլալու էր մօտ երեք տարեկան: Հայրը՝ Լեւոն Ա. կ'աշխատէր ամէն գնով զայն պարտադրել աւագանիին եւ բանակին, լուծելով իրենց երդումը, եւ սաստիկ երգումներով պարտաւորել բոլորը որ պիտի յարգեն եւ հնազանդին իր աղջկան: Կար անշուշտ գլխաւոր պատճառ մը՝ իրաւական ուրիշ ժառանգորդ մը, յանձինս Լեւոն թագաւորին Ռուբէն եղբոր թորան՝ Ռուբէն-Ռէյմոնտի, որ իբրեւ արու գաւակ, աւանդական եւ իրաւական գծով, անպայմանօրէն աւելի գորաւոր պատճառներ ունէր գահին տիրանալու, քանի որ ան Կիլիկիոյ թագաւոր օծուած էր Լեւոն Ա.ի թելադրութեամբ եւ փափաքով:

Ըստ Սմբատ Սպարապետի, «Իսկ ի ժամանակի յայնմեկ (1209 թ.) թագաւորն Լեւոն թելադրութեամբ մօր իւրոյ Ընիթային, եցոց ամենայն հնազանդելոց իւրոց, մեծամեծաց

եւ փոքունց, յայտնի ժառանգ թագաւորութեան իւրոյ գՌովբէն գորդի դստեր եղբօրն իւրոյ Ընովրինի, վասնզի ի ծերութեան եհաս, եւ էր անձամբ տկար վասն ցաւոյն գորունէր ի ձեռսն եւ յոտսն, որ կոչէր թագաւորացաւ, եւ ոչ գոյր նորա գաւակ յերանաց իւրոյ արու. վասն որոյ ՄԻԱՆԳԱՄ ԵՒ ԵՐԿԻՑՍ ԵՒ ԵՐԻՑՍ (ընդգծումը մեր կողմէ, Պ.Ս.), յայլ ժամանակս երդմնեցոյց տղային Ընովրինի գամենեսեան զինմա ծառայեցեն յետ մահուան իւրոյ»(7):

Օրմանեան կը գրէ. Լեւոն «... կը ջանայ Անտիոքի խնդիրը վերջացնել՝ որ իր եղբօր թոռ Ռուբէնը, գոր իրեն որդեգրած էր, Անտիոքի իշխանութեան անցընէ, միանգամայն իրեն ժառանգ հռչակէ, եւ այսպէս Կիլիկիայով եւ Անտիոքով մեծ Հայ իշխանութիւն մը կազմէ, եւ այսպէս գորացած՝ Հայաստանն ալ իւր իշխանութեան ներքեւ առնէ: ... եւ Ռուբէնը պաշտօնապէս թագաժառանգ հռչակեց 1209-ին, երբ տակաւին 12 տարեկան էր...»: Լեւոն «... Հեղի Լամբրոնացիի յանձնարարած էր Ռթոն Դ. կայսեր ներկայանալ, ... Ռուբէնի համար թագաւորական թագ խնդրել իբր թագաժառանգի, ինչ որ շնորհուեցաւ, եւ 1211 Օգոստոս 15-ին, Վերափոխման երկրորդ օրը, թագի հանդիսութիւն ալ կատարուեցաւ»(8):

Վիլլընարանտի ժամանակագրութեան համաձայն, Ռուբէն թագաւոր օծուած է 1212 թ.ին(9): Դարձեալ Սմբատ Սպարապետ կը հաղորդէ որ «եւ յորժամ էր թուական ՈՄԹ (1210) առաքեաց թագաւորն Լեւոն զՀեթում, որ տէր էր Լամբրոնին, եւ անուանուեցաւ Հեղի... առ Պապն Հոռմայ եւ առ կայսրն Ալամանաց եւ խնդրէր թագ որդիացելոյն իւրոյ Ընովրինի. որ եւ դարձաւ պատուով եւ երբեր զթագն»(10):

4. Նոյնը, էջ 222:

5. Մաղափա Արք. Օրմանեան, «Ազգապատում», Ա. հտր., Կոստանդնուպոլիս, 1912, սիւնակ 1592-1593, § 1096:

6. Սմբատ Սպարապետ, էջ 219-220: Օրմանեանի համաձայն Զապէլ ծնած է 1215 թ.ին (տես՝ «Ազգապատում», Ա. հտր. սիւնակ 1584, § 1088): Հ. Ղ. Ալիշան «1215 կամ 1216» կը նշէ Զապէլի ծննդեան թուականը (տես՝ «Սիսուան», Վենետիկ Ս. Ղազար, 1885, էջ 512):

7. Սմբատ Սպարապետ, էջ 216:

8. Մ. Օրմանեան, «Ազգապատում», Ա. հտր., սիւնակ 1582-1583, § 1088:

9. Հ. Ղ. Ալիշան. «Սիսուան», էջ 476:

10. Սմբատ Սպարապետ, էջ 217:



Յստակ է ուրեմն որ Կիլիկիոյ գահը ունէր իր իրաւական ժառանգը՝ արու գծով, եւ վերջինը՝ Ռուբինեան տոհմէն, որ պաշտօնապէս թագ ստացած էր Գերմանիոյ եւ Հունգարիոյ թագաւորներէն, հաւանութիւն՝ Հռոմի Պապէն, եւ եկեղեցական օծում ստացած էր 1211 թ. Օգոստոս 15-ին: Օրինական ի՞նչ պայմաններ կային, որոնք կրնային արգարացնել իշխաններու անպատասխանատու վերաբերումը՝ լուծելու համար իրենց հաւատարմութեան երդումը, «կարողութեամբն Աստուծոյ» թագաւոր օծուած Ռուբէնի հանդէպ: Ոչ մէկ, բացի Լեւոնի պարտադրած կարգադրութենէն:

Ըստ մեր մատենագիրներուն, 1216 թ. ին Ռուբէն հեռացած էր Անտիոքէն ու ապաստանած Սիւ՝ Լեւոն Ա. ի մօտ, որ զինք որդեգրած էր: Անոնք կը յիշեն սակայն, թէ փոխադարձ յարաբերութիւնները ձգտուած էին: Ինչո՞ւ. բացատրուած չէ: Հայ պատմաբանները իրարմէ ընդօրինակելով, տարբեր դարձուածքներով կրկնած են Սմբատ Սպարապետի հաղորդածը, որ այս պատմական իրադարձութիւններուն հանդէպ որոշ զիրքորոշում ունի, բմբունելի պատճառներով, եւ կը մեղանչէ միակողմանիութեամբ:

Սմբատ Սպարապետ Ռուբէն-Ռէյմոնտը կը ներկայացնէ ապերախտ եւ ապստամբ, արդարացնելու համար իր հօր՝ Կոստանդին Պայլի կողմէ անոր ձերբակալումը եւ բանտին մէջ սպանութիւնը, ճամբայ հարթելու համար Հեթումի ամուսնութեան եւ գահակալութեան:

Կը թուի թէ Կիլիկիոյ ժողովուրդը՝ կրաւորական անտարբերութեամբ, առանց վրդովումի կամ բողոքի կը հետեւէր այս իրադարձութիւններուն: Ան չունէր գիտակցութիւնը որ աւանդականօրէն նուիրագործուած իրաւասութիւններ կը խախտէին:

Նոյն պիտի չըլլար պարագան երբ նոյն ժողովուրդը գիտակից իր դարաւոր աւանդութիւններուն եւ սրբութիւններուն, մահուան գնով, պիտի բռնկէր եւ պոսթկար օր մը, երբ թագաւորներ պիտի յանդգնէին անոր ծէսն ու եկեղեցին վաճառքի ու սակարկութեան նիւթ դարձնել:

Պատմական այս պարագաները յարմար նկատեցինք վերյիշել, շեշտելու համար որ Հեթում՝ օրինակացնելու համար

իր թագը, պէտք չունէր անհրաժեշտօրէն Չապէլ թագուհիին հետ միասնաբար ներկայանալու իր դրամներուն վրայ: Մանաւանդ, ինչպէս ըսինք վերը, Չապէլի անունը կը բացակայի այս դրամներուն վրայէն, իսկ անոնց հատանումը շարունակուեցաւ հետեւողական կերպով մինչեւ Հեթումի մահը՝ 1270 թ., երբ Չապէլ մահացած էր արդէն 1252 թ. ին:

Թէ ինչո՞ւ Հեթում-Չապէլ դրոշմով դրամներու հատանումը շարունակուեցաւ նոյնիսկ Չապէլի մահէն ետք, Հայր Սիպիլեան կ'ենթադրէ թէ, «... Արդ չի կրնար ենթադրուիլ թէ աս Հեթումոյ եւ Չապէլի դրամները մինչեւ Չապէլի մահուան ժամանակը դրոշմուած ըլլան, ինչու որ վերջին ժամանակները անլի հարկաւորութիւն կար դրամ կոխելու թարաք հարկապահանջութեանցը պատճառաւ» (11):

Յաջորդ էջին մէջ, Սիպիլեան կը խորհի թէ Չապէլի մահէն ետք, այս դրամները շարունակուած են հատանուիլ բայց «հապեհեպով... առանց բնաւ դրոշմի ու արուեստին մտադրութիւն ընելու: Բարբարոս Թաթարաց, բարբարոս դրամներ վնարելու դժուարութիւն չկար» (12):

Ս. Բոռնագեանի համաձայն՝ Սմբատ Սպարապետ Կարակորում՝ Գոյուկ Պանի մօտ հասնելէ ետք, «... համաձայնացրեց Հայոց թագաւորի այցելութեան պայմանները եւ հաւաստիացրեց Խանին, որ Կիլիկեան հայկական թագաւորութիւնը կը մնայ մոնկոլների կրտսեր դաշնակիցը եւ կը վնարի պահանջուած հարկը» (13):

Մեր յօդուածին սահմաններէն դուրս է Կիլիկիոյ թագաւորութեան հարկային պարտաւորութիւններուն ուսումնասիրութիւնը: Բայց եթէ իրապէս բարբարոս ժողովուրդի մը

11.- Հ. Կ. Սիպիլեան «Դասաւորութիւն», էջ 25:

12.- Նոյնը, էջ 26:

13.- Տեսնել «Հայ ժողովրդի Պատմութիւն», Գ. հտր., (Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն), Երեւան, 1976, էջ 701:



վճարուած հարկերուն դրամը որպէս դրոշմ ու արուեստ կարեւոր հարցեր չէին, ուրեմն անհրաժեշտ չէր, միեւնոյն եւ անփոփոխ դրոշմով դրամներուն հատանումը: Հետագային, Հեթումի որդին՝ Լեւոն Բ. եւ յաջորդները հարկեր վճարեցին նաեւ մեմլուքներուն, որոնք գանձուած դրամները ձուլեցին, կամ արաբական կրկնադրոշմ մակագրութիւններով (over-strike) չրջանառութեան մէջ դրին իրենց շուկաներուն մէջ:

Հետեւաբար կար անհրաժեշտութիւն մը, կամ՝ դիւանագիտական ու տնտեսական մտասեւեռում մը, որ կը ստիպէր Հեթումի պէս հեռատես եւ արթնամիտ վեհապետ մը միեւնոյն դրոշմը անփոփոխ պահելու՝ շուրջ կէս դար շարունակ:

Հիմնաւորելու համար մեր վարկածը, պիտի ստիպուինք պահ մը անդրադառնալ Կիլիկիան չրջապատող երկիրներու վաճառականական եւ դրամագիտական պայմաններուն:

Փոքր Ասիան ընդարձակ եւ շահաւէտ շուկայ էր, եւ հանգրուան՝ Արեւելքէն Արեւմուտք փոխանցուող կարաւաններուն: Շատ կարեւոր եւ սպառող շուկայ էր նաեւ Միջին Արեւելքը: Դարերու ընթացքին զարգացած էին վաճառականական ուղիներ, որոնց գծով Հնդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի եւ այլ երկիրներու ապրանքները կը փոխադրուէին Փոքր Ասիա, եւ ապա՝ զանազան նաւահանգիստներ, ծովու ճամբով փոխադրուելու համար Եւրոպա: Կիլիկիա մէկն էր այդ կեդրոններէն, իր Այաս նաւահանգիստով, ուր ապրանքները կը դիզուէին ուղղուելու համար զանազան շուկաներ: Այս տարանցիկ առեւտուրի զարգացման կարեւորութիւնը զգաց Լեւոն Ա., եւ 1201 թ.էն սկսեալ, վաճառականական պայմանագրեր կնքեց իտալական քաղաքներու հետ: Մասնաւոր հոգ տարուեցաւ, որպէսզի ծովային եւ ցամաքային ճամբաները ապահով ըլլան:

«Կիլիկեան պետութիւնը հոգ էր տանում, որպէսզի ապահով լինէին ցամաքային եւ ծովային ֆանապարհները, մասնաւորապէս հոգում էր Այաս եւ Կոռկիոս այցելող օտարերկրեայ նաւերի եւ ֆարաւանների անվտանգութեան ու ապահովութեան համար: Հարեւան Սեբաստիան առեւտրական ցամաքային ուղիների խաչաւորման գլխաւոր կեդրոններից էր: Այստեղ առեւտրականներ էին գալիս Ղրիմից,

Անդրկովկասից, Իրանից, Միջագետքից, Չինաստանից, Հնդկաստանից, ինչպէս նաեւ Կիլիկիայից, Արաբիայից ու Եգիպտոսից: . . .

«Մոնկոլների կողմից Բաղդադի գրաւումով (1258) փոխուեց Առաջաւոր Ասիայի ֆարաւանային մայրուղիների ուղղութիւնը: Մեծ նշանակութիւն ձեռք բերեց Առաջաւոր ասիական նոր տարանցիկ ուղին՝ Այաս-Թաւրիզ: Ուստի խիստ բարձրացաւ Կիլիկիայի տարանցիկ ուղիների եւ Կիլիկեան հայկական պետութեան դերը՝ ԺԳ-ԺԴ. դարերի միջագոյնին առեւտրում» (14):

Անկախաբար տարանցիկ առեւտուրէն, Կիլիկիոյ 'հայ վաճառականներու ձեռքին մէջ կեդրոնացած էր սելճուքեան շուկաներու շահագործումը, որ պիտի զարգանար նաեւ մոնկոլական ընդարձակ շուկաներու շահագործումով, երբ մոնկոլները սկսան տարածուիլ 1243 թ.էն յետոյ՝ սելճուքներու պարտութեամբ:

Վաճառականութեան զարգացումին համար անհրաժեշտ էր ստեղծել դրամական չրջանառութեան առողջ եւ վստահելի գրութիւն մը: Արդ՝ Փոքր Ասիոյ մէջ գտնուող պետութիւնները հազուագիւտ առիթներով արծաթ հատանած են, բաւականանալով առաւելապէս պղինձ դրամներով, իսկ հատանուած արծաթները իրենց գտութեամբ եւ կշիռով ստորադաս եղած են Հայկական Կիլիկիոյ դրամներուն: ԺԳ. դարուն կար նաեւ արծաթի սուր տազնապ մը Մերձաւոր Արեւելքի եւ Փոքր Ասիոյ բոլոր երկիրներուն մէջ, բացի Հայկական Կիլիկիայէն:

Կիլիկիոյ զրացի Ռումի սելճուքները, որոնք տիրած էին նախապէս բիւզանդական քաղաքակրթութեամբ դաստիարակուած զանգուածներու, միայն երկու առիթներով արծաթներ հատանած են պատկերաւոր դրոշմներով: Մին՝ Սուլէյման Բ. ի օրով (1199-1203 թթ.) իսկ միւսը՝ Քայ Սուրոյ Բ. Քայքոպատի (1236-1245 թթ.), որոնց միջին



կշիռն է մօտ 2,60 կրամ(15), մինչդեռ կիլիկեան դրամները կը կշռեն 2,95 - 2,96 կրամ, արծաթի 90 - 92 % միջին զտութեամբ(16):

Նոյնն էր կացութիւնը էրզրումի սելճուք պետութեան համար, որուն դրամներուն ճնշող մեծամասնութիւնը պղինձ էր, սահմանափակ ու տեղական գործածութեան համար:

Օրթուքեան պետութիւնները, որոնք գրաւած էին մեծ մասը Վասպուրականի, եւ Մարտինի, Ամիդի ու Խարբերդի շուրջը թագաւորութիւններ հաստատած, զուրկ էին արծաթ դրամներէ, եւ իրենց դրամական հիմնական շարքը պղինձ էր: Կարգ մը մելիքներ, պղինձ դրամներուն վրայ ՏԻՐՆԵՄ գրելով պարտադրած էին զանոնք որպէս արծաթ:

Տազնապի մէջ էր նաեւ Բիւզանդիոնը, որովհետեւ Չորրորդ Խաչակրութիւնը փոխանակ Երուսաղէմ ուղղուելու, բաւականացած էր 1204 թ.ին Պոլսոյ գրաւումով:

Խաչակիրները Պոլիս մնացին մինչեւ 1261 թ., կողոպտելով քաղաքին հարստութիւնները, առանց խնայելու սրբավայրերը, վանքերն ու եկեղեցիները: Պոլսոյ գրաւումը ծրագրուած եւ քաջալերուած էր վենետիկցիներու կողմէ՝ առեւտրական նկատումներով, շահագործելու համար փոքր ասիական շուկաները: Վենետիկցիները տեղաւորուեցան մանաւանդ նաւահանգիստներուն մէջ, ուր առեւտրական համալիրներ եւ գրասենեակներ ստեղծեցին (comptoirs): Խաչակիրներու կողմէ Պոլսոյ գրաւման տեւողութիւնը (1204-1261 թթ.) մօտաւորապէս կը համընկնի Հեթումի գահակալութեան տարիներու (1226-1270 թթ.) տեւողութեան:

Յատկանշական է որ խաչակիրները՝ Պոլսոյ գրաւման շուրջ յիսունը վեց տարիներու ընթացքին, դրամ հատանած չեն: Շլումպերժէ իր՝ Լատին Արեւելքի իշխանութիւններուն

դրամներու ընդարձակ ուսումնասիրութեան մէջ(17) կը մերժէ որեւէ դրամ յատկացնել խաչակիրներուն, հակառակ ոմանց ենթադրութեան որ կարգ մը անանուն եւ աննշան պղինձ կտորներ կրնան իրենց վերագրուիլ: Աւելցնենք որ բիւզանդական դրամական դրութիւնը սկիզբէն ի վեր շատ հազուադէպ առիթներով արծաթ հատանած էր: Այս գրաւման շրջանին, շրջանառութեան մէջ, դրուեցան Վենետիկի կողմէ սսկի եւ արծաթ դրամներ, որոնք հատանուեցան ծովեզերեայ կարգ մը նաւահանգիստներու մէջ: Որոշ է սակայն որ վենետիկեան արծաթները լայն թափանցում չէին գտած Փոքր Ասիոյ ներքին շուկաներուն մէջ, ուր շատ հաւանաբար, տիրող դրամը Հեթումի արծաթ դրամն էր, տրուած ըլլալով անոր բարձրորակ մետաղի զտութիւնը եւ կշռային առաւելութիւնը: Հեթումի դրամը իր դրոշմով կրցած էր ինքզինք պարտադրել եւ փնտռուիլ Կիլիկիայէն դուրս՝ ընդարձակ շուկաներու մէջ: Դրոշմի որեւէ փոփոխութիւն կրնար վերապահութիւններ ստեղծել եւ վտանգել Հեթումի ստեղծած վարկը: Հեթում հասկնալի հեռատեսութեամբ դրոշմը պահեց անփոփոխ, նոյնիսկ Զապէլ թագուհիի մահէն (1252 թ.) ետք:

Իսկ Հեթում-Զապէլ դրամներու զոյգ պատկերներով դրոշմը առնչութիւն չունէր զանգուածներու մօտ Զապէլի գահակալական իրաւունքները նուիրագործելու կամ յայտարարելու հարցին հետ: Հայկական Կիլիկիոյ ժողովուրդը անտարբերութեամբ հետեւեցաւ գահակալական կարգադրութիւններուն, երբ Զապէլ նախ խոստացուեցաւ Հունգարիոյ թագաւորի կրտսեր զաւակին(18), ապա՝ ամուսնացաւ օտարական Ֆիլիբ իշխանին, որ սպաննուեցաւ, եւ ի վերջոյ՝ պսակուեցաւ Հեթումի հետ: Դրոշմը նորարարութիւն մըն էր միայն Հեթումի փողերանոցի պատասխանատուներուն կող-

15.-Stanley Lane Poole, «The Coins of the Turkuman Houses», British Museum, London, 1877.

16.-P. Z. Bedoukian, «Coinage of Cilician Armenia» p. 110.

17.G. Schlumberger, «Numismatique de l'Orient Latin,» Graz, Austria, 1954, pp. 274 + 275.

18.-ՏԽ՝Օրմամբատի, «Ազգապատում», Ա. հտր., սիւնակ 1591, § 1095:



մէ, հաւանաբար իր թագադրութեան եւ ամուսնութեան անիթներով:

**ԵՐԿԼԵՉՈՒՆԵԱՆ ԴՐԱՄՆԵՐ:** Բացառիկ դրամներ են Հեթումի երկլեզուեան արժանիքները: Առաջակողմին վրայ Հեթում կը ներկայանայ ձի հեծած զէպի աջ. գաշտին մէջ, ձիու քամակէն վեր՝ ընդհանրապէս կայ խաչ մը: Մակագրութիւնն է ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ: Դրամին յետասակողմը, արաբերէն գրութեամբ, յիշուած է Ալա էտ Տին Քայքոպատ Պըն Քայխոսրոյի անունը եւ երկրորդ խումբ մը՝ հատանուած է Ղըյաս էտ Տունիա ու էտ Տին Քայխոսրոյ Պըն Քայքոպատ, սելճուք սուլթաններուն անուններով: Ալա էտ Տին տիրած է 1228-1236 թթ., իսկ Ղըյաս էտ Տին՝ 1237-1245 թթ.: Որոշ չէ թէ էտ Տինի երկլեզուեան դրամները երբ հատանուած են: Բայց Ղըյաս էտ Տինի պարագային որոշապէս յիշուած է թէ հատանուած են Սիւսի մէջ Հիճրի 637-643 (1239-1245) թուականներուն(19): Ղըյաս էտ Տինի դրամներուն արաբերէն արձանագրութիւնն է.

السلطان المعظم غياث الدنيا والدين كيخسرو بن كيقباد ضرب بسيس سنة سبع وثلاثين  
وستاية  
(Տես՝ նկար թիւ 2)

Երկլեզուեան դրամները պատմաբաններու եւ դրամագէտներու կողմէ արժանացած են տարբեր մեկնաբանութիւններու: Հայր Սիպիլեան կ'ենթադրէ թէ «... Հեթումին Ալաէտտինին հետ սիրոյ եւ քարեկամութեան դաշինք դնելուն արդէն ժամանակակից պատմագրէ այլ վկայութիւն ունինք: Կիրակոս Գանձակեցի այսպէս կը գրէ. իսկ մեծ իշխանն Կոստադին իբրեւ առ զիշխանութիւնն թագաւորութեան որդոյ Հեթոյ զամենայն հոգս արքայութեան շանձն առեալ. իմաստաբար կարգաւորէր... Արար սէր եւ միաբանութիւն ընդ սուլտանին Հոռոնց որում անունն էր Ալադին»:

19. -- P. Z. Bedoukian, «Coinage of Cilician Armenia» pp. 227 + 234.



Նկար թիւ 2

Հ. Կղեմես Սիպիլեան կը շարունակէ, «... Ալաէտտինի եւ Հեթումի աւ երկլեզուեան ստակը կ'երեւայ որ այսպիսի քարեկամական յարաբերութեանց ժամանակները կոխուած ըլլայ: Իսկ Ղայասէտտին ու Հեթումյ մէջ ժամանակակից մատենագիրք ԱՄԵՆԵԻԻՆ ԴԱՇԻՆՔ ՄԸ ԿԱՄ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄՐԼԼԱԼԸ ՉԵՆ ՅԻՇԵՐ (ըմղգծումը մեր կողմէ, Պ. Ս.), բայց անոնցմէ գտնուած այնչափ երկլեզուեանները՝ բաւական են ցուցնելու որ նոյնպիսի դաշինք ու քարեկամութիւն մէջերնին պիտ' որ ըլլար, ինչու որ Ղայասէտտին՝ Ալաէտտինին անմիջական յաջորդն էր ու մի եւ նոյն վտանգները, մանաւանդ թէ աւելի մեծ վտանգներ երկու կողմն այլ կը ստիպէր, եւս աւելի իրենց մէջ միանալու»(20):

«...Սակայն երոպացի մատենագիրներէն ոմանք աւ երկլեզուեան դահեկաններէն կ'ուզեն հետեւցնել թէ Գոնիայի սուլթաններուն հարկատու ու հպատակ ըլլալուն համար

20. Հ. Կ. Սիպիլեան, «Դաստորութիւն...», Յատկուած, էջ 19-20: նոյնպէս տեսնել Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց» (աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի), Երեւան, 1961, էջ 190:



կոխուած ըլլան: Այսպէս կը գրէ Ատլեր, Սեսդինի, Տիւ Գանժ, Լը Վայլեան տը Ֆլորիվալ. նոյնպէս կը հաստատէ Պր. Լանկլուա»(21): Եզրակացնելով, Հայր Սիպիլեան իր սեփական կարծիքը կը խտացնէ հետեւեալ տողերով. «...աւելի հաստատուն կարծիք է ըսել՝ որ աւ երկլեզուեան ստակները բարեկամական կապակցութեան ու յարաբերութեան եւ միայնգամայն ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ ԵՐԿՈՒ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋՆ ԱԼ ԱՆՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒԱԾ ՍՏԱԿՆԵՐ ԷՒՆ (ընդգծուած մեր կողմէ, Պ. Ս.)»(22):

Վերոյիշեալ մէջբերումները յստակօրէն ցոյց կու տան Հայր Սիպիլեանի ճիշդ բացատրելու համար երկլեզուեան դրամներու հատանման պատճառները: Հիմնուելով Կիրակոս Գանձակեցիի մէկ վկայութեան վրայ, թէ՛ Կոստանդին Պայլ «արար սէր եւ միաբանութիւն ընդ Սուլտանին Հոռոմոց», դժուար է ենթադրել որ դաշինք ու բարեկամութիւն յայտարարուին դրամի վրայ պատկերացած դրոշմներով: Դաշինքներ ու բարեկամական պայմանագրեր անշուշտ կը պահուէին թագաւորական դիւաններու մէջ:

Հայր Սիպիլեան իրաւունք ունի նաեւ ժխտելու օտար դրամագէտներու կարծիքները, որոնք երկլեզուեան դրամներու վրայ հիմնուելով կ'ուզեն հետեւցնել թէ Կիլիկիան Գոնիայի սուլթաններուն հարկատու եւ հպատակ եղած է(23):

Ս. Բոռնագեան, հիմնուելով Գանձակեցիի վկայութեան եւ Կոստանդին Պայլի ու Ալաէտտինի միջեւ տեղի ունեցած միաբանութեան վրայ, կը գրէ թէ՛ «դա չփոխեց Կիլիկիայի քաղաքական կախումը Իկոնիայի սուլթանից:

«Հեթում Ա., որը նաեւ չի երկոնիայի սուլթանի գերիշխանութիւնը եւ դրամ էր հատանել, մի երեսին իր, իսկ

միւս երեսին սելուի սուլթան Քէյֆուպաթի պատկերներով (Sic)»(24):

Ճշգրէք որ ինչպէս մեր թիւ 2 նկարը որոշ կերպով ցոյց կու տայ, երկլեզուեան դրամներուն վրայ միայն Հեթումի պատկերն է որ դրոշմուած է: Իսկ արաբերէն կողմը զուրկ է պատկերէ:

Նոյն աշխատութեան մէջ այլ տեղ յիշուած է թէ՛ «Այդ ժամանակներում թողարկուեցին նաեւ երկլեզուեան հայերէն եւ արաբերէն արձանագրութիւններով արծաթէ դրամներ: Դրանք շրջանառութեան մէջ մտան 1236-1245 թթ.՝ Հեթում Ա. ի եւ Իկոնիայի սելուիքեան սուլթաններ Քէյ Գուպաթի ու Քէյ Խոսրովի անուններով, որի առթիւ նախապէս յատուկ համաձայնութիւն էր կայացել»(25):

Թէ որքան «յատուկ համաձայնութիւն է կայացել»՝ կը կարօտի լուսաբանութեան, որովհետեւ Գանձակեցիի վկայութեանն զուրս, ուր խօսք կ'ըլլայ բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման մասին, աղբիւրներ գոյութիւն չունին թէ Կիլիկիան կախուածութեան մէջ գտնուած է Իկոնիոյ սուլթաններէն:

Դոկտ. Պտուկեան կը խորհի թէ այս դրամները հատանուած են որպէս գրաւական Հեթումի կողմէ սելուիք թագաւորներու աւատապետական գերիշխանութեան (suzerainty) անուանական ճանաչման(26):

Մենք կը խորհինք թէ համոզիչ փաստեր չկան որ Հեթում կախում ունեցած է սելուիքներէն, կամ հարկատու եղած անոնց: Մեզի կը թուի թէ երկլեզուեան դրամները ունեցած են առաւելաբար վաճառականական դրոշմատուներ, ինչպէս նախատեսած է Հայր Սիպիլեան:

21.- Հ. Կ. Սիպիլեան, «Դասաւորութիւն...», Յաւելուած, էջ 20:

22.- Նոյնը, էջ 21:

23.- Նոյնը, էջ 22:

24.- Տեսնել՝ «Հայ ժողովրդի Պատմութիւն», Գ. հտր., ՀՍՍՀ Գ.Ա. Հրատ. էջ 700:

25.- Նոյնը, էջ 733-734:

26.- P. Z. Bedoukian, «Coinage of Cilician Armenia», pp. 51, 84.



Հիմնաւորելու համար մեր վարկածը, անհրաժեշտօրէն նկատի պիտի առնենք զբացի երկիրներու կիրարկած դրամական դրուժիւնները:

Ռուսի սելճուքները, հակառակ իսլամ կրօնքի պատկերամերժ խստութեան, երկու առիթներով պատկերաւոր արձաթներ հատանած են, մին՝ Ռուքն էտ Տին Սուլէյման Բ.ի (1119-1203 թթ.) կողմէ (տես՝ նկար թիւ 3), եւ միւսը՝ Ղըյաս էտ Տին Քայխոսրոյի (1237-1245 թթ.) կողմէ, իր ծանօթ Արեւ եւ Առիւծ դրոշմով:

Աւելի հեռու գացին Օրթուքեան մելիքները իրենց պատկերաւոր դրամներով, որոնց դրոշմները ընդօրինակած էին սելեւկեան, սասանեան, հռոմէական ու բիզանդական դրոշմներէ, եւ նոյնիսկ քրիստոնէական կերպարներէ, ու երբեմն անբացատրելի յղացումով խմբային խճողուած պատկերներէ:

Օրթուքեան մելիքներու համար կը թուի թէ կրօնական նկատումներէ աւելի կարեւոր էին առեւտուրի եւ դրամական շրջանառութեան ծաւալումը եւ տնտեսական եկամուտները: Իրենց տիրապետութեան տակ գտնուող զանգուածները մեծամասնութեամբ հայ կամ յոյն բնիկ տարրեր էին: Անհրաժեշտ էր զանոնք սիրաշահիլ եւ զարգացնել վաճառականութիւնը (27):

Նոյն դրուժիւնը կիրարկուեցաւ նաեւ էյուպեան տոհմէն Ալ Աուհատ եւ Ալ Աշրաֆ մելիքներուն կողմէ, հակառակ էյուպեաններու մուսուլման կրօնամոլութեան: Անոնք իրենց դրամներուն վրայ կը կրեն Շահ Արմէն տիտղոսը (տես՝ նկար թիւ 4):

Սակայն դրամի շահագործման ամենացայտուն օրինակը, որպէս վաճառականութեան թափանցումի միջոց, կը գտնենք խաչակիր իշխաններու մօտ, որոնք ԺԲ. դարու սկիզբէն սկսեալ, ոսկիներ հատանեցին յար եւ նման իսլամական



Նկար թիւ 3



Նկար թիւ 4

Փաթիմի տինարներուն, յիշելով մարգարէին անունը, Հիճրի տարեթիւերը եւ իսլամական հաւատոյ հանգանակը: Հարիւր եւ աւելի տարիներ անոնք շարունակեցին այս դրամներուն հատանումը՝ մանաւանդ Թրիփոլիի եւ Աքքայի փողերանոցներուն մէջ: Սկզբնական շրջանին խաչակիրները հաւանաբար ունեցան քուֆի գրեւակերպին վարժ փորագրիչներ, որոնք Փաթիմի ոսկիները ընդօրինակեցին հարազատօրէն: Վերջին շրջանին սակայն, անվարժ ձեռքեր բաւականացան քուֆի գիրերու տեղ զծիկներ դրոշմելով, որոնք թէեւ անընթեռնելի եւ անիմաստ՝ սակայն եւ այնպէս, իրենց արտաքին երեւոյթով խաբուսիկ՝ հարազատ տինարի տպաւորութիւն կը ձգէին անզրազէտ եւ անուս զանգուածներուն վրայ:

Սաչակիրները այս տինարները հատանեցին վաճառանական նպատակներով, թափանցելու համար հարեւան արար շուկաներէն ներս:

Հռոմի պապը յաճախ ընդդիմացաւ իսլամական դրոշմով եւ յղացումով այս դրամներու հատանումին, եւ սպառնաց պատասխանատուները բանադրել: Տարիներ շարունակ, այս

27..Ghaleb Edhem, «Catalogue des Monnaies», p. ix.



սպառնալիքները մնացին ապարգիւն, մինչեւ որ Ֆրանսայի թագաւոր Լուի Թ. նոր խաչակրութեամբ հասաւ Սուրիա եւ այցելեց Թրիփոլի ու Աքքա: Իրեն կ'ընկերանար պապական նուիրակ Լեկաթ Շաթորու, որ մանրամասն տեղեկագրով գայթակղութիւնը յանձնեց Իննոկինզոս Դ. պապին ուշադրութեան: Բանադրանքի թուղթեր զրկուեցան Թրիփոլիի եւ Աքքայի իշխաններուն, որոնք 1250 թ.ին գաղղբեցուցին արաբատառ օսկիներու հատանումը(28):



Նկար քիւ 5

Բացառուած չէ որ Հեթում՝ 1245 թ.ի շուրջ, նմանօրինակ թելադրանք ստացած ըլլար պապէն, ընդհատելու համար արաբատառ եւ Հիւրի թուականութեամբ իր դրամները, որոնք չրջանառութեան գրուած էին չրջանէ մը ի վեր վաճառականական գործառնութեանց ծաւարման նկատումներով: Հեթում՝ իր երկլեզուեան դրամներուն համար գիտակցօրէն ընտրած էր Սուլէյման Բ. (1199-1208 թթ.) արծաթ դրամը (տես՝ նկար թիւ 5), որ լայն տարածում գտած էր սելճուքներու մօտ: Անգրագէտ սելճուքները ի վիճակի չէին, անշուշտ, զանազանելու Հեթում եւ Սուլէյման

28. G. Schlumberger «Numismatique de l'Orient Latin», pp. 123, 139, 141.

թագաւորներուն անունները: Յետսակողմի արաբատառ գրութիւնը կը դիւրացնէր այդ դրամներուն չրջանառութիւնը:

Հետեւաբար՝ երկլեզուեան դրամները հատանուած չէին հարկատուութեան կամ ենթակայութեան պատճառներով, այլ տնտեսական ու առեւտրական մտահոգութիւններով: Երկլեզուեան դրամները, ինչպէս Հեթում-Չապէլ արծաթները, բացառիկ միջոցառումներ էին, որոնք կը ձգտէին զարգացնել կիրիկիոյ վաճառականութեան ծաւարումը, եւ անոր թափանցումը դրացի շուկաներէն ներս:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ԳՐԱՌՈՒՄՆԵՐ







ՀԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ - ԿԻՂԻԿԵԱՆ ԴՐԱՄԱՇԱՐՔ

Դժուար պիտի ըլլար նկարագրել Հայ-Կիլիկեան դրամաշարքը, առանց նկատի առնելու պատմական կարգ մը պարագաներն ու դէպքերու դասաւորումը եւ առնոց առնչութիւնը՝ զանազան դրամներու հատանման հետ: Հետեւաբար, անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ Հայ-Կիլիկիոյ պատմութեան, զուգահեռ մը ստեղծելով դէպքերու եւ դրամաշարքին միջեւ, րանի որ, պատմութիւնն ու դրամագիտութիւնը կ'ընթանան համընթաց եւ իրար կ'ամբողջացնեն:

Հայ-Կիլիկիան, որ սկիզբ պիտի առնէր 1080 թուականներուն, Բագրատունեաց զարմէն Ռուբէն իշխանին կողմէ Բարձրբերդի մէջ, կրցաւ դիմանալ մինչեւ 1375 եւ իր 295 տարիներու տեւողութեան ընթացքին, սահմաններու ընդլայնումով եւ կծկումով, դէպքերու վերիվայրումներով, պիտի կերտէր մեր պատմութեան ամենափառաւոր շրջաններէն մէկը:

Առ հասարակ ընդունուած է, որ Հայ-Կիլիկիան ունեցած է մօտ 40.000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն, մէկ միլիոն բնակչութեամբ:

Ունեցած է իշխանական շրջան մը, այսինքն մինչեւ 1199, մօտ 120 տարի, ու եօթը իշխաններ, մանաւանդ Թորոս Բ., որոնք հիմը պիտի դնէին Հայ-Կիլիկիոյ ապագայ թագաւորութեան:



Ապա ուրեմն, թագաւորական շրջանը՝ կը սկսի Լեւոն Ա.-ով եւ թագաւորները կը տիրեն 1200-էն 1375, այսինքն մինչեւ Լեւոն Ե.-ի հեռացումը Սիսէն՝ 16.4.1375-ին:

Թագաւորութեան շրջանը իր կարգին կը բաժնուի չորս գերդաստաններու:

Ա.- ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ իր մէջ ունենալով իշխանական շրջանը, կը վերջանայ 1219-ին՝ Լեւոն Ա.-ի մահով: Այս գերդաստանը կը տեւէ 140 տարի:

Բ.- ՀԵԹՈՒՄԵԱՆՅ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ, որ կը սկսի Հեթում Ա.-ով՝ 1224-ին՝ եւ կը վերջանայ Լեւոն Դ.-ով 1342-ին, ուրեմն մօտ 120 տարի:

Գ.- ՆՂՐԻԱՆՆԵՐԸ, որոնք Բարձրբերդի իշխաններէն, շատ հաւանաբար Ռուբինեաններու ազգական, տուն երկու Կոստանդիններ՝ Բ. եւ Գ. եւ որոնք իշխեցին 1344-էն 1373, մօտ 30 տարի:

Դ.- ԼՈՒՋԻՆԵԱՆՆԵՐԸ, որոնք հայ էին իրենց մօր կողմէ յանձինս Կի եւ Լեւոն Ե. թագաւորներուն, որոնք տիրեցին երեք տարի:

Այստեղ՝ պիտի չանդրադառնամ հայ իշխանական շրջանի գրամներուն, որոնք շատ հազուադիւրս են. անոնք նորայայտ են տակաւին եւ վերջնականապէս դասաւորուած չեն: Կարելի է յիշել, թէ բացի Լեւոն Ա.-ի իշխանական շրջանի պղինձ գրամներէն, գտնուած են նաեւ Թորոսի վերագրուած պղինձներ՝ շատ մաշած եւ յաճախ անընթեռնելի վիճակի մէջ:

ԼԵՒՈՆ ԱՌԱՋԻՆ, ԻՇԽԱՆ՝ 1187-1199 ԵՒ ԹԱԳԱՒՈՐ՝ 1199/1200 - 1219

Լեւոն՝ իշխան 1187-էն մինչեւ 1199, ապա թագաւոր՝ մինչեւ 1219, որդին էր Ստեփանէ Իշխանին. իր հօրեղբայրներն էին Մեծն Թորոս Իշխանը եւ մեր մատենագրութեան մէջ անհանդարտ նկարագրով ճանչցուած Մլեհ Իշխանը, որուն իշխանութեան շրջանին, իր մայրը Ռիթա, Լեւոն եւ Ռուբէն իշխաններով միասին, պիտի ապաստանէր Պապեոսնի Բերդը, ուր կը տիրէր իր եղբայրը՝ Վասակ:

Դրամներ կան պղինձէ՝ Լեւոնին իշխանական շրջանէն՝ զանազան մակագրութեամբ. օրինակ, «ԼԵՒՈՆ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐԴԻ ՍՏԵՓԱՆԷԻ»: Բայց դրամագիտական նկատումով հետաքրքրական են իր թագաւորական շրջանին թողարկած դրամները, որոնք Հայ-Կիլիկեան շրջանի դրամաշարքին ամենագեղեցիկ բաժինը կը կազմեն իրենց զանազանութեամբ, արծաթի մաքրութեամբ, դրոշմով եւ մասնաւոր յատկանիշներով:

Իր շրջանը Հայ-Կիլիկիոյ մեծութեան, զօրութեան եւ կեդրոնածիզ վեհապետութեան հմայքին շրջանն է: Իր թագաւորութեան ատեն իրեն թագ զրկած են Գերմանիոյ Կայսրը, Վատիկանի Պապը, Բիւզանդիոյ Կայսրը եւ Եգիպտական Սուլթանը: Այդ շրջանի հմայքին զուգահեռ կ'ընթանան նաեւ իր դրամները. իրմէ ոսկի դրամ մը կայ Վենետիկի Միսթարեաններուն մօտ: Իսկ Հայր Ալիշան «Սիսուան»ի



մէջ կը յիշէ, թէ Վատիկանի թանգարանին մէջ կայ ոսկի կոնք մը՝ որ առհասարակ կը դրուէր թագաւորական հրովարտակներու տակ: Աւելցնեմ անմիջապէս, թէ Հայ-Կիլիկեան շրջանին՝ ոսկեգրամը առատօրէն հատանուած չէ եւ ցարդ ծանօթ դրամներուն թիւը տասը չ'անցնիր, թագաւորութեան 175 տարուայ ամբողջ շրջանին համար, ինչ որ ենթադրել կու տայ, թէ Հայ թագաւորները գուցէ ոսկի դրամ հատանած չեն շրջագայութեան համար, այլ մասնաւոր առիթներով, թերեւս որպէս յիշատակի մետալներ, որոնք բաժնուած են թագադրութեան եւ այլ առիթներով:

ԿՐԿՆԱԴՐԱՄ. - Այս դրամները որոնք սովորական դրամներու կրկնակի մեծութիւնն ունին եւ մօտաւորապէս 5,50 կրամ կը կշռեն, գրեթէ զուտ արծաթէ շինուած, կը ներկայացնեն թագաւորը նստած զահին վրայ՝ որուն երկու ցած թիկունքին վրայ կը տեսնուին մէյ մէկ առիւծի գլուխներ բաց երախով: Թագաւորը ունի մարգարտաշար թագ եւ պտմուճան, որ հաւանաբար ծիրանեգոյն էր: Աջ ձեռքին ունի խաչ մը, իսկ ձախ ձեռքով՝ կը բռնէ շուշանի ծաղիկ մը: Պատկերը առնուած է մագարտաշար շրջանակի մը մէջ, որուն շուրջ կը կարդանք ԹԱԳՐ. (կամ ԹԱԳԱՌՐ) ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ մակագրութիւնը: Դրամին ետեւի մասը կը ներկայանայ առիւծ մը, որ դէպի ձախ կ'ուղղուի, թագապսակ գլուխով եւ մօրուքով, թաթով բռնած է կրկնաթեւ խաչ մը: Շուրջը գրուած է ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ:

Նոյն դրոշմով դրամներ կան՝ միշտ արծաթէ, սակայն աւելի պզտիկ չափով: Կը կշռեն 2,70 - 3,00 կրամ եւ կը կոչուին կէս կրկնադրամներ:

Այս երկու չափով, սակայն միեւնոյն դրոշմով դրամները հազուագիւտ են եւ դրոշմուած՝ միայն Լեւոն Ա.-ի կողմէ: Հետեւաբար, ճիշդ պիտի ըլլար զանոնք նկատել կարճ ժամանակի մը համար դրոշմուած գուցէ յիշատակագրական (commémoratif) առիթով: Կը կարծուի նաեւ, թէ անոնք հատանուած են նոյնիսկ թագադրութեան թուականէն առաջ, այսինքն, երբ Ֆրեսերիք Պարպրուսի խոստման վրայ, Լեւոն Ա. արդէն ինքզինք գործնականօրէն (de facto) թագաւոր կը նկատէր Կիլիկիոյ Պետութեան:

Առիւծը որպէս պետական զինանշան կամ խորհրդանիշ կը գտնենք Հայ-Կիլիկեան շրջանի բոլոր դրամներուն վրայ, Լեւոն Ա.-էն սկսեալ որպէս պետական նուիրականացած զինանշան: Երբեմն մէկ առիւծ կամ երբեմն երկու, որոնք զանազան ձեւերու մէջ կը ներկայանան, քալող կամ ոտքի եւ դէմ յանդիման: Եթէ առիւծի գաղափարը Բագրատունեաց շրջանէն մնացած յիշատակ մը չէ, ապա ուրեմն զայն կարելի է նկատել անպայմանօրէն՝ Լեւոն Ա.-ի անուան հետ առնչութիւն ունեցող յատկանիշ, քանի որ Լեւոն կամ leon, leontis լատիներէն առիւծ կը նշանակէ եւ շատ հաւանական պիտի ըլլար ենթադրել, թէ Լեւոն զայն գործած է թէ՛ իբրեւ իր անունը յաւերժացնող պետական խորհրդանիշ որ ծագում կ'առնէր իր թագաւորութեամբ եւ թէ քաջութիւնն ու վեհանձնութիւնը պատկերացնող որպէս ինքնուշոյն զինանշան, զոր իր յաջորդները պիտի գործածէին անվերապահօրէն միջեւ վերջին թագաւորը՝ Լեւոն Ե.:

Այս դրամին մէջ պզտիկ բառ մը կայ, որուն երբեմն ամբողջովին եւ երբեմն կրճատուած ձեւով պիտի հանդիպինք շատ յաճախ Հայ-Կիլիկեան թագաւորներու դրամներուն վրայ: Այդ բառը ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ մակագրութիւնն է:

Հայ Կիլիկիոյ վերջին Լեւոն Ե. դժբախտ թագաւորը, որուն իշխանութիւնը Սիս քաղաքէն անդին չէր անցներ եւ նոյնիսկ վերջին ամիսներուն, կը սահմանադուէր Սիսի միջնաբերդին պարիսպներուն շրջագիծով միայն, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ մակագրութեամբ գործածած է իր խղճալի դրամներուն վրայ, որոնց բաղադրութիւնն ու կշիւրը ակնբախօրէն արդէն կը փաստեն թագաւորութեան ամենայետին հետքին նշոյլը:

Այս բանը երբեք նիւթ չեն ըրած ո՛չ օտար եւ ո՛չ ալ Հայ դրամագէտները. այստեղ, եթէ թոյլ տրուի, պիտի առաջարկեմ անձնական տեսակէտ մը:

Պահ մը ուրեմն պիտի վերադառնամ պատմական ա՛յն ազդակներուն, որոնք կը բնորոշեն Ռուբինեան հարստութեան ծագման միջավայրը եւ պայմանները:

Պատմականօրէն որո՛չ է թէ Լեւոն թագաւորի նման հեղինակաւոր եւ ազդեցիկ վեհապետի մը օրով բաժանում կամ կեղբորնախոյս ձգտումներ գոյութիւն չունէին Կիլիկիոյ մէջ՝



ուր հայութիւնը կը ներկայանար միատարր եւ միահամուռ՝ 140 տարուայ Ռուբինեան պետական ճիգերով: Ուրեմն ԱՄԵՆԱՅՆ-ի իմաստը փնտռելու է այլ մարզերու մէջ, այլ ծրագիրներու յղացման ծախքերուն մէջ եւ այլ քաղաքական հեռանկարներու թելադրութեան ակնոցով, բաներ՝ որոնք բոլորն ալ կրնան յարմարիլ Լեւոնի նման յանդուգն, քաջ եւ նախաձեռնող վեհապետի մը:

Պիտի վերադառնանք մօտ 130 տարի ետ եւ Ռուբինեան Հարստութեան հաստատման թուականը կանխող 1071-ին, երբ Փոքր Ասիոյ վրայ միահեծան իշխած եւ սակայն ներքնապէս փտած Բիւզանդական Կայսրութիւնը կը քայքայուէր Մանազկերտի նշանաւոր պատերազմով: Նոր եւ առոյգ ժողովուրդներ՝ Ասիական տափաստաններէն՝ Ը. դարէն սկսեալ արդէն կը ձեռնէին Փոքր Ասիոյ դռները, երբեմն խաղաղ եւ երբեմն բուռն թափանցումներով: Սելճուքներն էին անոնք, որոնք անակնկալ յաղթանակով փախուստի կը մատնէին Բիւզանդական Ռոմանոս կոչուած բանակը՝ որ խառնիճաղանճ զօրակոյտ մըն էր վարձկան բազմութիւններու: Նոյնիսկ Ռոմանոս կայսրը կ'իյնար գերի եւ Բիւզանդական Կայսրութիւնը կը կձկուէր ամօթալի սահմաններու մէջ:

Բիւզանդական Կայսրութեան Արեւելեան սահմանը՝ որպէս պատուար, գոյութիւն ունէին երեք հայկական թագաւորութիւններ, Կարսի եւ Անիի Բագրատունիները՝ Հիւսիս, եւ Արծրունիները՝ Վանի շրջակայքը, ուրեմն՝ Հարաւակողմը: Բիւզանդիոն իր անհեռատես քաղաքականութեամբ ուզեց քանդել այդ պատուարները, քանդելով նոյնիսկ իր բուն ապահովութիւնը: Ըլլա՛յ դիւնադիտական, ըլլա՛յ քաղաքական նենգութեամբ եւ զինուորական ճնշումներով, տկարացուց հայկական այդ երեք թագաւորութիւնները, որոնք, չկարենալով երկու ճակատներէն եկող ճնշումներուն դիմանալ, ստիպուեցան լքել իրենց կալուածները հայրենական, յանձնել զանոնք Բիւզանդիոնի, անոնց փոխարէն ընդունելով այլ կալուածներ՝ Փոքր Ասիոյ խորքը: Այսպէս Արծրունիք 1021-ին լքեցին իրենց թագաւորութիւնը եւ հաստատուեցան Սեբաստիոյ շուրջ, այսինքն Սվազ, որ հե-

տազային կարեւոր կեդրոն մը պիտի ըլլար Սելճուքեան Կայսրութեան համար:

Իսկ 1045-ին, Անիի անկումէն յետոյ, Գազիկ Աշոտեան կը հաստատուէր Պեղու քաղաքը, մինչ Գազիկ Աբրասեան, Կարսի թագաւոր, կը հաստատուէր Ծամնդաւ-Կոմանա:

Հայկական տարրը, ուրեմն, զօրաւոր շրջաններ ունէր նաեւ այլ կեդրոններու շուրջ, որոնք կ'իյնային Կիլիկիոյ Արեւելեան երկրամասին մէջ եւ յաճախ սահմանին: Անիկա թէեւ եկուոր, սակայն հիմնուած էր շատ աւելի հին ժամանակներէ հոն հաստատուած հայկական խաւերու վրայ, որոնք մեր Արտաշէս Ա. թագաւորին օրէն սկսեալ, առիթ պիտի տային անոր պաշտօնակից Զարեհ արքային հիմնելու Ծոփքի հայկական թագաւորութիւնը, զոր հետազային Տիգրան Մեծ միացուց իր կայսրութեան: Հոն հայեր յիշուած են Դ. դարուն Ոսկերերանի կողմէ: Մեծ թիւով հայեր կ'ապրէին արաբական զրաւման շրջանին է. Ը. Թ. եւ Ժ. դարերուն: Հետեւաբար հայկական կեդրոններու ստեղծումը բնական երեւոյթ մը նկատելի գատ, հոն կը տեսնենք նաեւ բռնկումը ազգային ծրագիրներու, անկախ պետականութեան ձգտումով, որուն կերտիչներուն ամենափայլունը կը հանդիսանայ մեր պատմութեան մէջ տակաւին չվերազնահատուած մեծ դէմք մը՝ յանձինս Փիլարտոս Վարաժնունիին որուն մականին ենթարկուեցան՝ պահ մը, Անտիոքէն մինչեւ Տարօնի շրջանները երկարող երկրամասեր: Ան ձախողեցաւ՝ Սասնոյ իշխաններուն կեդրոնախոյս ըլլալուն, իր ժամանակին համար չհասկցուած եւ գուցէ տակաւին կանխահաս իր ըմբռնումներուն համար ու նաեւ իր հարազատ զաւակին դաւաճանութեանը պատճառով՝ Անտիոքի մէջ: Պէտք է աւելցնել թէ իր ժամանակաշրջանը եղաւ կարճ՝ պետական նման ընդարձակ ծրագիր մը իրականացնելու համար եւ գուցէ իր անհամբերութեան պատճառով, ան երբեմն ձեռք առաւ բիրտ միջոցներ՝ որոնք եւս նպաստեցին իր ձախողութեան: Այդ միեւնոյն ժամանակաշրջանին կը գտնենք նաեւ հայ իշխաններ՝ որոնք ցաւ կը զգային այս բոլորին համար. օրինակ.



- ԳԱԲՐԻԷԼ ԻՇԽԱՆ
- ԳՈՂ ՎԱՍԻԼ
- ԹԱԹՈՒԼ
- ԹՈՐՈՍ
- ԹՈՌՆԻԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
- ԽԱԶԱՏՈՒՐ ԻՇԽԱՆ
- ԱՊԻՐԱՏՆԵՐԸ
- ՀԱՍԱՆ ԱՄԻՏ ԱՊԸԼՂԱՐԻՊ
- ՕՇԻՆ ԳԱՆՁԱԿԵՑԻ
- ՍՄԲԱՏ, ԲԱԿՈՒՐԱՆ ԵՆ ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆՆԵՐԸ
- ՌՈՒԲԷՆ ԻՇԽԱՆ
- Մալաթիոյ մէջ:
- Քեսուանի եւ Բերդաւանի շրջաններուն:
- Մարաշի մէջ:
- Եղեատիոյ մէջ:
- Տարօնի մէջ:
- Իսաւարիոյ մէջ:
- Մոփքի մէջ եւ Տլուքի շրջանը:
- Տարօնի եւ Մսիսի մէջ:
- Լամբրոնի մէջ:
- Պապիոտնի մէջ:
- Բարձրբերդի մէջ:

Ուրեմն այն ընդարձակ երկրամասը որ աշխարհագրական կերպով կը կոչուի Զահանի գաւառ, Տարօնն ու Մոփքը ունենալով որպէս Արեւելեան շրջան՝ մօտ Վասպուրականին, եւ Կիլիկիան՝ որպէս Արեւմտեան սահման, Փիլարտոսի մաքին մէջ, ընդարձակուելով դէպի Հարաւ եւ մինչեւ Անտիօք, պիտի կազմէր Հայկական Պետութեան սահմանները:

Բայց այդ ծրագիրը ձախողեցաւ: Ձախողեցան նաեւ վերոյիշեալ իշխանները՝ պահելու իրենց տիրոյթը: Միակ յաջողութիւն գտնողը պիտի ըլլար Ռուբէն Իշխանը Բարձրբերդի մէջ, 1080-ին հիմնելով խարի՛սիսը նորակառոյց առոյգ նոր պետութեան, Հայ-Կիլիկիոյ:

Ուրեմն Հայ-Կիլիկիան հայկական դիմագիծ պիտի չստանար միայն Կիլիկեան շրջանին եւ Մեծն Զարդադրեւի շրջանէն, այսինքն՝ Ք.Ա. Բ. դարէն սկսեալ: Ան Հայ Պետականութեան օրրանին սահմաններէն ներս կը մնար. գուցէ աւելորդ պիտի չըլլար նաեւ ըսել թէ ըստ ներկայ պատմագիտական տուեալներու, ան եղած է նաեւ կայքը Արմէններու, որոնք Փոռագեացոց հետ համակեցութեան շրջանէ մը յետոյ, պիտի յառաջանային դէպի Արեւելք, դէպի մեր պատմական Հայաստանի սահմանները:

Եւ անպայմանօրէն անբնական պիտի չթուէր այն վարկածը, թէ Հայ-Կիլիկիոյ բոլոր խաւերէն ներս, ժողովուրդի՛ն մէջ, վառ կը մնար, — Բագրատունիներու անկումէն վերջ, — մինչեւ հեռաւոր վայրերը մայր հայրենիքին, տեսիլք մը որ սերունդներու ընթացքին, ժողովուրդի զգացումներու եւ սրտի զարկերու կշռոյթով կռանուած, զօրացած՝ կը դառնար կարգախօս, նպատակ, եւ ապա պետական ծրագիր՝ Սիսէն Մասիս ինկող կամուրջի մը ծիածանումով: Ու ահա այդ ծրագիրը կը դառնար տեսակ մը հաւատք, սեւեռում, նոյնիսկ ձգտո՛ւմ, որուն առաջին արձագանգը կը հանդիսանար նոյնինքն Լեւոն Ա. իր դրամներով ու գայն կը կտակէր իր յաջորդներուն որպէս պետական ժառանգ, եւ անմոռանալի աւանդ, մանաւանդ որ իր շրջանին է որ կը համընկնին նաեւ, Զաքարեան եղբայրներու առաջնորդութեամբ, հայ վրացական բանակներու յառաջխաղացումը եւ յաղթական դնացքը, որոնք քառորդ դար ամբողջ, նոր յոյսեր ներշնչեցին Հայաստանի հայութեան՝ հաւանական վերականգնումի մը մասին:

Ուրեմն Լեւոն Ա.—ի դրամները՝ «ԱՄԵՆԱՅՆ» բառի մակադրութեամբ, գալիք սերունդներուն համար կը պարունակէին ազգային եւ պետական պատգամ մը՝ ամբողջ հայկական աշխարհամասին վերակերտման ի խնդիր:

### ՕՄՄԱՆ ԴՐԱՄ

Յիշեցնենք թէ այս դրամները հատանուած են Լեւոն Ա.—ի թագաւոր օժման շրջանին, Տարսոնի մէջ՝ 1199 Յունուար 6-ին, եւ իրենց հազուագիւտ հանգամանքը մեզի խորհիլ կուտայ թէ չեն շարունակուած ընդհանուր շրջանառութեան համար, այլ շատ հաւանաբար սոսկ յիշատակագրական (commémoratif) քնոյթ ունին: Անոնց վրայ կը տեսնուի Քրիստոս՝ օրհնողի դիրքին մէջ, եւ թագաւորը ծունկի՝ խոնարհաբար, իր թագաւորական կարգը ստացողի դիրքով: Վերը կայ աղանակերպ գծագրութիւն մը՝ որ կրնայ Սուրբ Հոգին կամ աստուածային օրհնութիւն եւ կամ երկնային խորհուրդ մը



պատկերացնել: Երբեմն՝ աղանիի տեղ կայ երկինքէն իջնող ճաճանչային ճառագայթներու պատկերաւորումը, իսկ ետեւը, միշտ գոյութիւն ունի կրկնաթեւ բաշով առիւծ՝ դէպի աջ գնացքով: Այս յղացումը ոչինչ ունի մասնաւորապէս հայկական: Ասիկա կրկնութիւնն է Վենետիկեան ducat կոչուող դրամներու, որոնք այդ շրջանին, շատ ընդհանրացած դրամներ էին, իսկ օժման առիթը օգտագործուած է Լեւոն Ա. -ի կողմէ, ըստ արեւելեան սովորութեանց՝ թագաւորական տիտղոսին Աստուածային շնորհք մը ըլլալու հանգամանքը շեշտելու, եւ իր դիրքը ամրացնելու համար զանգուածներուն մօտ: Արդէն, իր դրամներուն վրայ կը կարդացուի ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ ըլլալու հանգամանքը:

Ունին սովորական դրամներու կշիռքը, այսինքն 2,70 կրամէն 3 կրամ եւ 97-98 հարազատութեամբ արծաթ:

Սովորական դրամներ՝ 2,80-էն մինչեւ 3,00 կրամ. ասոնք ամէնէն սովորական դրամներն են: Կրկնադրամի դրոշմով, թագաւոր հանդիպահայեաց եւ դահի վրայ նստած, աջ ձեռքին խաչ մը՝ իր քրիստոնեայ թագաւոր մը ըլլալու հանգամանքը շեշտող, իսկ ձախ ձեռքին մէջ՝ շուշան մը ի նշան խաղաղասիրութեան եւ սիրոյ. ետեւը՝ սովորական դրոշմն է երկու առիւծներ, կանգուն, իրենց կռնակները իրարու դարձուցած, եւ սակայն, իրենց գլուխը դարձուցած՝ կը դիտեն իրենց մէջտեղը գտնուող կրկնաթեւ խաչը: Հազուադիւրս են սակայն մէկ առիւծով դրամները, որոնք կրկնադրամներու կը նմանին եւ հաւանաբար տպուած են թագաւորութեան սկզբնաւորութեան:

## ՊՂԻՆԶ

Լեւոնի պղինձ դրամները աւելի հետաքրքրական են իրենց մեծութեամբ եւ արուեստով: Հոն՝ թագաւորին եւ առիւծին իմաստի յարաբերութիւնը շեշտուած է դրոշմի կերպարով, ու կը յիշուի հատանման վայրը, «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ»: Այս դրամները կը կոչուին ձանգ կամ ձանկ եւ կը կշռեն 7-էն 9 կրամ:

## LEO DEI GRATIA - REX ARMENIOR

Ասիկա տարօրինակ եւ եղակի դրամ մըն է, որմէ ծանօթ են միայն չորս օրինակներ: Պզտիկարծաթախառն պղինձով եւ չափազանց թեթեւ Bocta-է այս դրամը ունի լատիներէն վերատառութիւն եւ ան շատ նման է այդ շրջանի խաչակիր դրամներու ընդհանուր տեսքին եւ արուեստին: Ընդհանրապէս այս դրամին հատանումը կապուած է Լեւոն թագաւորի քաղաքական եւ զինուորական միջամտութեանց՝ Անտիոքի հարցերուն մէջ, պաշտպանելու համար իր եղբոր՝ Ռուբէնին թորան, այսինքն՝ Ռէմոնտ-Ռուբէնի բոլոր իրաւունքները Անտիոքի մէջ: Ռուբէն զաւակն էր Ալիծ իշխանուհիին, որ ամուսնացած էր խաչակիր իշխանի մը հետ եւ որուն իրաւասութեանց մէջ կ'իյնար Անտիոք քաղաքը: Ռէմոնտ-Ռուբէնի գահաժառանգի իրաւունքները անտեսել ուզեց Պոհեմոնտ Գ. որ Ռէմոնտ-Ռուբէնի հօրեղբայրն էր: Ու տեղի ունեցան երկարատեւ պատերազմներ: Լեւոն պաշտպանելու համար իր եղբոր թորան իրաւունքները եւ միեւնոյն ատեն ընդարձակելու համար իր պետութեան սահմանները, քաջալերուած Անտիոքի բնակիչներէն եւ կարգ մը ազդեցիկ իշխաններէ, երեք անգամ Անտիոքը գրաւեց, այսինքն՝ 1203, 1208 եւ 1216 թուականներուն: Կը կարծուի թէ, սակայն, միջնաբերդը դիմադրած է եւ չէ յանձնուած: Հետագային Ռէմոնտ-Ռուբէն Անտիոքի գահին վրայ հաստատուելէ յետոյ, ապերախտ կը գտնուի. ան պիտի ելլէր իր մեծ հօրեղբոր դէմ եւ ուրեմն պիտի զրկուէր անոր պաշտպանութենէն: Ասիկա պատճառ պիտի դառնար որ 1216-ին՝ Ռուբէն երրորդ անգամ ըլլալով վախճուէր Անտիոքէն, եւ վերջնականապէ՛ս:

Ուրեմն դրամագէտներ կ'ենթադրէին, որ այս լատինատառ դրամները պատրաստուած են Լեւոնի կողմէ Անտիոքի գրաւման հեռանկարով կամ հոն գտնուած միջոցին: Այս վարկածը կարելի է սակայն վիճելի նկատել անոր համար, որ եթէ նպատակը միայն Ռէմոնտ-Ռուբէնը հաստատել էր Անտիոքի մէջ, Լեւոն պէտք չուներ իր անուամբ դրամ դրոշմելու, քանի որ Ռէմոնտ-Ռուբէն իր անուամբ արդէն դրամ հատանած էր օրինականօրէն: Եթէ Լեւոն Անտիոքը կը գրաւէր Հայ-Կիլիկ-



իոյ կցելու մտազրույթեամբ, ուրեմն պէտք չունէր նոր դրամ գրոշմելու եւ իր սեփական դրամներն ալ կրնային հոն շրջագայիլ: Իսկ եթէ այս դրամները միայն Անտիոքի համար կը գրոշմուին, այն ատեն փոխանակ Rex Armenarum գրոշմելու կրնար գրոշմել Rex Antiochia, ինչպէս բրած են ուրիշ իշխաններ, իրենց իրաւունքը օրինականացնելու համար Անտիոքի վրայ:

Ուրեմն, կարելի է առաւելաբար ենթադրել թէ Լեւոն լատինատառ այս դրամները գրոշմած է իր թագադրութեան ընթացքին մասնաւորապէս, պետական նկատումներով, չեչտելու եւ օտարներու առջեւ իրաւականօրէն հիմնաւորելու համար իր թագաւորի հանգամանքը, Գերմանիոյ, Հունգարիոյ թագաւորներուն եւ Պապին առջեւ: Պատմութենէն կը տեսնենք թէ ղիւանադիտական ճկունութիւնը նուազագոյն արժանիքը չէ եղած ձեռներէց Լեւոն Ա. թագաւորին:

Լեւոն Ա. մեռաւ առանց արու գաւակ ձգելու: Անոր միակ աղջիկը պիտի ամուսնանար Անտիոքի իշխան Պոհեմոնտի գաւակին Ֆիլիբի հետ, որ չորս տարի իշխեց, պետական գանձը գողցաւ եւ պատժուեցաւ հայ Ազգային կուսակցութեան կողմէ: Անկէ դրամ չունինք եւ տարակուսելի է որ դրամ հատանած ըլլայ:

### ՀԵԹՈՒՄ Ա. ԵՒ ԶԱՊԷԼ (1226 - 1270)

Նոր արքայատան սկիզբ:

Հայ-կիլիկեան գահը մօտ վեց տարիներու բաց մը ունի անցնելէ առաջ յաջորդ հայ վեհապետին, այսինքն՝ Հեթում Ա. թագաւորին որ իշխեց մօտաւորապէս 45 տարի: Ան բացառիկ թագաւոր մը եղաւ իր ղիւանադիտական եւ քաղաքական ճկունութեամբ ու ի յայտ բերաւ պատասխանատու վեհապետի մը բոլոր յատկանիշները: Անիկա երկրորդ որդին էր Կոստանդին Պայլի, այսինքն հայկական բանակներու ընդհանուր զօրապետին: Իսկ Կոստանդին Պայլը, իր կարգին, կը սերէր Պապիոնի բերդի իշխանական տոհմէն, որդի Վասակի, որուն քոյրը՝ Ռիթա՝ կինն էր Ստեֆանի իշխանին, այսինքն հայրը Լեւոն Ա. թագաւորին. հետեւաբար Կոստանդին Պայլը Լեւոն թագաւորի մօրեղբօրը որդին էր:

Կոստանդին Պայլ իր տղան Հեթումը ամուսնացուց թագաժառանգ Զապէլին հետ, որ այրի մնացած էր Ֆիլիբի սպաննումով: Որով՝ Զապէլ եւ Հեթում զարմիկներ էին՝ երրորդ կարգի:

ԱՐԾԱԹ

Հեթումով կը սկսին շարք մը նոր դրամներ, որոնց վրայ կը տեսնենք թագաւորական զոյգին դրոշմը: Հին հայկական



դրամագիտական շարքին մէջ, ասիկա երկրորդ պարագան է, ուր՝ կնոջ մը դրոշմը կը տեսնուի դրամի վրայ, առաջինն ըլլալով Տիգրան Ե.ի կնոջ՝ Երատոյի բացառիկ դրամը:

Ոմանք կը խորհին թէ՛ Հեթում որ թագաւորական դարմէ չէր, ինքզինք ստիպուած նկատած է դնելու՝ Չապէլին անունը եւ դրոշմ՝ դրամաշարքի մը վրայ, յայտարարելու համար թէ Չապէլ կը մնար իրական թագաւորական ժառանգը, իսկ ինք կը վերցնէր միակ թագակից, կամ թագուհիին ամուսին ըլլալու համեստ դերը: Կը պնդուի թէ շատ մեծ իշխան էր. համայն էր Ռուբինեանց իշխաններուն եւ գերդաստանին: Որպէսզի դիւրութեամբ ընկալուէր արքայական փոխանցում մը Ռուբինեանցէն դէպի Հեթումեանց, Չապէլ կը մնար միակ խորհրդանիշը իրաւական ժառանգորդի իրաւասութիւններով Հայ-Կիլիկեան թագաւորական գահին: Բնական է մատենագիտական ոչ մէկ փաստ ունինք նման վարկած մը մշակելու, ասիկա արդիւնք է զուտ զգացական թելադրութեան մը:

Երբ նկատի ունենանք Հեթումին պատմական շրջանը, իր ծանօթ մանրամասնութիւններով, անպայմանօրէն կը համոզուինք թէ այս մեծ վեհապետին երկարամեայ թագաւորութիւնը եղած է դիւանագիտական եւ քաղաքատնտեսական բացառիկ գործունէութեան շրջան մը, որուն ընթացքին անխոնջ վեհապետը չէ ընկրկած նոյնիսկ, երկու պատեհութիւններով, մինչեւ թաթարներու Խանին կեդրոնատեղին երթալու, վտանգաւոր ճամբորդութիւններով կերտելու համար դաշինքներ, որոնց յաջողութիւնը կրնար գուցէ ամբողջ Փոքր Ասիոյ եւ նոյնիսկ Արեւելքի պատմութիւնը փոխել, եթէ Արեւմուտքը հասկցած ըլլար ա՛յն ինչ որ մեր Հեթում թագաւորը լիովին կ'ըմբռնէր եւ կ'աշխատէր իր պզտիկ, սահմանափակ միջոցներով իրագործելու:

1071-ի Սելճուքեան յաղթանակէն վերջ՝ Մանազկերտի մէջ, Փոքր Ասիան գրեթէ ամբողջովին ինկած էր Սելճուքեան տիրապետութեան տակ: Բիւզանդիոնը ամփոփուած էր համեստ երկու երկրամասերու, այսինքն՝ Պոլսոյ եւ Տրապիզոնի շրջաններուն մէջ: Հայ-Կիլիկիան ծուարած էր Հարաւային մասի Հայկական ծոցին մէջ: Եթէ գինուորական նուաճումները հեռու կը մնային հայկական հեռանկարներէն, սակայն

Այստի նաւահանգիստի զարգացումը եւ դիրքը թոյլ կուտային զարգացնել վաճառականութիւնը եւ մանաւանդ տարանցիկ վաճառականութիւնը:

Հայերը բացառիկ դիրք ունէին Սելճուքեան տնտեսական կեանքին մէջ եւ ընդունուած է որ Սելճուքեան գլխաւոր կառոյցներու ոճը հայկական ներշնչում էր եւ գործ: Հայոց ձեռքն էին գորգագործութիւնը, մուշտակագործութիւնը, մետաղագործութիւնը եւ ասիկա՝ շօշափելի կերպով, մանաւանդ Սվազ եւ այլ ոստաններու մէջ (Արծրունեաց Կեդրոն), որոնք արդէն գլխաւոր քաղաքները դարձած էին Սելճուքեան կայսրութեան:

Ուրեմն, անկախ ներքին ճկուն դիւանագիտական ցուցադրութեան մը մտահոգութենէն, գրաւելու համար հայ գանգուածներու համակրանքը, Հեթում դրոշմած է իր եւ Չապէլի դրոշմով դրամները՝ առաւելաբար նմանողութեամբ այդ շրջանին բիւզանդական դրամներու, տնտեսական եւ դրամական փոխանակութեան դիւրութիւններու նպատակով, որովհետեւ միջին դարուն, եւ Հայ-Կիլիկեան պետական կառոյցին մէջ, շատ դժուար էր որ նկատի առնուէր, իսկապէ՛ս, ժողովուրդին հայեացքները՝ քաղաքական կամ պետական մարզանքներու ընթացքին: Չեմ կարծեր, թէ թագուհի Չապէլին տեսակէտը հարցուցին երբ իր առաջին ամուսինը Ֆիլիթ թագաւորը տարիներով բանտարկեցին. եւ ոչ ալ իր հրամանին սպասեցին զայն սպաննելու: Ընդհակառակը, մեր մատենագրութեան մէջ յիշուած է թէ ան մասնաւոր կերպով շեշտուած սէր ունէր իր երիտասարդ ամուսնոյն հանդէպ: Ոչ ալ ժողովրդական գանգուածները յուզուեցան կամ կրնային յուզուիլ: Պետական եւ ազգային շահերու կշիռքը եւ լուծումը կախում ունէին տուեալ շրջանի մը մէջ տիրող եւ ազդեցիկ իշխաններէն կամ զինուորական դասակարգէն:

Չապէլ եղաւ մեծ թագուհի մը որ իր մարդասիրութեամբ եւ իր մարդասիրական հիմնարկներով գրաւեց բոլորին սիրտերը: Եւ միշտ մնալով վարկածներու սահմանին մէջ, պիտի ուզէինք անշուշտ տեսնել, դրամներուն միջոցով, ամբողջ ազգի մը եւ իր թագաւորին յարգանքի տուրքը՝ իր արժա-







Այս դիւրաձեւ եզրակացութեան ընդդիմացան հայ դրամագէտներ, դրողուած՝ ազգային զգացումներէ: Ոմանք ալ ցոյց տուին աւելի գաղջ վերաբերում, տատանելով ազգային զգացական եւ ճորտական ընկալեալ տուեալներու միջեւ: Ընդհանրապէս սակայն, երկու տեսակէտներն ալ ներշնչուած չէին պատմագիտական եւ ընկերա-տնտեսական միջավայրի մանրակրկիտ ուսումնասիրութենէն:

Եթէ երկլեզու այս դրամը արտաքնապէս ունի ճորտական եզրակացութիւններու տանող պատճառ մը — հիմնուելով գոյութիւն ունեցող նմանօրինակ պարագաներու վրայ, ինչպէս Օրթուքիտ, Չանկիտ, էյուպիտ եւ ծայրածաւալ արաբական կայսրութեան զանազան մասերուն մէջ իշխող էմիրներու, փոխարքաներու եւ կիսանկախ ու ըմբոստ սուլթաններու օրինակը, պէտք է ըսել թէ Հեթումի պարագան հիմնականօրէն կը տարբերի եւ որեւէ առնչութիւն չունի ճորտական դրութեան հետ:

Ահաւասիկ քանի մը փաստեր այդ մասին.

Ա.— Եթէ աչքի առաջ ունենանք այդ շրջանէն Սելճուք թագաւորի մը դրամը, որ որեւէ կապակցութիւն չունի Հեթումի հետ, պիտի նշմարենք, թէ նոյն մեծութեամբ այդ արծաթ դրամին վրայ, Սելճուք վեհապետը կը ներկայանայ գրեթէ նոյն կերպով, ձիու վրայ, որ կ'ընթանայ նոյն ուղղութեամբ: Միակ ակնբախ տարբերութիւնը վեհապետին գլխուն ետեւ գտնուող մահիկն է՝ որ Հեթումի պարագային խաչ մըն է: Երկու դրամներուն նմանութիւնը այնքան ամբողջական է, որ առաջին ակնարկով անիրագեկ քննող մը պիտի շփոթէր զանոնք: Արդ՝ որքան կարելի է հաւատալ որ ճորտի մը եւ ճորտատիրոջ մը միջեւ, միջին դարուն մէջ, յայնամտութիւնն ու ներոգամտութիւնը հասնէին այն աստիճանի որ ճորտատէրը թոյլատրէր իր ճորտին, իր սեփական դրամին նմանողութեամբ դրամ հատանելու եւ ան ալ՝ վեհապետական նոյն պերճանքով եւ նոյն աստիճան խրոխտ կերպարով:

Բ.— Հեթում այս դրամները կը շարունակէ հատանել մինչեւ 643 թուականը կամ մեր թուականութեան 1245-1236-ը:

Սակայն մենք գիտենք պատմութենէն, որ 1243-ին, այսինքն՝ երկու-երեք տարի առաջ, սելճուքները մեծ պարտութիւն մը կրեր էին Մոնկոլ-թաթարներէն եւ բոլորովին քայքայուած: Հեթում թագաւոր բարեկամ էր թաթարներուն ըստ Քարաքորումի դաշնագրին: Հարց կը ծագի ուրեմն թէ ինչո՞ւ Հեթում պիտի շարունակէր դրամ հատանել Սելճուք վեհապետի մը անունով եթէ ճորտ էր, ան ալ անոր պարտութենէն մինչեւ երկու կամ երեք տարիներ յետոյ, մանաւանդ երբ յաղթական թաթարները իր բարեկամներն էին:

Ինչպէս ըսինք, Հեթում եղած է Հայ-Կիլիկիոյ ամենէն ճկուն եւ խորագէտ դիւանագէտ վեհապետներէն մին: Իրեն համար անհրաժեշտ էր զարկ տալ, երկրին տնտեսական բարգաւաճման: Կիլիկիոյ դիրքը եւ իր Այաս նաւահանգիստը հրաշալի շնարաւորութիւններ կ'ընծայէին, երկրին հարլստութեան արտածումին հետ մէկտեղ, տարանցիկ վաճառականութեան, որուն դռնակները կ'երկարէին Արաբիայէն եւ Հնդկաստանէն մինչեւ Միջերկրական, Այասի ճամբով: Իսկ Այասէն կ'երկարէին մինչեւ Բիւզանդիոն եւ Սել ծովի նաւահանգիստները ու մէկ կողմէն դէպի Խրիմ եւ միւս կողմէն դէպի Պալքանները:

Հայերը մօտ 200 տարիէ ի վեր, այսինքն՝ Վասպուրականի ու Անիի եւ Կարսի պարպումէն յետոյ, հաստատուած էին Սելճուքեան կայսրութեան մէջ, մանաւանդ, Սվազ, Իկոնիա, Էրզրում Սել ծովեան սահմանները եւ ամէնուրեք: Սելճուքեան պատմաբանները բոլորն ալ կ'ընդունին թէ Սելճուքեան վաճառականութիւնը, կեդրոնացած էր հայ հնարամիտ եւ ուշիմ առեւտրականներու, տարանցիկ վաճառականութեան մասնագէտներու, եւ կարաւանները կազմակերպելու ճարպիկ ու ատակ մեր ժողովուրդին ձեռքերուն մէջ:

Երբ իր տնտեսական յարաբերութիւնները կը զարգացնէր Բիւզանդիոնի հետ, Հեթում՝ Constantin Dukas-ի եւ Eudocca-ի նմանող իր Չապէլ-Հեթում դրամները հատանեց անընդհատ, մինչեւ իր կեանքի վերջին տարին: Անոնք ընդունուած եւ ապահով փոխանակութեան միջոց մը դարձած էին, Հայ-Կիլիկիոյ եւ Բիւզանդիոնի առեւտրական յարաբերութեանց մարդին մէջ:



Երբ իր ուշադրութիւնը կեդրոնացաւ Սելճուքեան ընդարձակ շուկային վրայ, իր երկչեզուեան դրամները, որոնք այնքան նմանաձեւ էին արտաքինով՝ կարգալ չգիտցող սելճուք զանգուածներուն համար, դարձան փնտրուած միջոց մը՝ փոխանակութեան, որուն սատար դարձան անշուշտ նաեւ Սելճուք երկրամասին մէջ գործող հայ զանգուածները եւ օգնեցին անոր լայն շրջագայութեան՝ մեծ կայսրութեան մը սահմաններուն մէջ:

Վերջապէս, Հեթում թագաւոր՝ իր այս դրամներով՝ բարեկամական եւ բարի դրացիական վերաբերում մըն ալ ցոյց կու տար:

### ՈՍԿԻ ԴՐԱՄ - ՀԵԹՈՒՄ-ԼԵՒՈՆ

1266-ին հայկական բանակները կորսնցուցին ճակատագրական մարտ մը Մառիի կիրճին մօտ կռուելով Պայպարս Պունտուքտար եգիպտական Սուլթանին դէմ: Այս պարտութիւնը աղիտալի սկիզբ մը եղաւ Կիլիկիոյ քայքայման: Պատերազմի ընթացքին՝ նահատակուեցաւ արքայորդի Թորոս իշխանը, իսկ Լեւոն ինկաւ գերի եւ մնաց Փահիրէ ազատագրուեցաւ 1268-ին եւ արքայ Հեթում անոր Պարոն իշխան թագաւորութեան տիտղոսը տուաւ: Լեւոն իշխան թագ չկրեց իր հօրը ողջութեան մինչեւ անոր սքեմաւորումը: Կայ ոսկի դրամ մը սակայն, որուն առաջինը գտնուած է Փահիրէի Զակագիկ աւանին մէջ. այդ սոկեղրամին մէկ կողմը Հեթումի դրոշմը կայ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ մակագրութեամբ: Շատ հաւանաբար, Հեթումի վերջին օրերուն հատանուած դրամ մըն է ասիկա, երբ գահը գործնականապէս անցած էր իր զաւակին՝ Լեւոնի:

Այս դրամը կը գտնուի Վենետիկի Միսիթարեաններուն մօտ:

### ԼԵՒՈՆ Բ. (1269-1289)

Քաղաքական բազմաշփոթ շրջան մը պիտի սկսէր Լեւոն Բ.-ով, երբ երկու մեծ տէրութիւններ, թաթարներն ու եգիպտոսի Մեմլուք Սուլթանները պիտի պայքարէին Արեւելքի տիրակալութեան համար: Կիլիկիոյ առջեւ կը բացւէր քաղաքական տագնապալի շրջան մը զայն մէկ կամ միւս կողմը հակել տալու համար: Թաթարական դաշնակցութեան պատճառով երկիրը յաճախ պիտի քանդուէր: Եգիպտոսի Մեմլուքները քանիցս պիտի աւերէին Կիլիկիան, առաւել եւս անոր վրայ ծանր տուրքեր դնելով: Հայ թաթարական բանակները երբեմն յառաջացան մինչեւ եգիպտոսի սահմանները՝ Դամասկոսի ճամբով, իսկ ուրիշ առիթով մըն ալ, կորսնցուցին Հոմսի նշանաւոր պատերազմը: Կը յիշուի Պարպարի հետ դաշինք մը՝ կնքուած տասը տարուայ, տասը ամսուայ եւ տասը շաբաթուայ համար եւ որ կը նախատեսէ Այասի նաւահանգիստին հասոյթին կէսը եւ նիւթական տուգանք մը՝ մօտ կէս միլիոն արժողութեամբ:

Իր թագաւորութեան երկրորդ տարին՝ 1271-ին, Լեւոն Բ. Այասի նաւահանգիստէն կը սկսի իր աշխարհահռչակ ճամբորդութիւնները: Իր շրջանին կը սկսին նաեւ Հայ-Կիլիկիոյ եւ գլխաւոր եւրոպական կեդրոններու առեւտրական յարաբերութիւններու զարգացումը՝ մասնաւոր դաշինքներով՝ Վենետիկի եւ Ճենովայի դուքսերուն հետ: Քաղաքական



տազնապներուն եւ վերիվայրումներուն հակազգեցութիւնը ակնբախ է այս շրջանի դրամներուն վրայ: Ընկրկում մը կը նշմարուի թէ՛ արծաթի չափերուն եւ թէ՛ մաքրութեան չափանիշին վրայ: Կշիռքը կը տարուբերի 2,5-էն 2,8 կրամի միջեւ, 60-էն 80% համեմատութեամբ արծաթով: Այս դրամով կը վճարուէին տուրքերը:

Սկզբնական դրամներուն վրայ եւ գրեթէ միշտ, Լեւոն կը ներկայանայ որպէս ձիաւոր այնպէս ինչպէս իր հայրը՝ երկլեզուեան դրամներով, կարելի է ըսել ասպետական ձեւով եւ գուցէ այս դրոշմը առնչութիւն ունի մատենագրական այն յիշատակութիւններուն հետ, ուր կ'ըսուի թէ Լեւոն եւ եղբայրը Թորոս, իրենց հօր կողմէ Տարսոնի Սուրբ Սոֆի տաճարին մէջ 1259-ին՝ Ասպետ (chevalier) ձեռնադրուած էին մեծ հանդիսաւորութեամբ:

Լեւոն Բ.-ի դրամները ունին որոշակի մասնայատկութիւններ. օրինակ, անոնք Կիլիկեան շրջանի միակ դրամներն են, որոնց վրայ՝ փոխանակ «ՇԻՆԵԱԼ ի քաղաք ի Սիս» մակագրութեան, կը գտնենք ՀԱՏԵԱԼ բառը, որ անպայմանօրէն աւելի բծախնդիր ընտրութիւն կ'ենթադրէ, ինչպէս որ կը գտնենք նաեւ, նոյնիսկ կարգ մը պղինձ դրամներու վրայ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ խօսքը:

Պէտք է ընդունիլ, թէ իր շրջանը եղած է մատենագիտական եւ մշակութային վերելքի շրջան մը, եւ մեր մատենագրութիւնը զինք կ'ընդունի որպէս մեր ամենագարգացած վեհասպար: Ծանօթ է մեզի իր թագուհին՝ Կիոանի ձեռագիր աղօթագիրքը՝ իր այնքան բացառիկ պատկերածաղկումով, այն աստիճան որ ատիկա մեր մշակոյթի գանձերէն մէկը կը նկատուի: Այս մեծ թագուհին ծագումով Լամբրոնի գերդաստանէն եղած է: Շինարար եւ բարեգործ թագուհի մը եւ գուցէ իր տեսակին մէջ միակը իբրեւ բազմածին: «Սիսուան» կը յիշէ, թէ ունեցած է 15 զաւակ, թէեւ անոնց միայն 10-ին անունները ծանօթ են մեր մատենագրութեան: Իր չորս աղջիկներէն մին՝ Ռիթան պիտի դառնար Բիւզանդիոնի կայսրուհի, իսկ Զապէլը պիտի ամուսնանար Կիպրոսի արքաներու Ամորի Լուսինեանի հետ, որմէ պիտի ձիւղաւորուէր մեր Լուսինեան թագաւորներու սերունդը:

Իր շրջանին, Սելճուքները արդէն քայքայուած էին եւ կը յիշուի թէ թաթարներու Խանը Լեւոն Բ.-ի առաջարկած է Սելճուք մեծ երկրամասեր կցել Կիլիկիոյ: Լեւոն մերժած է այդ առաջարկը՝ վարչական նկատումներով, նման բան մը իր հնարաւորութեանց սահմաններէն դուրս նկատելով: Իրագեկ չենք այդ շրջանի կացութեան, բայց եթէ դրական ըլլար իր որոշումը, գուցէ պատմական տարբեր կացութիւն եւ ճակատագիր նախատեսուէր Հայ-Կիլիկիոյ հետագայ պատմութեան:

Լեւոն Բ.-ի անունը իր դրամներուն վրայ կ'երեւի զանազան ուղղագրութեամբ: Երբեմն ԼԵՒՈՆ ինչպէս որ ինք կը ստորագրէ, երբեմն ԼԵՈՆ եւ այլ տեղեր՝ ԼԷՈՆ, ինչպէս յիշուած է իր շրջանի արքունական պատմիչ Վահրամ Բարունիի մօտ:

Լեւոն Բ.-ի զաւակներէն գահ բարձրացան Հեթում Բ., Թորոս, Սմբատ եւ Կոստանդին:



**ՀԵԹՈՒՄ Բ.** (1289-1306 ընդմիջումներով)

Իր կեանքէն եւ դրամներէն դատելով գուցէ կարելի ըլլայ հետեւցնել թէ Հեթում Բ.-ի կեանքը, քաղաքական մարզի մէջ, եղաւ անյաջող, պալատական կեանքի մէջ դժբախտ, եւ դրամական ոճի ընտրութեան մէջ յեղյեղուկ:

Իր կրօնական հակումներով չկրցաւ որոշել թէ ո՛ւր կ'երթար իր թագաւորական նախընտրանքը, Սիսի պալատի<sup>օն</sup>, թէ երկնային թագաւորութեան: Վերջ ի վերջոյ դարձաւ լատին կրօնաւոր՝ Եղբայր Յովհաննէս, (Frater Jan), անուան տակ: Մեմլուքներ Քալաու եւ որդին էլ Աշրաֆ՝ կ'աւերեն անպաշտպան Կիլիկիան եւ մոխիրի վրայ կը նստեցնեն չէն քաղաքները:

Որպէս խոնարհութեան նշան՝ թագ չէ կապած եւ արծաթ դրամ չունի, այլ շատ խոնարհաբար երկրին տնտեսական պահանջները շփոթելով իր կրօնական ըմբռնումներուն հետ, բաւականացած է պղինձ հատանելով: Ու առաջին անգամ ըլլալով իր շրջանին Հայ-Կիլիկեան դրամաշարքին մէջ մուտք գործեց պղնձախառն արծաթը՝ այս վերջինը շատ թոյլ համեմատութեամբ:

Իր թագաւորութեան 4-րդ տարին, արդէն յոգնած, պետական գործերը կը ձգէ իր եղբոր Թորոսին, իսկ 1296-ին կը մեկնի Պոլիս՝ անոր ընկերակցութեամբ, ներկայ ըլլալու՝

քրոջը Ռիթայի ամուսնութեան, Բիւզանդիոնի կայսեր՝ Միքայէլ Բալէոլոկիայի որդւոյն՝ Անտոնիքոսի հետ:

Իր դրամները ունին երկու ձգտում՝ իրենց յղացման ոճին մէջ: Մին՝ լատինական-խաչակիր տպաւորութեամբ դրամներ, իսկ միւսը արեւելեան ձեւով, բազմոցի վրայ նստած, փոխանակ գահի, եւ աջ ձեռքը կուրծքին վրայ. մեծ նմանութիւն ունին այդ շրջանի դրամներուն հետ:

Դրամահատութեան գլխաւոր թերութիւնն է իր ակնբախ անփութութիւնը՝ պատրաստութեան եւ մակագրութեան ոճին մէջ եւ սակայն, ասով հանդերձ, շարունակած է, Լեւոն Ա.-ի պատմական պատգամը, երբեմն գործածելով ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅԹ ԱԳԱՒՈՐԻ տիտղոսը՝ իր արծաթապղինձ դրամներուն վրայ:

Իր օրով կը սկսի Հայ-Կիլիկեան պատմութեան ամենագոյն շրջաններէն մին, որ կարելի է եղբայրասպան կոչուներու շրջան կոչել, որովհետեւ Պոլիս գտնուած միջոցին, իր եղբայրը գահը պիտի բռնագրաւէր 1296-1298 տարիներուն: Երկրորդ եղբայր մը՝ Կոստանդին Ա. կը պատերազմի Սմբատի դէմ, որ եղբօրը Հեթումի աչքերը կուրցնել տուած էր Պոլիսէն վերադարձին: Հեթում սակայն կը յաջողի եղբայրները զսպել եւ զանոնք կապանքներով դրկել Պոլիս՝ բանտարկելու համար զանոնք իր նոր փեսայացած Անտոնիքոս կայսեր մօտ:

Գահին վրայ կը բարձրանայ իր Թորոս եղբօրը որդին՝ Լեւոն, որ ծանօթ է Լեւոն Գ. անունով, որուն հայրը թագաւոր եղած չէ եւ իրմէ, այսինքն Թորոսէն, դրամ չունինք:

Աւելցնենք որ իր օրով հայ-թաթար բանակները յառաջացան մինչեւ Երուսաղէմ եւ Հեթում իր 10.000 զինուորներով այցելած է Երուսաղէմի տաճարը: Թէեւ այս արշաւանքին հետեւանքները եղան ազիտալի Սիսուանի համար:



**ՍՄԲԱՏ (1296-1298)**

Իր արձաթները կը նմանին Լեւոն Ա.-ի դրամներուն իրենց երկու երեսներով, այսինքն՝ թագաւորը գահին վրայ՝ ձեռքին շուշան, եւ խաչ, իսկ ետին՝ երկու առիւծներ կոնակ-կոնակի եւ մէջտեղն ալ կրկնաթեւ խաչ:

Նոյն ընդհանրացած դրոշմով՝ ան ուզած է գուցէ իր վեհապետական հանգամանքը վաւերականացնել: Իր արձաթները քիչ են: Հաւանաբար իր հեռանալէն յետոյ մէջտեղէն վերցուած են կամ հալեցուած, բռնակալի մը յիշատակը վերցնելու համար:

Մակագրութիւնն է Սմբատ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՅ - ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ զանազան տարբերակներով:

Պղինձները աւելի առատօրէն կը գտնուին եւ առհասարակ պզտիկ տրամագիծով եւ մաշած: Այս պզտիկ չափին համար, հայ դրամագէտները ընտրած են Փող անունը, փոխանակ Քարտէզի: Փողը լատիներէն Follis բառին հայացած ձեւն է եւ մեր մօտ կը գործածուի երրորդ դարէն սկսեալ, երբ Դիոկլետիանոս 294-ին ձեռնարկեց իր նշանաւոր դրամական դրութեան բարեկարգումին:

Սմբատի պղինձներուն վրայ կ'երեւին, առ հասարակ, թագաւորը ձիււոր դիրքի մէջ, իսկ յետսակողմը՝ խաչ մը: Մակագրութիւնն է «ՍՄԲԱՏ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՅ - ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ», իր տարբերակներով:

**ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. (1298-1299)**

Սմբատի կողմէ Սիսուանի գահին բռնազրուումը կը թուի թէ ընդվզում յառաջացուց իր եղբօրը՝ Կոստանդինի մօտ, որ ապստամբեցաւ արդարութիւնը վերականգնելու մտքով եւ երկու եղբայրներու բանակները իրարու բախեցան Սիսի դիմաց: Անգամ մը եւս հոսեցաւ հայու արիւնը եղբայրասպան կռիւի մէջ: Սմբատ պարտուեցաւ եւ Սիսի մէջ կը գտնենք Կոստանդին Ա.-ը մէկ տարուայ շրջանի մը համար:

Իր կարգին, իր յաղթանակէն վերջ, ինքն ալ ուզած է գահին բռնանալ: Այսօր իրմէ ունինք միայն ոսկի դրամ մը՝ վենետիկի Մխիթարեաններուն մօտ. միակ ոսկի դրամն է: Ունի նորօրինակ մակագրութիւն մը «ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԳ ՀԱՅՈՅ - ՍՍՈՅ ԲԵՐԴԻՆ Է ԹԱԳԱԻՈՐ»: Հետեւաբար ասիկա յուշագրական դրամ մըն է Սոոյ բերդի գրաւման առիթով:

Այս ոսկիին վրայ ինչպէս նաեւ իր հազուագիւտ արձաթներուն վրայ Կոստանդին կը ներկայանայ մարտական կերպարով, միշտ աջ ձեռքին մէջ սուր մը, իսկ ձախին՝ խաչ:

Ձիււոր է եւ շուրջը գրուած է՝ «ԿՈՍՏԱՆԴԻՆՈՍ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՅ-ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՅ Է ԹԱԳԱԻՈՐ»:

Իր պղինձներն ալ զինք կը ներկայացնեն սուրով ու խաչով եւ ունին Սմբատի դրամներուն մեծութիւնը, սովորական «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ» մակագրութեամբ:



Հակառակ իր մէկ տարուայ թագաւորութեան, իր դրամները խնամուած են եւ սակայն հազուագիւտ, իր կարճ շրջանին համար:

1290-1295 (1290-1295) 1296-1301 (1296-1301)

1301-1307 (1301-1307)

Հեթում իր եղբոր Թորոսի որդին թագաւոր օծել կու տայ 30 Յուլիս 1306-ին, թէեւ Լեւոն Գ. 1301-էն ի վեր պաշտօնապէս թագաւոր էր: Իր թագաւորութեան թուականէն առաջ իսկ դրամ հատանած ըլլալու է եւ իրմէ ունինք արծաթ դրամներ՝ «ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ - ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ Ի ՍԻՍ» մակագրութեամբ: Այդ դրամներուն վրայ՝ թագաւորը կը ներկայանայ ձիաւոր՝ զէպի աջ, ետեւի կողմին վրայ՝ միակ առիւծով, որ կ'ուղղուի նոյնպէս զէպի աջ:

Ա. երեսին վրայ կը տեսնուին կարգ մը գիծեր կամ նշաններ, որոնք կրնան փողերանոցներու յատկանիշեր ըլլալ: Արծաթները հազուագիւտ են: Արդէն կը սկսի անկոււճ արծաթի դրամներուն, ըլլայ կշիռով, ըլլայ մետաղի մաքրութեամբ որ Լեւոն Ա.-ի շրջանին 90% գտութենէն հիմա իջած է 50%, կշիռը 2,80 - 3,00 կրամի տեղ եղած է մօտ 2,30 կրամ: Թէեւ տակաւին որոշ խնամք մը նշմարելի է ոմանց պատրաստութեան համար: Տուժած է նաեւ ծաւալը՝ փոքրանալով:

Պղինձները փողեր են փոքր ծաւալով եւ շատ նման են իր հօրեղբօրը՝ Հեթում Բ.-ի դրամներուն: Հայ թագաւորը կը ներկայանայ ծալապատիկ, արեւելեան ձեւով իսկ իր ետին՝ խաչ, չուրջը՝ «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ»: Գործածած է երբեմն «ՀԱՏԵԱԼ» ձեւն ալ՝ Լեւոն Բ.-ի նման:



Իր շրջանին արձաթները կը ստանան «ՆՈՐ» դրամ կոչումը կամ «ԹԱԳԻՈՐԻՆ» որ աղաւաղումն է իտալերէն Tacco-  
lino վենետիկեան դրամանունին: Ու այս դրամով կը  
վճարուին տուրքերը եւ օտար մատենագրութեան մէջ ծանօթ է  
Daremos Novos Նոր Դրամ անունով, մինչդեռ նախորդ  
շրջանի դրամները, արձաթի մաքրութեամբ աւելի բարձր, կը  
կոչուէին Հին Դրամ կամ Daremos Vetere:

Հեթում եւ Լեւոն Գ. սպաննուեցան նենգութեամբ: Թաթար  
զօրավար Պիլարդու՝ զիրենք իր բանակատեղին հրաւիրելէ  
յետոյ, սպաննեց:

### ՕՇԻՆ (1307-1320)

Հեթումի չորրորդ եղբայրն է Օշին՝ հօրեղբայրը եղբարազդ  
Լեւոն Գ.-ի եւ թագաւորահայրը Հեթում Բ.-ի: Իր շրջանին  
քաղաքական հորիզոնը կը դառնայ անշնչելի: Թաթարներու  
բարեկամութիւնը նախկին ջերմութիւնը կորսնցուցած է  
արդէն, մահմետականութեան տարածումով: Մեմլուքները  
կը յարձակին Հիւսիսէն, Արեւմուտքէն եւ Հարաւէն: Թէեւ  
հայկական բանակները 1320-ին Յուլիսի մէջ՝ Այասի մօտ  
յաղթական դուրս կու գան, բայց թագաւորը բախտը չ'ունե-  
նար տեսնելու. ան մեռած էր 20 Յուլիս 1320-ին:

Իր շրջանին կը շեշտուին հայ եւ լատին եկեղեցիներու  
միութեան պայքարները եւ աւելին՝ կը ստանան շատ սուր  
հանգամանք: Կիներն իսկ կը մասնակցին Հայաստանեայց  
Եկեղեցւոյ պահպանման շարժման եւ կը պատժուին ու կը  
մահանան այրերու հետ: Սամուէլ Անեցի կ'ըսէ. «Կալեալ  
զնոսա զվարդապետսն էարկ ի բանտն ի բերդին եւ սպան  
յարանցն եւ ի կանանց զբազումս»: Օշին կ'ակնկալէր որ  
Արեւմուտքը կրնար իրեն օգնել:

Իրմէ ունինք երկու տեսակ արձաթ դրամ որոնցմէ  
առաջինը՝ բաւական խնամուած՝ ճշգրտօրէն յար եւ նման է  
Լեւոն Ա.-ի դրամներուն. թագաւորը գահին վրայ նստած,  
ետին՝ երկու առիւծներ եւ կրկնաթեւ խաչ, միայն Լեւոնի տեղ  
Աւշին անունով: Մակագրութիւնը՝ «ԱԻՇԻՆ ԹԱԳԱՒՈՐ  
ՀԱՅՈՑ - ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ»: Այս դրամները



բաւական խնամքով պատրաստուած են եւ գուցէ թագա-  
ւորութեան սկիզբները: Իսկ երկրորդ դաս մը արծաթներու՝  
ուր թագաւորը ձիաւոր վիճակի մէջ կը ներկայանայ, իսկ  
ետին՝ միակ առիւծ մը: Անոնց վրայ առաջին անգամ ըլլալով  
կը հանդիպինք փոխանակ ՇԻՆԵԱԼ բառին «ՇԻՆԱՄ» կամ  
«ՇԻՆԵԼ» ձեւերը՝ Օշինի զրամներուն իւրայատուկ: Այս  
երկրորդ դասին զրամները արուեստով եւ խառնուրդով  
ցածորակ են՝ բաղդատմամբ առաջիններուն: Ամէն պարա-  
գայի, երկո՛ւքն ալ հազուադիւտ են:

Աւշինի պղինձ փողերը իր նախորդներէն աւելի փոքր են եւ  
առ հասարակ կը ներկայացնեն թագաւորը զիպահայեաց գա-  
հին վրայ, իսկ ետին՝ խաչ: Հազուադիւտ են, մօտ 1,5 կրամ  
կշիռով:

Աւշին բառին առնչութեամբ, ըսենք թէ ըստ շերքէզ բարե-  
կամի մը, չերքէզերէն կը նշանակէ Աւազ, Տանուտէր,  
Նահապետ, իսկ Աւշինա՝ այս իմաստով, Աւազուհի: Այս  
բառը մեր մէջ մտած ըլլալու է Կովկասէն եկած գաղթական-  
ներու միջոցաւ:

### ԼԵՒՈՆ Դ. ՈՐԴԻ ՕՇԻՆԻ (1320-1342)

Լեւոն Դ. գահ կը բարձրանայ երբ տասը տարեկան է:  
Ամուսնացած է Կորիկոսի Օշին իշխանին աղջկան հետ, զոր  
յետոյ սպաննել պիտի տար, ամուսնանալու համար Սիկիլիոյ  
Ֆրէտէրիք թագաւորի աղջկան հետ: Եկեղեցական հարցերը  
կը ստանան աւելի՛ շեշտուած տազնապային հանգամանք,  
որուն զոհ կ'երթայ թագաւորը 1342-ին՝ ազգայնականներու  
ձեռքով, ան զայրացուցած ըլլալով ժողովուրդը իր ծայրայեղ  
լատինամոլութեամբ: Մեռաւ անյաջորդ եւ երիտասարդ,  
ձգելով մանուկ մը՝ Հեթում անունով, որ կանուխ մեռած է:

Իր արծաթ զրամները շարունակութիւնը կը կազմեն իր  
նախորդներուն ընդհանուր կերպարանքին, այսինքն ձիաւոր  
թագաւորը՝ «ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ» մակագրութեամբ,  
իսկ ետին՝ առիւծ եւ խաչ, «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ Ի ՍԻՍ».  
Երբեմն ձիուն շուրջ, զրամի դաշտին վրայ, կը հանդիպինք  
գիրերու, որոնք կրնան փողերանոցի կամ քանդակողի  
անուան սկզբնատառեր ըլլալ: Ընդհանուր առմամբ, այս  
զրամները անխնամ պատրաստուած են եւ շատ աղքատ  
արծաթի գտութեամբ, ինչ որ թագաւորութեան անկման  
զլխաւոր փաստերն են: Իր շրջանին կը սկսին հայ զրամա-  
գիտութեան կրկնատիպ զրամներ, այսինքն՝ հայկական  
զրամներ, որոնց վրայ արաբերէն վերտառութեամբ գրուչ-



մուսուլման է Սուլթան էլ Նասէր էլ Տին Մուհամէտ: Այս դրամները կը վճարուէին որպէս տուրք, պատերազմական տուգանք կամ հարկ:

Պղինձները շատ հազուադէպ են եւ առ հասարակ կը ներկայացնեն թագաւորը գահին վրայ՝ ձեռքին շուշան եւ խաչ: Շուրջը՝ «ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ», իսկ ետին՝ խաչ մը, «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ Ի ՍԻՍ»: Թէեւ արուեստով քիչ մը ներկայանալի, բայց անկման շրջանի դրոշմը կայ անոնց վրայ: Կը կշռեն մօտ, 1,20 – 1,30 կրամ եւ աւելի ցած քան իր հօրը Օշինին պղինձ դրամները:

Իր շրջանը եղաւ տառապանքի, աւերի եւ կատաղի յարձակումներու շրջան մը, մասնաւորապէս Մեմլուքներու կողմէ: Եզիպտոսի հետ կնքուած դաշինք մը կ'ենթադրէր 15 տարուայ ընթացքին, տարեկան 1.200.000 դրամի վճարումը՝ սուլթանին, ինչպէս նաեւ Այասի նաւահանգիստի հասոյթին կէսը: Իր շրջանին բորբոքած էր նաեւ կրօնական ամենասուր պայքար՝ եկեղեցական ձուլման շուրջ:

Թագաւորը շատ երիտասարդ եւ անփորձ, չկրցաւ դէմ կենալ ներքին եւ արտաքին փոթորիկներուն եւ վճարեց իր կեանքին զինով, երբ միայն 32 տարեկան էր եւ մօտ 20 տարի իշխած: Հայ զանգուածին դէմ առնուած ծայրայեղ միջոցառումներուն մէջ չէ խնայուած նաեւ կանանց:

Սակայն պէտք է շեշտել, թէ այդ դժիւբեմ օրերուն, հայ բանակը յաճախ դուրս եկած է դիւցազնական հերոսամարտերով, եւ հակառակ թուականօրէն քիչ ըլլալուն, ան յաջողած է փախուստի մատնել Այասի եւ Սիսի մօտ թշնամի մեծաթիւ բանակներ:

Լեւոն Դ-ով կը վերջանայ Ռուբինեան-Հեթումեան գոյգ հարստութեանց շրջանը՝ մօտ 162 տարուայ գոյութենէ մը վերջ:

### ԿԻԼԻԿԻՈՅ ԿԻ ԼԻԻՉԻՆԵԱՆ – ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ-ԹԱԳԱՒՈՐԸ (1342-1344)

Օշինի յաջորդ Լեւոն Դ-ի (1320-1342) եզերական վախճանով վերջ գտաւ Կիլիկիոյ մէջ Հեթումեան Հարստութիւնը: Լեւոն անժառանգ ըլլալով, հայկական գահը, քաղաքական նկատումներով, անցաւ իր հօրաբորջ որդւոյն Կի Լիւզինեանին կամ Գուխտոն Լուսինեանին, որուն մայրը Զապէլ՝ աղջիկն էր Լեւոն Բ. թագաւորին, ուրեմն քոյրը Օշին թագաւորին: Զապէլ ամուսնացած էր Կիպրոսի Հենրի Դ. թագաւորին եղբոր՝ Ամորի իշխանին հետ, տէրը Տիւրոսի – ներկայ Սուր քաղաքին, Լիբանանի մէջ:

Գուխտոն Լուսինեան գահակալեց միայն երկու տարի (1342-1344) եւ զոհ գնաց փոթորկոտ շրջանի մը ներքին պայքարներուն: Հակառակ քաջ եւ յանդուգն խառնուածքին, ան չկրցաւ շահիլ ժողովուրդին եւ տիրող դասակարգին համակրանքը: Դաստիարակուած ըլլալով օտար միջավայրի մէջ, անհաղորդ եւ անտարբեր մնաց հայկական աւանդութիւններուն եւ սովորութիւններուն:

Հայկական գահը բարձրանալով վերանուանուած էր Կոստանդին, (երկրորդը՝ Կոստանդիններու շարքին մէջ), բայց կը թուի թէ թագաւորը կառչած մնաց իր օտարամուտ Կի կամ Գուխտոն անուան:

Իր շրջանին հատանուած դրամները հազուադէպ են, նկատի ունենալով իր գահակալութեան կարճ ժամանակա-



միջոցը: Պրն. Փոլ Պտուկեան 1962-ին հրատարակած է Coinage of Cilician Armenia խորագրով հատոր մը, ուր՝ Կիլիկեան թագաւորներու ծանօթ դրամներու ցուցակին մէջ (էջ 121), Կի թագաւորին անուամբ դրամի զանազան հաւաքածոներու մէջ գտնուող ընդհանուր կտորներու թիւը կը ներկայացնէ որպէս 46 կտոր արծաթ-թագաւորին եւ երկու կտոր պղինձ-փող:

Շատ հաւանաբար անցնող տարիներու ընթացքին, այս թիւերը աւելցած ըլլան: Բայց եւ այնպէս՝ անոնք կը մնան յարաբերաբար հազուադիւր:

Ցարդ գոյութիւն ունեցող բոլոր դրամները կը կրեն «ԿԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ» եւ «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՍ Ի ՍԻՍ» մակագրութիւնները՝ իրենց զանազան տարբերակներով. թագաւորին անունը «ԿԻ» ձեւով յիշուած է բոլոր տարբերակներուն վրայ:

Պէյրութաբնակ բարեկամ մը ուշադրութեանս յանձնեց նորատեսակ տարբերակ մը, զնուած Ատանայէն, այլ դրամներու հետ, ուր թագաւորին անունը դրոշմուած է «ԿԻՏԱՅ» փոխանակ «ԿԻ»ի:

Ընդհանուր նկարագրութիւնը իր արծաթ-թագաւորինին նման է Լեւոն Գ.ի դրամներուն: Կշիւքն է երկու կրամ, իսկ տրամագիծը 22 մմ., առանցքները ուղղաձիգ եւ հակոտնեայ:

Առաջին երես. «ԿԻՏԱՅ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ», թագաւորը ձիու վրայ, աջ ուղղութեամբ: Աջ ձեռքով բռնած է լախտ մը, ձախ ձեռքով ձիուն սանձը: Դաշտին մէջ ակնյայտ նշաններ չկան, թէեւ ձիուն ոտքերուն տակ կը նշմարուի հաւանական բայց ջնջուած կէտի մը հետքը:

Երկրորդ երես. «ՇԻՆԵԱԼ ՔԱՂԱՔՆ Ի ՍԻ» վերջին չորս գիրերուն տակ՝ -ՆԻՍԻ- կը տեսնուին նախորդ դրոշմի մը հետքերը: Ենթադրաբար նորոգուած կաղապար մըն է կամ ձախող հարուածի մը կրկնութիւնը հատանման գործողութեան ընթացքին: Դրոշմը սովորական առիւծն է, հաւասարաթեւ եւ կարճաձող խաչ մը: Դրոշմին մէջ նշաններ կամ փակագրեր չկան:

Ըստ Հայր Կղ. Վ. Սիպիլեանի («Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց», Յաւելուած, էջ 26) եւ Հայր Ալիշանի

(«Սիսուան», էջ 341 եւ 543) թագաւորին բուն անունը եղած է ԿԻՏՈՆ, ԿՈՒԻՏՈՆ կամ համառօտաբար ԿԻՏ:

Հայր Սիպիլեան կ'աւելցնէ թէ «... Որովհետեւ այս անունը գաղղիացոց մէջ Կի -Gui- ալ կը գրուի եւ այս թագաւորը գաղղիացոց Լուզինեան ցեղէն ըլլալով կրնայ ըսուի որ հայերէն ստակիւն վրայ նոյն արտաբերութեամբ դնել տուած ըլլայ իրեն գործածածին համաձայն»:

Ըստ Հայր Ալիշանի, թագաւորին անունը թէեւ Կի ձեւով ընդհանրացած, սակայն ԿԻՏ ձեւն ալ յիշուած է մատենագրութեան մէջ:

Կի թագաւորին այս նոր դրամը, կը հաստատէ Կի ձեւին կից ԿԻՏ անուանաձեւին գործածութիւնը, քանի որ փողերանոցին պատասխանատուն այս ձեւը կիրառուած է սեռական հոլովով, այսինքն ըսել ուզած է. —

— Դրամ «ԿԻՏԱՅ ԹԱԳԱՒՈՐ Ի ՀԱՅՈՅ», եթէ դրամ բառը զանց առնուած է լուեկայն հասկցուելու համար, փողերանոցի պատասխանատուն սակայն, թագաւոր բառին հոլովը թերացած է ամբողջացնել բնորոշող ի-ով:

Ամէն պարագայի, անոնք որ կը հետեւին Կիլիկեան դրամներու մակագրութեաններու ուղղագրութեան, համոզուած են արդէն թէ փողերանոցներու պատասխանատու պաշտօնեաններն ու հսկիչները, մասնաւոր բժախնդրութեան առարկայ բրած չեն ուղղագրութեան եւ բառերու ընտրութեան հետ առնչութիւն ունեցող հարցեր:

Ներկայիս ԿԻ կամ ԿԻՏ թագաւորին անուամբ զանազան հաւաքածոներու մէջ տարտղնուած եւ սահմանափակ դրամներու թիւը բնականաբար հնարաւորութիւն չ'ընծայեր մասնագէտ ուսումնասիրողին, դրամագիտական զծով, որոշ եզրակացութիւններ հանելու: Կը յուսացուի, սակայն, որ ժամանակի ընթացքին, նորագիտ եւ անվթար օրինակներու յայտնաբերումը եւ մանաւանդ հրատարակումը, կրնան ձոխացնել տարբերակներու այլազանութիւնը եւ հնարաւորութիւնը ընձեռել մասնագէտներուն, ցարդ չպեղուած կամ մուծ մնացած բազամաթիւ էջեր լուսարանելու:



**ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. (1344-1363)**

Ազգային կուսակցութեան դրդումով գահ կը բարձրանայ Կիլիկեան պատմութեան թագաւորական չորրորդ գերդաստանէն Նդրեաններու առաջին թագաւորը, որ որդին էր Բարձրբերդի Պալտուին իշխանին, շատ հաւանաբար արիւնակից՝ Ռուբինեանց տոհմին:

Ան սուրէ կ'անցընէ Հեթումեան եւ Լուզինեան արքայական ժառանգորդները: Կը ճողոպրի, սակայն, Կի թագաւորին որդին իր երկու զաւակներով՝ Պոհեմոն եւ Լէօ, ու կ'ապաստանի Կիպրոս: Կիպրոսի մէջ՝ կը սկսի ծրագրիւններ որոճալ Հայ-Կիլիկիան կցելու Կիպրոսի թագաւորութեան՝ գործակցութեամբ համախոհ կարգ մը Կիլիկեանակ իշխաններու: Կիպրոսի Պետրոս թագաւորը կը յաջողի Կոռիկուսը կցելու Կիպրոսի, մինչ Մեմլուքները կ'աւերեն Կիլիկիան, մանաւանդ Տարսոնը եւ Ատանան: Կը սկսին համաճարակը, կրօնական պայքարներու ծայրայեղ արարքները եւ ներքին պառակտումները՝ կուսակցական դառն պայքարներով:

Այս տխուր կացութեան համապատասխան են նաեւ Կոստանդինի դրամները, որոնք արծաթի աղքատ գտութեամբ գրեթէ կապտորակ մոխրի գոյն ունին, անխնամ եւ խեղճ են իրենց տեսքով:

Այս դրամներով կը յայտնուի հայ նոր փողերանոցի մը անունը՝ Սիսին կից, այսինքն՝ Տարսոն. այդ դրամներուն

վրայ կը կարդանք «Շինեալ ի քաղաքն Սիս»ի տեղ, երբեմն ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՏԱՐՍՈՆ, ՏԱՐ կամ Տ.:

Գործածուած է երկու տարբերակ, մին վերջին շրջանին սովորական դարձած Թ. դրոշմը, թագաւորը ձիաւոր եւ իր ետին առիւծ, եւ նախորդ շրջանէն, հանդիպահայեաց գահի վրայ բազմած թագաւորը, ետին առիւծը՝ խաչով:

Պղինձները շատ խեղճ են եւ գրեթէ անընթեռնելի:

1344-1363

1344-1363

Այս տխուր կացութեան համապատասխան են նաեւ Կոստանդինի դրամները, որոնք արծաթի աղքատ գտութեամբ գրեթէ կապտորակ մոխրի գոյն ունին, անխնամ եւ խեղճ են իրենց տեսքով:

Այս դրամներով կը յայտնուի հայ նոր փողերանոցի մը անունը՝ Սիսին կից, այսինքն՝ Տարսոն. այդ դրամներուն



ԼԵՒՈՆ ԲՈՆԱԿԱԼ (1363-1365)

Թէեւ մատենագրական յիշատակութիւն չկայ այս արքայական ներկայացուցիչի մասին, բայց բաւական խնամքով շինուած դրամներ ունինք, որոնք այդ շրջանին համար զարտուղութիւն մը կը կազմեն իրենց յարարերաբար խնամեալ արուեստով: Անոնց վրայ՝ անուը, գրուած է «Վ»ով, այսինքն ԼԵՎՈՆ:

Ալիշան կը յիշատակէ երկու զաւակներ որպէս ժառանգ Կոստանդին Գ.-ի: Մին՝ Օշին եւ միւսը՝ Լեւոն եւ ենթադրաբար այս վերջինը կրնայ երկու տարի գահը գրաւած ըլլալ: Որով, այս պարագային, դրամագիտական փաստերն են որ կ'ամբողջացնեն մատենագրական թերացումները:

Իր արծաթ դրամներուն խնամեալ վիճակը գուցէ կարելի ըլլայ բացատրել անո՛վ որ ան մասնաւոր ճիգ ցուցաբերած ըլլայ շահելու համար ժողովրդական համակրանքը կամ վստահութիւնը:

Մակագրութիւնն է «ԼԵՎՈՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՅ - ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ»: Թագաւորը ձիաւոր է. յետնամասին՝ առիւծ եւ խաչ: Պղինձէ իր փողերը շինուած են միեւնոյն դրոշմով. այսինքն նման արծաթին եւ դաշտին մէջ ունին «Թ» գիրը, որ կրնայ քանդակիչին անուան սկզբնատառն ըլլալ:

Ան իր գահը կը զիջի եւ կը հեռանայ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. (1365-1373)

Նղրեան երկրորդ թագաւորն է Կոստանդին Դ., զարմիկը նախորդ Կոստանդինի, որ Հեթում Նղրեան Կամբրլեանի զաւակն էր եւ կը սերէր մեծահարուստ տոհմէ:

Իր շրջանին, Կիլիկիա արդէն կձկուած է եւ իր սահմանները կ'ամփոփուին Սիսի եւ Անագարուայի մէջ: Թշնամիները կը ճնշեն: Ներքին երկպառակութիւնները գահը կ'ուզեն միացնել Կիպրոսի Պետրոս թագաւորին: Սակայն Պետրոսի մահով, ծրագիրը կը վիժի: Հալէպի էմիրը կը գրաւէ նաեւ Անագարուան եւ Սիսը: Կիլիկիայէն կը մնար միայն Սսոյ բերդը՝ որպէս վերջին կայան կործանումէն առաջ:

Իր արծաթ դրամները շատ կը նմանին Կոստանդին Գ.-ի դրամին եւ անոնց զանազանումը յաճախ դժուար է մանաւանդ որ որոշապէս թողարկուած են միեւնոյն փողերանոցներէն, ունին միեւնոյն արուեստը եւ արծաթի խառնուրդը մօտ 50% զտուրթեամբ: Կոստանդինի դրամներն ալ շինուած են Սիսի կամ Տարսոնի մէջ:

Արծաթէ դրամները կը ներկայացնեն թագաւորը ձիաւորի կերպարով եւ ետին՝ առիւծ ու խաչ:

Պղինձները շատ խեղճ վիճակ ունին եւ հազուադիւրս: Եղածները թագաւորը կը ներկայացնեն գահի վրայ՝ նստած վիճակով, հանդիպահայեաց, ետին՝ խաչ մը: Կան նաեւ ձիաւորի կերպարով պղինձ դրամներ, ետին՝ առիւծ:







մեկնէր Հալէպ, ապա՝ Գահիրէ, իշխելէ ետք միմիայն 7 ամիս :

Ան մահացաւ 1399-ին եւ թաղուեցաւ Փարիզի մէջ :

Իր դրամները, շատ ըմբռնելի պատճառներով, Կիլիկեան շարքի ամենահասարակ տեսքն ունին : Արծաթ դրամը խեղճ խառնուրդ մըն է արծաթապղինձի եւ միայն 1 կրամ կշիռով : Պղինձը մնացած է 1 կրամ կշիռով, իսկ շափով՝ շատ պզտիկ եւ որոշ նմանութիւն ունի կիպրական դրամներուն հետ :

Իր դրամներուն վրայ Լեւոն կը ներկայանայ հանդիպահայեաց գլուխով մը, ետին՝ առիւծ մը կամ խաչ մը : Շուրջի վերականգնուած մակագրութիւնն է «ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԱՄԵՆԱՆԱՅՆ ՀԱՅՈՅ», երբեմն նաեւ «ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ» կրճատուժը եւ «ՇԻՆԵԼ», «ՔԱՂԱՔՆ» :

Պղինձները չափազանց անորոշ եւ խեղճ են. ընդհանրապէս իր բոլոր դրամներն ալ հազուադիւտ են, գուցէ անոր համար որ ոչ ոք անհրաժեշտ նկատած է զանոնք գանձի (Trésorisation) վերածելու եւ պահելու, իրենց խեղճութեան եւ անարժէքութեան պատճառով, եւ շատ հաւանաբար, մեծ մասը վճարուած է որպէս տուրք :

Պէտք չէ մոռնալ նաեւ իր կարճ թագաւորութեան շրջանն ու հանգամանքները :

## ԱՐԱԲԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ

### ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Արեւելքի պատմութեան մէջ, 7-րդ դարը կը սկսի գոյութիւն ունեցող երկու կայսրութիւններու երկարատեւ եւ սպառիչ պատերազմներով : Այդ երկու կայսրութիւնները, Բիւզանդական եւ Սասանեան կայսրութիւններն էին, որոնք 602-628 թ.թ.ներուն, անկայուն եւ յարափոփոխ պատերազմական բախտերով, հաւասարապէս մատնուեցան տնտեսական եւ զինուորական քայքայման :

Այդ շրջանին է որ հանդէս կու գար նորաձին կրօնքի մը խանդավառութեամբ տողորուած, կենսունակ եւ խիզախ նոր պետութիւն մը, որ կարճ ժամանակի մը ընթացքին, պիտի յաջողէր պատմութեան ամենարնգարձակ կայսրութիւններէն մին կերտելու : Այդ նոր պետութիւնը՝ Արաբական պետութիւնն էր :

Արաբական թերակղզիին մէջ, արաբները մինչ այդ կ'ապրէին բաժնուած ցեղախումբերու եւ տոհմերու՝ իրենց յարատեւ պայքարներով եւ վրէժխնդրական բախումներով : Բացառութիւն կը կազմէին կարգ մը քաղաքներ, որոնք վաճառականական շահերէ զրդուած, կ'ապրէին ինքնամփոփ, սակայն, զերծ ազգային որեւէ զիտակցութենէ :

Տիրող կրօնքը նախնական ընթուումներով բազմաստուածութիւն մըն էր :



Մարգարէն պիտի յաջողէր, նոր եւ միահեծան կրօնքի մը պարտադրութեամբ, հի'մը զնելու ազգային գիտակցութեան եւ նոր պետութեան կառոյցին՝ «էլ Ումմէ»:

Մուհամմէտ ծնած էր 570-580 տարիներուն միջեւ եւ մահացաւ 632-ին: Անոր յաջորդները, Ապու Պաքը, Օմար Պըն Ալ-Խաթթապ եւ Օթման, յաջողեցան, կարճ ժամանակի ընթացքին, ընդարձակել նոր պետութեան սահմանները: Անոնց առոյգ եւ քաջակորով բանակներուն առջեւ ծունկի եկան Սասանները ինչպէս նաեւ Բիւզանդիոնը: Արագ կերպով գրաւուեցան Իրանը, Իրաքը, Սուրիան, Պաղեստինը եւ Եգիպտոս: Յետագային կայսրութեան սահմանները պիտի փոխադրուէին Հնդկաստանէն մինչեւ Սպանիա, Անդրկասպեան բոլոր երկիրները, Կովկասը, Փոքր Ասիան, Հիւսիսային Ափրիկէն եւայլն:

Սակայն կարճ ժամանակուայ ընթացքին, արձանագրուած այս յաջողութիւնները արարները մատնեցին կարգ մը վարչական եւ տնտեսական դժուարութիւններու եւ խնդիրներու, որոնք դուրս կը մնային յաղթական արարներու փորձառութեանց ծիրէն:

Գլխաւոր խնդիրներէն մին կը հանդիսանար, անշուշտ, դրամական դրութեան հարցը:

Նուաճուած երկիրներէն՝ Սուրիա եւ Եգիպտոս՝ ենթակայ եղած էին առաւելապէս Բիւզանդական դրամական շրջանառութեան դրութեան: Ընթացիկ մետաղներն էին ոսկին եւ պղինձը, որոնք կը կրէին Բիւզանդական կայսրերու դիմանկարներ ու զանազան կրօնական դրոշմներ: Բիւզանդացիք արծաթը գործածած են շատ հազուադիւտ կերպով:

Արաբական թափանցումներու շրջանին, գործածական դրամներն էին Բիւզանդիոնի կայսր՝ Հերաքլիուսի (Heracilius) (610-641) դրամները, որոնք զինք կը ներկայացնէին երբեմն առանձին եւ երբեմն իր զաւակներուն հետ միասնաբար, Կոստանդին եւ Հերակլէանոս անուամբ:

Ոսկի դրամներուն (սօլիդիւս) ետեւի դրոշմներէն ամենաընդհանրացածը կը կրէր երեք աստիճաններու վրայ բարձրացած խաչ մը եւ շուրջը կայսրին կամ կայսրերուն յաջողութեան մաղթանք մը՝ «Վիքթորիա Օկ կամ Օկկկ»:

Պղինձ դրամները (ֆօլլ) կը ներկայացնէին կայսրը կամ կայսրն ու իր զաւակները միասնաբար, իսկ ետեւը խոշոր Մ գիրը որ հաւասար էր 40 թուականին ինչպէս հայերէն Խ, եւ կը նշանակէր պղինձին արժէքը, այսինքն՝ 40 ճումիճմա:

Գալով միւս երկիրներուն, ինչպէս Իրան եւ Իրաք, անոնք դեռ ենթակայ էին իրանեան դրամական դրութեան, որ կը բաղկանար առաւելաբար արծաթէ: 7-րդ դարուն Պարսկաստան ոսկի չունէր: Նախ՝ յոգնած էր պատերազմներէ, ապա՝ գլխաւոր պատճառներէն մին ա՛յն էր որ, տարիներ եւ գուցէ դարեր միջնորդի դեր վերցուցած էր Չինաստանի եւ Բիւզանդական կայսրութեան միջեւ, մետաքսի վաճառականութեան եւ տարանցման դիւրութիւններ չնորհելով, որոնց համար իրրեւ վարձատրութիւն ոսկի կը ստանար Բիւզանդիոնէն: Սակայն 7-րդ դարուն Բիւզանդացիք ունեցան իրենց շերեմաբուծական կեդրոնները, որով Չինաստանի հետ վաճառականութիւնը ընդհատուեցաւ եւ Պարսկաստանն ալ զրկուեցաւ իր ոսկիի հասոյթէն:

Ուրեմն ընթացիկ դրամներն էին պարսկական եւ սասանեան դրամները, որոնք կը կոչուէին «Խուսրովի» անո՛ր համար որ երկու երկարակեաց Խոսրովներ՝ մին 531-579 թ.թ.ականներուն եւ միւսը 590-628 թ.թ.ականներուն նմանօրինակ դրամներ հատանած էին: Այդ դրամներուն առաջին կողմը կար սասանեան թագաւորին դիմանկարը՝ դէպի աջ նայող, շուրջը՝ Փէիլէվի մակագրութեամբ, իսկ յետնամասին կար կրակապաշտութեան ատրուշան մը, որուն երկու կողմերը կեցած էին երկու մոզեր՝ կրակը անշէջ պահելու համար:

Այս երկու դրոշմներով դրամները, ըլլա՛յ բիւզանդական ոսկին եւ պղինձը, ըլլա՛յ սասանեան արծաթը, երկար տարիներէ ի վեր ծանօթ էին արարներուն եւ գործածական իրենց վաճառականական փոխ-յարաբերութեանց բերումով, որովհետեւ արարները սեփական դրամ չունէին:

Հետեւաբար, նուաճումներու առաջին շրջանին, արարները ձգեցին անփոփոխ գրաւուած երկիրներու վարչական կարգն ու սարքը, ինչպէս նաեւ դրամական դրութիւնը: Հետեւեցան շատ զգոյշ եւ հեռատես քաղաքականութեան մը՝ հանդէպ



նուաճուած երկիրներուն, անոնց մօտ տիրող դարաւոր եւ աւանդական սովորութիւններուն:

Նորակազմ պետութիւնը պէտք ունէր նախ հաստատուելու մանաւանդ ներքնապէս կեդրոնանալու, որովհետեւ սկզբնական շրջանին անիկա ունեցաւ քաղաքական եւ հերձուածային ցնցումներ, որոնց դրդապատճառները երբեմն անհաստական, տոհմային կամ վարդապետական տարակարծութիւններու արդիւնք էին:

Սակայն, պետական առաջին եւ գործնական կազմաւորումը սկիզբ առաւ Սուրիոյ մէջ, երբ՝ Օթման Նալիֆան, 644-ին, Մուավիյէ Պըն Ապի Սուֆիանը իբրեւ կառավարիչ նշանակեց Սուրիոյ:

Մուավիյէն է որ հետագային, Սուրիոյ մէջ հիմնեց Պէնի Ումայյատներու անկախ վեհապետութիւնը, ժառանգական իրաւասութեան նուիրականացումով, որ տեւեց մինչեւ 750: Իսկ 657-ին՝ Սուֆֆինի նշանաւոր պատերազմէն յետոյ, (Մուավիյէի եւ Ալիի միջեւ) որ վերջացաւ Մուավիյէի յաղթութեամբ, Մուավիյէ 660-ին դարձաւ ամբողջ իսլամութեան խալիֆան եւ Դամասկոս եղաւ կայսրութեան կեդրոնը:

Դրամական հարցը անշուշտ պիտի զբաղեցնէր կայսրութեան պատասխանատուներուն միտքը:

Երկրորդ եւ երրորդ խալիֆաները, այսինքն՝ Օմար Պըն Ալ Նաթիֆապ եւ Օթման շարունակած էին Իրանի եւ Իրաքի համար «Նոսրովեան» զրոյմով դրամներու հատանումը նոյն Փէիլէվի զրոյմով: Սակայն, կամաց կամաց դրամին շրջագծին լայն միջոցին մէջ կը սկսին երեւիլ արաբերէն կարգ մը բառեր եւ ապա ամբողջ նախադասութիւններ:

Օրինակ, Օմար Պըն Ալ Նաթիֆապ աւելցուցած է.

بِسْمِ اللَّهِ مُحَمَّدٌ رَسُولُ اللَّهِ لَا إِلَهَ إِلَّا اللَّهُ

Իսկ յաջորդը՝ Օթման զրոյմած է Պէրէքէ բառը. بركه

Ձուգահեռաբար, նոյն ընթացքը կ'ունենանք փոխանցման շրջանին, Սուրիոյ եւ Բիւզանդական ազդեցութեան երկիրներուն մէջ: Բիւզանդական ոսկիին եւ պղինձին հատանումը շարունակուած է արաբական իշխանութեան ընթացքին ճիշդ հարադատ զրոյմներով:

Քանի մը տարի յետոյ, ոսկեղրամին ետեւի խաչին տեղ զետեղուած է կլոր գունտ մը կամ ֆրանսերէն Թ-ի նման նշան մը, թէեւ պահուած են կայսեր պատկերն ու յունարէն բոլոր բառերը, նոյնիսկ փողերանոցներու անունները ինչպէս CONOB (Կ. Պոլիս) եւ NICO (Նիկոմիտիա), որոնք բնական է կ'իյնային բիւզանդական սահմաններուն մէջ:

Յաջորդ քայլը կ'ըլլայ զրոյմի կարգ մը փոփոխութիւններ եւ վերջապէս կարգ մը բառերու զրոյմը արաբերէն լեզուով պղինձին վրայ, ինչպէս.

Լաւ	ԹԱՅԷՊ	طيب
Թոյլատրուած	ՃԷ'ԷՁ	جائز
Լիարժէք	ՈՒԱՖԷ	واف
Ընթացիկ	ՃԱՐ	جار

Եւ յունարէն բառ մը ΚΑΛΟΝ որ կը նշանակէ «լաւ»

Այս բառերուն կից կը գտնենք նաեւ ՊԸՍՄ ԻԼԼԷՀ بِسْمِ اللَّهِ  
ՊԸՍՄ ԻԼԼԷՀ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԲԱՍՈՒԼ ԱԼԼԱՀ

بِسْمِ اللَّهِ مُحَمَّدٌ رَسُولُ اللَّهِ

Ապա՝ արաբերէն եւ յունարէն քաղաքներու անուններ պղինձներու վրայ, ինչպէս.

DAMACKOC	دمشق
EMMCIC	ضرب حمص
THBERIAA	طبريا
	ايليا

Այս միջանկեալ եւ փոխանցման միջոցառումները բնական է զգոյշ եւ հեռատես քաղաքականութեան մը հետեւանքն էին:

Իսկ Հիւսիսային Ափրիկէի մէջ, ուր լատիներէն լեզուն էր տիրապետողը, արաբները հետեւեցան այլ ուղղութեան: Անոնք հատանեցին բիւզանդական զրոյմով ոսկեղրամներ, որոնց շուրջ սակայն դրին լատիներէն գիրերով եւ իմաստով, իսլամական հաւատոյ հանգանակը, օրինակ, դրամի մը վրայ կը գտնենք.



IN NOMINE TVO DEUS VIVICIS ET MISFRICORS

INNONETVOG SVVICETMI

NON EST DEUS NISI IPSE SOLUS CUI SOCIUS ALIUS

NONESTAS NISI IPSE SOLCICA

لا اله الا الله وحده لا شريك له

IN NOMINE DOMINI MUSE FILIUS NUSIR AMIR AFRICAE

بسم الله سواه بن نسير امير افريقيا

Սակայն արմատական միջոցներու կիրարկումը անհրաժեշտութիւն կը դառնար: Անհրաժեշտ էր սեփական դրամի հատանումը: Այդ քայլը պիտի առնէր հեղինակաւոր վեհապետ մը՝ Ապտիւլ Մէլէք Պըն Մրուան Խալիֆան (685-705):

Ապտիւլ Մէլէք Պըն Մրուան նախ իր բոլոր ճիգերը կեդրոնացուց կայսրութեան մէջ անդորրութիւնը վերահաստատելու համար: Կարգ մը երկրամասերու մէջ ծայր տուած էին որոշ ըմբոստացումներ որոնք զսպուեցան:

Ապա՝ ձեռնարկուեցաւ ընդհանուր բարենորոգութեանց: Վերակազմուեցաւ վարչական մեքենան՝ ուր արարերէն լեզուն դարձաւ պարտադիր բոլոր սարսարկութեանց մէջ: Իսկ իր դիտարար նուաճումը պիտի ըլլար դրամական հարցը:

Հիճիրի 74-ին, շրջագայութեան դրուեցաւ իր առաջին ոսկեդրամը, որուն վրայ դրոշմուած էր անոր կիսանդրին՝ ձեռքը սուր մը բռնած: Նոյն դրոշմով դրամները շարունակուեցան 75-76 թուականներուն, այսինքն՝ 693-696-ին: Մատենադրական աղբիւրներ կը տեղեկագրեն, թէ իրենց պատկերադրոշմով այդ դրամները լուրջ քննադատութեան նիւթ դարձան Մեքքէի ուղղափառ շրջանակներու կողմէ եւ պատկերաւոր դրամներու շարքը ընդհատուեցաւ:

8-րդ եւ 9-րդ դարու մատենագիրներ, բնականաբար իրարմէ ընդօրինակելով եւ հետեւելով իրենց ապրած

դարերուն ընթացումներուն, պատկերադրոշմ դրամներու արգիլումը կը նկատեն կրօնական սկզբունքներու թելադրութեան արդիւնք, որովհետեւ, այդ շրջանին եւ յաջորդող դարերուն ընթացքին, ծայր պիտի տար ընդհանուր հակապատկերաւոր ոգի մը, որուն արձագանգը պիտի փոխադրուէր նոյնիսկ բիւզանդական կայսրութեան սահմաններէն ներս, բորբոքելով քրիստոնէական ըմբռնութեան ու ստեղծելով պատմութեան մէջ ծանօթ պատկերամուտ եւ հակապատկերական հատուածներու արիւնալից բախումները:

Պատմականօրէն, սակայն, ներկայիս, արաբ եւ իսլամ դրամագէտ-պատմաբաններ կ'եզրակացնեն թէ մատենադրական աղբիւրներու հաղորդած պատճառաբանութիւնները կրնան խոցելի դառնալ, որովհետեւ Գուրանի մէջ մասնաւոր ոչ մէկ ակնարկութիւն կայ այս ուղղութեամբ: Ո՛չ Մարգարէն եւ ոչ իրեն յաջորդող խալիֆաները արգելք յարուցած են, իրենց շրջանին շրջագայող բիւզանդական եւ սասանեան դրամներուն դէմ, որոնք բոլորն ալ պատկերադրոշմ էին, եւ ազատօրէն կը շարունակուէին ապրանքա-փոխանակութեան որպէս միջոց: Մարգարէն երբ որոշ տուրքեր եւ հարկեր սահմանեց իսլամներուն, օրինակ **الذكا** եւ կամ **الجزية** գլխահարկը եւ **الخراج** արդիւնաբերական հարկը ոչ իսլամներուն համար, այդ տուրքերը սահմանուած էին սասանեան տիրահամով եւ բիւզանդական տիրարով: Յիշուած է նաեւ թէ Մարգարէն Հերակլէսէն ոսկեդրամի գումար մը ստացած ըլլալով (անշուշտ կայսրին պատկերադրոշմով) զայն բաժնեց իր զինակիցներուն:

Իր յաջորդերը, որոնք ծայր աստիճան բծախնդիր էին կրօնական սկզբունքներու հաւատարիմ կիրարկման, նուաճուած երկիրներու մէջ թոյլատրեցին եւ հետամուտ եղան, թէ՛ սասանեան, թէ՛ բիւզանդական պատկերադրոշմով դրամներու հատանման շարունակութեան, աւելցնելով միայն քանի մը արարերէն բառեր:

Պատկերամարտութեան զաղափարը իր սկզբնական շրջանին ուղղուած էր, նախա-իսլամական դարերէն մնացած բազմաստուածութեան արձաններուն, պատկերներուն եւ առարկաներուն դէմ, որոնք սեփական տուններու, կամ



հաւաքական վայրերու մէջ, կրնային պաշտամունքի նիւթ դառնալ: Մարգարէն բուն կերպով պայքարեցաւ, ոչնչացնելով այդ պաշտամունքին հին արձանները: Հետագային, սակայն, կրօնական իմաստասէրներ շատ աւելի ընդարձակ իմաստով առին Մարգարէին տարած պայքարը, որուն սահմաններուն մէջ պարբաղուեցան բոլոր շնչող էակներու պատկերացումն ու դրոշմը: Ուրեմն արաբ մատենագիրներ, ինչպէս Ըպն Խալտուն, Պալատրրի եւ Մըքրիզի, որոնք 8-9-րդ դարերու մատենագիրներ են, իրենց ապրած շրջանին ոգիով բացատրած եւ քննադատած են Ապտիւլ Մէլէք Պըն Մըուանի առաջին դրամական փորձը, արաբական կայսրութիւնը օժտելու իւրայատուկ դրամաշարքով մը:

Թէեւ Ապտիւլ Մէլէքի պատկերադրոշմով պղինձէ դրամներ յարաբերաբար հազուագիւտ չեն, սակայն ոսկիները կը հաշուընդին մատներու վրայ եւ անշուշտ կը գտնուին կարգ մը թանգարաններու մէջ:

Այս դրամներուն վրայ, խալիֆան կը ներկայանայ դիպահայեաց, գլուխը քուֆիէ մը, որմէ դուրս կու գան մազերու խոպոպներ: Աջ ձեռքով բռնած է սուր մը, որ կը մնայ պատեանին մէջ: Իսկ ձախ ձեռքով բռնած է պատեանը:

Այս պատկերացումը ոչ թէ մարտական գրսեւորում մըն է, այլ խալիֆային հանգամանքը շեշտող խորհրդանիշ մը: Սուրը խալիֆայութեան յատկանիշն էր: Ան կը մարմնացնէր սրբազան պատերազմը, այսինքն՝ նիհաւը հեթանոսութեան եւ բազմաստուածութեան դէմ:

Սովորութիւն էր որ իմամը կամ խալիֆան, Ուրբաթ օրուան քարոզին (խուքպային) ընթացքին յենէր աղեղի մը, նիզակի մը կամ սուրի մը վրայ, ինչպէս մեր կրօնական աստիճանաւորները կը գործածեն գաւազանը:

Թէեւ պատկերադրոշմ դրամները տեւեցին միայն երեք տարիներ, սակայն, հետագային պիտի տեսնենք, թէ խալիֆաներ, ինչպէս օրինակ, էլ Մուլթաուաքէլ *الموتكلى على الله* (232-247) (847-861) դրամ պիտի հատանէր, մէկ կողմը իր պատկերադրոշմով եւ միւս կողմը, ուղտի առաջնորդ մը, իսկ էլ Մուքթէտէր Պիլլահ *المقتدر بالله* Խալիֆան (295-320) (908-937) պիտի հատանէր դրամ մը՝ որուն մէկ կողմը կը ներկայանայ

ինք, կամ ուէլ ուրիշ անձ մը՝ ձեռքը սրուակ մը, իսկ միւսը՝ նուագածու մը՝ իր նուագարանով: Դրոշմով դրամ տպած է նաեւ էլ Մուլթի *المطيع* (334-363) (945-973):

Աւելի ուշ, Սելճուքներ, Օրթուքիտներ եւ Թիւրքմէններ, մաս մըն ալ էյյուպի վեհապետներ դրամ պիտի հատանէին բազմաթիւ պատկերադրոշմներով:

Այս բոլոր որոնումներէն ետք, Հիճիրի 77 թթ. ին այսինքն 696-697-ին, Ապտիւլ Մէլէք Պըն Մըուան հիմը պիտի դնէր զուտ արաբական դրոշմով դրամաշարքի մը, հատանուած ոսկիէ, հետագային արծաթէ եւ պղինձէ:

Առաջին ոսկին պիտի հատանուէր Դամասկոսի մէջ, մէկ միւսը կը շիռով, այսինքն 4,25 կրամ: Կը կոչուէր Տինար, որ հռոմէական Dinaris-ին կը ճատուած ձեւն էր. ծանօթ էր ան արաբներուն՝ արաբական թերակղզիին մէջ նախապէս ունեցած իր երկարատեւ գործածութեան համար:

Արդարեւ, տինար կը կոչուէր բիզանդական ոսկին՝ սոլիտիւսը եւ առ հասարակ հիմ ընդունուած էր անոր կշիռով գործածութիւնը փոխանակ հատով: Պատճառն ա՛յն էր որ բիզանդական ոսկին յաճախ իր օրինական կշիռէն պակաս կը կշռէր, քանի որ անիկա, գործածութեան բերումով, կը կորսնցնէր իր սկզբնական արժէքէն. աւելին՝ չէին պակսեր նաեւ մարդիկ, որոնք կը խարտոցէին զայն:

Արաբական արծաթը պիտի հատանուէր 79-ին, այսինքն՝ 699-700-ին: Անիկա ծանօթ էր տիրհեմ անուամբ: Այս բառը աղաւաղուած ձեւն է յունարէն տրախմի բառին, որմէ բխած է նաեւ հայերէն դրամ բառը:

86 թուականին (706) կը հատանուի մեզի ծանօթ առաջին պղինձ դրամը ֆիլս անուամբ (յոզնակին՝ ֆուլուս): Բառը առնուած է հռոմէական ֆոլլիս բառէն, որ հայերէնի մէջ ալ եղած է փող:

Արծաթ տիրհեմներուն պաշտօնական կշիռն է 2,95 կրամ եւ հիմնուած է այդ շրջանին ոսկիի եւ արծաթի փոխյարաբերութեան սակին վրայ՝ որ 7:10 էր: Ուրեմն  $(4,25 \div 10 \times 7) = 2,95$ : Իսկ պղինձը որպէս օժանդակ դրամ որոշ կշիռ ունեցած չէ եւ կը փոխանակուէր պղինձի մետաղային գինին հիման վրայ:



77-ին հատանուած առաջին տինարէն սկսեալ, իւրաքանչիւր ոսկեզրամ կը կրէ հատանման տարեթիւր մինչեւ 8-րդ դար: Հարուն էլ Բաշիտի շրջանին (786-809), թուականէն զատ կը յիշատակուին նաեւ օրուան խալիֆային անունն ու հատանման վայրը, երբեմն փողերանոցին կարգ մը պաշտօնեաներուն անուններով միասին: Անկախութիւն ձեռք ձգած կարգ մը երկիրներ, օրինակ՝ Եգիպտոս, Թուրունիներու, Քղիտիներու, Էյյուպիներու եւ հետագային Մէմլուքներու շրջաններուն, կը յիշեն օրուան սուլթանին անունը, կամ էմիրը, ինչպէս նաեւ խալիֆան, հատանման վայրը եւ թուականը:

Արծաթ տիրահմները, առաջին մէկ օրէն, ունեցած են թէ՛ թուական եւ թէ՛ հատանման վայր: Հետագային օգտուելով, տիրահմները տարածութեան շնորհիւ ընծայուած հնարաւորութիւններէն, աւելի մանրամասնօրէն յիշուած են սուլթաններու եւ խալիֆաներու անուններն ու անոնց տիտղոսները, ելեւմտական հարցերու պատասխանատու անձին անունը, փողերանոցին կարեւոր պաշտօնեաներուն անունները եւ ալ:

Պղինձները հատանուած են առանց մասնաւոր դրութեան մը հետեւելու, որովհետեւ երբեմն յիշուած է թուականը, բայց ոչ վայրը, երբեմն ալ վայրը առանց թուականին, իսկ երբեմն, երկուքին ալ յիշատակութեամբ: Օրթոքիտներն են որ իրենց պղինձի դրամներուն տիրահմ անունը տուած են, փոխանակ Փիլսի եւ հատանած են սովորականէն աւելի մեծ ծաւալով, ուր՝ յիշատակուած են սուլթաններուն, խալիֆաներուն անունները, իրենց տիտղոսները, հատանման վայրը եւ թուականը:

Անկախաբար այս կարեւոր յիշտակութիւններէն, որոնք պատմական կարեւոր աղբիւրներ են, ղէպքերու եւ գերդաստաններու փոխյարաբերութեանց տեսակէտէն, արարական դրամները կը ներկայանան իւրայատուկ տարագով մը: Կրօնական նկատումներով, ժխտելով պատկերաւոր դրոշմները, անոնց տեղ գործածուեցան մակագրութիւններ, որոնք առնուած էին Գուրանէն, շեշտելով եւ փառաբանելով միաստուածութեան գաղափարը, Մուհամմէտի մարգարէ ըլլալը եւ առաքելութեան նպատակը: Պիտի յիշեմ գլխաւորները.

«Ալլահէն զատ Աստուած չկայ: Միակն է առանց ընկերակցի:»

لا اله الا الله وحده لا شريك له

«Ալլահէն զատ Աստուած չկայ: Մուհամմէտ իր առաքեալն է (կամ՝ մարգարէն է):»

لا اله الا الله محمد رسول الله

«Աստուած մէկ է: Աստուած յաւիտենական է: Ոչ ծնած է եւ ոչ ալ ուրիշին ծնունդ տուած եւ ոչ ալ իրեն համագոր մը գոյութիւն ունի:»

الله احد الله الصمد لم يلد ولم يولد ولم يكن له كفواً آخر

Յանուն Աստուծոյ, զայն -Մարգարէն- զրկեց ուղղութեամբ եւ ճշմարիտ կրօնքով զայն յայտարարելու բոլոր կրօններուն վրայ ի հեճուկս անհաւատներու հակակրանքին:»

بسم الله ارسله بالهدى ودين الحق ليظهره كله على الدين ولو كره المشركون

Թէեւ այս մակագրութեանց մէջ, երբեմն օտար դրամագէտներ կ'ուզեն կրօնական պայքարի մը կարգախօսները փնտռել, այդ դրամները նկատելով որպէս փրոփակացուի մը միջոց, սակայն ասիկա ընդունելի վարկած մը չէ: Անշուշտ՝ հակադրութիւն մը կայ քրիստոնէական ըմբռնումներու հետ, քանի որ մենք, աստուածային Երրորդութեան մէջ, Աստուծոյ համագոր կ'ընդունինք իրմէ ծնած Որդին եւ ապա՝ Ս. Հոգին, որպէս խորիսխ, ինչ որ կը հակադրուի ուրիշ կրօնքի մը տարբեր ըմբռնումներուն եւ անոնց որեւէ մէկ ձեւով արտայայտութեան պարագային, կրնայ զգենուլ կրօնական պայքարի մը տարագը:

Նոյն ձեւը ընդգրկած էին նաեւ բիւզանդացիները, որոնք իրենց դրամներուն վրայ յաճախ կը յիշէին Քրիստոսի եւ Աստուածամօր անունները, ապաւինելով անոնց պաշտպանութեան:

Պէտք չէ մոռնալ, որ արաբները իրենց կրօնական նոր ըմբռնումներով եւ միաստուածութեան խոր համոզումով, կը գտնուէին հաւատքի տարածման առաջին հանգրուանին մէջ, ուր՝ խանդավառ ու ջերմեռանդ՝ կը ճգնէին պայքարիլ որեւէ ըմբռնումի դէմ որ կրնար միաստուածութեան գաղափարը



չփոթութեան մատնել: Իրենց համար կրօնքն էր գլխաւոր ազգակը որ ստեղծած էր ցեղերու միութիւնը կամ ազգութիւնը (էլ Ուլմէ): Պետական գաղափարը կը նոյնանար կրօնականին հետ: Անոնք վեհապետ կամ կրօնապետ չունէին, այլ խալիֆան, մարգարէին յաջորդը, որ իր անձին մէջ կը խտացնէր հոգեւորական թէ քաղաքական գերագոյն պատասխանատուի գոյգ հանգամանքները: Սկզբնական այդ շրջանին ղեկավարութիւնը բացարձակապէս թեօքրաթիֆ, աստուածավարական կամ կրօնական բնոյթ ունէր եւ խալիֆային կենցաղն ու բարքը ենթակայ էին խիստ հսկողութեան, արդարացնելու համար այդ հանգամանքը:

Հետեւաբար դրամը, որ այդ շրջանին միակ եւ լաւագոյն միջոցն էր գաղափարներուն տարածման, անշուշտ պիտի գործածուէր կրօնական հայեացքով, կրօնական մակագրութիւններով, այնպէս որ զայն գործածողները տեւապէս իրենց ձեռքին մէջ եւ աչքին առջեւ պիտի ունենային նոր կրօնին եւ հաւատքին հիմնական եւ գլխաւոր կէտերը խտացնող սկզբունքները:

Այսպէս պիտի զարգանար ուրեմն արաբական դրամը կամ էլ սրֆէն, որ ըստ Իպն Խալտունի, սկզբնական շրջանին կը նշանակէր դրամ դրոշմելու համար գործածուած կաղապար: Հետագային ստացաւ աւելի ընդարձակ իմաստ եւ դարձաւ բառին հոմանիշը աւելի լայն բովանդակութեամբ: Էլ Սրֆա السكك վենետիկցիներու կողմէ փոխ առնուելով դարձաւ իրենց դրամական միաւորին անունը՝ zecchino կոչոււմով, իսկ ֆրանսացիք, միջնադարեան իրենց մէկ դրամը կոչեցին sequin:

Վերջացնելէ առաջ այս ամփոփ ուրուագիծը արաբական դրամաշարքին եւ անոր զարգացման զանազան հանգրուաններուն, կ'ուզեմ աւելցնել թէ երկու սուլթանուհիներ առիթն ունեցած են դրամ հատանելու: Մին Եգիպտոսի վերջին էյյուպիներէն Շաճարէթ էլ Տուրն է ( شجرة الدر ) որ հակառակ իր ստրուկ ծագումին, նախ՝ կը դառնայ հարձ, ապա՝ կինը Ալ-Սալէհ Նըճմըլտին էյյուպին որ իրմէ զաւակ մը ունեցած ըլլալով (Խալիլ), զայն կը դարձնէ օրինաւոր ամուսին եւ Սուլթանուհի: Ապու էլ Ֆիտա կը յիշէ նոյնիսկ,

որ իր անուամբ «Խուլթայէ» եղած է մզկիթներու մէջ եւ սակայն արգիլուած՝ խալիֆային կողմէ, որպէս աննախընթաց սովորութիւն կնոջ մը համար: Իր ոսկի դրամներուն վրայ, իր տիտղոսներն են Մուսլումաններու թագուհի եւ Մայր էլ Մանսուր Խալիլ թագաւորին, իշխան հաւատացեալներու:

«ملكة المسلمين والدة الملك المنصور خليل امير المؤمنين»

Իսկ երկրորդ կինն է Իլիանիտներէն Սաթի Պէկ Խաթուն (739-741), քոյրը՝ Սուլթան Ապի Սայիա Պահատուր Խանին: Իր դրամներուն վրայ դրոշմուած է «Արդարադատ Սուլթանուհի Սաթի Պէկ Խան Աստուած յաւերժացնէ անոր իշխանութիւնը»:

السلطانة العادلة ساطي بك خان خلد الله ملكها

Սաթի Պէկ Խաթուն տիրած է միայն երկու տարիներ: Այս երկու Սուլթանուհիներուն դրամները խիստ հազուագիւտ են:



## ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

### ԱՐԾԱԹ ԶՈՐԵՔԴՐԱՄ ԿԱՄ TETRADRACHME

Շատ հաւանաբար Տիգրան Մեծի անունով առաջին դրամները հատանուեցան Անտիոքի մէջ Ք. Ա. 83-ին, երբ հայկական բանակները գրաւեցին Անտիոքը:

Անտիոք իր հիմնադրութենէն ի վեր, Սելեւկեան մեծ պետութեան մայրաքաղաքն էր եղած եւ իր մէկէ աւելի փողերանոցները, մօտ երկու հարիւր տարի անընդհատ, դրամ հատանած էին Սելեւկեան վեհապետներուն անունով եւ ձեռք բերած՝ անգնահատելի փորձառութիւն՝ թէ՛ արհեստի, թէ՛ արուեստի մարզերուն մէջ:

Անտիոքի գրաւումով, Տիգրան Մեծ իր տրամադրութեան տակ կ'ունենար դրամահատութեան կատարեալ սարքաւորում մը՝ որմէ պիտի օգտուէր, շրջագայութեան դնելու համար, իր անուամբ հատանուած արծաթ ու պղինձ դրամներ: Արուեստով հելլենիստական, սակայն զրոյմով ինքնատիպ՝ այս դրամները պիտի սղողէին հսկայ կայսրութիւն մը, որուն սահմանները կ'երկարէին Պոնտոսէն Պաղեստին եւ Կասպից ծովէն Կիլիկիա, Կոմագինէ եւ Կապադովկիա ներառեալ:

Արծաթ դրամներուն վրայ՝ Տիգրան թագաւոր կը ներկայանայ Արեւելեան վեհապետի մը տպաւորիչ պերճանքով: Իր զիմադրոյմը կը ներկայանայ երիզաւոր շրջանակի մը մէջ՝

կազմուած մարգարտաշարէ մը՝ բաղկացած մէկ երկայն եւ երկու փոքր կլորածեւ մատիկներէ:

Այդ շրջանին, վաթսուներեք տեսնող Տիգրանի դէմքը կը ներկայանայ բաղդատաբար երիտասարդ՝ եւ ըստ յունական սովորութեան՝ անմօրուս եւ անպեխ: Եթէ զրոյմը պատրաստող արուեստագէտը յաջողած է հարազատօրէն վերարտադրել դէմքին գիծերը, ապա կրնանք ըսել, թէ ունեցած է խոշոր եւ գեղեցիկ արեւելքցի աչքեր, թաւ եւ երկայն յօնքերու տակ, շեշտուած քիթ մը, թեթեւ ժպիտով մը ուրլազնուած շրթներ, նուրբ ծնօտ մը. վերջապէս ան կը ձգէ ընդհանուր տեսքը եւ տպաւորութիւնը վեհապետի մը, որուն առնական եւ խրոխտ զիմագիծը անպայմանօրէն մեզ կը համակէ սիրոյ եւ յարգանքի զգացումով:

Գլխուն վրայ կը կրէ հայկական խոյրը կամ թագը, որ առ հասարակ կը վերջանայ հինգ բրգածեւ ժանեակներով: Երբեմն, այս պատիկ բուրգերուն տեղ կը հանդիպինք, մարգարիտներու կամ այլ ակերու շարքի մը, որ իրարու վրայ բարձրացող բուրգերու տպաւորութիւն մը կը ձգէ:

Խոյրին լայն տարածքին վրայ կ'երեւին աստղ մը եւ երկու արծիւներ, որոնց գլուխները՝ դէպի ետ դարձած՝ ուղղուած են աստղին: Շատ հաւանաբար թագին միւս կողմը կայ միւսնոյն պատկերացումը: Դժբախտաբար գաղափար չունինք խոյրի ճակատը զարդարող մոթիֆներուն մասին: Շատ հաւանաբար, հոն գտնուող զարդերը պիտի պատկերացնեն Տիգրան Մեծի պետական զինանշանը կամ նման խորհրդապատկեր մը:

Այդ աստղը ութը շառաւիղներ ունի եւ կ'ունենանք այն տպաւորութիւնը թէ ան կը ներկայացնէ արեւը, որպէս ամենափայլուն եւ գերագոյն աստղը երկնակամարին եւ միւսնոյն ատեն ջերմութեան կեզրոնը: Այդ աստղը կը գտնենք նաեւ պարթեւական դրամներու վրայ. պարթեւները կրակապաշտ ըլլալով, կրակի, լոյսի եւ ջերմութեան որպէս խորհրդանիշ արեւը պատկերացուցած են արքաներու թագերուն վրայ: Ճիշդ պիտի ըլլար գուցէ ենթադրել, թէ Մեծն Տիգրան, ծունկի բերելէ առաջ Պարթեւական կայսրութիւնը, եւ իրեն վերապահելէ ետք Արքայից Արքայի բարձրագոյն տիտղոսը,



որ սեփականությունն էր Պարթեւ արքաներու, սեփականացուցած ըլլայ նաեւ անոնց «Արեւ»ի խորհրդապատկերը:

Գալով արծիւներուն, գուցէ ատիկա եղած է որոշ հետեւողականութեամբ: Տիրելով նախապէս յոյն եւ հելլենիստական մշակոյթով սնած աշխարհներու վրայ, ան եղած է համակրող յունական մշակոյթին. ծանօթ է որ յունական դիցաբանութեան մէջ, իւրաքանչիւր չաստուած ունէր իր նախընտրած կենդանին: Արծիւը կը պատկանէր Զեւսին, Յովազը՝ իր կնոջ Հերային, Բուն՝ Աթենային եւայլն: Արծիւը խորհրդանիշն էր յունական չաստուածներու աւագագոյնին՝ Զեւսին, որպէս բարձունքի եւ վսեմութեան մարմնացում: Ըստ Փոքր Ասիական եւ հելլենիստական ըմբռնումներուն եւ սովորութեանց, Մեծն Տիգրան, իր նուաճումներէն ետք, ստացած էր թէոս «աստուած» տիտղոսը:

Որպէս գերագոյն պետը նուաճուած Փոքր Ասիոյ, որպէս Արքայից Արքայ եւ իբրեւ «աստուած», բնական պիտի ըլլար իւրացնել գերագոյն աստուծոյ խորհրդանիշները, պարթեւական արեւն ու հելլենիստական արծիւը:

Թագը իր ճակատին միացնող մարգարտաշար ժապաւէնը կամ երիզը հանգոյցով մը կը հանգչի ծոծրակին վրայ, եւ երկու ծայրերը կ'իջնեն ուսերուն վրայ: Այս diadèmeը, առ հասարակ, մեր մօտ կը կոչուի ապարօշ: Ապարօշ բառը որոշապէս չէ ստուգաբանուած հայերէնի մէջ: Անձնապէս կը խորհիմ թէ ան ծագած է ասորերէն ըպօ ըիշօ բառերէն Ըպօ՝ Շուրջ իմաստով, իսկ ըիշօ՝ Գլուխ իմաստով, որով՝ գլխուն շուրջ փաթթուած փաթոյթ մը:

Սոյրը դնելէ առաջ, գլուխը ծածկած է շատ հաւանաբար մետաքսէ կամ նուրբ բուրդէ բանուած եւ թանկարժէք ակերով զարդարուած ծածկոցով մը, ինչպէս կ'ընեն ասորի կղերականները: Այդ ծածկոցը կ'իջնէ ականջներէն ու ծոծրակէն՝ վար:

Դրամին մէջ կ'երեւի թագաւորական քղամիզէն մաս մը միայն, որ անպատճառ ծիրանագոյն եղած ըլլալու է, թանկագին քարերով զարդարուած:

Ականջին ունի օղ մը, ըստ արեւելեան եւ սելեւկեան վեհապետներու սովորութեանց:

Դրամին յետսակողմը, նոյնպէ՛ս մարգարտաշար շրջագիծի մը մէջ, կը ներկայանայ պատկերը կնոջ մը, պարսպապատ թագով, երկար զգեստով, ձեռքին՝ արմաւենիի ճիւղ, ու նայուածքը՝ դէպի աջ:

Կը հանգչի ժայռի մը վրայ: Ոտքերուն տակ երկարած է դիցուհի մը, փշապսակ մը գլխուն եւ ձեռքը դափնիի պսակ մը: Ան մերկ է եւ պարտուած:

Դրամին շուրջ կը կարգանք վազիլէոս Դիկրանոյ, յայտնքն «Տիգրանայ Արքային» եւ լուելեայն կը հասկցուի «Դրամը»:

Դիցուհիին այս կերպարը պատահական չէ: Ան իր մէջ կը խտացնէ Անտիոքի հիմնարկութեան եւ պաշտամունքներու հետ առնչութիւն ունեցող երեւոյթներ եւ ապա, Տիգրան Մեծին նուաճման յիշատակը յաւերժացնող խորհրդապատկեր մը:

Նախ ուսումնասիրենք դիցուհիին թագը: Ան պարսպապատ ձեւ մը ունի եւ համաձայն յունական կերպարուեստին, կը խորհրդանշէ ինչ որ «քաղաք» մը: Յունական քաղաքներուն փողերանոցներուն մէջ հատանուած դրամները առ հասարակ իրենց քաղաքին գլխաւոր դիցուհին կը ներկայացնեն պարսպապատ թագով: Իսկ դիցուհին կը կոչուի Tyche կամ պաշտպան ոգին: Ուրեմն իւրաքանչիւր քաղաք ունէր իր պաշտպան ոգին, որ քաղաքացիներուն անհատական թէ հաւաքական կեանքին մէջ ունէր շատ կարեւոր դեր մը: Իւրաքանչիւր քաղաքացի, իր առօրեայ կեանքին ընթացքին, ամէն առիթով աղօթք մը կը մըթմըթար անոր հասցէին, կը զոհաբերէր, կ'ուխտէր եւ կը յուսար, ակնկալելով անոր բարիքները: Քաղաքին բարօրութիւնն ու ճակատագիրը կախուած էին դիցուհիին տրամադրութիւններէն որուն ի պատիւ կը բարձրանային տաճարներն ու մատուռները, ուխտեղիներն ու արձանները:

Քաղաքի մը հիմնարկութիւնը, անշուշտ, կապուած էր որոշ ծիսակատարութիւններու: Անտիոքի պարագային կը յիշուի թէ Ք. Ա. 300 թուականին հիմնուեցաւ Սելեւկոս Յաղթականի (Նիքաթոր) կողմէ որ զայն անուանեց այդպէս՝ յաւերժացնելու համար հօրը յիշատակը, քանի որ ան կը կոչուէր Անտիոքոս: Հետագային, քաղաքին մօտ գտնուող Մոն Սիլ-



քիուսի (Միրբիուս լեւան) գազաթին՝ բարձրացաւ հսկայ արձան մը: Այդ արձանը կը մարմնացնէր քաղաքին դիցուհին: Դժբախտաբար հետագային այդ արձանը կործանեցաւ երկրաշարժի մը պատճառով. անոր մէկ օրինակը պահուած է Վատիկանի թանգարանին մէջ:

Բայց կը թուի թէ ան կանգուն կը մնար, երբ Տիգրանի բանակները գրաւեցին Անտիոքը եւ անոր ներշնչեցին իր դրամներուն ներկայ կերպարը:

Ըստ յունական սովորութիւններուն, քաղաքի մը հիմնարկութեան ամենակարեւոր պայմաններէն մէկն էր կոյս եւ գեղեցիկ աղջկան մը զոհարեումը, որուն ոգին կամ հոգին կ'աստուածանար եւ կը դառնար քաղաքին պաշտպան դիցուհին: Անտիոք ալ ունեցաւ իր զոհը եւ Ամաթէ անունով գերազանցապէս գեղեցիկ աղջիկ մը, իր արիւնով գրաւ հիմքնոր քաղաքին, դառնալու համար, դարեր ամբողջնաեւ անոր պաշտպան դիցուհին:

Կը յիշուի թէ նշանաւոր քանդակագործ Եւտիքիտէս այդ կոյսին գեղեցկութենէն ներշնչուած, անոր դէմքը յաւերժացնել ուզած է իր արձանով: Բուն յաւերժացնողը եղաւ սակայն Տիգրան Մեծ՝ իր դրամներով:

Ժայռը որուն վրայ նստած է դիցուհին, կը խորհրդանշէ Միրբիուս լեոք:

Ինչպէս ծանօթ է, Անտիոք շինուած է Որոնդէս գետին մօտ եւ սովորութիւն է գայն կոչել Որոնդէսի Անտիոքը, գայն զանազանելու համար միւս տասնըվեց ուրիշ քաղաքներէն որոնք բոլորն ալ Սելեւկոսի կողմէ հիմնուած ըլլալով կոչուած էին Անտիոք: Դարձեալ ըստ յունական սովորութեան, բոլոր գետերն ալ ունէին իրենց զիջ կամ դիցուհիները: Ուրեմն այս դրամին վրայ կը տեսնենք Որոնդէսի աստուածը, դիցուհիին ոտքերուն տակ, լողացողի դիրքով. անոր գլխուն վրայ դրուած է փշէ պսակ մը, ակնարկելով անոր պարտութեան:

Եթէ այս պատկերացումը առնենք իր ընդհանուր համեմատութիւններով, պարզ կը դառնայ թէ շեշտը դրուած է դիցուհիին վրայ, որուն կերպարը կրնար ընդհանրանալ եւ պատշաճիլ յունական մշակոյթով սնած բոլոր քաղաքներուն:

Տիգրան Մեծ, գրաւելով Սուրիան, Փիւնիկէն եւ Պաղեստինը, շինման մէջ պիտի գար քաղաքներու հետ, ուր տիրապետող մշակոյթը յունականն էր:

Տիրանալով Սելեւկեան փտած եւ քայքայուած պետութեան, Տիգրան Մեծ անոնց կը խոստանար մանաւանդ խաղաղութիւն եւ բարօրութիւն: Հետեւաբար իր դիցուհիին ձեռքին մէջ դրաւ արմաւենիի ճիւղ մը ի նշան խաղաղութեան եւ բարօրութեան:

Ռէյնախ՝ իր հոռոմէական պատմութեան մէջ կ'ըսէ, թէ այս տասնըչորս տարիներու շրջանը, զոր Տիգրան Մեծ անցուց Կիլիկիայէն Պաղեստին երկարող երկիրներուն մէջ, հոն գտնուող ժողովուրդներուն համար եղաւ անդորրութեան, երջանկութեան եւ բարօրութեան շրջան մը:

Դրամին շուրջ գտնուող մենագրերը յունարէն են: Նիւթէն դուրս է միջամտել այն թնճուկին, թէ Մաշտոցէն առաջ հայկական տառեր ունեցած ենք թէ ոչ: Բայց Տիգրանի պարագայէն մեկնելով, պիտի ըսեմ թէ գուցէ ան յունական տառեր գործածեց, որովհետեւ իր հսկայ կայսրութիւնը կ'ընդգրկէր մեծ մասով յունախօս եւ յունաբարբառ ժողովուրդներ, եւ ապա, իր շրջանին է որ կը սկսի վաճառականական ընդարձակածաւալ գործունէութիւն մը՝ դրացի եւ հեռու երկիրներու հետ, որոնք դարերով սովորութիւն ըրած էին յունական կամ յունատառ դրամներով գործելու:

Նոյն տնտեսական քաղաքականութեան հետեւեցան նաեւ պարթեւները, որոնց դրամները յունագիր էին, եւ մանաւանդ հոռոմէական կայսրութիւնը, որ հակառակ տիրապետող իր հեղինակութեան, չկրցաւ լատիներէն դրամները պարտադրել, այլ Արեւելքի համար մինչեւ վերջ հատանեց յունատիպ եւ յունատառ գիրերով դրամներ:

Յաճախ ժայռին տակ եւ արմաւենիի ճիւղին կից կան առանձին կամ յունարէն երկու գիրերու միացումով ստեղծուած փակագրեր: Նման փակագրեր առ հասարակ կը մատնանշեն տարեթիւ մը կամ սկզբնատառերն են քաղաքին, որուն փողերանոցին մէջ հատանուած են այդ դրամները: Սակայն դժբախտաբար, Մեծն Տիգրանի պարագային, այդ նշանագրերը ցարդ կը մնան անբացատրելի եւ գուցէ սկզբնա-



տառերն ըլլան փողերանոցներու պատասխանատու որոշանձներու:

Անշուշտ, նման վարկած մը, կ'ենթադրէ որոշ վերապահութիւններ:

ԱՐՏԱԻԱԶԴ Բ. (Բ. Ա. 56-34)

### ԶՈՐԵՔԴՐԱՄ

Արտաւազդ կը ներկայանայ սովորական հայկական ժանրաւոր խոյրով, ա'յն տարբերութեամբ -բաղդատած՝ Տիգրան Մեծի խոյրին- որ մէջտեղի արծիւին երկու կողմերը գտնուող արծիւները փոխարինուած են, անորոշ զարգանչանով մը: Փոխուած է վզկալը, իսկ ականջակալները ամփոփուած են ծոծրակին ետեւ, ազատ են վիզը, ականջները եւ ուսերը: Արքայական քղամիզը ճարմանդով մը ագուցուած է աջ ուսին վրայ: Ճակատէն դէպի ծոծրակը կապած է ապարօջ մը:

Կը կրէ օղեր եւ մարգարտաշար մանեակ:

Տիգրանէն Արտաւազդ շատ բան փոխուած է խոյրի յարարանքէն: Սակայն, ամենակարեւորը այդ երկու արծիւներու անհետացումն է: Հետեւաբար, կարելի չէ պնդել, թէ արծիւը եղած ըլլայ Արտաշէսեան շրջանի պետական զինանշանի զարդը եւ ուրեմն, այդ արծիւներու ներկայութիւնը՝ Տիգրանի թագին վրայ՝ կը դառնայ լոկ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔ: Կարելի է նաեւ ենթադրել, թէ նկատի ունենալով, նո'յն շրջանի Հռոմէական գերակայութիւնը Փոքր Ասիոյ մէջ, Արտաւազդ խոհեմութիւն նկատած ըլլայ, վերցնել արծիւները, որոնք հռոմէական զէնքերու ամենազլխաւոր զինանշաններն էին:



Երկրորդ մասին վրայ կը կարդանք:

«ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅ ԱՐՏԱԻԱԶԴԻ - ԱՍՏՈՒԾՈՅ»: Դրոշմին կեդրոնը կայ քառածի կառք մը իր կառավարով: Ասիկա հեղինիստական շրջանի ամենաընդհանրացած դրոշմներէն մէկն էր եւ կը բովանդակէր յաղթանակի գաղափարը: Առաջին անգամ զայն գործածած է հաւանաբար Մեծն Աղեքսանդրի հայրը՝ Ֆիլիբ Բ., երբ յաղթական կը վերադառնայ Ողիմպիոսի կառարշաւային մրցումներէն:

Արտաւազը կը ներկայանայ, որպէս «Թագաւորաց Թագաւոր» եւ աստուած տիտղոսներով: Այս տիտղոսները կ'ենթադրեն, թէ այդ շրջանին Հայաստան բաւական հզօր էր տակաւին Արեւելքի մէջ, եւ մանաւանդ յաչս Պարթեւական պետութեան, որմէ Տիգրան խլած էր Արքայից Արքայի տիտղոսը, որ փոխանցուեցաւ Արտաւազին:

Թէեւ շատ հազուադիւր, սակայն Արտաւազէն գոյութիւն ունին արծաթ դրամ եւ չորեքդրամ, ինչպէս նաեւ պղինձ դրամներ:

### ԱՐՏԱՇԷՍ Բ. (Ք. Ա. 30-20) ՈՐԴԻ ԱՐՏԱԻԱԶԴԻ

Հակառակ անոր որ Արտաշէս Թագաւորեց ամբողջ տասը տարի, տակաւին ի ձեռին չունինք Արտաշէսի անուամբ հատանուած դրամ: Շատ հաւանաբար, իր օրով, պարսկական եւ հռոմէական դրամները միասնաբար շրջագայութեան մէջ կը գտնուէին, մեծ հօրը Տիգրանի եւ Արտաւազի դրամներուն հետ:

### ՏԻԳՐԱՆ Գ. (Ք. Ա. 20-8) ՈՐԴԻ ԱՐՏԱԻԱԶԴԻ

Իր դրամներէն շատ քիչեր ծանօթ են եւ կը կրեն «Մեծ», «Հայրասէր» եւ «Յունասէր» տիտղոսները: Ան կը կրէ նաեւ «Աստուած» տիտղոսը:

### ՏԻԳՐԱՆ Դ. (Ք. Ա. 8-5) ԵՒ (Ք. Ա. 2-1)

Արտաշէս Բ.-էն վերջ, միայն ինք գործածած է «Թագաւոր Թագաւորաց» տիտղոսը:

### ԱՐՏԱԻԱԶԴ Գ.

Դրամ չունինք իրմէ:



## ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

(Ք. Ա. 189-էն Ք. Վ. 1)

Մեծն Աղեքսանդրի յաղթական նուաճումներով է որ վերջ գտաւ Երուանդունիներու իշխանութիւնը Հայաստանի մէջ: Երուանդունիք Աքիմենեան Պարսիկներուն կողքին կուուեցան Մեծն Աղեքսանդրի դէմ:

Թէեւ Աղեքսանդր Աշխարհակալ Հայաստանը առանձնապէս չնուաճեց, սակայն իր յաջորդները՝ Սելեւկեաններուն անուանական ազդեցութեան տակ, մտան Հայաստան, Փոքր Ասիական այլ երկիրներու եւ Պարթեւաստանի կարգին: Սելեւկեանները՝ առանց ուղղակի միջամուխ ըլլալու հայկական պետութեան ներքին գործերուն, անոնց հսկողութիւնը յանձնեցին ծագումով հայ, տեղացի փոխարքաներու: Հոռմ հաշուեյարդարի ենթարկելի վերջ իր երկարամեայ պատերազմները՝ Գարդակենի կայսրութեան հետ, տիրապետելով Միջերկրականին, իր ուշադրութիւնը դարձուց դէպի Յունաստան, ապա՝ Արեւելք:

Արեւելքի հարստութիւնը, չափազանցուած համեմատութիւններով պատկերացուած, սրած էր Հռոմի վաշխառու, կողոպտիչ բնագոյներն ու ախորժակները:

Հոռմ, անշուշտ, պիտի բախէր Սելեւկեան կայսրութեան: Ուրեմն զիմեց զինուորական եւ զիւրանագիտական լայն

գործունէութեան: Սելեւկեան լուծին եւ հոգատարութեան տակ գտնուող երկիրները ան քաջալերեց, որ ըմբոստանան, խոստանալով իրագործել անոնց ձգտումները դէպի անկախութիւն:

Վճռական պատերազմը Հռոմի եւ Սելեւկեան կայսրութիւններուն միջեւ տեղի ունեցաւ 190-ին (Ք. Ա.), Մակնեգիոյ մէջ: Փոքր Ասիոյ մէջ անկախ դարձան կարգ մը պետութիւններ, որոնց շարքին ստեղծուեցան նաեւ երեք հայկական թագաւորութիւններ:

Առաջինը՝ Մեծ Հայքի մէջ, թագաւոր ունենալով Արտաշէս Ա.ը:

Երկրորդը՝ Ծոփքի մէջ, թագաւոր ունենալով Զարիադրէսը կամ Զարեհը:

Երրորդը՝ Փոքր Հայքի մէջ, թագաւոր ունենալով Միհրդատը:

Թէեւ Մեծ Հայք եւ Ծոփք սահմանակից էին, Փոքր Հայք Մեծ Հայքէն կը բաժնուէր պոնտական հողերով: Հետեւաբար ան հետագային կցուեցաւ Պոնտոսին, Միհրդատ Եւպատրի շրջանին:

Արտաշէս երկար պատերազմներ մղեց Հայաստանը ընդլայնելու համար եւ յաջողեցաւ ընդարձակ երկիր մը ձգել իր ժառանգորդներուն: Սակայն չկրցաւ կցել Ծոփքը, որ մնաց անկախ մինչեւ որ Մեծն Տիգրան իրագործեց այդ ծրագիրը:

Արտաշէս 166-ին (Ք. Ա.) հիմնեց Արտաշատ մայրաքաղաքը, որ դարձաւ Արեւելքի Հռոմը, եւ մեռաւ մօտ 160-ին:

Դժբախտաբար իրմէ դրամ չունինք ցարդ: Ինք որ հելլենիստական սովորութեանց ծանօթ էր, իր առաջին գործը ըլլալու էր դրամ հատանելով իր երկրին անկախութիւնը յայտարարել: Եթէ այդպէս եղած է, զարմանալի է թէ մօտ երեսուն տարի տեւող երկարամեայ իշխանութեան մը ընթացքին հատանուած հազարաւոր դրամներէն, մէկ հատ իսկ տակաւին գտնուած չէ:



Արտաշէսին յաջորդեցին իր երկու որդիները՝ Արտաւազդ Ա. եւ Տիգրան կամ Տիրան Ա. որոնց մասին պատմական աղբիւրները լուռ կը մնան:

Տիգրան Ա.-ին յաջորդեց իր որդին Տիգրան Բ. որ ծանօթ է առաւելապէս Մեծն Տիգրան յորջորջումով: Ան ծնած ըլլալու էր մօտաւորապէս 141-140 (Ք. Ա.) եւ պատանդ կը մնար Պարթեւներուն մօտ: Տիգրան Բ. վերագարձաւ Հայաստան, ըստ պատմութեան, եօթանասուն հովիտներ զիջելով Պարթեւներուն՝ որպէս փրկագին: Ու թագաւոր օծուեցաւ Ք. Ա. 95-ին, հո'ն ուր յետոյ պիտի հիմնէր իր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտ:

Յաջորդ տարին իսկ, ան կ'իրականացնէր մեծ հօր Արտաշէսի երազը, Հայաստանին կցելով Ծոփքը որուն վերջին թագաւորն էր Արիանէ:

94-ին (Ք. Ա.) Տիգրան եւ Պոնտոսի Միհրդատ թագաւորը կը համաձայնէին ընդարձակելու համար իրենց առեւտրական յարաբերութիւնները:

Կապաղովկիան որ Արեւմտեան սահմանն էր թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Պոնտոսի, զինուորական կարեւոր նշանակութիւն ունէր երկու վեհապետներուն համար:

Հոռոմ իր հովանաւորութեան տակ առած էր Կապաղովկիան, ինչպէս նաեւ Բերկամը, Կալաթիան եւ դեռ Պիւթիւնիան:

Բերկամի եւ Պիւթիւնիոյ վեհապետները իրենց երկիրները յետ մահու կտակած էին Հոռոմին: Առաջինը 133-ին, իսկ երկրորդը 74-ին: Ուրեմն հոռոմէական պատուար մը կը բարձրանար Արեւելքի դէմ, ու ակնյայտօրէն կը ձգտէր յառաջանալու դէպի Փոքր Ասիոյ խորքը:

93-ին (Ք. Ա.) Մեծն Տիգրան գրաւեց Կապաղովկիան, որ հետագային դարձաւ կռուախնձոր Հոռոմի եւ Հայ-Պոնտական պետութեանց միջեւ:

90-88 (Ք. Ա.) թուականներուն, Տիգրան գէնքերը դարձուց դէպի Արեւելք եւ Հարաւ: Նախ պարտութեան մատնեց Պարթեւները, որոնց հետ ան հին հաշիւ ունէր, վերագրաւելով իր զիջած եօթանասուն հովիտները: Ապա գրաւեց Ատրպատականը, Ադիապէնէն, այսինքն՝ Նինուէն եւ Արպալան ու հասաւ Պարթեւական մայրաքաղաք Էկպատանի՝ ներկայ Համատանի պարիսպներուն առջեւ: Ու գրաւեց Կորքուքը, Միջագետքը, Նիկտոնիան, այսինքն Նիսիպիինի շրջանը եւ Օսրոնինը կամ Ուրֆան:

Այս նուաճումներէն ետք, ան իւրացուց մինչեւ այն ատեն երկու հարիւր տարիներէ ի վեր Պարթեւներուն վերապահուած Արքայից Արքայ տիտղոսը, զոր հետագային դրոշմել տուաւ իր դրամներուն վրայ:

84-83 (Ք. Ա.) թուականներուն, Սուրիան կը գտնուէր տակաւին սելեւկեան իշխաններու լուծին տակ: Բզկտուած եւ ճնշուած, մանաւանդ գերդաստանական վէճերու եւ պատերազմներու պատճառով, ժողովուրդը հասած էր անտանելի դժուարութեան եւ ստրկային վիճակի:

Անտիոք սի'րտն էր ու դարաւոր մայրաքաղաքը՝ Սելեւկիոյ նախկին կայսրութեան. Տիգրան ուզեց գրաւել զայն որպէսզի տէր կանգնի Սուրիոյ: Տիգրան գրաւեց Անտիոքը, Սուրիան, անցաւ ծովեզերեայ քաղաքներով, Լաթաքիա, Պէյրութ, Սուր, Սայտա: Իր թիկունքը պաշտպանելու համար, գրաւեց նաեւ Դամասկոսն ու Սուրիոյ Արեւելեան մասերը:

83-ին (Ք. Ա.) գրաւեց դաշտային Կիլիկիան:

74-71 (Ք. Ա.) վերագրաւեց Կապաղովկիան եւ Հայաստանին կցեց Կոմմաղէնը, այսինքն՝ Հալէպի Հիւսիսէն մինչեւ Մարաշ երկարող երկրամասը:



71-69 (Ք. Ա.) վերադարձաւ մինչեւ Պաղեստին եւ գրաւեց Աքքան, այսինքն Աբէ Բթոլէմայերը, եւ ըստ կարգ մը պատմաբաններու, հասաւ մինչեւ Եգիպտոսի սահմանները:

Ստիպուեցաւ սակայն վերադառնալ, երբ իմացաւ թէ Հռոմէական բանակները, յանկարծակի արշաւած են Հայաստանի վրայ, եւ իր հարազատ գաւազը՝ Տիգրան Կրտսերը դաւաճանած է իրեն եւ իր հայրենիքին:

Ուրեմն 95-էն 69 (Ք. Ա.), մօտ քսանհինգ տարիներու ընթացքին, Տիգրան ստեղծած էր կայսրութիւն մը, որուն արեւելեան սահմանները կ'երկարէին Կուր գետէն եւ Կասպից ծովէն մինչեւ Կիլիկիա, եւ պոնտական սահմաններէն մինչեւ Պաղեստին:

Ք. Ա. 69 թուականի 6 Հոկտեմբերին է որ, Տիգրանակերտի առջեւ, Տիգրան պարտուեցաւ հռոմէական վարժ, արդիական կարգուսարքով օժտուած է կարգապահ լեգէոններուն առջեւ: Ամենէն վերջ, հռոմէական բանակները ուղեցին նաեւ քանդել Արտաշատը, սիրտը Հայաստանին: Տիգրան կուուեցաւ փրկելու համար մայրաքաղաքը: Ի վերջոյ, հռոմէացիք քաշուեցան եւ ապսամբեցան իրենց զօրավարներուն դէմ:

Վերջնական պարտութիւնը տեղի ունեցաւ, երբ Հռոմ ու իր դաւաճան գաւազը մէկ կողմէն, պարթեւները միւս կողմէն, սկսան ճնշել Մեծն Տիգրանի վրայ:

Ռազմագէտ ու զիւնագէտ Տիգրան, զիտցաւ Պոմպէոսի հետ կնքել դաշինք մը, զոր կարելի է նոյնիսկ պատուարեր նկատել, որովհետեւ ատով ան պահեց իր հայրենի հողերը, զիջելով միայն կարգ մը սահմանային երկիրներ զորս գրաւեր էր. պահեց նաեւ իր տիրոջ սուր:

Նիւթէն դուրս է մտնել տեղի ունեցած մարտերու եւ ճակատամարտերու մանրամասնութեանց մէջ: Բայց այս պահուն, ես կը յիշեմ իմ նախակրթարանի պատմութեան դասագիրքս, ուր՝ այնքան անիմաստօրէն նկարագրուած է Տիգրանի եւ Պոմպէոսի հանդիպումը, Պլուտարքոսի նման օտար եւ միակողմանի, հակահայ պատմագիրներու հետեւողութեամբ. հոն՝ Տիգրան կը պատկերացուի Հռոմէացի զօրավարին առջեւ, գլխահակ ու նուաստացած վիճակի մէջ, այն աստիճան որ ան յանձն կ'առնէ իր թագը դնել զօրավարին

ոտքերուն առջեւ, իր ճակատագիրը յանձնելով անոր բարեացակամութեան. իբր թէ Պոմպէոս խղճահար եւ կարեկից, վերցուցեր է եւ իր մօտ նստեցուցեր՝ ծերունագարդ արքան ու զայն մխիթարեր, ապա ճոխ խնջոյքով եւ ազնիւ վերաբերումով զայն վերահաստատեր է իր գահին վրայ...

Ասիկա չափազանց անհեթեթ եւ տգէտ երեւոյթ է հայ պատմագիրին համար, որովհետեւ կարելի չէ պատկերացնել պատերազմական գոյավիճակ մը՝ որուն ընթացքին պետութեան մը կենսական շահերը խնդրոյ առարկայ ըլլան, եւ գտնուի զօրավար մը, որ իր վերաբերմունքին մէջ ցուցաբերէ մարդկային ազնուութեան նման զգացումներ: Հարցը աւելի՛ իրական բնոյթ կը ստանայ Հռոմի եւ անոր որեւէ մէկ զօրավարի պարագային, քանի որ հռոմէացիք միշտ եղած են աշխարհի ամենամեծ կողոպտիչները ինչպէս նաեւ ամենաանգութ բռնակալները, ծծելով արիւնը իրենց հպտակներուն, գրաւելով անոնց ինչքերը եւ հողերը, զանոնք միշտ խեղդելով ծանր պարտքերու մէջ, ճնշելով ահարկու, տոկոսներու բեռան տակ. անոնք՝ ի հարկին, առանց որեւէ խղճահարութեան, խեղճ պարտատէրերը իրենց կիներով եւ զաւակներով միասին ծախած են որպէս ստրուկ: Հռոմէն եւ Պոմպէոսէն ազնուութիւն սպասել միամտութիւն էր, սակայն ականկալել որ անոնց իւրաքանչիւր քայլը առնուած էր զիւնագիրտական եւ քաղաքական հեռատես շահերու ականջութեամբ, ատիկա ե՛ւ իրական ե՛ւ բնական երեւոյթ է:

Արդարեւ, Հռոմ պէտք ունէր Հայաստանին՝ որպէս պատուար պետութիւն՝ իր եւ իր յաջորդ զօրաւոր ոստիին պարթեւներու միջեւ: Հռոմ լաւ գիտէր թէ Տիգրան կ'ատէր պարթեւները: Հռոմ գիտէր նաեւ թէ Տիգրանը ծունկի բերելու պարագային, հայերը պիտի միանային պարթեւներուն եւ զինք պիտի բարձրացնէին Հռոմի դէմ: Հռոմ ճիշդ կերպով կը խորհէր թէ պիտի չկարենար զիւրաւ ընկճել լեռնոտ երկրի մը ազատասէր ժողովուրդը:

Պոմպէոս ուզեց սիրաշահիլ Տիգրանը եւ իր միջոցով հայկական լեռնաշխարհը շահիլ իր կողմը՝ պարթեւներուն դէմ, ապահովելով իր թիկունքը յաջորդ քայլին համար, որուն նպատակն էր ընկճել պարթեւները:



Պոմպեյոսի վերաբերումը ազնուութեան արդիւնք չէր, այլ՝ կշռուած եւ հեռատես դիւանագիտութեան հաշիւ, դրդուած Հռոմի գերագոյն շահերէն, որոնց ան զոհեց նոյնի՛սկ Տիգրան Կրտսերը, որ դաւաճանած էր իր հօրը եւ իր հայրենիքին, եւ օժանդակած՝ հռոմէական բանակներուն՝ զանոնք առաջնորդելով դէպի Արտաշատ: Պոմպեյոս զայն շղթայեց եւ Հռոմ տարաւ մասնակցելու համար, ի՛ր շղթաներով, զօրավարին շքերթին:

Ուրեմն Տիգրան Մեծ ստեղծած էր կայսրութիւն մը, որ բացի հռոմէական պատերազմներէն, մօտ կէս դար, ունեցաւ անդորր շրջան մը՝ ուր զարգացան վաճառականութիւնն ու տնտեսական յարաբերութիւնները դրացի եւ հեռուոր երկիրներու հետ: Հայաստանէն կ'անցնէին վաճառականական գրլխաւոր ուղիներն ու ճանապարհները, որոնք Արեւելքն ու Արեւմուտքը կը կապէին իրարու՝ զարգացնելով աննախընթաց տարանցիկ վաճառականութիւն մը: Հայկական քաղաքները կը բարգաւաճէին եւ կը շէննային զօրաւոր արքային շուքին տակ: Սորենացին իրաւացի կերպով կը յիշէ, թէ այդ շրջանին, մարդիկ ողողուած էին ոսկիով, արծաթով եւ թանկագին քարերով, ու կը կրէին այնքա՛ն գեղեցիկ հագուստներ, որ տգեղներն անգամ կը գեղեցկանային, իսկ գեղեցիկներն ալ կը նմանէին զիւցազուներու: Հայկական բանակը մեծամասնութեամբ դարձած էր հեծելազօր, իսկ հետեւակները պաշտպանուած էին զրահներով, վահաններով եւ մետաղէ զգեստներով, այնպէս որ երբ բանակը մէկտեղուէր ոեւէ առիթով, անոնց զրահներուն փայլը վախ կ'ազդէր թշնամիներուն:

Տիգրան ուզեց հայ ժողովուրդին մակարդակը բարձրացնել օգտուելով զինք շրջապատող հելլենիստական ժողովուրդներու մշակոյթէն եւ հրաւիրեց մասնագէտներ, ինչպէս այսօր թերաճ ազգեր կը դիմեն աւելի զարգացած ժողովուրդներու: Օտարացում չէր ասիկա եւ ոչ ալ օտարասիրութիւն, այլ ձգտում մը իւրացնելու ինչ որ լաւ էր եւ օգտակար, ինչ որ գեղեցիկ էր եւ դաստիարակիչ: Սորքին մէջ, պէտք չէ մոռնալ թէ Տիգրան հիմը դրաւ մեր պատմական Հայաստանին, ու իր բանակներու սուրիներով գծեց անոր պատմա-աշխարհագրա-

կան քարտէզը: Տարածեց եւ պարտադրեց հայերէն լեզուն ու ներշնչեց զգացումը ազգային հպարտանքին. ան իր անունը յաւերժացնելու համար ծրագրուած քաղաքը կոչեց ոչ թէ Տիգրանապոլիս հետեւելով հելլենիստական բանաձեւին, այլ իւրացուց արեւելեանը, հայկական «կերտ» մասնիկը:

Իր ստեղծած կայսրութեան համար, անհրաժեշտ էր ստեղծել նաեւ վաճառականական դիւրութիւններ. զարգացուց հելլենատիպ դրամներու շարք մը, որոնցմէ այսօր ունինք գեղեցիկ նմոյշներ՝ արծաթէ եւ պղինձէ, թէեւ հազուադէպ եւ քիչ ուսումնասիրուած եւ սակայն յարաճուն հետաքրքրութեան առարկայ: Անկասկած, Տիգրանի դրամներու այս նմոյշները, ապագային պիտի դասաւորուին եւ ուսումնասիրուին հանգամանօրէն, նոր նմոյշներու յաւելման, եւ մատենագիտական աղբիւրներու լոյսին տակ:

Թէեւ ցարդ ոսկի դրամ գտնուած չէ, սակայն գեղեցիկ նմոյշներ ունինք իր արծաթ չորեքդրամներէն (Tetradrachme), որոնք առ հասարակ հատանուած են Անտիոքի մէջ: Կը կշռեն մօտ 14-15 կրամ: Կան արծաթէ դրամներ մօտ չորս կրամ կշիռով, եւ ապա՝ անկանոն պղինձներ, որոնք եղած են օժանդակ դրամներ, տեղական բնոյթ ունեցող եւ հատանուած զանազան քաղաքներու մէջ, անմիջական պէտքերու համար, առանց պետական հակակշիռի, որով, չեն հետեւիր կանոնաւոր կշռային դրութեան մը:

Արտաշէսեան եւ մանաւանդ Տիգրան Մեծի դրամները կը գտնուին այժմ սկզբնական ուսումնասիրութեան փուլին մէջ: Անհրաժեշտ է զոյացնել ճոխ հաւաքածոյ մը տարբերակներու եւ մանաւանդ տեղեկագրել անոնց գտնուած վայրին անունը, ճշգրտօրէն, այլեւայլ կարեւոր մանարմասնութիւններով, կարենալ ճշդելու համար, դասաւորման եւ շրջանառութեան ճշգրիտ պատկեր մը:

Տիգրան իշխած է մինչեւ 56 կամ 55 թուականը (Ք. Ա.):



ԱՐՏԱԻԱԶԴ Բ.

(ԻՇԽԱԾ՝ 56-էն 34 ԵՒ ՄԵՌԱԾ՝ 30-ԻՆ Ք. Ա.)

Արտաւազդ յաջորդեց հօրը եւ իշխեց մօտ 20 տարի: Շատ հաւանաբար գահակից էր իր ծերունագարդ հօր, իր շրջանին թէեւ Հայաստան կը շարունակէր ըլլալ զօրաւոր պետութիւն մը, սակայն դիւանագիտական մարզի մէջ, իրեն վերապահ-ուած էր փափուկ եւ ճակատագրական դիրք մը. Հայաստան կը գտնուէր երկու զօրաւոր պետութիւններու միջեւ, Հռոմի եւ Պարթեւաստանի: Վերջինը կրցած էր ինքզինք վերականգնել դիմագրաւելու համար հռոմէական վտանգը:

Որպէս պատուար պետութիւն, ան ենթակայ էր տեւական ճնշումի մէկ կամ միւս կողմին յարելու, եւ նուազագոյն կասկածի պարագային, պարթեւ կամ հռոմէական բանակները կը սպառնային Հայաստանին:

Արտաւազդ կրցաւ երկար ժամանակ երկրին չէզոքութիւնը պահպանել, մինչեւ որ 39-ին (Ք. Ա.) Հռոմ արեւելեան երկիրները յանձնեց՝ ընչաքաղց, շուայտ եւ աննկարագիր Մարկոս Անտոնիոսին ու զայն մեծ բանակով մը Արեւելք ղրկեց, իր նախորդին Կրասոս զօրավարին վրէժը լուծելու համար. Կրասոս Խառանի մէջ պարտուած էր եւ սպաննուած՝ պարթեւներուն ձեռքով:

Մարկոս Անտոնիոս վերսկսաւ պատերազմը պարթեւներուն դէմ: Իրեն օգնեց Արտաւազդ որպէս դաշնակից: Անտոնիոս անփորձ Արեւելքի եւ պարթեւական ռազմավարութեան,

չուզեց նոյնիսկ հետեւիլ Արտաւազդի թելադրութիւններուն: Արտաւազդ քաշուեցաւ իր բանակով, խնայելու համար իր զինուորներուն եւ Անտոնիոս պարտուեցաւ ու ստիպուեցաւ հաշտութիւն կնքել պարթեւներուն հետ՝ ամօթալի պայմաններով:

Ան իր մաղձը ուզեց թափել Արտաւազդի վրայ եւ զայն հրաւիրեց Եգիպտոս, ուր՝ ինք կը գտնուէր իր հոմանուհիին՝ Կղէոպատրայի մօտ: Արտաւազդ մերժեց երթալ: Անտոնիոս անձամբ յանկարծ երեւցաւ Հայաստանի սահմաններուն վրայ եւ խնդրեց Արտաւազդէն որ հանդիպում մը ունենայ իրեն հետ:

Արտաւազդ սխալը գործեց հաւատալու եւ մեկնեցաւ Անտոնիոսի մօտ. Անտոնիոս զինք կալանաւորեց եւ շղթայի զարկաւ իր զաւակներուն եւ թագուհիին հետ, զայն պտտցնելով բերդէ բերդ, որպէսզի բերդապահները, հարկադրաբար իրեն յանձնեն բերդերուն գանձերը:

Հայ բերդապահները մերժեցին: Անտոնիոս մեկնեցաւ իր հետ տանելով կալանաւորները դէպի Աղեքսանդրիա եւ զանոնք շղթայակապ մասնակից ըրաւ իր շքերթին՝ շրջանելու համար Կղէոպատրան:

Արտաւազդ արքան, իր թագուհին ու զաւակները մնացին բերդարգելուած մինչեւ Աքիսի պատերազմը՝ 31-ին (Ք. Ա.), ուր Օգտաւիանոս յաղթական դուրս եկաւ, իսկ Անտոնիոս անձնասպան եղաւ: Կղէոպատրա տակաւին յոյս ունենալով թէ կրնայ սիրաշահիլ Ատրպատականի Արտաւազդ թագաւորը որ ռիսերիմ թշնամին էր հայ Արտաւազդին, գլխատել տուաւ հայ թագաւորը եւ թագուհին, որոնք ըստ յունական աղբիւրներու, մերժած էին ծնրադրել Կղէոպատրայի առջեւ ու զայն դիցուհի անուանել: Յոյն պատմագիրներ գովասանքով կը խօսին հայ թագաւորին եւ թագուհիին խրոխտ եւ արքայաւայել կեցուածքին շուրջ:

Արտաւազդի մեծ զաւակը Արտաշէս Բ. կը մնար Հայաստան: Իսկ միւս երկու զաւակները Տիգրան Գ. եւ Արտաւազդ Գ. Անտոնիոսի պարտութեամբ եւ Օգտաւիանոսի յաղթական մուտքէն ետք Եգիպտոս, կը տարուին Հռոմ, հոն դաստիարակուելու համար:



Արտաշէս Բ. երբ կը լսէ իր հօր սպաննուիլը, հայ բանակներուն առաջնորդութեամբ կը ջարդէ Հայաստանի մէջ տեղաւորուած հռոմէական բոլոր բանակները: Շատ հաւանաբար իրեն օգնած ըլլան պարթեւներն ալ, հեռացնելու համար հռոմէական ազդեցութիւնը:

Հայաստան դարձաւ կռուախնձոր եւ ազդեցութեան գօտիի ռազմավայր, կազմուեցան հռոմէասէր եւ պարթեւասէր հոսանքներ կամ կուսակցութիւններ: Օգտաւիանոս թէեւ ուղղակի զինուորական ուժով չմիջամտեց, սակայն զիւրանագիտական սաղրանքներով սպաննել տուաւ Արտաշէսը, որուն համակրանքը իրաւացիօրէն կը հակէր դէպի դրացի Պարթեւաստանը:

### ՏԻԳՐԱՆ Գ. ( 20-6 Ք. Ա. ) ԵՂԲԱՅՐ ԱՐՏԱՇԷՍԻ

Արտաշէսի երկու եղբայրները Տիգրան Գ. եւ Արտաւազդ Գ. Եգիպտոսէն տարուած էին Հռոմ, ուր կը մնային իրենց հօրը Արտաւազդի վախճանումէն յետոյ: Հռոմէացիք զանոնք դաստիարակած էին իրենց ուղղութեամբ: Հեւեւաբար կայսրը Հայաստան կը զրկէ Թիպսիոս Քլօտիոս Նէրօն եւ Տիգրան Գ.-ը որդէս թագաւոր: Որով Հայաստանի հռոմէասէր կուսակցութեան աջակցութեամբ Հռոմ կը յաջողէր իր ազդեցութիւնը զօրացնել Հայաստանի մէջ:

Յարդ գտնուած դրամները պղինձ են միայն. անոնց վրայ՝ թագաւորը կը կրէ Արտաշէսեան խոյրը եւ հակառակ իր նախորդներուն մօրուսաւոր է:

Ասիկա տարօրինակ երեւոյթ է, որովհետեւ մօրուքը արեւելեան նորաձեւութիւն էր, մինչ Հռոմ մեծցած եւ դաստիարակուած թագաւորէ մը կը սպասուէր անմօրուս երեւալ: Գուցէ Տիգրան Գ. ուզած է իր կենցաղը դասաւորել արեւելեան ձեւով, մօտենալու համար պարթեւական սովորութեանց:

Հակառակ անոր որ Տիգրան գահ բարձրացաւ խաղաղ միջոցներով թէեւ հռոմէական բանակներու յենելով, սակայն հռոմէացիք զայն կը նկատեն նուաճում մը եւ ան դրամ հատանած է ԱՐՄԵՆԻԱ ԳԱԲԹԱ մակազրութեամբ, այսինքն, «Հայաստան նուաճեալ»:



Տիգրան Գ.-ին յաջորդեց իր զաւակը Տիգրան Դ. որ երկու անգամ զահ բարձրացաւ, մին 8-5 թ.ին (Ք.Ա.) իսկ միւսը 2-1 թ.ին (Ք.Ա.): Կ'ըսուի թէ ան ամուսնացած էր իր կէս քրոջ Երատոյի հետ: Որովհետեւ զահին յաջորդականութիւնը տեղի ունեցաւ առանց Հռոմէն կանխապէս առնուած հաւանութեան, Հռոմէական բանակ մը մտաւ Հայաստան եւ 5-ին (Ք. Ա.) զահագուրկ ըրաւ Տիգրան Դ.ը՝ անոր տեղը դնելով իր հօրեղբայրը՝ Արտաւազդ Գ.:

Սակայն երեք տարի ետք, հայերը Արտաւազդը կ'արտաքսեն եւ կը վերադարձնեն Տիգրան Դ.-ը որպէս օրինաւոր թագաւոր: Դարձեալ Հռոմէական բանակ մը կու գայ Հայաստան Caius Cesar-ի հրամանատարութեամբ: Հայերը տեղի կու տան եւ կ'ընդունին Հռոմի գերակայութիւնը եւ թագը Հռոմէն ընդունելու արարողութիւնը: Սակայն, Տիգրան Դ. կը սպաննուի հիւսիսային Կովկասէն Հայաստանի վրայ խուժող ցեղերու դէմ պատերազմի մը ընթացքին:

Քանի մը տարի օտար թագաւորներ բարձրացան Արտաշէսեան զահին վրայ, ինչպէս Արտաւազդի որդին՝ Ատրպատականի Արիապարզանէսը եւ ուրիշ Տիգրան մը, որ իբր թէ մօր կողմէ հեռաւոր ազգական էր Արտաշէսեաններու: Սակայն Հայերը վտարեցին զանոնք եւ կարճ ժամանակի մը համար, զահը վերադարձաւ այրի թագուհին՝ Երատոյի, որ կը հանդիսանայ Արտաշէսեան վերջին շտաբիդը:

Արտաշէսեաններու հարստութիւնը, այս ձեւով տեւած է 190-1 թ.ը (Ք.Ա.), այսինքն՝ մօտ երկու հարիւր տարի եւ տուած է տասը թագաւորներ ու թագուհի մը:

Երատոյի պարագային, պէտք է ըսել, թէ ան կը հանդիսանայ առաջին թագուհին, որուն որոշումով զրամ հատանուած է հայկական դրամագիտութեան մէջ, երկրորդը ըլլալով Կիլիկեան շրջանի Զապէլ թագուհին:

ՄԱՍ Դ.

ՆԱՄԱԿԱՆԻ



Անդրանիկ Գ. ինչ յայտնի էր զայնքան Տիգրան Գ. որ կրկն  
անգամ զուգարթացաւ, մին 8-5 թ. ին (Ք. Ա.) իսկ միւսը 2-1  
թ. ին (Ք. Ա.): Կրկնով թէ ահ անուանացած էր իր կէս քաղաք  
Արտաշատի հետ: Արտաշատի գաւի յայտնաբերութիւնը  
անկէ առնելու ասանկ Լուսինն կանխապէս անուանեալ Տարս  
Տարսնակ, Լուսինական բանակ մը մասն Լուսինական եւ Ե. ին  
Ք. Ա.: զանազան ըրաւ Տիգրան Գ. զմեզ անկէ զնկար  
նախնայքը՝ Արտաշատը Գ.:

Գրքի անունը Կարտագոյն Կարտագոյն Կարտագոյն  
անկէ եւ իր վերջնական Տիգրան Գ. որ սրբաբար արտաշատ  
Արտաշատ: Կարտագոյն Լուսինական բանակ մը կը զուգարթ  
Լուսինական Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր  
անկէ զուգարթ եւ Կրտագոյն Լուսինական վերջնական Տարս  
Տարսնակ ընդունելու արտաշատի վերջնական Կարտագոյն  
Տիգրան Գ. իր սրբաբար իր սրբաբար Կարտագոյն Լուսինական  
Արտաշատ ընդունելու զնախնայքը մը ընդունելու

21 Նոյեմբեր 1968

### Սիրելի Պրն. Գալէմբէրեան

Անդրադատուալով մեր վերջին տեսակցութեան, ուր՝ այլ նիւ  
թերու շարքին, ջերմ գնահատանքով կ'արտայայտուէիք Ձեր Երեւ  
անի բարեկամներէն Պրն. Վ. Յարութիւնեանի մասին, կարելի՞ է  
արդեօք իր աջակցութիւնն ակնկալել հետեւեալ հարցին շուրջ,  
որուն համար շնորհապարտ պիտի ըլլայի որ Ձեր միջոցով եւ յանձ  
նարարութեամբ փորձ մը կատարուէր:

Ինչպէս գիտէք, մասնաւոր հետաքրքրութիւն ունիմ Բալմիրի  
լեզուական բառամթերքին նկատմամբ, որ սերտ կապակցութիւն  
ունի Արամեւրէնի հետ: Ձեռքի տակ եղող ատաղձը սահմանափակ է  
եւ միօրինակ, քանի որ կը պարփակուի շիրմաքարերու եւ տապա  
նաքարերու արձանագրութիւններով առաւելապէս: Տրամադրու  
թեանս տակ ունիմ Chabot-ի եւ Cartinia-ի հրատարակութիւնները  
եւ Դամասկոսի թանգարանին պարբերաբար հրատարակած ար  
ձանագրութիւնները:

Սակայն ինչ որ անհրաժեշտօրէն հիմնական է աւելի ծաւա  
լուն ուսումնասիրութեան մը համար, այն ընդարձակ կոթողն է, սեւ  
քարի վրայ դրոշմուած, երկլեզուանի արձանագրութիւններով  
— բալմիրեւրէն եւ լուսինեւրէն — քաղաքի մաքսային տուրքերու սա  
կարանով, որ 1885-ին հայազգի իշխան Լազարեանցի պեղումնե  
րուն շնորհիւ գտնուած եւ փոխադրուած է Էրմիթաժի թանգարանը:

Անդրանիկ Գ. ինչ յայտնի էր զայնքան Տիգրան Գ. որ կրկն  
անգամ զուգարթացաւ, մին 8-5 թ. ին (Ք. Ա.) իսկ միւսը 2-1  
թ. ին (Ք. Ա.): Կրկնով թէ ահ անուանացած էր իր կէս քաղաք  
Արտաշատի հետ: Արտաշատի գաւի յայտնաբերութիւնը  
անկէ առնելու ասանկ Լուսինն կանխապէս անուանեալ Տարս  
Տարսնակ, Լուսինական բանակ մը մասն Լուսինական եւ Ե. ին  
Ք. Ա.: զանազան ըրաւ Տիգրան Գ. զմեզ անկէ զնկար  
նախնայքը՝ Արտաշատը Գ.:

Կարտագոյն Կարտագոյն Կարտագոյն Կարտագոյն Կարտագոյն  
անկէ եւ իր վերջնական Տիգրան Գ. որ սրբաբար արտաշատ  
Արտաշատ: Կարտագոյն Լուսինական բանակ մը կը զուգարթ  
Լուսինական Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր Կայսր  
անկէ զուգարթ եւ Կրտագոյն Լուսինական վերջնական Տարս  
Տարսնակ ընդունելու արտաշատի վերջնական Կարտագոյն  
Տիգրան Գ. իր սրբաբար իր սրբաբար Կարտագոյն Լուսինական  
Արտաշատ ընդունելու զնախնայքը մը ընդունելու

Արտաշատեաններու Կարտագոյնները, այս մեծով անկէ  
196-1 թ. ին (Ք. Ա.), այսինքն՝ մաս կրկն Կարտագոյն արտաշատ  
Արտաշատի հետ: Արտաշատի գաւի յայտնաբերութիւնը  
անկէ առնելու ասանկ Լուսինն կանխապէս անուանեալ Տարս  
Տարսնակ, Լուսինական բանակ մը մասն Լուսինական եւ Ե. ին  
Ք. Ա.: զանազան ըրաւ Տիգրան Գ. զմեզ անկէ զնկար  
նախնայքը՝ Արտաշատը Գ.:



Արդ՝ Պրն. Յարութիւնեանին հնարատր պիտի ըլլա՞ր արդեօք, այդ կոթողին պատճէնը ապահովել, երկու լեզուներով, բաղդատական ուսումնասիրութեան համար:

Կը յուսամ որ չէք զլանար փորձ մը կատարելու, որուն համար կանխադատ շնորհակալութիւն եւ բարեկամական ջերմ զգացումներով՝

Փորժ Սապպաղ

Երեւան, 25-5-1969

Մեծարգոյ Տիար Պերճ Սապպաղեան,

Նախ եւ առաջ յայտնեմ իմ խորին շնորհակալութիւնը Ձեր ուղարկած հայկական մեղալների յուսանկարների եւ մանրամասն տեղեկութիւնների համար, քանի որ վերջիններս ոչ պակաս կարեւոր են յուշարձաններից:

Շուրջ չորս տարի է զբաղում եմ մեղալների ուսումնասիրութեամբ առհասարակ, իսկ երկու տարի է, յատկապէս հայկական մեղալներով: Մեր թանգարանում պահում է միայն 20-25 հայկական մեղալներ, ինձ յաջողուել է հաւաքել 200-ից ւելի պատճէններ: Ձեր ուղարկած մեղալներից երկուսը բնաւ ինձ ծանօթ չէին: Միս երկուսը յայտնի են — Գրիգոր Լուսաւորչի պատկերով եւ Մարմնամարզական մեղալները — ինձ, բայց տարբերակներ են եւ նոյն չափ կարեւոր են, ինչպէս միւսները: Այնպէս որ Ձեր ուղարկած նկարները, տեղեկութիւնները ինձ համար անզնահատելի գանձեր են: Առանց Ձեր եւ Ձեզ նման բարեկամների օգնութեան, անհնարին է գրել հայկական մեղալների մասին: Չէ՞ որ նրանք ցրուած են աշխարհով մէկ եւ հազուագիտ են հրատարակուած: Ինձ յայտնի են 2-3 յօդուած, որոնք նուիրուած են հայկական մեղալներին:

Ես անշուշտ կը հետաքրքրուեմ Ձեր խնդրանքի վերաբերեալ՝ Դուինում յայտնաբերուած հազուագիտ դիւարի մասին եւ հնարատրէն շուտ կ'ուղարկեմ: Կը խնդրեմ, ներողամիտ եղէք, յօդուածում գրուած անճշտութեան համար, առաջիկայում այդ սխալը չի



կրկնուիր: Միայն հետևանքը մի քիչ էլ մեր անձանօթութիւնն էր: Առանձին ծրարով ուղարկած եմ, վերջերս լոյս տեսած, երկու յօդ-  
ւածները, նուիրուած հայկական մեղալներին: Անչափ հետաքրքիր  
է Ձեր կարծիքը նրանց մասին:

Ձերն յարգանքներով՝

Հենրի Սարգսեան

Յ. Գ. Անչափ շնորհակալ եմ, որ առաջիկայում էլ Ձեր տեսադաշ-  
տից դուրս չմնայ իմ խնդրանքը եւ կրկին երախտագէտ եմ  
Ձեր պատրաստակամութեան համար օգնելու իմ գործին:

Հենրի

Տիար Փ. Պտուկեան  
Նիւ-Եօրք, Ա. Մ. Ն.

Յարգելի Տիար Պտուկեան,

Ստացած եմ Ձեր 20 Ապրիլ թուագրեալ նամակը եւ կը խոս-  
տանամ լաւագոյնս ընել, Ձեր ուշադրութեան յանձնելու որեւէ նոր  
դրամ որ կրնայ Ձեր հետապնդած շարքը ճոխացնել, Արտաշէսեան  
եւ Երուանդեան շրջաններու գծով, ինչպէս կը լիշէք Ձեր նամակին  
մէջ: Առանց կտրուկ կամ **քաթէկորիք** ըլլալու, ես անձնապէս չեմ  
խորհիր որ Երուանդեան դրամաշարք գոյութիւն ունեցած ըլլայ,  
նկատի առնելով քաղաքական անկայաստ պայմանները որոնք Հա-  
լաստանը յարաբերական անկայաստութեամբ վասսալ երկիր մը դար-  
ձուցած էին Աքիմէնեան տիրապետութեան ընթացքին, մինչեւ Ք.Ա.  
330, այսինքն Մակեդոնական գրաւումը: Ըստ բնականօրէն Սե-  
լեկեան շրջանին, 330-190 (Ք.Ա.) Սելեկեան դրամներ շրջագա-  
լած ըլլալու եւ Հալաստանի մէջ, Մեծն Արտաշէս առաջին վեհա-  
պետը ըլլալու էր դրամ կտրող՝ պաշտօնապէս յայտարարելու հա-  
մար իր անկախութիւնը, ինչպէս սովորութիւն էր Փոքր Ասիական եւ  
յունական բարքերով սնած սիթի սթէյթ-ներու համար: Յարդ մէկ  
նմոյշ Արտաշէսեան առաջին Յ վեհապետներու, դրամներէն, որով  
դժուար է պնդել անոնց գոյութեան մասին: Ինծի այնպէս կը թուի,  
թէ առաջին դրամ հատանողը եղած է Մեծն Տիգրան, երբ տէր դար-  
ձաւ Անտիոքի հնուց գոյութիւն ունեցող փողերանոցներուն եւ ըստ



ընկալելու սովորություն, շարունակեց շարքը դրամահատության: Ըստ իմ անձնական կարծիքին, այս շարքը սկսելու է Ք.Ա. 83-82 թուականներում:

Գալով թրքական երկրամասին մէջ, այսինքն Տիգրանակերտ-Նիսիպիս շրջանը պրպտելու հարցին, խիստ դժուար արկածախնդրութիւն մըն է, որովհետեւ թրքական օրէնքները խիստ են հնութեանց վերաբերելու: Յետոյ թուրք գիւղացին անգամ լաւ հասկցած է «Էրմէնի Փարա»-ին արժէքը եւ ատոր համար անհամեմատ կերպով բարձր գիներ կը պահանջէ ան: Կը թուի թէ վերջերս ամերիկահայեր, Պոլսոյ մէջ, անհամեմատ գիներով Տիգրանեան դրամներ կը գնեն: Ամէն հայ կը թուի թէ «Տիգրան» մը ունենալու մոլուցքէն տարուած է:

Ամէն պարագայի տակ, Թուրքիա գտնուած դրամները կը փոխադրուին գաւառներէն Պոլիս կամ Պէյրութ եւ ապա Եւրոպական կամ Ամերիկեան շուկաները: Ներկայիս ամենաշատ փնտռուած դրամներն են Տիգրանի չորեքդրամները եւ մանաւանդ դրամներն ու պղինձները:

Ասոնցմէ ոմանք բնական է կը հասնին մինչեւ Հալէպ: Ես անձնապէս կը խորհիմ որ կեդրոնանալու է այս քաղաքներուն շուրջ՝ ուր Սելեուկեան փողերանոցները կային նախապէս գործօն վիճակի մէջ: Գուցէ նաեւ Պարթեական այն քաղաքները ուր դրամ հատանած են եւ հետագային ինկած Տիգրանի տիրապետութեան տակ:

Ես անձնապէս չեմ կրնար ըմբռնել որ Տիգրանակերտ քաղաքը փողերանոց ունեցած ըլլայ: Հիմնուած մօտ 70-ին (Ք.Ա.) եւ տակաւին պարիսպներն անգամ չէին ամբողջացած երբ 2 անգամ հիմնաշատակ քանդուած է եւ կողոպտուած: Մատենագրութեան մէջ յիշուած է ձոյլ մետաղի գոյութիւնը, բայց ոչ կոխուած դրամ: Ամէն պարագայի տակ ընդարձակ կայսրութեան բոլոր շրջանները կրնան հետաքրքրական ճիւղ պարունակել: Մանաւանդ այդ շրջանի վաճառականական կեդրոնները եւ իրենց շրջակայքը:

Ամէն պարագայի տակ, պէտք է շարունակել մեր ընդհանուր հետաքրքրութիւնը եւ առիթը չփախցնել զանոնք փրկելու:

Տրախմիները եւ պղինձները ըստ իս ամենահետաքրքրականներն են, իրենց պարունակած reverse-ի զանազանութեան, թուագրութեան եւ նշանագրերուն համար: Կը ցաւիմ որ դարձած են շատ հազուագիտ եւ մանաւանդ պղինձները շատ յոգնած՝ ժամանակի ատերով:

Կը ճանչնամ կարգ մը բարեկամներ, որոնք հատ ու կտոր բան ունին իրենց մօտ, իրենց պիտի թելադրեմ որ նկար կամ Rubbing դրկեն Չեզի: Պիտի հիմնուիմ Չեր ANS-ին եւ Հանդէս Ամսօրեայի մէջ հրատարակած Plates-ներուն վրայ, որպէս Չեր ունեցածներուն հաւաքածոյ եւ հոն նկարահանուած նմուշներէն զատ ինչ որ ձեռք անցընեմ կը տեղեկագրեմ Չեզի:

Բարեկամական լուագոյն զգացումներով՝

Ժորժ Սապպաղ



Օգոստոս 13, 1969

Յարգելի Պրն. Սապպադ,

Ստացայ Ձեր Յունիս 14 թուակիր նամակը և հետաքրքրութեամբ կարդացի Ձեր կարծիքները նախաքրիստոնէական հայկական դրամներու մասին: Ես աւելի լատատես, **օբթիմիսթ** եմ, և կը խորհիմ թէ հայերը Տիգրան Բ.-է առաջ դրամներ ունեցած են, բայց ասոնք ներկայիս միայն մասամբ ծանօթ են: Երուանդեան հարըստութիւնը գիտականօրէն ուսումնասիրուած է **Թումանօֆ-ի** կողմէ — **Studies in Christian Caucasian History** — որ տպուեցաւ 1963-ին: Անոր յիշած Երուանդեան **ԹԱԳԱԻՈՐՆԵՐՈՒՆ** ԿԷՍԸ **ԴՐԱՄՆԵՐ ԶԳԱԾ Է, ՄԻԻՍՆԵՐՆ ԱԼ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ** ԿԸ ԳՏՆՈՒԻՆ:

Նկատի առէք որ ասկէ քսան տարի առաջ Ռուբինեան դրամները թէ՛ քիչ էին և թէ դասաւորութիւն անգամ չկար: Ինչո՞ւ չյուսալ որ ասկէ 20 տարի վերջ, Արտաշէսեաններու դրամագիտական շէնքը շինուի: Դրամները իմ կարծիքովս կան բայց դեռ ծանօթ չեն և կամ չեն գտնուած:

Պրն. Սապպադ, խոստացած էիք Ձեր և Ձեր բարեկամներուն ունեցած Տիգրանեան շրջանի դրամներու նկարները կամ նմանահանութիւնները դրկելու բայց ցարդ որեւէ նկար չեմ ստացած: Ընդհանրապէս պիտի ըլլայի եթէ այս գործը գլուխ հանէիք:

Այս տարուան վերջերը Վիեննայի Մխիթարեանները պիտի հրատարակեն գրքոյկ մը «Արտաշէսեան Դրամները» անունով որ

կը պարունակէ իմ ANS-ի մէջ տպուած գրութիւններս և նաեւ երկու ուրիշ գլուխներ այս շրջանի դրամներու վերագրեալ:

Դուք նիւթը մատչելի ըրէք և 10-20 տարիէն կրնանք ամբողջական գիրք մը պատրաստել և աշխարհի ներկայացնել իբր հայ ազգին անցեալին մէկ կոթողը:

Մասնաւոր բարեկներով՝

Ձերդ  
Փ. Զ. Պոռուկեան

ՄԱՍՆԱՊՐ ԲԱՐԵԿՆԵՐՈՎ՝  
ՊՐՆ. ՍԱՍՊԱԴԻ  
ՕԳՈՍՏՈՍ 13, 1969

ՄԱՍՆԱՊՐ ԲԱՐԵԿՆԵՐՈՎ՝  
ՊՐՆ. ՍԱՍՊԱԴԻ  
ՕԳՈՍՏՈՍ 13, 1969



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԵԿՏՈՐ

Երևան, Արովեան 15  
Հեթ. 2-93-87

11 Յունուար 1971

ՄԵԾԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ՋՈՐՋ Ֆ. ՍԱՊՊԱՂ

Ընդհանրապես ստացանք արաբա-ասորական լեզ-  
ական կապերին վերաբերող Ձեր ուղարկած ուսումնասիրությունը:

Դուք Ձեր պատրաստակամությունն էք լայնում մեր գրա-  
դարանին արեւելագիտական գրականություն հայթայթելու վերա-  
բերելով:

Մեր ինստիտուտը զբաղում է Մերձատր Արեւելքի երկրնե-  
րի (Արաբական երկրներ, Իրան, Թուրքիա, հին Ասորեստան, Բի-  
զանդիա) պատմության, մշակույթի, տնտեսության, գրականու-  
թեան եւ աշխարհագրության խնդիրներով: Այնպէս որ յիշեալ բնա-  
գաւառներին առնչուող ամէն մի աշխատություն, որ դուք սիրալիք  
կը լինէք ուղարկել մեզ, օգտաշատ կը լինի մեր աշխատանքների  
համար:

Կանխաւ ընդունէք մեր շնորհակալությունը:

Յարգանքներով՝

ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԵԿՏՈՐԻ ՎԱՐԻՉ

Պրոֆեսոր Յ. Գ. Ինճիկեան

26 Հոկտեմբեր 1971

Սի Պայս Բոյն եւ Մետրլ Պուլսթիքի  
Խմբագիրին  
Օսլի Հաւոգ 11 Մարկարէք Փողոց  
Լոնտոն Ուէսթ 1 Ն 8 Ա. Թ

Սիրելի Պարոններ,

Ձեր հրատարակութեան Հոկտեմբերի թիւին մէջ մեծ հետա-  
քրքրութեամբ կարդացի Պրն. Ֆիլիպ Մելտրըմզի յօդուածը «Յա-  
նուն Ծակուած Դրամներու»: Այս գիրով, կ'ուզէի յօդուածագիրին  
ուշադրությունը հրահրել «Zecchino» կամ «Zecca» բառերուն վրայ  
որոնք կը ծագին «Sequin» բառէն:

Վերի բառերը առնուած են արաբերէն «Sikka» բառէն, որ  
7-րդ դարէն սկսեալ կամ Ապտէլ Մալէք Պրն Մրուանի (696-697)  
դրամական բարենորոգումէն սկսեալ դրամ հասկացողութիւնը ըս-  
տացաւ: Արաբական աղբիւրներ Սիքքան կը նկարագրեն որպէս  
«Կաղապար մը որուն վրայ արձանագրությունները կը փորագրուե-  
ին հակառակ ուղղութեամբ ու վերջն ալ այդ եղածը ճնշումի տակ կը  
դրուէր մետաղի կտորի մը վրայ, որպէսզի ստացուէր ճիշդ դրամը»:

Ձերդ հաւատարմօրէն՝

Ծօրն Ֆ. Սապպաղ

Ծանօթ. — Այս նամակին բնագիրը անգլերէն է:



Յարգելի Տիար Խ. Մուշեղեան  
Երևան

Յարգելի Բարեկամ,

Շնորհակալ եմ ինձի դրկուած մեկագրութեան օրինակին՝ «Դրամային Երջանատրօսին Հայաստանում Թ.-ԺԴ. Դարերում» վերնագրով, Ձեր խիստ շահեկան ուսումնասիրութեամբ: Անծանօթ ըլլալով վրացական դրամաշարքին, ինձի համար նորութիւն էր նշել որ վրացիք երկլեզուեան դրամներ հատանա՞ծ են: Այն ինչ կը վերաբերի «Կիրիկէ Կիրաղապատի» վերագրուած հայատառ դրամներուն, Պէջրութի մէջ հանդիպած եմ մի քանի օրինակներու, որոնք կեղծ դրամներ են: Ձեր ուսումնասիրութիւնը հիմնուած ըլլալու է Ձեր մօտ գտնուող, թէեւ հատ ու կենտ, բայց հարազատ օրինակներու վրայ: Բագրատունեաց շրջանի հայատառ դրամներու չգոյութիւնը, շատ կարեւոր երեւոյթ է, նոյն շրջանի պատմատնտեսական պայմաններու ուսումնասիրութեան տեսակէտով:

Ներկայիս կը պատրաստեմ 3-րդ դասախօսութիւն մը Հալէպի Սարեան Ակադեմիային խնդրանքով: Առաջինը նիւթ ունէր «Ընդհանուր Դրամագիտութիւն» երկրորդը՝ «Կիրիկեան Դրամաշարքը»: Ներկայիս պիտի խօսիմ «Արաբական Դրամագիտութիւնը» նիւթին շուրջ, անշուշտ անդրադառնալով նաեւ Հայաստանի եւ Շահ Արմէններու հետ առնչութիւն ունեցող դրամներու մասին, լուսարձակ պատկերներով:

Եթէ ժամանակ ունենամ պիտի պատրաստեմ ցանկ մը արաբական դրամներու, որոնք կապ ունին Հայաստանի եւ հայկական քաղաքներու հետ:

Արդեօ՞ք Ձեզի ծանօթ է, արաբական շրջանէն քաղաք մը, որ գտնուած ըլլայ Հայաստանի մէջ, կամ Հայաստանի սահմաններուն վրայ ՀԱՐՈՒՆԻԷ ( هرونية ) կամ ՀԱՐՈՒՆԱՊԱՏ ( هارونباد ) անուններով: Կրնայ զինուորական կաշք մը եղած ըլլալ՝ գուցէ կարճ ժամանակի մը համար: Նո՛յն անունով քաղաք ծանօթ է ինձի Կիրիկիոյ մէջ, բայց ոչ Հայաստանի: Արաբ դրամագէտ մը այս անունով անորոշ վայր մը կը յիշէ Հայ-արաբ սահմաններուն վրայ:

Բարեկամական լուսագոյն զգացումներով՝

Ժորժ Սապպաղ



Յարգելի Տիար Հենրի Սարգիսեան  
Երեւան

Յարգելի Բարեկամ,

Երէկ ստացայ Ձեր թղթածրարը երկու առանձնատիպերով: Մին՝ Կոմիտասի պատկերով մանրաքանդակներու Ձեր հետաքրքրական ուսումնասիրութիւնը գոր կարդացի հաճոյքով: Միւսը՝ Մ.Ե. Կարապետեանի Թորոս Իշխանի դրամներուն շուրջ ուրիշ հետաքրքրական փորձ մը. կ'ենթադրեմ որ Պրն. Կարապետեան դրամագիտական բաժնին անձնակազմին մաս կը կազմէ: Ամէն պարագայի տակ, անկեղծօրէն շնորհակալ եմ, Ձեր ազնիւ վերաբերումին համար: Արդեօ՞ք Պրն. Կարապետեանին նախընտրութիւնը Կիլիկեան դրամագիտութի՞ւնն է: Իր յօդուածին առնչութեամբ ՂԹ պատուագրին իմաստը կրնայ «աղօթք» ըլլալ, սակայն նախադասութիւնը կը մնայ քիչ մը աղօտ: Անձնապէս, կը նախընտրեմ ՂԹ կարդալ «Յաղթական կամ Յաղթող», հետեւողութեամբ յունարէն **Նիգաթոր** տիտղոսին: Հաճեցէք այս կէտը յանձնել Պրն. Կարապետեանի ուշադրութեան:

Առիթէն օգտուելով, Ձեր ուշադրութեան կը յանձնեմ վերջին մէկ յօդուածս գոր հրատարակած եմ Պէյրութի «Զարթօնք» օրաթերթին 29-5-73 թիւին մէջ: Դժբախտաբար լուսանկարը շատ անյաջող դուրս եկած է եւ շրջուած: Կ'ենթադրեմ որ խնդրոյ առարկայ դրամը ցարդ հրատարակուած չէ:

Բարեկամական զգացումներով՝  
Ժորժ Սապպաղ

Պրն. Իպրահիմ Արթուր  
Ազգային Ռասնողական Տպարան  
Հնութիւններու եւ Թանգարաններու  
Ընդհանուր Տնօրէնութիւն

Սիրելի Պարոն,

Վերջերս, մեծ հետաքրքրութեամբ կարդացի 1971 թուականին Ձեր հրատարակած գրացուցակը (**քաթալոկ**) «Իսթամպուլ Արխիոլոժի Միզէլէրի Թեսիերտէքի Իսլամը Սիճիլլէր Քաթալոկը» ուր գտայ իսլամական դրամներու ընդարձակ ցանկ մը, որոնք այժմ կը պահուին Իսթամպուլի թանգարանին մէջ:

Ձեր հրատարակութեան էջ 55-ին վրայ կայ հետաքրքրական տիրեմ մը որ հատանում է Հիճիրի 169 տարին, վայրի մը մէջ՝ որ կը կոչուի Հարունապատ, վայր մը որ չէ յիշատակուած արար ժամանակագիրներու եւ ճամբորդներու կողմէ:

Գահիրէէն Ապտիլ Ռահման Ֆրիմին աղօտ կերպով կը հաստատէ, թէ այդ վայրը պէտք է գտնուի տեղ մը Հայաստանի սահմաններուն վրայ:

Վերջերս Դամասկոս լոյս տեսած հրատարակութեան մը մէջ, որ գործն է թանգարանի ընդհանուր պատասխանատու Ապու Ֆարան Ապու Էլ Ըշին, կը նկարագրուի Ռոմ Հանրայի մէջ գտնուած զանձ մը: Հեղինակը այստեղ կը խօսի նոյն դրամին մասին եւ կը խորհի թէ այդ վայրը պէտք է ըլլայ տեղ մը Հայաստանի մէջ, գուցէ մեռած քաղաք մը:

Ձեր բացատրութիւնները անշի կը յստակացնեն այս քաղա-



քին՝ Հարունապատին տեղադրությունը, երբ զայն կը նկատէք կախեալ Պաշքալէի նահանգէն, Վանէն Արեւելք: Այնուամենայնիս ես այս անունը չկրցայ գտնել Թուրքիոյ Թուրքիսթանական այն քարտէզին վրայ, որ հրատարակուած է 1969-ին Թուրքիոյ եւ Տեղեկատուութեան նախարարութեան կողմէ:

Մեծապէս շնորհակալ պիտի ըլլամ եթէ ինծի տրուի ատելի ճշգրիտ տեղադրությունը այս քաղաքին.

Հին անունը

Նոր անունը եթէ կայ

Ծջգրիտ տեղը

Արդեօ՞ք պահպանուած է ցայժմ

Կանխաւ կը յայտնեմ շնորհակալություններս Ձեր բարի աջակցութեան համար:

Ձերդ հաւատարմօրէն

Ծորն Ֆ. Սապպաղ

Անդամ Հնագիտական Ընկերութեան

Անդամ ANS.ի

Յ. Գ. Անպատեհություն մը պիտի չըլլայ ինծի համար եթէ անգլերէնով կամ թուրքերէնով գրէք:

Ծանօթ.— Այս նամակին բնագիրը անգլերէն է:

23 Ապրիլ 1974

Ուրբաթ, 27-7-1973

Սիրելի Պրն. Սապպաղ,

Շնորհակալություն Ձեր 20 Յունիս 1973-ի նամակին համար ուր յարուցած էք «Հարունապատ»ի հարցը:

Իմ 1971-ի հրատարակութենէս ետք, ամէն տեղ փնտնեցի գտնելու համար Հարունապատի ճշգրիտ տեղը: Վերջապէս բախտը ունեցայ գտնելու զայն Թուրքիոյ Ներքին Գործոց Նախարարութեան մէկ հրատարակութեան մէջ — «Առաջնորդ» Թուրքիոյ Մէջ Բնակուած Վայրերու» հատոր Ա. էջ 483, 1946 թ.: Գիղ մըն է. — Մուխթարիէ:

1936-ին հրատարակուած քարտէզի մը մէջ — Հարիթա Կէնէլ Միտիւրլիլիսի — Հարունապատը նշուած է Հայաստանի մէջ Ջապ — Zab — գետէն Արեւելք, Իրանեան սահմանին մօտ: Գետին Արեւմտեան կողմն է Պաշքալէն 43-44 միջօրէականի վրայ, բարձրությունը՝ j-k:

Այս ճշգրտումը պիտի հրատարակեմ Փրոֆ. Մ. Ապուլ Ծպրած Էլ Աշի հետ, որ օրերս Իսթամպուլ կը գտնուի:

Հաւագոյն մաղթանքներով կը մնամ

Ձերդ շատ անկեղծօրէն՝

Իպրահիմ Արթուր

Հնագիտական Թանգարանի Դրամագէտ

Իսթամպուլ

Ծանօթ.— Այս նամակին բնագիրը անգլերէն է:



Պաղտատ, Ընդհանուր Հնագիտության Տնօրէնութիւն  
Պրն. Մուհամմէտ Պէքր Էլ Հուսէինի ուշադրութեան

Սիրելի Պարոններ,

Էլ Մասքուքաթի Յատուկ Թիւ  
Էլ Սարրաֆ Նուիրաբերուս

Որպէս անդամ ANS (Հայկական Դրամագիտական Ընկեր-  
ութիւն) Դրամագիտական Ընկերութեան եւ Հալէպի Հնագիտա-  
կան Կազմակերպութեան, կ'աշխատիմ յօդուածի մը վրայ ուր՝ կ'ու-  
սումնասիրեմ Արաբական Հնագոյն Դրամները:

Էլ Սարրաֆի մէջ արձանագրուած գտայ երկու ոսկի տի-  
նարներ, որոնց սերիական թիւերն էին 25 եւ 26, հատանում Տե-  
պիլի մէջ 86-ին եւ 93-ին, որ կը բացառէ Հինագի 105-ի տինար-  
ները. եթէ ճշգրիտ ցուցակագրուի որպէս ոսկի, անոնք կ'ըլլան բա-  
ցառիկ տարիներ Օմայեաններու շրջանին համար:

Ձեզի գրած եմ 1972 թուականին ու պատասխան չեմ ստա-  
ցած: Եթէ այս ցուցակագրումը ճիշդ ըլլայ մեծապէս պիտի ուրա-  
խանամ լսելով նաեւ կարելի ամբողջական նկարագրութիւնը  
անոնց:

Կանխաւ շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեր ուշադրութեան  
համար ու կը մնամ

Ձերդ հաւատարմօրէն  
Ծորն Ֆ. Սապպադ

Ներփակ - Պատճէկը 25 Ապրիլ 1972-ի նամակիս:

Ծանօթ.— Այս նամակին բնագիրը անգլերէն է:

Հալէպ, 26-7-74

Սիրելի Տոքթ. Թորանեան,

«الاستاذ مروان المدور القضية الازمنية»

Ձեր կողմէ ինծի յանձնուած թղթածրարը կը վերադարձնեմ,  
կցելով 53 ճշդումներու ցանկ մը: Ինչպէս գրքին վերնագիրէն բա-  
ցալայտ է, ուսումնասիրութիւնը կը կեդրոնանայ հայկական դատին  
զարգացման շուրջ: Հեղինակը լայնօրէն օգտագործած է Ծաւարշ  
Թորիկեանի անգլերէն գործը: Անձնապէս կը խորհիմ:

1.— Քաջալերել հեղինակը որ սկսած գործը ամբողջացնէ,  
եթէ տակաւին ամբողջ չէ, եւ եթէ հնարատր է, հրականացնել հրա-  
տարակութիւնը 1975 Ապրիլէն առաջ: Գործնական մասնակցու-  
թիւն մը կ'ըլլայ 60 ամեակի — Եղեռնի անշուշտ — տարուան աշխա-  
տանքներուն գծով:

2.— Հեղինակը, որպէս փաստաբան, ուզած է անձնական  
վերլուծումներ ընել որոնք գործին կամ հարցին չեն վնասեր, ընդ-  
հակառակը, մօտեցումը եղած է խիստ համակրական ձեւով:

3.— Հեղինակը անձանօթ է Հայաստանի աշխարհագրա-  
կան բաժնին: Իր մօտ կրկնուած շփոթ կայ Թիպիլիս-Թիֆլիս եւ  
Պիթլիս քաղաքներու տեղադրութեան շուրջ: Կարգ մը քաղաքներ  
նոյնիսկ անձանօթ: Օրինակի համար իրեն համար Smyrna-Izmir  
կարդացուած է «Իսմայրեան» անգլիական սխալ արտաբերումով,  
մինչդեռ անգլիացի մը պիտի կարդար Սմերնա, եւայլն:

4.— Որոշ կիրքի գիծ մը կայ «Իմպերիալիսթ» պետութիւն-  
ներու — Անգլիա, Ֆրանսա, Ամերիկա, Յարական Ռուսիա եւ Կայ-  
սերական Գերմանիա — դէմ: Ամէն պարագայի տակ, հեղինակը







Նման գիրք մը անհրաժեշտ է ցրուել բոլոր Արեւելագիտական եւ Ռուսարտագիտական հիմնարկներուն (ԻՆՍՏԻՏՒԼՄ), կաճառներուն եւ Հայագիտական Ամբիոններուն: Թող ստեղծուի քրնճատորութիւն, վեճ, թեր ու դէմ լուսաբանութիւն: Վերջին հաշտով, բուն շահողը կ'ըլլայ մեր պատմութիւնը:

Դժբախտաբար, գիրքը կը տուժէ դարմանելի երկու պակասներէ, զորս կարելի է ամբողջացնել, կցելով

Ա.— Երկու քարտէզներ, մին Ռուսարտական թագաւորութեան սահմաններով, նախընտրաբար Արգիշտիի շրջանէն, երկրորդ՝ Ռուսարտա-Ասորեստանեան փոխ-յարաբերութիւնները հիմաստաւորող:

Բ.— Երկու ցանկեր, մին տեղագրական եւ միւր յատուկ անուններու:

Կ'ենթադրեմ թէ թարգմանութեան պարագային կարելի է խուսափիլ կարգ մը կրկնութիւններէ, զորս, շատ հաւանաբար, հեղինակը ըրած է դիտումնաւոր կերպով, շեշտելու համար իր ընթերցողներուն մօտ, իր մեծութիւններուն հիմնական զուգահեռները կազմող ԱՐ - ԱՐՏ - ԱՐԴ - ԱՇՏ - ՈՒՐ - արմատականները:

Լաւագոյն մաղթանքներով եւ բարեկամական

զգացումներով՝

Պերճ Սապաւաղեան

ՓՈՒ ԳԱՌՆԻԿ ԲԺԻՇԿ  
ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՐՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ  
655 ՆՈՐԹ ՍԷՆԹՐԸԼ ԷՎԸՆԻԻ  
ԿԼԷՆՏԷՅԼ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ 91203

21 Սեպտեմբեր 1975

Սիրելի Պրն. Սապաւաղ,

Շնորհատրութիւններ Գալիֆորնիայէն:

Հալէպէն հեռանալէս ետք անցայ ամբողջ Թուրքիայէն: Անտիոքի մէջ, տեղական թանգարանի տնօրէնէն իմացայ, թէ իրենք ունին մէկ միլիոնէ աւելի հին դրամ: Բայց չկրցաւ ըսել ինձի թէ Տիգրանի Թեթրատրախմերէն քանի՞ հատ ունին ու չկրցաւ նաեւ մէկ հատիկ դրամ իսկ ցոյց տալ ինձի, երեսոյթ մը, որ ինձի կասկածներէն չէջ իր սկիզբի հաստատումներուն նկատմամբ:

Ատանալի մէջ վարձեցի անգլիախօս առաջնորդ մը ու մեկնեցայ Սիւ: Չարմացայ թէ ինչո՞ւ քաղաքը այդքան ներսն էր, բայց երբ տեղ հասայ, ամէն ինչ ակներեւ էր: Ծովամերձ բոլոր դաշտագետիկները բամպակի արտեր են: Բերդը կառուցուած է առաջին իսկ հանդիպած լերան վրայ բամպակի արտերէն հարիւր քիլոմետր հեռու: Մենք բերդէն ներս մտանք: Բայց զայն տեսանք սուկալի աւերուած վիճակի մէջ: Երբ ճամբան շարունակեցինք եւ տեսած վայրերու մասին կարդալէս ետք հասկցայ թէ այդ բոլորը հայերու ձեռքով կառուցուած են:

Եւ յօդուած մը գրեցի Տիգրանի եւ Կոմմագենի թագաւորին մասին: Պէտք ունիմ Տիգրանի թագի մէկ նկարին ուր երեւնան՝ արեւ հինգ ճառագայթները: Եթէ դուն տակաւին ունիս Տիգրանի



**Թեթրատրախմերու մեծ լուսանկարը** (երբ հոն էի դուն միայն շրջուած ձեռք ունէիր) եւ կ'ուզեմ զնել այդ նկարը շրջուածներուն հետ միատեղ:

Տօնապետեանին գրեցի նկարին մասին ուր կ'երեւայ արծիւ մը, քայքայ իրմէ պատասխան մը չունիմ առ այսօր:

Լատագոյն մաղթանքներով՝

Փոլ Գառնիկ

**Ծանօթ.**— Այս նամակին բնագիրը անգլերէն է:

Գրեմ. Եռանգնէս Կերհարթ Լեյլենֆէլմըրր  
Ռոմիշի — Ճերմանիշնէս Թանգարան  
Ռոմֆալի Բլաց 4  
5 Գեոյն 1  
Արեւմտեան Գերմանիա

23 Հոկտեմբեր 1975

Պրն. Եռանգնէս Կերհարթ Լեյլենֆէլմըրր  
Ռոմիշի — Ճերմանիշնէս Թանգարան  
Ռոմֆալի Բլաց 4  
5 Գեոյն 1  
Արեւմտեան Գերմանիա

Սիրելի Պրն. Հեյլէնքէմըրր,

Անշուշտ Դուք ապահովաբար պիտի յիշէք մեր Հայկական հանդիպումը անցնող Սեպտեմբերին, սրճարանի մը մէջ, ուր խօսակցութեան նիւթը պատմական Կիլիկիոյ շրջաններն էին:

Ես մեծապէս տպաւորուած եմ Ձեր ընդարձակ գիտելիքներէն Կիլիկիոյ հայկական շրջանի ճարտարապետական յաջողութիւններուն առնչութեամբ ու ասիկա յատկապէս կը վերաբերի Ձեր այն սուր հետաքրքրութեան զոր ցուցաբերեցիք կարգ մը մենաստաններու եւ բերդերու տեղադրութեան նկատմամբ, օրինակ Բարձրբերդի:

Ձեզի դրկել խոստացած էի Կիլիկիոյ տեղագրութեան մասին գիրք մը, պատրաստուած՝ Տոքթ. Յարութիւն Տէր Ղազարեանի կողմէ, 1966-ին, այժմ սպասած: Յամենայնդէպս ես կրցայ օրինակ մը ապահովել. գայն հասցէագրեցի Ձեզի՝ օղային թղթատարով եւ ապահովագրեալ, քանի մը օր առաջ:

Դիւրացնելու համար Ձեր գործը, պատճենահանեցի հեղինակին տեղագրական քարտէզը, որ հայերէնով է, եւ իւրաքանչիւր տեղանունի մօտ լատինատառ համարժէքը արձանագրեցի:



Կը լուսամբ, թէ այս գիրքը հետաքրքրական պիտի գտնէք. առիթէն օգտուելով կը մաղթեմ Ձեզի յաջողութիւններ ուսումնասիրական Ձեր աշխատանքներուն մէջ:

Անհատական մաղթանքներով

Ձերդ անկեղծօրէն՝  
Ծորն Ֆ. Սապպաղ

Ներիակ՝ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԷԶ

Ծանօթ.— Այս անվակին բնագիրը անգլերէն է:

12-1-1976

Երեւան

Մեծարգոյ Պրն. Սապպաղեան,

Նախ յայտնեմ շնորհակալութիւնս ուղարկած շնորհատրական քարտի համար:

Ուղարկում եմ իմ վերջին յօդուածներս անիրուած ինչպէս հայկական մեղալներին, այնպէս էլ հայոց թագաւոր Արտաւազդ Դ. (4-6 թթ) դրամներին: Կ'ուզենայի իմանալ Ձեր կարծիքը այդ յօդուածների մասին:

Մի խնդրանք ունեմ, թողարկուել են արդեօ՞ք Ձեզ մօտ մեղալներ ՇԵՔՍՊԻՐԻ ՊԱՏԿԵՐՈՎ, եթէ այո, կը խնդրէի նրանց լուսանկարը — երկու երեսի — ինչպէս եւ հեղինակի անունը, մետաղը եւ չափը: Արդէն բաւականին նիւթ հաւաքել եմ: Ուզում եմ հնարարին չափ ամբողջութեամբ ներկայացնել նիւթը:

Ի՞նչ ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ են ստեղծուել Ձեզ մօտ: Վաղուց է Ձեզանից տեղեկութիւն չեմ ստացել: Ի՞նչ ՆՈՐ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ յօդուածներ էք տպագրել:

Յարգանքներով՝  
Հենրի Սարգսեան



9-6-76,  
Երևան

Թանկագին բարեկամ,

Ստացայ Ձեր նուիրական յօդուածը «Հայ-արաբական Դրամագիտական Մի Քանի Հարցերի Շուրջ», տպուած Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ե. հատորի մէջ, Պէյրութում, 1974 թուին:

Շատ շնորհակալ եմ այն պրպտումների համար, որ կատարել էք եւ յայտնաբերել կարեւոր վկայութիւններ ի լրացումն եղածի:

Ձեր աշխատանքը յատուկ սիրով կարդացի:

Վերջերս Հայաստանում գտնուել են Վասետում թողարկուած Օմայեան արծաթեայ դրամների գանձեր, որոնց դիրհեմները շատ նոր են եւ շրջանառութեան մէջ չեղածի տպարութիւն են թողնում:

Դրամահատութեան կնիքներ Հայաստանում չեն գտնուել: Արդեօք գտնուել են Վասետում դրամահատութեան կնիքներ Հայաստանին վերաբերեալ:

Արաբա-սասանեան դրամները վկայում են, որ մինչ Հիւրի 77 թիւը Իրանում Օմայեան նահանգապետները փողերանոցների անունները յիշատակել են պահլաւերէն կրճատ գրութիւններով, որոնք լրիւ համապատասխանում են հետագայում յիշատակուող արաբական տիրակալութեան անուանումների հետ: Նոյն կշռային չափերով եւ նախապէս սահմանուած պատկերագրութեամբ միաժամանակ տարբեր փողերանոցներում — տարբեր երկրներում — դրամ թողարկելու գործը յայտնի էր ինչպէս արխայիկ, այնպէս էլ դասական ու հելլենիստական ժամանակներից:

Հարկ է նկատի ունենալ, որ փողերանոցները նահանգապետների անմիջական հսկողութեան ներքոյ են եղել եւ նրանց

հրամաններով միշտ էլ կարող էին շարժուել տեղից տեղ ըստ անհրաժեշտութեան: Սակայն դրամի թողարկումը միշտ էլ տնտեսութեան զարգացման ներքին պահանջի մղումով է կատարուել: Իշխողը եղել է ապրանքային արտադրութիւնը եւ ապրանքների փոխանակման պահանջը, որ չէին կարող երկրի տէրերը հաշուի չառնել:

Դեռեւս անցեալ դարի վերջերին Փարիզում լոյս էր տեսել ՔԱԶԱՆՈՎԱՅԻ աշխատանքը, ուր յիշատակուել էին ոսկեայ դրամներ, թողարկուած Հայաստանում: Սակայն դրանք փաստուած չեն: Շատ հետաքրքիր է ունենալ լուսանկարները բոլոր այն ոսկեայ դրամների, որոնք արաբական տիրակալութեան կողմից թողարկուել են Հայաստանում եւ Աղուանքում: Եթէ հնարատր լինի ձեռք բերել Հայաստանում Օմայեանների եւ Աբբասեանների կողմից թողարկուած ոսկեայ դրամների պատճենները կամ լուսանկարները, իրենց մանրամասն տուեալներով ապա շատ պէտք է խնդրէի ինձ ցոյց տալիք:

Շատ արժէքատր են այն բոլոր նոր աշխատութիւնները, որոնց մասին Դուք յիշատակել էիք, կապուած Հայաստանում թողարկուած Օմայեան եւ Աբբասեան դրամների հետ: Դրանք եւ ձեռքիս տակ չունեմ: Հիմնական աղբիւրը հանդիսանում են դրամական գանձերը, որոնց կազմում եղած դրամները բախտաւորութեամբ մէկ առ մէկ տեսել եմ եւ ստացել:

Ներկայումս աշխատում եմ «Հայաստանի Դրամական Գանձերը» գրքի Բ. Հատորի վրայ, որի մէջ կան նոր նիւթեր արաբական շրջանի վերաբերեալ:

Հաւագոյն մաղթանքներով

միշտ Ձերդ՝  
Խ. Մուշեղեան

Յ. Գ. Շատ կարեւոր է տեսնել գոնէ պատկերը Օմայեան արծաթ դրամի (Դիրհեմ) Խալիֆի անունով: Եթէ հնարատր է լուսանկարը գոնէ մէկ օրինակի — Տես Արաբական այդ արծաթ դիրհեմը, էջ 2: بارمينية بارمينية



Տիար Խ. Մուշեղեան  
Հայաստանի Փողոց 3, յարկարածին 6  
Երևան 375038

Յարգելի Բարեկամ,

Ստացայ Ձեր 9 ընթացիկ նամակը միայն ամսոյս 28-ին ու հետաքրքրութեամբ հետեւեցայ բովանդակութեան: Կ'անդրադառնամ գլխաւոր հարցերուն պահելով շարքը Ձեր նամակին:

1.— Ըստ հետաքրքրական է Հայաստանի տարածքին վրայ յայտնաբերուած արաբական գանձերու պարագան ՎԱՍԷԴի փողերանոցով: Կարելոր է անշուշտ անոնց տարեթիւերը ճշդել եւ փնտռել քաղաքական զինուորական եւ տնտեսական առնչութիւններ Հայ-Արաբական փոխ-յարաբերութիւններու գծով:

2.— Կնիքներու պարագան դժուար հարց է եւ այս ուղղութեամբ մատենագրական ակնարկութիւններու հանդիպած չեմ: Գիտեմ սակայն թէ Գահիրէի թանգարանը ունի կարգ մը կնիքներ որոնք մասնակի կերպով յիշուած են միայն:

Այն տպատրոթիւնն ունիմ թէ Ձեր մօտ ձգտում կայ փաստելու թէ արաբական գլխաւոր փողերանոցները եղած են Հայաստանի մէջ, մասնաւորապէս Դուին: Նոյն ձգտումը նաեւ Վրացիներուն եւ Ատրպէյճանցիներու մօտ, Թիֆլիս կամ Պարտաւն ու Առան տեղաւորելու գերակշիռ դիրքի վրայ: Ձեմ կարծեր որ այս մտահոգութիւնը հիմնական պայման ըլլայ Հայ-Արաբ յարաբերութիւններու զարգացման անկիւնէն:

3.— Անշուշտ համաձայն եմ որ մինչեւ Հիւրի 77 թուականը, կամ

զուտ արաբական դրամաշարքի սկզբնատարին, մօտ 50 տարիներ արաբները իրենց գրասած երկիրներուն մէջ գոյութիւն ունեցող փողերանոցները օգտագործած են, հատանելով արդէն ծանօթ Սասանեան եւ Բիզանդական դրամներ, զանոնք ենթարկելով նախ ջնջին ապա կարելոր փոփոխութիւններու: Այս 50 տարուան շրջանը առ հասարակ ծանօթ է ՓՈՒԱՆՑՄԱՆ ԸՐՋԱՆ անուամբ:

4.— Ըիշդ է թէ փողերանոցները եղած են նահանգապետներու հրակողութեան տակ, բայց կնիքները գոնէ սկզբնական շրջանին, տրամադրուած են կեդրոնական փողերանոցէն եւ անոր պատրաստութեամբ, նկատի ունենալով տիպի եւ դրոշմի նոյնութիւնը:

5.— Ծանօթ չեմ Casanovahi հրատարակութեան, բայց կ'ենթադրեմ թէ այլեւս հին գործ դարձած ըլլալու է: Պիտի հետեւեիմ Արմինիա եւ Առան հատանուած տիւարներու նկարներ ձեռք ձգելու եւ Ձեզի փոխանցելու, հանդիպելու պարագային:

6.— Ձեր «Յետ Գրութեան»էն ունիմ այն տպատրոթիւնը որ կ'ակնարկէք «Գեղարդ»ին մէջ երեւցած յօդուածիս: Կը դրկեմ միակ օրինակը որ ունիմ: Առած եմ ՍՈՒՄԵՐ (SUMER) հնագիտական տարեգիրքէն - Պաղտատ: Դրամին 2րդ. երեսը նկարուած չէր: Դժբախտաբար գրաշարային շատ մը սխալներու կարգին, բանի մը բառով արաբերէն նախադասութիւնը ունի թերութիւններ: Արմինիան կարդալու է ارمينية : Ես կարգ մը օրինակներ կը խորհէի ձեռքով սրբագրած ըլլալ: Ձեր օրինակը ուշադրութենէս խուսափած է:

Դժբախտութիւն է որ մեր մատենագրութեան մէջ, ակնարկութիւններ չկան դրամական շրջանառութեան, փողերանոցներու եւ այլ մանրամասնութիւններու շուրջ: Ասողիկ, Ղեւոնդ, Վարդան ոչ մէկ բառ ունին այս հարցին շուրջ:

Ուրախ եմ որ նոր հատորի մը վրայ կ'աշխատիք եւ վստահ եմ թէ Ձեր սովորական բժախնդրութեամբ հայ դրամագիտութեան գանձարանը պիտի նոխացնէք օգտակար եւ անհրաժեշտ ներդրումով:

Յաջողութեան մաղթանքներով  
Ձերդ՝ Պերճ Սապպաղեան



Փոլ Գառնիկ  
Կլեմտէյլ, Գալիֆորնիա

5 Դեկտեմբեր 1976

Միրելի Պրն. Սապպադ,

Այս նամակը տկար ճօթ մըն է որպէսզի բաց մնան հաղորդակցութեան ջրանցքները Կլեմտէյլի եւ Հալէպի միջեւ: Յօդուած Տիգրանի Կոմմագէնի թագին մասին լոյս տեսաւ, բայց խմբագիրը մերժեց յաւելեալ օրինակներ տալ ինծի...

Քեզի օրինակ մը պարտական եմ:

Յուսամ դուն աշխարհին միւս ծայրը չես ապրիր որպէսզի եւ հետոյ կարենամ քիչ անգամ խօսիլ եւ կարենալ աւելին սորվիլ Միջին Արեւելքի պատմութեան մասին:

Ծիշոյ հիմա, կը կարդամ Սուրիոյ «Կորսուած Քաղաքներ»ուն մասին, եւ այն դերին մասին որ անոնք խաղացին հնագոյն Առաքելական եկեղեցիներուն մէջ: 1977-ի Մարտ ամսուան մէջ կը ծրագրեմ Հոլանտա երթալ — ինչալլահ — եկեղեցիին պետութենէն բաժնունելուն նկատմամբ աշխարհի առաջին միջազգային համագումարին: Երբեք չէի գիտեր այն մասին, թէ հնագոյն Սուրիոյ վարդապետութիւնը այնքան ուժեղ եղած է, որ քրիստոնէական պարզութիւնը պահած է եւ խուսափած Հոմի եւ Ադեքսանդրիոյ (Եգիպտոս) հերիւրանքներէն:

Մինչեւ հիմա, իմ կապս Սուրիոյ նկատմամբ, կը կայանար իր պատմութեամբ, որ կ'ընդգրկէր Սելեուկեաններու կայսրութիւնը: Բայց Սուրիան ապրեցաւ հերոսական շրջան մը Քրիստոսի 2-րդ 3-րդ, 4-րդ դարերուն: Ես կը խորհիմ, թէ Սուրիոյ նկատմամբ

հետաքրքրութիւնը պիտի աւելնայ ամբողջ աշխարհի մէջ երբ իր անցեալը աւելի լաւ ճանչցուի: Մենք շատ բան պարտական ենք մեր ժամանակի առաջին դարէն Սուրիոյ աստուածաբանական դպրոցներուն: Իրենց ազդեցութիւնը մեծ էր Հիւսիսային Իտալիոյ մէջ, Միլանի շուրջ եւ Հարաւային Ֆրանսայի մէջ: Որպէս արդիւնք իրենց ուսուցումներուն Ալպեաններու մէջ Բիւրմասունթի ձորերը դարձան նշանատր:

Ուրեմն, այսքան իմ ընթացիկ ընթերցումներուս մասին: Կ'ուզեմ իմանալ թէ այս նիւթը ներկայ օրերուն արտօնուած է Ձեր երկրին մէջ թէ ոչ:

Լաւագոյն մաղթանքներով եկող նոր օրերուն համար,

Փոլ Գառնիկ .

Ծանօթ.— Այս նամակին բնագիրը անգլերէն է:



Փոլ Գառնիկ  
Կլեմենտյի, Գալիֆորնիա

5 Դեկտեմբեր 1976

Սիրելի Պրն. Սապպադ,

Այս նամակը տկար լնթ մըն է որպէսզի բաց մնան հաղորդակցութեան ջրանցքները Կլեմենտյի եւ Հալէպի միջեւ: Յօդուածս Տիգրանի Կոմմագէնի թագին մասին լոյս տեսաւ, բայց խմբագիրը մերժեց յատկաւ օրինակներ տալ ինծի...

Քեզի օրինակ մը պարտական եմ:

Յուսամ դուն աշխարհին միւս ծայրը չես ապրիր որպէսզի ես հետոյ կարենամ քիչ անգամ խօսիլ եւ կարենալ աւելին սորվիլ Միջին Արեւելքի պատմութեան մասին:

Ծիշոյ հիմա, կը կարդամ Սուրիոյ «Կորսուած Քաղաքներ»ուն մասին, եւ այն դերին մասին որ անոնք խաղացին հնագոյն Առաքելական եկեղեցիներուն մէջ: 1977-ի Մարտ ամսուան մէջ կը ծրագրեմ Հոլանտա երթալ — ինչալլահ — եկեղեցիին պետութենէն բաժնունելուն նկատմամբ աշխարհի առաջին միջազգային համագումարին: Երբեք չէի գիտեր այն մասին, թէ հնագոյն Սուրիոյ վարդապետութիւնը այնքան ուժեղ եղած է, որ քրիստոնէական պարզութիւնը պահած է եւ խուսափած Հոմմի եւ Աղեքսանդրիոյ (Եգիպտոս) հերիւրանքներէն:

Մինչեւ հիմա, իմ կապս Սուրիոյ նկատմամբ, կը կայանար իր պատմութեամբ, որ կ'ընդգրկէր Սելեուկեաններու կայսրութիւնը: Բայց Սուրիան ապրեցաւ հերոսական շրջան մը Քրիստոսի 2-րդ 3-րդ, 4-րդ դարերուն: Ես կը խորհիմ, թէ Սուրիոյ նկատմամբ

հետաքրքրութիւնը պիտի աւելնայ ամբողջ աշխարհի մէջ երբ իր անցեալը աւելի լաւ ճանչցուի: Մենք շատ բան պարտական ենք մեր ժամանակի առաջին դարէն Սուրիոյ աստուածաբանական դպրոցներուն: Իրենց ազդեցութիւնը մեծ էր Հիւսիսային Իտալիոյ մէջ, Միլանի շուրջ եւ Հարաւային Ֆրանսայի մէջ: Որպէս արդիւնք իրենց ուսուցումներուն Ալպեաններու մէջ Բիէրմաունթի ձորերը դարձան նշանատր:

Ուրեմն, այսքան իմ ընթացիկ ընթերցումներու մասին: Կ'ուզեմ իմանալ թէ այս նիւթը ներկայ օրերուն արտօնուած է Ձեր երկրին մէջ թէ ոչ:

Լաւագոյն մտախառնելով եկող նոր օրերուն համար,

Փոլ Գառնիկ

Ծանօթ.— Այս նամակին բնագիրը անգլերէն է:



14 Փետրուար 1977

Սիրելի Տոքթ. Գառնիկ,

Ստանալով 5 Դեկտեմբերի նամակդ մեծապէս ուրախացալ եւ կը սպասէի ունենալ յօդուածդ Տիգրանի եւ Կոմմագինէի թագին մասին, գոր աւաղ մինչեւ այսօր չեմ ստացած:

Շատ հետաքրքրական է տեսնել քու շահագրգռութիւնդ եկեղեցական հարցերու առնչութեամբ, եւ յատկապէս Սուրիական եկեղեցիին կատարած դերին շուրջ վաղ քրիստոնէութեան շրջանին՝ ի մասնաւորի Անտիոքի եւ Եղեսիոյ (Ուրֆա) մէջ: Եւ քանի որ դուն կը մասնակցիս Հոլանտայի միջազգային այն համագումարին որուն նիւթը եկեղեցիին բաժանումն է պետութենէն, կը թելադրեմ Քեզի որ կարդաս մեր եկեղեցիին պատմութիւնը: Հոն պիտի հաստատես թէ նման առաջին բաժանում մը տեղի ունեցած է Հայաստանի մէջ 4-րդ դարուն Հայոց Պապ թագաւորին օրով: Ձեզի կը թելադրեմ ուրեմն Միրարփի Տէր Ներսէսեանի «Հայերը», ուրիշ գիրք մը՝ Մադաքիս Արք. Օրմանեանէն «Հայ Եկեղեցին» եւ այլ գիրք մը՝ Սարգիսեան Արքեպիսկոպոսէն որ հիմա Առաջնորդ է Միացեալ Նահանգներու մէջ: Այս բոլոր գիրքերը անգլերէնով են:

Կասկած չկայ թէ մեր ինքնավար ու անկախ եկեղեցին սուրվեցնելիք գանձեր ունի իր ազատախոհութեամբ, աշխարհիկ եւ հոգեկան հարցերու կապակցութեամբ:

Յաջողութիւն համագումարին, յուսալով որ կը լսեմ տպաւորութիւններուդ մասին տունդարձէդ ետք:

Անկեղծօրէն Քոյդ՝  
Ծորն Ֆ. Սապպալ

Ծանօթ.— Այս նամակին բնագիրը անգլերէն է:

Յարգելի Տիար Հենրի Սարգիսեան  
Երեւան

Հալէպ 14 Փետր. 1977

Սիրելի Բարեկամ,

Ստացած եմ Ձեր 12 Յունուարի նամակը եւ Ձեր շարք մը յօդուածներու մենատիպերը որոնց համար շատ շնորհակալ եմ: Քաջալերական է Ձեր տարած աշխատանքը առաւելապէս Հայկական մետալներու մարզին մէջ որ ինքնին դժուար, խոպան եւ անծանօթ բնագաւառ է հայկական դրամագիտութեան համար:

Ինչ կը վերաբերի Ծէլքսպիրի հանդէպ եղած հետաքրքրութիւնը որ այնքան խոր կը թուի ըլլալ Ձեր մօտ, չափազանց սահմանափակ է մեր գաղութին մէջ:

Գալով այլ մետալներու, Հայկական դրոշմներով, անշուշտ չեմ մոռցած: Բայց նորութիւն չկայ առայժմ: Ձեզի կը փոխանցեմ ինչ որ կարենամ ձեռք ձգել, չափագրական մանրամասնութիւններով եւ մետալալիին նկարագրականով:

Ձեր յօդուածներէն մէկը տպուած էր Ամերիկեան Հայկ. հրատարակութեան մը մէջ որ ինձի անծանօթ է:

ARMENIAN NUMISMATIC JOURNAL  
SERIES I VOL. I No 3-4 Oct. 1975

Եթէ ունիք հասցէն եւ հրատարակիչներու անունը, կը խրնդրեմ փոխանցել բաժանորդագրութեան նպատակով. ի վերջոյ ձեռնարկ մը քաջալերելու է:

Բարեկամական լուսագոյն զգացումներով՝  
Պերն Սապպալեան



ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ARMENIAN NUMISMATIC SOCIETY

8511 BEVERLY PARK PL., PICO RIVERA, CALIF. 90660, USA

12-10-1977

Յարգելի

Տիար Պ. Սապադեան

Հալէպ, Սիրիա

Իմ բարեկամ Տոթթ. Փոլ Գառնիկէն իմացայ որ ստորագրած էք բաւական յօդուածներ հայ դրամագիտութեան վերաբերեալ: Ինչպէս նաեւ ջանացած էք մեզ հետ թղթակցիլ. անկեղծօրէն ըսեմ որ մինչեւ հիմա ռեւէ նամակ չենք ստացած Ձեզմէ:

Գալով Ձեր գրութիւններուն՝ մեր տրամադրութեան տակ ունիք **Զարթօնքի** մէջ ստորագրուած երկու գրութիւններ: Մին 29 Մայիս 1973, իսկ միւսը՝ 16 Փետրուար 1973: Եթէ ուրիշներ ունիք պիտի խնդրէիք որ բարի ըլլաք դրկել մեզի մէկական օրինակներ բնագրէն ինչպէս որ տպուած է: Իսկ եթէ չունիք ատելի օրինակներ այդ պարագային դրկեցէք **Փօթօքափի**ներ եւ կցեցէք մատենագրական անհրաժեշտ տեղեկութիւնները: Ինչ ծախք որ կայ՝ բնագրին կամ **Փօթօքափի**ին եւ ճանապարհածախսին սիրով պատրաստ եմ վճարել:

Հայ դրամագիտական ընկերակցութիւնը սակաւաթիւ անդամներով հիմնուած կազմակերպութիւն մըն է: Կը հրատարակենք հայ դրամագիտական հանդէս եռամսեան: Արտաքինով համեատ է: Բայց կը խորհիւնք թէ ներքինով հարուստ՝ մեր պապենական ժառանգներուն նման: Ծրագրած ենք յառաջիկայ տարուան համար

հրատարակել բացառիկ մը Հ. Կղեմէս Սիպիլեանի մահուան հարիւրամեայ յիշատակին: Ձեզ ալ պիտի հրատարակենք որ մասնակցիք: Բացառիկը պիտի ըլլայ կոկիկ հրատարակութիւն մը 500 կամ 1000 օրինակներով: Հիր խմբագիր պիտի ըլլայ Փրոֆ. Տիգրան Գոյումճեան:

Իսկ եթէ փափաքիլ ուզէք միանալ մեր կազմակերպութեան տարեկան անդամատուրքն է 5 տոլար: Առաջին տարուան համար միայն՝ 6 տոլար:

Եւ եթէ ունիք ուրիշ ռեւէ հարցում մը, մի՛ վարանիք գրելու եւ հարցնելու:

Ձերդ յարգանքով՝

Եղիա Թ. Ներսէսեան

Ատենադպիր եւ խմբագիր



## Armenian Coins and Books

Y. T. NERCESSIAN & SONS TELEPHONE: (213) 695-0380  
8511 BEVERLY PARK PLACE, PICO RIVERA, CALIF. 90660, USA

31 Հոկտ. 1977

### Յարգելի

Տիար Պերճ Սապապաղեան

Հալէպ, Սիրիա

Տիար Սապապաղեան,

Նախ եւ առաջ ի դիմաց Հայ դրամագիտական Ընկերակցութեան շնորհակալութիւն յայտնեմ Ձեր ուղարկած յօդուածներու ինքնատիպերուն համար: Անցեալ շաբաթ երեք յօդուածներ ստացած էին երկու տարբեր պահարաններով: Ի փոխարէն Ձեզ պիտի դրկենք մի քանի օրէն «Հայ դրամագիտական հանդէս»ի հտր. Գ-ը, ծովային ճամբով:

Խմբագրութեան ներքեւ ունիմ աշխատանք մը. տիտղոսը՝ «Հայ դրամագիտական մատենագրութիւն եւ գրականութիւն»: Պիտի պարունակէ մատենագրութիւնը եւ գրականութեան համառոտագրութիւնը բոլոր գրութիւններու որոնք կը վերաբերին հայ դրամագիտութեան: Ծատ նման Ամերիկեան դրամագիտական ընկերութեան «Նիւմիսմատիկ Լիթըրըչըր»ի մէջի տպուածներուն — **աբսթրաքթներ** —: Մերը պիտի ըլլայ վերաբերեալ համայն հայ դրամագիտութեան եւ երկլեզուանի՝ հայերէն ու անգլերէն: Պէտք ունիմ մէկու մը որ տեղեկակից է արաբական գրականութեան պատահարներուն ինչպէս նաեւ քաջ գիտակից արաբերէն լեզուի: Կարծեմ կարող էք ըլլալ այդ անձը՝ անշուշտ եթէ փափաքիք: Խնդրումս ձեզ:

ընեն է արաբական դրամագիտական գրականութիւնը՝ եւ ուր որ հայ դրամագիտութեան մասին գրութիւն կայ՝ պատրաստել է 50-100 բառ երկարութեամբ համառոտագրութիւններ: Բացառիկ կամ եթէ անհրաժեշտ է կարելի է երկարութիւնը ընել 25-125 բառ: Անշուշտ ստորագրութիւննիդ պիտի երեւնայ Ձեր գրութիւններուն ներքեւ: Ներկայիս աշխատանքին մէջ մուտք գործած են 250-էն ատի տիտղոսներ: Տարբեր ձեւերով օգնել խոստացած են Գուլյում-ճեան, Պտուկեան, Սարգսեան, եւայլն: Տակաւին արաբական աղբիւրներ մուտք գործող չէ եղած:

Այս մասին պիտի ուզէի Ձեր կարծիքը իմանալ:

Ձերդ յարգանքով՝

Շէրա Թ. Ներսէսեան



**ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԱՌԸՆԹԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ  
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Երևան 9, Լեհիմի պող. No 111  
Հեռախոս 58-32-92

5 Յուլիս 1978

Մեծարգոյ պարոն Պերճ Սապապաղեանին  
Հայէպ, Սիրիա

Թանկագին հայրենակից,

Յայտնում ենք Ձեզ, որ Մատենադարանի գիտական աշխատակից Վարդան Գրիգորեանի միջոցով ստացել ենք Ձեր նուիրաբերած հայերէն երկու գրչագիր հմայիլները եւ արաբերէն մէկ ձեռագիրը, որոնք 10786-10787 եւ 1998 համարների տակ, Ձեր անուամբ, գրանցուել են մեր ձեռագրատան հայերէն եւ արաբատան ձեռագրերի ֆոնդերում:

Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական անձնակազմի եւ անձամբ իմ անունից յայտնում եմ Ձեզ խորին շնորհակալութիւն:

Լ. Ս. Խաչիկեան  
Մաշտոցի անուան Մատենադարանի  
տնօրէն, ակադէմիկոս

24 Յուլիս 1978

Mrs. D. Saboonchian  
Ave. Takhte Tavous  
Ave. Daria Nour  
1st st. No. II  
Teheran - Iran

Ազնի Տիկին,

Երկու ամիսներ առաջ ստացած էի Ձեր կողմէ դրկուած ՀԱՅՈՒՆԻՆ ԵՒ ԻՐ ՏԱՐԱԶՆԵՐԸ գրքին օրինակը գոր կամքէ անկախ պատճառներով առիթը ունեցած չէի ուսումնասիրելու:

Այս շաբաթ միայն կրցայ մանրակրկիտ կերպով հետեւիլ տարուած աշխատանքին տարողութեան, խղճամիտ պրպտումներուն եւ իրագործուած նուաճումին որ անպայմանօրէն պատի կը բերէ բոլոր այն Տիկիններուն որոնք յղացած, կազմակերպած ու գլուխ հանած են նման աննախընթաց հրատարակութիւն մը, այնքան գեղեցիկ տպագրութեամբ եւ տպատրիչ նկարներով:

Փարիզի մէջ Ձեր նկարագրածէն աւելին գտայ այս հատորին մէջ եւ ուրախ եմ որ ինծի առիթը տուիք որ հետաքրքրուիմ:

Այս երկտողը անկախ գրքին ընկալումը հաստատելէ, անկեղծ եւ խանդավառ արտայայտութիւն մըն է, գնահատանքի եւ շնորհատրութեան բոլոր անոնց որոնք իրենց ճիգն ու մասնակցութիւնը բերած են անոր պատրաստութեան համար:

Յարգանք՝  
Պերճ Սապապաղեան

Յ. Գ.

Կարգ մը բարեկամներ եթէ օրինակներ ուզեն ունենալ, կարելի՞ է տրամադրել եւ ի՞նչ գինով, անգլիական փառնտ կամ ֆր. ֆրանք:







Պրն. Պերճ Սապպաղեան  
Փոստարկղ 90  
Հալէպ, Սիրիա

30 - ժԲ - 1978

Հոկտեմբերի սկիզբին ստացայ նամակդ: Պատասխանը ջանացի որոնել եւ գտնէ բան մը գտնել որ դրական կերպով գրէի Իւթ Ինտիա Քօմբանիի մասին: Միչներ անգամ այս մասին բան չի լիշեր իր «Օրինէթալ Քօյնզ անդ տներ վալիզ» գրքին մէջ: Իւթ Ինտիա Քօմբանիի աւուներ տեղէ մը ինձ ծանօթ կ'երեւի սակայն հիմալ ու հիմա չեմ լիշեր: Այս մասին պէտք է գրեմ Լոնտոն եւ հոն թերեւս Ինթըրնաշընըլ Բանկ Նօթ Սօսայթիի գրադարանապետը տես որ ջանայ պրպտել եւ ինձ իմացնել: Հայաստանի թղթադրամները ըսելով նպատակ ունիմ 1918-1924 թուականները: Ասիկա ամբողջովին կոչս հող մըն է եւ ներկայ քաղաքական պայմանները տակաւին քիչ մըն ալ բարեացակամ չեն այս ուղղութեամբ:

Թերեւս հայերը հատանած ըլլան յուշամետալներ հոն Հընդկաստանի մէջ Ձեր գրածին նման: Այն հայերը որ Ամսթերտամ էին եւ ժամանակին հոն մետալ հատանած էին տեսականօրէն շիման մէջ էին Հնդկահայերու հետ: Նոյնիսկ մի մասը հոն վաճառականութիւն կ'ընէր: Այս ուղղութեամբ Լեւոն Խաչիկեան, Երեւանի Մատենադարանէն, ուսումնասիրութիւն մը ունի: Անդամներ շատ ունինք Թեհրան. բայց դժբախտաբար չունինք երբեք Հնդկաստանի մէջ: Միջոցներ շատ կան տարբեր ձեւերով հետապնդելու...: Յաջողութեան ի՞նչ աստիճանի արձանագրութիւնը ուրիշ խնդիր է սակայն:

Միպիլեանի բացառիկը մամուլի պիտի յանձնուի մօտ ատենէն: Մի քանի շաբաթէն ալ ճամբայ կը դրուի Հ. Դ. Հ.-ի հտր. Ե-ի թիւ 2-ը: Յուսամ նախորդը ստացած էք ապահով:

Արեւելքի մէջ անդամներ շատ ունինք. հոն փոստով դրկելը երկար կը տեւէ: Փոստ Օֆիսին հետ պէտք է խօսիմ եւ ջանանք մեր անդամներուն ներկայացնել օդային միջոցաւ սպասարկութիւնն ալ, անշուշտ յաւելեալ գիներով: Կարծեմ 8 տոլար տարեկանին բաւարար ըլլայ: Անդամներ ունինք Աւստրալիա, Պարսկաստան, Սիրիա Թիւրքիա, Հայաստան, Երուսաղէմ, Գահիրէ եւ Արեւմտեան Եւրոպա: Դժբախտաբար քանակը քիչ է:

Ամանորի եւ Ս. Ծննդեան առթիւ ստացէք իմ լաւագոյն մաղթանքները եւ շնորհաւորութիւնները:

Լաւագոյն ողջոյններով՝  
Եղիա Ներսէսեան



23 Յունիս 1979

Տիար Ե. Ներսէսեան,  
Փիֆօ Ռիվերա, Քալիֆ.  
Ա. Մ. Ն.

Սիրելի Պրն. Ներսէսեան,

Ստացած եմ Ձեր 7 ընթ. նամակը որմէ կ'իմանամ թէ Պրն. Պտուկեանի նոր գիրքը հրատարակուած է Royal Numismatic Society-ին կողմէ եւ ոչ American Numis. Society-ին միջոցաւ ինչ որ զիս կը զարմացնէ քանի որ հեղինակը A.N.S. գլխաւոր ուժերէն մէկն է:

Ընդհանրապէս պիտի ըլլամ եթէ օրինակ մը ինծի դրկէք ապահովագրեալ փոսթով եւ Ձեր ծախքերու ցուցակը՝ վճարման համար:

Ինչ կը վերաբերի Հեթումի երկլեզուեան դրամներուն, բնական է մեծ թիւով նմոշներ տեսած չեմ եւ տեսածներս կարելի է կարդալ 637 եւ ոչ 639: Աւելի հետաքրքրական կրնար ըլլալ իր յօդուածը եթէ նկարները առնուած ըլլային ուղղակի դրամներէն կամ գանձ դրոշմներէ փոխանակ իր նախասիրած շոքոլայի թուղթերէն որոնց յստակութիւնը թէական է:

Ես կրնամ ըսել թէ բաւական փորձառութիւն ունիմ արաբական դրամներ կարդալու իրթին փորձերուն մէջ. առնոց քուֆի գիրերը իրական կենդիւններ են լեզուին անտեղեակ անհատներու համար:

Հասագոյն զգացումներով,

Պերն Սապպաղեան

30 Օգոստ. 1979

Տիար Ե. Ներսէսեան  
Փիֆօ Ռիվերա Քալիֆ.  
Ա. Մ. Ն.

Յարգելի Տիար Եղիա Ներսէսեան,

Ատենին ստացած եմ Ձեր 16 Յունիս թուակիր նամակը եւ Արտաշէսեան հարստութեան դրամներու դասաւորման համար Պր. Պտուկեանի նոր հրատարակութեան Ձեր թիւ 8325 Փաթիւրը, տոլար 26.04 գումարով: Թէեւ գիրքը ստացած չեմ, բայց օգտուելով հիրաբար Հալէպ գտնուող Պր. Երուանդ Քասունիի այցելութենէն որ խմբագիրն է Պէյրութ հրատարակուող Հայկազեան Գոլէճի հաշագիտական հանդէսին, իրեն յանձնեցի 30 տոլարի գումար մը, Ձեզի փոխանցուելու համար: Կը յուսամ որ չ'ուշանար:

Գալով երկլեզուեան դրամներուն, ի վիճակի չեմ կարծիք տալու 637 եւ 639 տարիներու քուֆի գրութիւններուն շուրջ, որովհետեւ, ինչպէս նախապէս ալ գրեցի, յստակ եւ ընթեռնելի չեն պատկերահանումները: Կարելի էր մի քանի նմոշներու նկարները տալ ուղղակի դրամներէն առնուած, առանց շոքոլայի թուղթի միջնորդութեան՝ որմէ դրամին հարազատութիւնը կրնայ տուծել: Ամէն պարագայի, այս թուականներու ճշդումը մինչեւ 645 եւ աւելի ուշ եթէ կայ, կ'արժէ լրջօրէն ուսումնասիրել Հայ-Սելճուքեան պատմութեան տակ չբացատրուած տեսանկիւնէն:

Բարեկամական զգացումներով,

Պերն Սապպաղեան



25 Հոկտ. 1979

Տիար Երուանդ Քասունի  
Փոստարկղ 1748  
Պէյրուք - Լիբանան

Սիրելի Երուանդ,

Կը ներփակեմ Երատոյի մասին խոստացուած յօդուած: Գիտեմ որ նիւթը, մշակուած ձեռք եւ եզրակացութիւններս յանդուգն պիտի գտնես: Անշուշտ կը ստանձնեմ պատասխանատուութիւնը:

Կ'ամչնամ երբ կը խորհիմ որ այսքան երկար ձգձգումներէ յետոյ՝ միայն հիմա կրցայ ամփոփել եւ նօթերս դասաւորել, երբ դուն Պէյրութի փոթորկոտ պայմաններուն մէջ՝ հալազիտական ամբողջ տարեգիրք մը կը հրատարակես Կոմմագիներցիի մը ժառանգական յամառութեամբ:

Կը հիանամ վրադ: Պրալօ մը՝ ջերմ ու անկեղծ եւ յաջողութեան շատագոյն մաղթանքներ:

Պերճ Սապպադեան

6 Նոյ. 1979

Յարգելի Տիար Ե. Ներսէսեան  
Փիֆօ Ռիվերա Քալիֆ.  
Ա. Մ. Ն.

Յարգելի Տիար,

Ստացած եմ Ձեր 20 Հոկտ. թուակիրը եւ ուրախ եմ որ դրկուած գումարը ստացած էք: Յարմար առիթով կը դրկեմ նաեւ 2 տողար, ամբողջացնելու համար անդամատուրքը 1980-ի:

Ինչ կը վերաբերի Սեբուլեանի յօդուածին Հանդէս Ամսօրեայի մէջ, որ ըստ իր սովորութեան, արտակարգ քննադատական ոգիով գրուած է, նկատի առած է «Զարթօնք»ի գրութիւնս: Այս վերջինը, պատկերը շրջուած տպած էր: Ինձի անձանօթ է թէ որիչ թերթեր կամ պարբերաթերթեր յօդուած հրատարակած ըլլան: Մենք հոս կը ստանանք միայն սահմանափակ հրատարակութիւններ:

Պտուկեանի գիրքը ստացայ բաւական ուշացումով: Կը ցախիմ որ գայն դրկած էք **Քոլի փոսթով**, փոխանակ սովորական **փոսթի**, որ կարելի էր, քանի որ մէկ քիլոյէն պակաս որեւէ ծրար թղթատարական սպասարկութիւնը կ'ընդունի: **Քոլի փոսթի** պարագային ստիպուեցայ, **Թրանզիդ էժընդ** մը նշանակել եւ մաքս վճարել յիշուած գինին վրայ: Որեւէ ծրար կամ գիրք որ մէկ քիլոյէն պակաս կշռէ, կը յանձնուի ուղղակի փոստարկղս:

Արարական մամուլը շատ չի զբաղիր դրամագիտութեամբ: Իսկ Հայկական դրամներու մասին զաղափար իսկ չունին: Հայէպի համալսարանի ընդհ. Տնօրէնը ինձմէ խնդրեց դասաւորել եւ հիմնել



արարական դրամներու բաժին մը՝ համալսարանի թանգարանին մէջ:

Որսիւ եւ որ Ձեր դրամագիտական պրպտումները եւ մատենագրական համալիրը լաւ ընթացքի մէջ է: Կը հիանամ Ձեր տոկուն հաւատքին եւ տարած աշխատանքին վրայ ու կը շնորհատրեմ:

Հաւագոյն զգացումներով,

Ձերդ՝

Պերճ Սապպաղեան

0701 1979  
Հայաստանի ԽՍՀ

27 Հոկտ. 1979  
Պերճ Սապպաղեան  
Փիֆո Ռիվերա Քալիֆ.  
Ա. Մ. Ն.

Հայրը իրանկան զորքին, որ անկէն եւրոպ  
բարձրագոյն է, կը յաւան քր, որ մը կը հրատարակու  
անկէն իրանկան զորքին իր հանձնարարութեամբ  
կը, որոնք իրանկան կը հանձնարարութեամբ իրան  
եւ հանձնարարութեամբ կը իրան կը իրան  
հանձնարարութեամբ է թի 3-ի ցանկին մէջ, Արտատ  
0701 1980  
Հայաստանի ԽՍՀ  
Պերճ Սապպաղեան

2 Յունուար 1980

Յարգելի Տիար Ե. Ներսէսեան  
Փիֆո Ռիվերա Քալիֆ.  
Ա. Մ. Ն.

Յարգելի Տիար,

Շնորհակալ եմ Ձեր 10 Դեկտ. թուակիրին համար: Իրաքի հետ տնտեսական կապերու հարցը հաւանաբար եղած է Ալ-Մաքրուբաթ անուամբ դրամագիտական հրատարակութեան հետ, որ կը պատկանի կեդրոնական թանգարանին եւ լոյս կը տեսնէ քիչ մը անկանոն բայց հետաքրքրական: Կը ստանամ. թէեւ Հայկական դրամներու մասին ցարդ յիշատակութեան հանդիպած չեմ:

Վերջերս աչքէ անցուցի «Բազմավէպ»ի 1978-ի 1-2 միացեալ թիւերը որուն էջ 233-ին վրայ ստացուած գրքերու բաժնին մէջ հանդիպեցայ հետեւեալին

- Տէրվիշեան - Տիրալը Ծալը. Վրդ.
- Յրուացանկ Ազգապատումի շատուկ անուններու
- Հրտ. Հ. Բ. Ը. Մ. Ալեք. Մանուկեան Մշակութային
- Հիմնադրամի, Լոս Անճէլըս, 1977, էջ 378

Այս հատորը հետաքրքրական կը նկատեմ եւ կը փափաքիմ օրինակ մ'ունենալ: Կը ինկրեմ ապահովել եւ դրկել ապահովագրեալ օդային ճամբով:

Տօնական օրերու լաւագոյն եւ անկեղծ մտաթանքներով,  
Պերճ Սապպաղեան



Յարգելի Տոկոս. Խ. Մուշեղեան  
Երեւան

25 Ապրիլ 1980

Յարգելի Տոկոսոր,

Այս շաբաթ շնորհակալութեամբ ստացայ Ձեր դրկած ծրարը  
և հրատարակութիւնները,  
— Դրամական Ծրջանառութիւնը Հայաստանում Սկզբից Մինչեւ Ժ.  
Դար, Վիեննա 1979.

— Les Effigies des Rois Arméniens de l'Époque Hellenistique,  
Yerevan 1979.

Առաջին գրքին հետեւած էի «Հանդէս Ամսօրեայ»ին մէջ  
գոր պարբերաբար կը ստանամ: Ըստ մանրակրկիտ և խղճամիտ  
կերպով պատրաստուած գործ է և բազմալեզուական՝ որ զատ գրքով  
մը հրատարակելու գաղափարը ունեցած էք:

Հարեանցի կերպով խորհեցայ որ, Արտաշատի մէջ  
գտնուած շեն աւելի լայն չափով Հոմեդական դրամներ, եթէ նկատի  
ունենանք որ, ըստ մատենագրական տուեալներու, Կորբուլունի  
աւերածութիւններէն յետոյ, Ներոն ենթադրաբար 50 միլիոն սեւ-  
տերս տրամադրած է Տրդատին, վերաշինելու համար Արտաշատը:  
Պղինձ թէ արուր, նման դրամներ պէտք է մնային երկրին մէջ  
ստանց կորսուելու միջազգային վաճառականութեան լայնաշրջան  
նշարտին մէջ, կամ ենթարկուելու վերածուման սովորական  
դրոյթին, ինչպէս եղած է պարագան արծաթին համար: Հայաստա-  
նի ընդերքը հաւանաբար շատ գաղտնիքներ ունի տակաւին, որոնք  
օր մը պիտի բացայայտուին:

Գալով ֆրանսերէն գրքոյկին, որ անթերի կերպով պատ-  
րաստուած է, կը յուսամ որ, օր մը կը հրատարակէք նաև անոր  
անգլերէն թարգմանութիւնը մեր Ամերիկահայ գաղութներուն հա-  
մար, որոնք ներկայիս կը հետաքրքրուին յոջօրէն իրենց անցեալով  
և պատմութեամբ: Կը թուի թէ մեքենագրական սխալի մը որպէս  
հետեւանք մոռցուած է թիւ 3-ի ցանկին մէջ, Արտաշէսեան թագա-  
տրներու շարքին Տիգրան Դ-ի անուան յիշատակումը, գոր անշուշտ  
դուք ալ նշմարած ըլլալու էք:

Նոր լացողութիւններու մաղթանքներով,  
Պերճ Սապպաղեան



Հալէպ 16 Յուլիս 1981

Սիրելի Երուսնդ,\*

Այսօր ստացայ 10 Յուլ. թուակիր նամակդ եւ Բանբեր Երեւանի Համալսարանի առանձնատիպը որոնց համար շնորհակալ եմ: Ուրախ եմ որ Համալսարանը ընդարձակ կերպով անդրադարձած է Հ. Հ. Հ.ին\*\* որ քու անհատական ճիգերուդ արդիւնքն է: Վստահ եմ որ նոյն թափով, կորովով եւ եռանդով պիտի շարունակես, դիմագրաւելով բոլոր խոչընդոտները:

Պատրաստած էի արդէն յօդուած մը ՊԱՏՐ ԱԼ ՏԻՆ ԼՈՒ-ԼՈՒԻ մասին (Հաշագգի) որ կը ներփակեմ: Անշուշտ միշտ դրամագիտական առնչութիւններով: Չեմ կարծեր որ շատեր ծանօթ են իր հայկական ծագումին:

Եթէ յարմար նկատես լաւ: Այլապէս, կը խնդրեմ վերադարձնել կամ հետոյ միասին բերել, քանի որ կը ծրագրես այս ամպոն հոս այցելել: Երկար տարիներէ ի վեր առիթը ունեցած չենք կուշտ ու կուտ զրոյց ունենալու:

Ձերմ բարեկեցութեան եւ յաջողութեան մաղթանքներով  
Պերճ Սապպաղեան

Ծանօթ.— (\*) եւ (\*\*)ը կը վերաբերին Պէյրութի Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամբիոնի վարիչ Դոկտ. Երուսնդ Քասունիին եւ իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ին:

— Երուսնդ Քասունի: Երեւան, 16 Յուլիս 1981 թ. —

Համարի քաղաքացիական  
21 Յուլ. 1982

21 Յուլ. 1982

Յարգելի Տիար Ե. Ներսէսեան  
Փիֆօ Ռիվերա Քալիֆ.  
Ա. Մ. Ն.

Յարգելի Տիար Ներսէսեան,

Փամանակին ստացած եմ Ձեր 22 եւ 28 Նոյ. թուակիր նամակները. շնորհակալութիւն:

Յարուցում հարցերուն կ'անդրադառնամ,  
— ՀԱՅԿ. ԿԻԼԻԿԻԱ: Բժիշկ Յար. Տ. Ղազարեանը լաւ կը ճանչնայի եւ 1968էն ի վեր ամէն շաբաթ կ'այցելէ իրեն, որովհետեւ ոտքի արկածէ մը յետոյ դատապարտում էր մօտ 20 տարիներ տունը անշարժ մնալու: 1975-ին մահացաւ 90 անց: Ան շատ կարող պատմաբան էր եւ դրամագէտ: Իր անձնական հաւաքածոն Մարաշի մէջ տեղ մը թաղուած մնացած է աղէտէն յետոյ: Կիլիկիան ամբողջ պատած է ոտքով: Իր գիրքը շատ թանկագին տեղեկութիւններ կը պարունակէ վանքերու, բերդերու տեղեկագրութեան առնչութեամբ եւ այլ պատմական տեղեկութիւններ:

Իր գիրքը դարձած է հազուագիտ: Եթէ Անթիլիասը չէ պատասխանած Ձեր նամակին, կը թելադրեմ որ դիմէք Պէյրութի ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ: -ՀԴՀ- ՀՏԲ. 7 ԹԻԻ 4: Այս թիւը ստացած եմ: Սակայն միևնչեւ հիմա չեմ ստացած Հայր Կղ. Սիպիլեանի հարիրամեակին նուիրուած հրատարակութիւնը: Արդեօք դրկուած է ինձի եւ ե՞րբ:











Իր հետ ժամադրուած էի մեր միութեան մէկ ժողովին համար, երբ ընկեր մը մեզի տուաւ շանթահարիչ բօթը, որուն հաատալ չէի կրնար:

Մահը իլեց տարաւ Ճորճը. իսկ ան, արժանի չէր այդ արարքին: Որովհետեւ, մեր ընկերը երբեք վնաս չէր հասցուցած որեւէ մարդու: Այդ արարքին մենք ալ արժանի չէինք, որովհետեւ բոլորս ալ զինք կը սիրէինք ամենայն անկեղծութեամբ:

Տիպար մարդ մըն էր. հայրենասէր, բառին բուն առումով: Բնաւ չեմ կրնար մոռնալ մեր միջեւ եղած այն վեճը, օրեր առաջ, երբ ան կը պնդէր, որ մեր հնագիտական ընկերութիւնը կրէ Սուրիական-Արաբական զինանշան մը եւ ոչ թէ Մեմլուքեան, Հիթիթական կամ այլ:

Նուիրուածութեամբ կը հաատար իր սուրիացիութեան, արաբականութեան: Հաատարիմ էր իր այս սկզբունքին, ինչպէս հաատարիմ էր իր Հայկականութեան:

Աննման քաղաքացի մըն էր:

Իր մահով փլաւ սին մը որ կանգուն ու զօրատր կը պահէր մեր հնագիտական ընկերութիւնը՝ մասնատրաբար հնախօսական ասպարէզին մէջ:

Ան բացառիկ մասնագէտ մըն էր հին դրամներու եւ իր մեկնումով մեր երկիրը կորսնցուց հազուագիտ աղբիւր մը:

Այս բոլորն էր ան: Որքա՛ն բան կորսնցուցինք քու մեկնումովդ, Ճորճ:

Ու հիմա, ինչպէ՞ս կարենամ արդար գնահատանք մը տալ այն ծառայութիւններու մասին զորս մատուցիր մեր հնագիտական ընկերութեան ու ամբողջ Հալէպ քաղաքին զոր սիրեցիր անասհման սիրով, ո՛վ ընկեր ու գործակից: Ու այսօր, Հալէպն ալ իր կարգին կու լայ քու վրադ ինչպէս քու ընտանիքիդ անդամները ու սգակիր բարեկամներդ բոլոր:

Խաղաղութիւն քեզի, կ'ըսեմ իմ կողմէ եւ մեր միութեան հազար անդամներուն անունով, ընկերներուդ անունով: Խաղաղութիւն քու

մաքրամաքուր հոգիիդ ու մխիթարանք ընտանիքիդ, ազգականներուդ, քեզ բոլոր սիրողներուն: Մխիթարանք նաեւ մեզի, հնագիտական ընկերութեան անդամներու:

Թող յիշատակդ մեր մէջ անմահ մնայ յաիտեան: Ու թող քու գիտութեանդ, ծառայութեանդ ու անբասիր նկարագրիդ կանթեղը լուսատրէ մեր ճամբան, ա՛յն ճամբան որուն վրայ քալեցինք ձեռք-ձեռքի ի խնդիր հնութեանց պաշտպանութեան, յանուն պատմական Հալէպ քաղաքին, որուն վրայ ողբալու վախը ունեցանք միասին երբ քանդող բրիչներ բարձրացան անոր հնութիւններուն վրայ: Մենք կը վախնայինք ողբալ այն քաղաքին վրայ, որ այսօր քե՛զ կ'ողբայ:

Սաստ Զաղլուլ Էլ Քաուաքիպի

Նախագահ

Հալէպի Հնագիտական Ընկերութեան

Ծանօթ.— Պարագայական վերնագրի մը տակ այստեղ ներկայացուած գրութեան արաբերէն բնագիրը լոյս տեսած է Հալէպի «Էլ Ճեմէհիր» պետական պաշտօնաթերթի 17 Յուլիս 1982-ի թիւին մէջ, Պերճ Սապպաղեանի մահուան առիթով:



118	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ	285
106	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ	282
90	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ	281
78	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ	279

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

181	ԳԵՐԺ ՍԱՊՊԱՂԵԱՆ		
171	ՄԱՐԳԸ ԵՒ ԳՈՐԾԸ	Թորոս Թորանեան	5
143	ՎԱՍՆ ՆԵՐԱԾԱԿԱՆԻ		13
129	ՄԱՍ Ա. — ՀԱՅ-ԱՐԱՔԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԻՏՈՒ-		
111	ԹԵԱՆ ՇՈՒՐՋ		27
101	ա. — ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԿԻՒԿԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ		
91	ԴՐԱՄՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՅԻՇՈՒՅԾ «ԱՄԵՆԱՅՆ		
81	ՀԱՅՈՑ» ՏԻՏՂՈՍԻՆ ՇՈՒՐՋ		29
71	— ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇԱՀ ԱՐՄԷՆՆԵՐԸ		32
61	— ՋԱՔԱՐԵԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՆԻՆ		36
51	բ. — ԱՐԱՔԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐ-		
41	ԾԱԹ ՏԻՐՀԵՄԸ ԿԸ ԿՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒ-		
31	ՆԸ		46
21	գ. — ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ		
11	ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ		54
01	դ. — ՀԱՅԱՋԳԻ ԱԹԱՔԵԿ ԵՒ ՄՈՒՍՈՒԼԻ ՍՈՒԼ-		
91	ԹԱՆ ՊԱՏՐ-ԷՏ ՏԻՆ ԼՈՒԼՈՒ		61
81	ե. — ՀԱՅ-ԱՐԱՔԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷԿ		
71	ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՋ		73
61	զ. — ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅԱՆԿ ՀԱՏԱՆՈՒԱԾ		
51	ԴՐԱՄՆԵՐՈՒ ԱՐՄԻՆԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԱ-		
41	ՀԱՆԳԻՆ ՄԷՋ		93ա



<b>4.— ՄԱՍ Բ.— ՀԱՅ ԳՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ</b>	<b>97</b>
ա.— ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՋԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ	99
բ.— ՏԻԳՐԱՆ Գ.— Ի ԵՒ ԵՐԱՏՈՅԻ ԱՐԻԻՆԱԿՑԱ- ԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ՀԱՐՑԻՆ ՇՈՒՐՋ	106
գ.— ՀԵԹՈՒՄ Ա.— Ի ՀԵԹՈՒՄ-ՋԱՊԷԼ ԵՒ ԵՐԿԼԵՋ- ՈՒԵԱՆ ԳՐԱՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ	118

<b>5.— ՄԱՍ Գ.— ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՐԱ- ՌՈՒՄՆԵՐ</b>	<b>139</b>
ա.— ՀԱՅ-ԿԻԼԻԿԵԱՆ ԳՐԱՄԱՇԱՐՔ	141
բ.— ԼԵՒՈՆ Ա.—	143
գ.— ՀԵԹՈՒՄ Ա. ԵՒ ՋԱՊԷԼ	153
դ.— ԼԵՒՈՆ Բ.	161
ե.— ՀԵԹՈՒՄ Բ.	164
զ.— ՍՄԲԱՏ	166
է.— ԿՈՍՏԱՆԳԻՆ Ա.	167
ը.— ԼԵՒՈՆ Գ.	169
թ.— ՕՇԻՆ	171
ժ.— ԼԵՒՈՆ Դ.	173
ի.— ԿԻԼԻԿԻՈՅ ԿԻ-ԼԻԻՋԻՆԵԱՆ ԹԱԳԱՌՈՐԸ	175
լ.— ԿՈՍՏԱՆԳԻՆ Գ.	178
խ.— ԼԵՒՈՆ ԲՈՆԱԿԱԼ	180
ծ.— ԿՈՍՏԱՆԳԻՆ Դ.	181
կ.— ԼԵՒՈՆ Ե.	183
ն.— ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱՄՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ	185
ձ.— ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ	198
ղ.— ԱՐՏԱԽԱՋԳ Բ.	205
ճ.— ԱՐՏԱՇԷՍ Բ.	207
մ.— ՏԻԳՐԱՆ Գ.	207
յ.— ՏԻԳՐԱՆ Դ.	207
ն.— ԱՐՏԱԽԱՋԳ Գ.	207
շ.— ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ	208
ո.— ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾ	210
չ.— ԱՐՏԱԽԱՋԳ Բ.	216
պ.— ՏԻԳՐԱՆ Գ.	219

<b>6.— ՄԱՍ Դ.— ՆԱՄԱԿԱՆԻ</b>	<b>221</b>
<b>7.— ՈՐՊԷՍ ՎԵՐՋԱԲԱՆ — Սաատ Զաղլուկ Էլ Քաուաքիպի</b>	<b>281</b>
<b>8.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ</b>	<b>285</b>

